



ԷԶՄԻԱԾԻՆ



Զ
2006



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

Յ ու ն ի ս

2006

ՀՐԱՄԱՆԱԻ

S. S. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼԻՍ

Հունիսի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանի և Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասարքություն Բարդուղիմեոս Ա-ի հրավերով մեկնեց Ստամբուլ:

Ամենայն Հայոց Հայրապետին ուղեկցում էին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Ս. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Ս. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, Գերմանիո հայոց թեմի առաջնորդ Ս. Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը, Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրեն Ս. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, Ս. Վիգեն եպիսկոպոս Այքազյանը, Մայր Աթոռի դիվանապետ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Ս. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը և Ս. Վազգեն աբեղա Նանյանը՝ որպես գավազանակիր:

Ստամբուլի օդանավակայանում Նորին Սրբությանն ու հայրապետական շքախմբին դիմավորեցին, գլխավորությամբ Ամենապատիվ Ս. Մեսրոպ արքեպս. Մուրաֆյան Պատրիարքի, Կ. Պոլսի հայոց Պատրիարքության հոգևորականաց դասը, Հունաց Տիեզերական Պատրիարքության ներկայացուցիչներ՝ Ֆրանսիայի մետրոպոլիտ Հայր Էմանուելը, Սասիմայի մետրոպոլիտ Հայր Գենադիոսը և Հայր Աթենագորասը, Թուրքիայում Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների կազմակերպությունում ՀՀ ներկայացուցիչ տիար Կարեն Միրզոյանը, պոլսահայ համայնքի ներկայացուցիչներ:

Օդանավակայանում Ամենապատիվ Մեսրոպ Պատրիարքը ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետին և Հայրապետական շքախմբի անդամներին՝ բարի գալուստ մաղթելով Ստամբուլ: Իր հերթին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհություն հայտնեց Բարձրյալ Տիրոջը, Ով առիթն ընձեռեց իրեն Հովվապետական անդրանիկ այցելությամբ լինելու Կ. Պոլսում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1700-ամյա օրինությունը փոխանցելու պոլսաբնակ հավատավոր հայ ժողովրդին, ինչպես նաև եղբայրական փոխադարձ այցով լինելու Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասարքություն Բարդուղիմեոս Ա-ի մոտ:

Օդանավակայանից Նորին Սրբության գլխավորած պատվիրակությունը առաջնորդվեց Կ. Պոլսի հայոց Պատրիարքարան: Այստեղ Նորին Սրբությունն իջևանեց Հայրապետական ողջ այցելության ընթացքում:

Պատրիարքարանում տեղի ունեցավ նաև համայնքային ընդունելություն և աջհամբույր: Այնուհետև կազմակերպվեց հյուրասիրություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց Մեսրոպ Պատրիարքը՝ ասելով. «Մեր համայնքը կողջունե իր Վեհափառ Հայրապետը եւ վստահ եմ որ մեր ժողո-

վուրդը գունդ առ գունդ ներկայ պիտի ըլլայ, ուր որ այցելութիւն շնորհէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ասիկա ինչպէս մենք քանիցս յայտարարեցինք, սոսկ հայրապետական կամ հովուապետական այցելութիւն չէ, մեզի համար առաքելական այցելութիւն է: Բարի եկաք եւ ինչպէս այստեղ կ'ըսեն, ձեր ոտքը բախտաբեր ըլլայ»:

Վեհափառ Հայրապետին ողջունի խոսքով դիմեցին նաև Հունաց Պատրիարքարանի ներկայացուցիչները, ապա հավաքվածներին գնահատանքի իր խոսքը ուղղեց Նորին Սրբութիւնը՝ ասելով. «Փառք և գոհություն ենք տալիս մեր Տիրոջը, որ Մեզ այս շնորհը պարգևեց միջեկեղեցական ու հովվապետական անդրանիկ այցելությամբ գալ Կոստանդնուպոլիս՝ հրավերով Թուրքիոյ հայոց Ամենապատիւ Ս. Պատրիարքի և Բարդուղիմէոս Ա Հունաց Տիեզերական Պատրիարքի: Բարեհաջող վայրէջք կատարեցինք Ստամբուլի օդանավակայանում և դիմավորվեցինք Մեսրոպ Պատրիարքի, Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչների, հոգևորականների և համայնքի ներկայացուցիչների կողմից: Մենք երկու օր պետք է հյուրընկալվենք հունաց Տիեզերական Պատրիարքի կողմից և միասնաբար մեր աղոթքը պետք է բարձրացնենք առ Աստված՝ հայցելով աշխարհին խաղաղություն և ժողովուրդներին ու ազգերին բարի համագործակցություն: Եղբայրական սիրով պետք է վերանորոգենք բարեկամական դարավոր կապերը մեր Եկեղեցիների:

Այնուհետև Սրբազան Պատրիարքի հետ հինգ օր շարունակ պետք է շփվենք և հաղորդակցվենք մեր ժողովրդի հավատավոր զավակների հետ, որոնց եկեղեցասիրության և ազգասիրության մասին Մենք բազմիցս լսել և կարդացել ենք: Մենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լույսն ու օրհնությունը և Մեր հայրական սերը պետք է փոխանցենք մեր ժողովրդի զավակներին: Մեր պատգամն ու հորդորը պետք է լինի, որպէսզի նույն նախանձախնդրությամբ շարունակեն իրենց եկեղեցասեր ընթացքը: Արդեն իսկ առաջին պահին, երբ Մենք հանդիպեցինք Մեր հավատավոր զավակներին, նրանց դէմքին տեսանք պայծառ ուրախություն, նրանց աչքերի մէջ տեսանք ցնծություն, բերկրանք, և դա Մեզ վստահություն է ներշնչում, որ Մենք հոգեւորոգ պահեր պետք է ապրենք առաջիկա հինգ օրերի ընթացքին և Մայր Աթոռ Ս. Էջմիածին պետք է վերադառնանք՝ Մեր հոգում կրելով գեղեցիկ հուշեր, ապրումներ և տպավորություններ՝ մեր հոգում տանելով պոլսահայության սերն ու պոլսահայության կարոտը»:

Հունիս 21-ին Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Ամենապատիւ Տ. Մեսրոպ Պատրիարքի և Հայրապետական ջրախմբի, մեկնեց Հունաց Տիեզերական Պատրիարքարան, ուր հունաց աթոռանիստ եկեղեցում մասնակցեց առավոտյան ժամերգության, որի ավարտին «Ուրախ լեր» շարականի երեգեցողության ներքո առաջնորդվեց Պատրիարքարանի գահասրահ:

Գահասրահում, ներկայությամբ Ս. Սինոդի անդամների, Նորին Սրբութեանը դիմավորեց Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասրբություն Բարդուղիմէոս Ա-ը: Երկու Հայրապետների եղբայրական ողջագուրումից հետո Բարդուղիմէոս Պատրիարքը բարիգալստյան պաշտոնական խոսքով դիմեց Վեհափառ Հայրապետին՝ անդրադառնալով պատմական այն կապերին, որոնք չորրորդ

դարից ի վեր առկա են երկու Եկեղեցիների միջև՝ շեշտելով, որ այսօր ևս շարունակվում են այդ կապերը: Հունաց Պատրիարքը առանձնակի ջերմությամբ հիշեց իր այցելությունը Հայաստան 2001 թ.՝ քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի հանդիսությունների օրերին, ասելով, որ երջանկահիշատակ Գարեգին Առաջինի հետ այցելել է և տեսել նոր կառուցվող եկեղեցու հիմքերը, ապա Գարեգին Երկրորդի հետ աղոթել նորած եկեղեցում, և իր ուրախությունը հայտնեց, որ այժմ փոխադարձ այցելությամբ Ֆեներիի Պատրիարքաբանում է գտնվում Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այնուհետև Բարդուղիմեոս Պատրիարքը անդրադարձավ Տիեզերական և Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունների գործակցությանը՝ բարձր գնահատելով Մեսրոպ Պատրիարքի ունեցած ավանդը այդ հարաբերություններում:

Ապա Տիեզերական Պատրիարքին Տերունապարզ խաղաղության և սիրո իր ողջունն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Ձերդ Ամենասրբություն,

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք,

Գերաշնորհ Սրբազան Հայրեր,

Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր,

Միբելի ներկաներ,

Գոհություն և փառք ենք բարձրացնում երկինք, որ Տիրոջ շնորհով Հովվապետական անդրանիկ Մեր այցելությունն ենք կատարում Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության հավատավոր Մեր հոտին և այսօր եղբայրական փոխադարձ այցով հյուրն ենք Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Առաջինի: Երջանիկ առիթն ունենք այս գահասրահում բերկրաշատ սրտով ողջագուրվելու Ձերդ Ամենասրբությանը և հանուն Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանի՝ Կոստանդնուպոլսի հայոց Ամենապատիվ Պատրիարքի և Մեզ ուղեկից շքախմբի անդամների մաղթել Ձեզ քաջառողջ երկար կյանք և արդյունավոր գահակալություն:

Միբեցյալ եղբայր ի Քրիստոս,

Մեր հուշերում տակավին թարմ է Ձերդ Ամենասրբության այցելությունը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակի հոբելյանական տոնակատարությունների շրջանակում 2001 թ. նոյեմբերին:

Արդարև, պատմական էր և հիշարժան, երբ միասնաբար հռչակեցինք հոբելյանական այդ տարվա տոնակատարությունների ավարտը՝ աղոթքի խմբված Միածնաէջ Սուրբ Խորանի առջև և ծունկի եկած՝ Հայաստան աշխարհի երկրորդ Լուսա-

վորիչ Սուրբ Գրիգորի չարչարանաց Խորանի առջև, որտեղ Լուսավորչի հավատի անմար ջահը ջերմացրեց մեր հոգիները՝ որպես լուսաբեր ճրագ մեր առաքելության ճանապարհին: Ահավասիկ, այն այսօր ևս լուսավորում է մեր ընթացքը՝ հավատքի ու եղբայրության ուղիով:

Մեր երջանկահիշատակ նախորդներն այցելել են Ձերդ Ամենասրբությանն ու Ձեր երջանկահիշատակ նախորդներին: Այսօր Մենք ենք այցելում Ձեզ՝ ուրախ սրտով ու եղբայրական սիրով: Մենք այցելում ենք մի ժողովրդի ու Եկեղեցու, որ բաժնեկից է մեզ Քրիստոսի ժառանգությամբ, Նրա վկայությամբ ու Նրա սիրով: Մենք այցելում ենք մի Եկեղեցի, որի հետ կիսել ենք պատմությունը ձեռքբերումների ու արարումների, հալածանքների, տառապանքների և նահատակության, աղոթքի ու վկայության, որ արթուն է այսօր մեր սրտերում ու մտքերում: Մենք այցելում ենք մի Եկեղեցի, որ իր հարուստ անցյալով ու ներկայով շարունակում է Տիրոջ վկայությունը սիրով ու խաղաղությամբ:

Ձերդ Ամենասրբությանը այցելելով՝ Մենք վստահությունն ունենք, որ Մեր աղոթքների ու զրույցների, Մեր հանդիպումների ընթացքում պիտի կարողանանք վայելել Քրիստոսի սիրո ու եղբայրության պարզկները, որ պիտի փոխանցենք որպես օրհնություն հավատավոր Մեր զավակներին:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Հոգևոր անհուն ուրախության այս պահին ողջունելով Ձեզ և բոլոր ներկաներին Տերունապարզ խաղաղության մշտահունչ ողջույնով՝ ի խորոց սրտի հայցում ենք, որ Հավիտենական Լուսից բխող խաղաղությունը լուսավորի ու ջերմացնի մեր հոգիներն ու սրտերը՝ այն վստահությամբ ու համոզումով, որ այն պիտի նպաստի մեր հավատքի վկայության գորացմանը՝ ի խնդիր ժողովուրդների ու ազգերի, կրոնների ու Եկեղեցիների միջև խաղաղության, հաշտության ու բարեկամության ամրապնդման՝ հիմնված արդարության ու ճշմարտության անանց սկզբունքների վրա:

Աղոթում ենք առ երկնավոր Հայրը մեր՝ մաղթելով հայրապետության երկար օրեր Ձերդ Ամենասրբությանը: Հայցում ենք Տիրոջ գորակցությունը և հանապազ բարերարությունը Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքության ողջ հոգևոր և աշխարհական դասի համար: Թող Տիրոջ օրհնությամբ և հովանու ներքո համագործակցությունը, որ գոյություն ունի մեր Սուրբ Եկեղեցիների միջև, պտղաբերի՝ ի սեր և ի պայծառություն Քրիստոսի Եկեղեցու և նրա հանապազ գորացման:

Թող Տիրոջ սերը, խաղաղությունը և օրհնությունը լինեն մեզ ամենքիս հետ: Ամեն:

Պաշտոնական ընդունելությունից հետո տեղի ունեցավ առանձին հանդիպում, որի ընթացքում խոսվեց ընդհանուր միջեկեղեցական և մասնավորաբար երկու Եկեղեցիների հարաբերությունների մասին, ապա Հունաց Պատրիարքարանում ի պատիվ Հայոց Հովվապետի կազմակերպվեց պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում Նորին Սրբությունը դիմելով Տիեզերական Պատրիարքին՝ ասաց. «Հոգու բերկրանքով ենք Մենք և Մեզ ուղեկցող հոգևորականաց դասը եկել Հայաստանից՝

աշխարհասփյուռ մեր ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Մեր հոգում կրելով օրհներգությունը սաղմոսերգուի փառաբանական խոսքերի. «Որքան բարի է և որքան վայելույ, որ եղբայրները բնակվում են միասին» (Սաղմոս ԸԺԲ 1): Եկել ենք Մեր սերը բերելու Ձեզ, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Առաջին, և Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքության ուխտապահ միաբանության անդամներին ու հավատացյալ հոտին: Եկել ենք ամրագրելու մեր Եկեղեցիների միջև եղբայրությունն ու համագործակցությունը, վերահաստատելու մեր ընդհանուր վկայությունը մեր Տիրոջ ու Փրկչի Սուրբ Ավետարանին ու Եկեղեցու սրբազան ավանդությանը:

Արդարև, որքան բարի է և որքան վայելույ, որ եղբայրները բնակվում են միասին:

Հավաքված լինելով այստեղ ու վայելելով եղբայրական սիրո միասնությունը, աղոթում ենք, որ մեր սրտերում ամրագրվի ու է՛լ ավելի զորանա եղբայրության անքակտելի ուխտը և նոր արգասիքներ տա մեր համագործակցությունը և անխորտակելի դրոշմով զարդարվի մեր եղբայրական հաղորդությունը:

Աղոթում ենք նաև, որպեսզի Աստված Իր հզոր Աջի հովանու ներքո պահի ու պահպանի բոլոր ժողովուրդներին, նրանց մեջ ամրացնի սերն ու համագործակցությունը, լուսավորի հաշտության ու բարեկամության ճանապարհները:

Թող Տիրոջ սերն ու խաղաղությունը լինեն մեզ հետ և համայն աշխարհի. Ամեն»:

Վեհափառ Հայրապետը Տիեզերական Պատրիարքին վերստին հրավիրեց Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Երեկոյան ժամը 19.00-ին փոխադարձ այցով Գումգափուի հայոց Պատրիարքարան ժամանեց Հունաց Բարդուղիմեոս Պատրիարքը: Հունաց Պատրիարքին Պատրիարքարանի մուտքին դիմավորեց Մեսրոպ Պատրիարքը, և այնուհետև Պատրիարքարանի դահլիճում տեղի ունեցավ Տիեզերական Պատրիարքության և Հայոց Եկեղեցու պատվիրակությունների հանդիպումը, որից հետո Օրթոգյուղում Բարդուղիմեոս Պատրիարքի կողմից ընթրիք տրվեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակության:

Հունիսի 22-ի առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա-ն և Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մուրաֆյանը մեկնեցին Մարմարա ծովում գտնվող Հեյպել կղզի, ուր այցելեցին Սուրբ Երրորդություն հույն ուղղափառ վանք և Տիեզերական Պատրիարքության Հալքի հայտնի Դպրեվանք՝ Աստվածաբանական ճեմարան:

Վանքի մետրոպոլիտ վանահայրը ուրախությամբ ողջունեց բարձրաստիճան հյուրերին՝ նշելով, որ Հեյպել կղզու բնակչությունը և եկեղեցականները մեծ հարգանքով, խանդավառությամբ ու սիրով են ողջունում Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Վանահայրը հաստատեց, որ Հայոց Հայրապետի այցը վկայությունն է Ստամ-

բուլի հայ և հույն համայնքների միջև առկա ջերմ եղբայրության ու սիրո՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբության պատվաբեր այցելության համար:

Իր հերթին Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ կարևորելով հոգևորականաց նոր սերնդի պատրաստությունը Եկեղեցուն և ժողովրդին ծառայության գործում, և գոհություն հայտնեց Երկնավոր Տիրոջը՝ իրենց կյանքն Աստծուն ընծայող ապագա հոգևորականների դաստիարակության և պատրաստության նպատակով Եկեղեցիների առաջնորդներին ընձեռված հնարավորության համար: Նորին Սրբությունն ընդգծեց հույսի կարևորությունը կենաց պայքարում և այն առաքելության իրականացման գործում, որին կոչված են ամենքը: Հայոց Հայրապետը մասնավորաբար աղոթեց կղզում գտնվող Տիեզերական Պատրիարքարանի ճեմարանի վերաբացման համար, որ 1970-ականներին փակվել էր Թուրքիո իշխանությունների կողմից՝ նշելով, որ Հայ Եկեղեցին միշտ աջակից է իր Քույր Եկեղեցիներին բոլոր դժվարությունների մեջ:

Ի հիշատակ այս այցելության՝ Վեհափառ Հայրապետը քարե տախտակի վրա քանդակված «Տիրամայրը մանկան հետ» մի պատկեր նվիրեց Դպրեվանքին:

Այնուհետև հայ և հույն պատվիրակություններն այցելեցին նաև վանքի պատմական գրադարան և ծանոթացան վանական համալիրին. դիտեցին վանքի շրջափակում գտնվող ջրհորի հայկական արձանագրությամբ և հայերի կողմից նվիրված պատմական հին կափարիչը:

Կեսօրին երկու Հայրապետները շքախմբերի ուղեկցությամբ մեկնեցին՝ իր հայկական մեծաթիվ բնակչությամբ հայտնի Գնալը կղզի, ուր նախ եղան հունաց Պատրիարքարանի Այա Թրիատա եկեղեցում, ապա այցելեցին հայկական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Բազում հայրուղիներ, խմբված հայկական եկեղեցում, ողջունեցին Նորին Սրբություն Գարեգին Բ, Նորին Ամենապրբություն Բարդուղիմեոս Ա Հայրապետների և Ամենապատիվ Մեսրոպ Պատրիարքի այցը և մասնակցեցին համատեղ աղոթքի արարողությանը: Եկեղեցում երկու Հայրապետներին ողջունի խոսքով դիմեց Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքը՝ ուրախություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջին Հովվապետական այցի առիթով: Այս կղզում լինելը Կ. Պոլսո հայ համայնքին հայրապետական սկսվող այցելության նախաճաշակը անվանեց Ամենապատիվ Պատրիարքը՝ ասելով, որ այն տեղի է ունենում Վեհափառ Հայրապետի Կ. Պոլսո Տիեզերական Պատրիարքի հյուրը լինելու շրջագծում, և որ Կ. Պոլսո հայոց Պատրիարքությանը տրված այցելությունը պետք է սկսվի Ս. Աստվածածին Մայր եկեղեցուց, «Հրաշափառ»-ի արարողությամբ:

Պատրիարք Հայրը, կարևորելով Գնալը կղզու դերը պոլսահայության կյանքում, ասաց, որ այն սիրած տեղն էր բարեհիշատակ Շնորհք Պատրիարքի, որը այնտեղ հաստատեց Պատրիարքարանի ամառային հանգստավայրը, ինչպես նաև այնտեղ է գտնվում երեխաների կազդուրման համար նախատեսված ճամբարը, և վերջապես, որ այստեղ է գործել Ս. Ներսես վարժարանը:

Բարեպաշտ հավատավոր իր հոտին Հայրապետական իր խոսքն ուղղեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ նշելով, որ իր այցը Թուրքիա հնարավոր դարձավ համատեղ հրավերով Տիեզերական Պատրիարքի և Կ. Պոլսի հայոց Պատրիարքի, և ու-

րախություն հայտնեց միասնաբար աղոթելու, ինչպես նաև Հայ և Հույն Եկեղեցիների միջև հարաբերությունները ամրապնդելու հնարավորության համար, ինչը կնպաստի Քույր Եկեղեցիների միջև համագործակցության առավել զարգացմանը: Հղելով Հայրապետական օրհնությունները համախումբ հայորդիներին՝ Վեհափառ Հայրապետն աղոթեց աշխարհում խաղաղության և սիրո համար: Նորին Սրբությունը գնահատանքով նշեց, թե որքան հայտնի է պոլսահայ համայնքը իր հավատարմությամբ հանդեպ Մայր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ինչպես նաև ամուր հավատով և սիրով հանդեպ ազգային, մշակութային և հոգևոր արժեքները: Գարեգին Բ Հայրապետն անդրադարձավ նաև պատմության ընթացքին և այսօր Կ. Պոլսի հայ համայնքի ազգային կյանքում ունեցած ավանդին, որի շնորհիվ մշտապես պահպանվել է քրիստոնեական կյանքը Ստամբուլում: Նորին Սրբությունը հորդորեց նրանց հավատարիմ մնալ իրենց հավատին և հույսին, հաստատուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Եկեղեցուն և հայ համայնքին իրենց ծառայության ճանապարհին:

Վերջում Նորին Սրբությունը հրավիրեց Նորին Ամենասրբությանը և Ամենապատիվ Պատրիարքին Սուրբ Գրիգորի խորանից միասնաբար օրհնելու բարեպաշտ ժողովրդին: Արարողությունից հետո ի պատիվ հյուրերի եկեղեցու պարտեզում կազմակերպվեց ընդունելություն, հավարտ որի Բարդուղիմեոս Առաջինին հրաժեշտի և շնորհակալության խոսքով դիմեց Հայոց Հայրապետը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԸ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԴՈՒԴԻՄԵՈՍ Ա ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ

Ձերդ Ամենասրբություն,

Գերաշնորհ Հայրեր,

Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր,

Սիրելի ներկաներ,

Այս երկու օրերին Մենք վայելեցինք Ձերդ Ամենասրբության և Կոնստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքության միաբանության ջերմ հյուրընկալությունը: Միասնական աղոթքի խմբվեցինք Սուրբ Տաճարներում, ապրեցինք Եկեղեցու հոգեւորոգ խորհուրդը, հանդիպեցինք հավատացյալներին՝ Աստծո ներկայությունը Մեր բոլորիս սրտերում:

Վերադառնալով Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մեզ հետ տանելու ենք Ձերդ Ամենասրբության, Կոնստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքության միաբանության անդամների ու հավատացյալների սերն ու աղոթքները, մեր տպավորությունները, որ պիտի պատմենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության անդամներին և մեր ժողովրդին:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Հրաժեշտ տալով Ձերդ Ամենասրբությանը՝ մեկնում ենք ուրախությամբ: Մեկնում ենք գոհունակ սրտով:

Այս օրերին մեր աղոթքները, զրույցները, խորհրդածություններն ու մտածումները, անտարակույս, իրենց բարերար ներգործությունը պիտի ունենան մեր երկու Եկեղեցիների հարաբերությունների առավել զորացման ճանապարհին՝ նոր էջ բացելով մեր երկու Եկեղեցիների պատմության մեջ:

Այս այցելությունը, որ առավել ամրապնդեց մեր Եկեղեցիների հինավուրց կապերն ու հարաբերությունները, պետք է շարունակվի հավատքով և արիությամբ, որպեսզի բոլորս առավել հավատարիմ կարողանանք լինել «մենք մի ենք» Քրիստոսի պատգամին. որպեսզի մեր վկայությունն ավելի զորավոր լինի ու մեր ժողովուրդներն ավելի խաղաղ ապրեն:

Չնայած այն ձեռքբերումներին, որ մեր Եկեղեցիներն արձանագրել են իրենց հարաբերությունների պատմության մեջ, Մեր հանդիպումների ու զրույցների ընթացքում տեսանք, թե որքան շատ են մարտահրավերները Մեր առաքելության ճանապարհին:

Այս առումով մենք և մեր Եկեղեցիների անդամները՝ հոգևորական և աշխարհական, պետք է մեր ջանքերն առավել զորացնենք աղոթքով, ազնիվ հավատարմությամբ հանդեպ մեր հնագույն ավանդույթները, միմյանց առավել լավ ճանաչելով՝ աշխատենք միասին ու համատեղ: Այսօր հրամայական է հոգևորի և բարոյականի ամրագրումը հասարակական կյանքում, երիտասարդության քրիստոնեական կրթությունն ու դաստիարակությունը, ինչպես նաև խաղաղության, հաշտության ու բարեկամության ամրապնդումը: Աղոթում ենք, որ Աստված արդյունավորի մեր Եկեղեցիների համագործակցությունը այս առաքելության ճանապարհին:

Ձերդ Ամենասրբություն,

Մեր եղբայրական աղոթքները վերառաքելով առ երկնավոր Հայրը մեր՝ մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և հայրապետության երկար օրեր: Թող Ամենակալն Աստված ամուր և անսասան պահի Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքությունը, հոգևոր դասին ու հավատացյալ հոտին:

Հայցում ենք նաև, որ Տիրոջ օրհնությամբ դարավոր համագործակցությունը, որ գոյություն ունի Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքության ու Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության միջև, ամուր ու աննկուն լինի՝ ի սեր Թուրքիայում գործող Քրիստոնեական Եկեղեցիների զորացման և այստեղ ապրող ազգերի միջև հաշտության ու բարեկամության ամրապնդման:

Թող Տիրոջ սերը, խաղաղությունը և օրհնությունները լինեն մեզ ամենքիս հետ: Ամեն:

Գնալը կղզին առաջինն է համարվում Իշխանաց անվանվող կղզիների շարքում, ուր արիոսականության դեմ մղված պայքարի համար արքայվել է Ս. Ներսես Մեծը:

Գնալը կղզուց քաղաք ճանապարհին շոգենավը մոտեցավ Եասսը անվանվող կղզուն, ուր արքայված է եղել Ս. Ներսեսը:

Հունիսի 22-ի երեկոյան ավարտվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի եղբայրական փոխադարձ այցը Կոստանդնուպոլսի Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքին,

և սկսվեց Հովվապետական այցելությունը Կ. Պոլսի հայոց Պատրիարքություն և պոլսահայ համայնքին:

«Հրաշափառ»-ի հանդիսավոր երգեցողության ներքո պոլսահայ համայնքը մեծ ցնծությամբ ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին և ուղեկից շքախմբին Ստամբուլի Սուրբ Աստվածածին աթոռանիստ եկեղեցում: Բարիգալստյան արարողությանը ներկա էին հայոց Պատրիարքության բարձրաստիճան եկեղեցականներ, Քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Սնծովյան տնտեսական համագործակցության երկրների կազմակերպությունում ՀՀ ներկայացուցիչ տիար Կարեն Միրզոյանը, բազում հավատավոր հայորդիներ, ովքեր եկել էին ստանալու Հայրապետական Մյուռնաբույր Աջի օրհնությունը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջունեց Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրբաբյանը՝ հանուն հայոց Պատրիարքության, եկեղեցականների և բարեպաշտ հոտի բարի գալուստ մաղթելով Ստամբուլ և ասելով. «Վեհափառ Հայրապետ, բոլորի աչքերուն մեջ հրճուանքը կը տեսնեք այս այցելութեան առիթով, դարձեալ կ'ապրինք պատմական պահ մը պատմական այս գահուն վրայ»: Ամենապատիվ Պատրիարքը ապա հրավիրեց Նորին Սրբությանը Հայրապետական իր խոսքն ուղղելու ներկա հավատավոր ժողովրդին:

Պատմական ու հուզիչ այդ պահին Վեհափառ Հայրապետը գոհություն ու փառաբանություն բարձրացրեց առ Աստված:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի Ամենապատիվ Պատրիարք,

Գերաշնորհ, Հոգեշնորհ, Արժանապատիվ Հայրեր,

Միրեցյալ բարեպաշտ ժողովուրդ,

Գոհության աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ պարզեց Մեզ շնորհն ու ուրախությունը հրավերով Ամենապատիվ Սրբազան Պատրիարքի՝ Հովվապետական անդրանիկ Մեր այցելությունը կատարելու Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքություն և այսօր Մայր եկեղեցու խնկաբույր կամարների ներքո Տիրոջ Սուրբ անունով և Հայրապետական սիրով ողջունելու ձեզ: Միրելի Պատրիարք եղբայր, բերում ենք Ձեզ Մեր ջերմ զգացմունքները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության աղոթքն ու բարեմաղթանքները: Հոգու բերկրանքով ողջունում ենք ներկայությունը այստեղ մեր Քույր Եկեղեցիների հոգևոր եղբայրների, ովքեր ձեզ հետ Քրիստոսի Սուրբ անունն են փառավորում քրիստոնեական դարավոր հիշատակներ կրող այս հողի վրա: Ողջունում ենք այստեղ ներկայությունը Տիար Կարեն

Միրզոյանի՝ Սնծովյան համագործակցության երկրներում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի:

Երկու օրեր առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեր աղոթքը առ Աստված բարձրացնելով՝ ուղևորվեցինք դեպի ձեզ՝ ուղեկցությամբ Գերաշնորհ մեր Սրբազան Հայրերի: Նախ եղանք հյուրը Մեր սիրեցյալ եղբոր՝ Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի՝ Ամենապատիվ Պատրիարք Սրբազան Հոր և Մեր շքախմբի անդամների հետ: Նորին Ամենաարքայության հյուրընկալ հարկի ներքո աղոթքով միավորեցինք մեր սրտերը, նորոգեցինք մեր Եկեղեցիների բարի հարաբերությունները և եղբայրական սիրո կապերը: Հոգենորոգ ու հուսառատ եղան երկու Եկեղեցիների հոգևոր Պետերիս հանդիպումները: Այժմ գոհության ու փառաբանության աղոթքով ձեզ հետ ենք, սիրելիներ: Այս պատմական ու հուզիչ պահին Մեր հայցն ենք երկինք բարձրացնում մեր սուրբ հայրերի աղոթքով. «Թագաւոր խաղաղութեան, Քրիստոս Աստուած մեր, պարսպեալ պահեա՛ զժողովուրդս Քո ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչի Քո ի խաղաղութեան»:

Նվիրական այս աղոթքը դարեր շարունակ հնչել է նաև հոյակերտ այս եկեղեցում: Հնչել է շուրթերից մեր Եկեղեցու քաջանուն ու փառավորյալ շատ հոգևորականների, ովքեր հավատի մարտիկներ եղան, քաջ հովիվներ, որ իրենց կյանքը նվիրեցին Աստծուց իրենց վստահված հոտի համար և հավատի կենարար լույսով առաջնորդեցին դեպի արարումների, նվիրումի ու հավատարմության: Կոստանդնուպոլսի հայոց հինգ Պատրիարքներ Աստծո և ազգի կամոք կոչվեցին որպես Ամենայն Հայոց Հայրապետ, առաջին սպասավորը լինելու մեր Սուրբ Եկեղեցու և այս Սուրբ Խորանի առջև ծունր դնելով, Սուրբ Աստվածածնի բարեխոսությունը ազգիս համար հայցելով՝ մեկնեցին բազմելու Լուսավորչի Գահին: Դժվարին ժամանակներում լուսամիտ և քաջակորով Հայրապետները պահպանեցին մեր ժողովրդին համախումբ Սուրբ Էջմիածնի շուրջ՝ փրկության հույսով ու հավատով: Ահա Լուսավորչի Գահից՝ հավատի մեր սրբօրրան Սուրբ Էջմիածնից, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, եկել ենք Մեր օրհնությունն ու սերը բաշխելու ձեզ, եկել ենք, որպեսզի Հայրապետ և հոտ՝ մեր սուրբ հայրերի նույն ուխտով միավորենք մեր աղոթքները նրանց հայցին՝ հանուն աշխարհի խաղաղության և ի սփյուռս աշխարհի ազգիս՝ հավատով ու միաբան պահպանության:

Այս զգացումով ու ապրումով եկանք դեպի ձեզ, այցելելու հնագույն, խնկաբույր եկեղեցիները, որ պայծառ են ձեզանով, կրթական ու մշակութային հաստատությունները, որ շարունակում են լույսով լեցուն մնալ ձեր նախանձախնդրությամբ: Եկանք օրհնելու ձեր ընթացքը, քաջալերելու ձեր նախանձավոր ոգին, անվարան կամքը և անսակարկ նվիրումը, որով ամուր կանգնած եք Սուրբ Գրիգոր Լուսավորչի հաստատած հավատի վեմի վրա՝ Ձեր հոգիներում առկայծ պահելով Սուրբ Էջմիածնի լույսը, որը միշտ անմար փայլել է Պատրիարքության վանքերում ու եկեղեցիներում: Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անհուն կարոտն ու սերն ենք բերել ձեզ, սիրելի ժողովուրդ, ողջույն ենք բերել աշխարհասփյուռ մեր ժողովրդից, որ միշտ ձեզ հետ են իրենց ամենաջերմ աղոթքով: Բերել ենք նաև՝ մեր Հայրենիքի վերածնվող նոր կյանքի լավատեսությունը, համայն մեր ժողովրդի միասնական հոգևոր,

մշակութային կյանքի զորացման հույսերը: Իր բոլոր զավակներով է հաստատուն ու պայծառ մեր Սուրբ Եկեղեցին և զորավոր իր առաքելության ճանապարհին, որ նույնն էր երեկ, այսօր ու միշտ՝ առաջնորդելու հայոց փոքր հոտը դեպի կենարար ու փրկարար լույսը հավատի, դեպի խաղաղարար ու բարերար Աստված: Հավատարիմ մնանք Տիրոջ Սուրբ Ավետարանին, հավատարիմ մնանք մեր Սուրբ Եկեղեցուն և մեզ ավանդված խաղաղության հայցին:

Խաղաղության հայցով ապրեց ու ստեղծեց մեր ժողովուրդը Հայրենիքում ու նրա սահմաններից դուրս, որի վկան է նաև Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունը՝ հայոց քրիստոնեական կյանքի նվիրական ու պանծալի բազում հիշատակներով: Վեց հարյուր տարի Պատրիարքության եկեղեցիները զորավոր պահեցին առ Քրիստոս հավատը և փրկության հույսը մեր ժողովրդի հոգում, վեց հարյուր տարի դպրոցներում անաղարտ հնչեց մեր մայրենի լեզուն, ու ոգի դարձան հայրենական ավանդները: Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության հետ կապված են մեր մշակույթի ամենաբյուրեղ բարձունքներ՝ գրականության, գեղարվեստի, երաժշտության, ճարտարապետության ասպարեզներում: Կոստանդնուպոլսիսը ռահվիրաներից ու երախտավորներից է հայ տպագրության, հայ մտավոր կյանքի, հոգևոր ներաշխարհի դրսևորման, պիտի ասենք՝ լայնահուն ճանապարհ հայոց հանճարի՝ սիրով ու նվիրումով, պարծանքներով լեցուն: Այսօր ձեզ հետ միասին, սիրելի հայորդիք, Մենք ապրում ենք լուսաբնակ մեր հայրերի ներկայության զգացումը, նրանց հավատի ու հույսի մեծությունը, վեհությունը նրանց արարումների, որ խնամվել է Պատրիարքության հովանու ներքո:

Այդ մեծ ժառանգության կրողն ու պահպանողն եք դուք՝ առաջնորդությամբ նվիրյալ հոգևորականների՝ ի զուլի Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի: Ամեն հայի համար, նույնիսկ եթե չի եղել այստեղ, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունը իր անցած ուղիով, հայ կյանքին բերած արգասիքներով ու ներկայով շարունակում է մնալ մարմնավորում հավատարմության՝ հավատարմության հայրենական մեր արժեքներին, քրիստոնեական ոգուն, խաղաղության, արդարության հույսին, աշխարհի փրկության հույսին, որի շնորհը ունենք Քրիստոսով:

Այս Սուրբ Խորանի առջև ի խորոց սրտի Մեր աղոթքն ենք առ Աստված բարձրացնում Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության երջանկահիշատակ Գահակալների արդար հոգիների հանգստության համար՝ աղերսով, որ Տերը երկընքում ունկնդիր լինի նրանց հայցին՝ հանուն խաղաղ աշխարհի, հանուն իրենց խնամյալ հոտի և հաստատունության ու պայծառության մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Տերը մեր Հիսուս Քրիստոս օրհնի ձեր կյանքի բոլոր օրերը, ձեր գործերը արդար ու բարի, Իր սուրբ ու պատվական Խաչի ներքո պահպանի հաստատուն, շեն ու պայծառ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունը և երկար տարիների օրհնյալ գահակալություն պարզնի Ամենապատիվ Տ. Մեսրոպ Մութաֆյան Պատրիարքին: Աղոթենք, որ երկնային խաղաղությունը ուղեկից լինի համայն աշխարհին, Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդներին: Հանապազ աղոթենք հանուն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառության, համայն մեր ժողովրդի և մեր

Հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության բարօրության և հարատև կյանքի առաջընթացի համար: Թող շնորհն ու սերը մեր Տեր Հիսուս Քրիստոսի լինեն միշտ ձեզ հետ, համայն մեր ժողովրդի և ողջ աշխարհի հետ. այժմ և հավիտյան: Ամեն:

Այնուհետև, ողջույնի արարողության ավարտին, Ս. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որով Գերաշնորհ Ս. Արամ եպիսկոպոս Աթեշանին՝ Կրոնական ժողովի ատենապետին և Պատրիարքության լուսարարապետին, Մայր Եկեղեցուն բերած տասնյակ տարիների անսակարկ նվիրյալ ծառայության և վաստակի համար, շնորհվեց արքության պատիվ:

Այնուպես Պատրիարքարանի պարտեզում ի պատիվ Վեհափառ Հայրապետի կազմակերպվեց պաշտոնական ընթրիք, որին ներկա էին նաև Քույր Եկեղեցիների և մի շարք դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ:

Երեկոյի ընթացքում հավաքվածներին ողջույնի խոսքով դիմեց Ս. Մեսրոպ Պատրիարք Մուրաֆյանը՝ իր ուրախությունը հայտնելով ստեղծված միջեկեղեցական ջերմ մթնոլորտի համար: Ամենապատիվ Պատրիարքը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը, որ, ընդառաջելով իր միջնորդությանը, արքության պատիվ է շնորհել Ս. Արամ եպիսկոպոս Աթեշանին: Պատրիարք Հայրը նաև իր ուրախությունը հայտնեց, որ Կ. Պոլսոց հայոց Պատրիարքության հոգևորականներից Ս. Սահակ վրդ. Մաշալյանը, այժմ իր ծառայությունը բերելով Ս. Էջմիածնում, վերջերս հաջողությամբ պաշտպանել է վարդապետական իր թեզը՝ ստանալով մասնավոր վարդապետության առաջին չորս աստիճանները:

Այնուհետև հավաքվածներին Հայրապետական իր խոսքը ուղղեց Նորին Սրբությունը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ**

*Գերաշնորհ Սրբազան Հայրեր,
Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր,
Միրելի ներկաներ,*

Մեզ համար, որպես Հայրապետ Ամենայն Հայոց, հոգևոր ուրախություն է ողջունել ներկայությունը Ստամբուլում գործող Եկեղեցիների ներկայացուցիչների: Ճշմարիտ են սաղմոսերգուի խոսքերը. «Որքան բարի է, որքան վայելուչ, որ եղբայրները բնակվում են միասին» (Սաղմ. ՃԺԲ 1):

Միրելի ներկաներ,

Հայ Առաքելական Եկեղեցին, իր հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաջնորդությամբ, միշտ նպաստել է Եկեղեցիների միջև համագործակցության ու միության գորացման աստվածահաճո գործին:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին ապրած ու գործած Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք և ապա Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը Եկեղեցիների բազմազանությունը համեմատում էր ծաղկեփնջի հետ. «ուր ամեն մի ծաղիկ ունի իր ուրույն գույնը, իր ուրույն երանգը և իր ուրույն բույրը, որոնք բոլորը մեկտեղված են Քրիստոսի սիրո կապով»:

Այս ըմբռնումը բխում է մեր Եկեղեցու սրբազան ավանդությունից ու մեր ժողովրդի պատմական փորձառությունից: Այս ոգով են կառուցվել մեր հարաբերությունները Քույր Եկեղեցիների հետ:

Մեր Եկեղեցիները իրենց հարուստ աստվածաբանությամբ, հոգևոր փորձառությամբ ու մշակույթով այսօր ևս շարունակում են իրենց վկայությունը՝ նպաստելով Եկեղեցու միությանը, ժողովուրդների միջև խաղաղության ու վստահության հաստատմանը, ազգերի համահավասար զարգացմանն ու զորացմանը, մարդու իրավունքների ու արժանապատվության պաշտպանությանը, կրոնական-հոգևոր և բարոյական արժեքների տարածմանը:

Մեր վկայության դաշտը էկումենիկ հարաբերություններն են, որոնք 20-րդ դարի երկրորդ կեսից նշանավորվեցին ձեռքբերումներով միջեկեղեցական ու միջկրոնական հարաբերություններում՝ հիմնված միմյանց տարբերություններն ընդունելու և հարգելու, միմյանց ճանաչելու, եղբայրական սիրով միմյանց օժանդակելու ու նեցուկ կանգնելու սկզբունքներին:

Սիրելիներ,

Եղբայրական մեր այս հավաքը ևս դրա վկայությունն է, որ քայլ է՝ ընդառաջ առաքելախոս պատգամի. «Յարգեցէ՛ք բոլորին, սիրեցէ՛ք եղբայրութիւնը...» (Ա Պետր. Բ 17):

Մաղթում ենք Տիրոջ գորակցությունը մեզ բոլորիս, և թող Նրա ամենախնամ Աջը հովանի լինի այստեղ ապրող ժողովուրդներին: Եվ թող Ամենակալն Աստված հաստատուն և անսասան պահի այստեղ գործող Եկեղեցիները՝ ի փառս Իր Սուրբ Անվան և ի բարօրություն այստեղ ապրող ժողովուրդների: Ամեն:

Հունիսի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Կ. Պոլսի հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը Հայրապետական շքախմբի ուղեկցությամբ այցելեցին Պաքրգյուղի Ծնունդ Ս. Աստվածածնի եկեղեցի և եկեղեցուն կից Տատյան վարժարան:

«Հրաշափառ»-ի արարողությունից հետո Նորին Սրբությունը Հայրապետական իր պատգամն ու օրհնությունը բերեց ներկա հավատավոր ժողովրդին, ապա Կ. Պոլսի հայոց Պատրիարքի հետ ներկա գտնվեց վարժարանի սաների կողմից պատրաստված հանդիսությանը: Եկեղեցին և վարժարանը գտնվում են Ստամբուլի այն հատվածում, ուր թվով երկրորդ մեծ հայ բնակչությունն է ապրում:

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը հանդիպեց Տատյան վարժարանի շուրջ 400 սաների, ուսուցիչների, տնօրինության և հարյուրավոր հավատացյալների հետ՝ ընդգծելով պոլսահայության՝ ազգային կյանքում ունեցած կարևոր դերը շուրջ 500 տարիների ընթացքում: Նորին Սրբությունը մեծապես կարևորեց ե-

կեղեցու և դպրոցի միմյանց մերձ գտնվելը և Հայրապետական իր գնահատանքը հայտնեց համայնքի ծխական խորհրդին, տնօրինությանը և վարչությանը իրենց նվիրյալ ծառայության համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց նաև վարժարանի սաներին իրենց տաղանդաշատ ելույթների համար և հրավիրեց Հայաստան՝ այցելելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ հովանու ներքո գործող Հայորդյաց Տները:

Ի հիշատակ այս հանդիպման Վեհափառ Հայրապետը եկեղեցուն նվիրեց Սուրբ Մեղանի արծաթյա խաչ, իսկ վարժարանին՝ Ս. Էջմիածինը ներկայացնող պատկեր: Վարժարանի տնօրինությունն էլ Նորին Սրբությանը նվիրեց վարժարանի «Հուշամատյանը»:

Այնուհետև Հայրապետական պատվիրակությունը ուղղվեց դեպի Սուրբ Փրկիչ Ազգային հիվանդանոց՝ դիմավորվելով հիվանդանոցի հոգաբարձու և Հովվապետական այցի կազմակերպիչ հանձնախմբի նախագահ Պետրոս Շիրինօղլու կողմից: Տ. Մեսրոպ Պատրիարքը հանգամանորեն ներկայացրեց հիվանդանոցի պատմությունը՝ նշելով, որ այն հաստատվել է ավելի քան 175 տարի առաջ և Թուրքիայում ներկայիս հայկական ազգային մեծագույն հաստատությունն է: Ամենապատիվ Պատրիարքը նաև նշեց, որ այն եղել է Օսմանյան կայսրության առաջին հիվանդանոցը և այսօր էլ շարունակում է իր առաքելությունը երկրի հայ համայնքի կյանքում: Սուրբ Փրկիչ հիվանդանոցի հովանու ներքո նաև գործում են ծերանոց և հաշմանդամ երեխաների կենտրոն:

Ամենայն Հայոց Հովվապետն այցելեց հիվանդներին, հանդիպեց բժշկական անձնակազմի, վարչության և հոգաբարձուների հետ: Հիվանդանոցի մատուռում Նորին Սրբության հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ հաստատության բոլոր բարերարների հոգիների խաղաղության համար:

Իր խոսքում Հայոց Հայրապետը իր գնահատանքը հայտնեց Սրբազան Պատրիարքի և բժշկական կենտրոնի հոգաբարձուների գործունեությանը՝ նշելով, որ հիվանդանոցի մատուցած ծառայությունը սքանչելի արտահայտությունն է քրիստոնեական քարոզչության և սիրո: Նորին Սրբությունը նշեց, որ յուրաքանչյուր անհատ կոչված է ծառայության իր նմանին, և Սուրբ Փրկիչ հիվանդանոցն իր մարդասիրությամբ և բարերարությամբ ծառայության քրիստոնեական առաքելության լավագույն օրինակն է:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց հիվանդանոցի թանգարան:

Ս. Փրկիչ հիվանդանոցը ամեն տարի կազմակերպում է «Համբարձման սիրո սեղան» անվանվող հավաքույթ, որն այս տարի կազմակերպվեց Հայրապետական այցելության շրջագծում:

Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց Ս. Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձության ատենադպիր Հարություն Էոզչեկեքը՝ հիշեցնելով, որ պոլսահայության այս սերունդը երեք անգամ ապրել է Հայոց Հայրապետ դիմավորելու ուրախությունը, և իր խոսքում հանգամանալից ներկայացրեց հիվանդանոցի բաժանմունքներն ու բուժսարքավորումները:

Այնուհետև բուժանձնակազմին և հավաքվածներին գնահատանքի իր խոսքը ուղղեց Նորին Սրբությունը՝ ասելով, որ ինքը շրջեց հիվանդանոցի բաժանմունքներով, թեև բոլոր տեղերում չհասցրեց լինել, սակայն այն, ինչ որ տեսավ, այդ էլ մեծ ուրախություն պատճառեց, որովհետև տեսավ, թե ինչ մեծ հոգատարություն է ցուցաբերվում հիվանդների հանդեպ: Մինչ այդ լսել էր և այժմ համոզվեց, որ հայրենական իր ավանդներին հավատարիմ է և իր բարեսիրական հաստատությունները կանգուն է պահում պոլսահայությունը: Նորին Սրբությունը այնուհետև ասաց. «*Այն ուրախությունը, որ այստեղ զգացինք, պետք է դառնա աղոթք և բարձրանա առ Աստված ձեր բարօրության և երջանկության համար: Բարձրորեն գնահատում եմ Ս. Փրկիչ հիվանդանոցի աստենապետ Պետրոս Շիրինոյուն, կալվածոց հանձնախմբի, տիկնանց հանձնախմբի, խնամատար հանձնախմբի անդամներին և այս հաստատության հետ կապված բոլոր այն անձերին ու կազմակերպություններին, որոնք կանգուն ու պայծառ են պահում հիվանդանոցը: Բազմապատկեցեք ձեր ջանքերը, որպեսզի առավել զորանա այս համայնքը*»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հիվանդանոցին նվիրեց Ս. Էջմիածնի պատկերաքանդակը՝ ասելով. «*Գիտեմ ձեր կապվածությունը Ս. Էջմիածնին: Ազգի սիրտն է ցոլանում Ս. Էջմիածնի լույսով: Ամուր մնացեք առ Սուրբ Էջմիածինը ձեր հավատի մեջ*»:

Երեկոն ավարտվեց Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի արտասանած «Պահպանիչ»-ով:

Կեսօրին Ամենայն Հայոց Հովվապետն այցելեց նաև Սամաթիայի Սուրբ Գևորգ եկեղեցի, որը մինչև 1641 թ. եղել է Կ. Պոլսի հայոց Պատրիարքների նստավայրը: Նորին Սրբությունը ողջունեց և օրհնեց խոռոներամ ժողովրդին՝ հորդորելով հավատարիմ մնալ Մայր Եկեղեցուն և ազգային արժեքներին:

Վեհափառ Հայրապետն այցելեց նաև եկեղեցու հարևանությամբ գտնվող պատմական Սահակյան ազգային վարժարան, հանդիպեց կրթօջախի սաների, ուսուցիչների և տնօրինության հետ:

Վարժարանում տեղի ունեցավ նաև մրցանակաբաշխություն, որի ընթացքում մրցանակներ տրվեցին այն աշակերտներին, ովքեր հաղթել էին գրականության և կրոնական առարկաների միջվարժարանային մրցույթում: Վեհափառ Հայրապետը ևս նվերներ հանձնեց աշակերտներին:

Ի հիշատակ Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցի այցելության, Վեհափառը այս եկեղեցուն ևս նվիրեց արծաթյա խաչ, իսկ եկեղեցու թաղական խորհրդի կողմից արծաթյա մի ավսե Նորին Սրբությանը նվիրեց Ս. Մեսրոպ Պատրիարքը:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանի, ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Ս. Խաժակ արքեպս. Պարսամյանի, Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների կազմակերպության ՀՀ ներկայացուցիչ տիար Կարեն Միրզոյանի և Հովվապետական այցի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ տիար Պետրոս Շիրինոյուն ուղեկցությամբ, Ստամբուլի նահանգա-

պետարանում հանդիպում ունեցավ Ստամբուլի նահանգապետ Մուամմար Գյուլերի հետ:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ Տիեզերական Պատրիարքի և Կ. Պոլսի հայոց Պատրիարքի համատեղ հրավերով գտնվում է Ստամբուլում միջեկեղեցական և Հովվապետական այցով: Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ առիթ ընծայվեց իրեն առավել ծանոթանալու ստամբուլաբնակ հայ համայնքին:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետը ասաց, թե տեղյակ է, որ հոգևոր և ազգային կյանքը արդյունավոր ձևով է կազմակերպվում հայ համայնքում: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև համայնքում առկա կալվածային և ուսումնական որոշ հարցերի և հույս հայտնեց, որ դրանք կառաջնորդվեն բարեհաջող լուծման:

Պատասխան իր խոսքում նահանգապետ Գյուլերը, ողջունելով Հայոց Հայրապետի այցը Ստամբուլ, հույս հայտնեց, որ երկու ժողովուրդների հարաբերությունները կբարելավվեն:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը, անդրադառնալով երկու ժողովուրդների հարաբերություններին, ընդգծեց, որ բարելավման առնչությամբ նույն ցանկություններն ունի նաև հայ ժողովուրդը, և համոզում հայտնեց, որ այդ հարաբերությունները կբարելավվեն արդարության հիմքի վրա:

Հանդիպմանը քննարկվեցին նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցի, ինչպես նաև Ստամբուլի նահանգապետարանի գործունեությանն առնչվող հարցեր:

Նահանգապետի հետ հանդիպումից հետո Նորին Սրբությունը վերադարձավ Պատրիարքարան, ուր տեղի ունեցավ հանդիպում պոլսահայ մտավորականության հետ: Հանդիպումը վարում էր ասմունքող Մելիտա Օքթանյանը, որը բարի գալուստ մաղթեց Վեհափառին: Այնուհետև ողջույնի խոսք ասաց վարժարանի ուսուցչական խորհրդի անդամներից Արամ Գամպուրյանը, որը ներկայացրեց իրենց խորհրդի գործունեությունը և հատկապես հրատարակչական աշխատանքները՝ նշելով, որ իրենք ձեռնամուխ են եղել հայ դասական գրականության վերահրատարակությանը:

Վեհափառ Հայրապետին ողջույնի խոսքով դիմեց նաև պոլսահայ ճանաչված մտավորական Վարդ Շիկահերը: Այնուհետև սրտի խոսք ասաց «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոբեր Հատտեճյանը. «Երկու օր է ի վեր մեզի հետ էք, ամենասիրելի Վեհափառ Հայրապետ: Բայց ժամերը այնքան լեցուն էին, որ հիմա մեզի կը թուի թե արդեն օրեր է ի վեր միասին ենք: Իրականությունն ալ այն է որ իսկապես միշտ միասին էինք, առաջին օրեն ի վեր մենք Ձեր Վեհափառութեան ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ կ'ապրենք միասնություն մը: Մեր ժողովուրդը, մտավորականն մինչև ամենն համեստ ռամիկը, իր ակնարկները միշտ ուղղած է դեպի Մայր Աթոռ, եւ ամեն անգամ որ իր թաղին եկեղեցիին ղօղանջները լսած է, այդ ղօղանջներուն մէջ լսած է նաեւ Էջմիածնի Մայր Տաճարի ղօղանջները, որոնք թէւ այնքան տարբեր ձայն ունին, որոնք սակայն միշտ կը նոյնանան մեր եկեղեցիներու ղօղանջներուն հետ: Իսթանպուլահայ մտավորականությունը գիտէ թէ սա պահուն կ'ապրի

միասնություն մը գոր պիտի չկարենա մոռնալ երբեք: Մեր մտաւորականներն ու աւուստագէտները այսուհետեւ միշտ պիտի ներշնչուին այն քաղցր ժպիտէն, գոր Ձեր Վեհափառութիւնը միշտ ունի դէմքին վրայ: Մենք միշտ հպարտ ենք անով որ մեր մտաւորականութիւնը մեր ժողովուրդի կեանքին ամենէն փոթորկոտ օրերուն իսկ չէ անտեսած մեր մշակոյթը, չէ արտոնած որ շղթան փրթի: Այդ մութ օրերուն շատ բան կորսնցուցինք, բայց չկորսնցուցինք մեր հաւատքը մեր մշակոյթին ու մեր տոհմիկ ապրումներուն նկատմամբ: Ստեղծագործական աշխատանքի լուծը դրուեցաւ յաջորդող սերունդներուն ուսերուն վրայ եւ ասիկա երկրի այդ շրջանի աննպաստ պայմաններու բերումով կրկնապէս ծանր լուծ էր: Բայց այդ լուծը տարուեցաւ քաղցր պատրաստականութեամբ: Այսօր մենք հպարտօրէն կրնանք անդրադառնալ որ տուած ենք նախանձելի գործ ամէն մարդէ ներս, ունեցած ենք բանաստեղծներ, գրագէտներ, երաժիշտներ, նկարիչներ, քանդակագործներ, երգչախումբեր եւ ամէն ինչ: Ունինք հայատառ մամուլ, մեր օրաթերթերը, որոնք աշխարհի բոլոր թերթերէն կը տարբերին անով որ բացառիկ կերպով շատ տեղ կուտան մեր մշակութային ու ազգային ապրումներուն: Որպէս գրականութեան նուիրուած անձ, կուգեմ ամենէն առաջ շեշտել թէ մենք այստեղ ստեղծած ենք գրական դպրոց մը որ նախանձելի է ամբողջ հայ մշակոյթին համար: Վերջին տասնամեակներու ընթացքին հրատարակած ենք հարիւրաւոր, նոյնիսկ հազարաւոր գիրքեր: Միւս մարդերէն ներս ալ տուած ենք շօշափելի գործ: Կրնաք վստահ ըլլալ, Վեհափառ Տէր, որ աշխատանքի այս թափը այսօր ալ կը շարունակուի եւ այդ աշխատանքին վրայ այժմ կուգայ աւելնալ Ձեր Վեհափառութեան այցելութեան պարգեւած ներշնչումը: Մենք շնորհակալ ենք այս հանդիպումին համար ու կուգենք որ գիտնաք թէ այսուհետեւ մեր արձանագրուելիք յաջողութիւններուն մէջ Ձեր Սուրբ Օծութիւնն ալ պիտի ունենայ իր բաժինը որպէս ներշնչող ու քաջալերող ոյժ»:

Պոլսահայ մտավորականությանը ապա գնահատանքի իր խոսքը ուղղեց Ամենապատիվ Պատիրարք Հայրը՝ ասելով, որ իրեն երջանիկ է համարում՝ տեսնելով մտավորականության համախմբվածությունը Պատրիարքարանի շուրջ և առ Հայոց Եկեղեցին ծառայասիրության նրանց ոգին. «Ուրախ եմ որ գիրքեր կը հրատարակուին ու մշակութային գործունէութիւնը կը շարունակուի: Ասիկա այսօրուան դժուարին պայմաններուն մէջ մասնաւոր արժեք կը ստանայ: Բոլորս ալ գիտենք որ օրէ օր կը տկարանայ մեր մշակոյթը: Անշուշտ Հայաստանի հետ երկուստեք յարաբերութիւններ եթէ ստեղծուին, անիկա պիտի նպաստէ որպէսզի մերինները նոր ներշնչումներ ունենան: Մենք այնուհանդերձ ուրախ ենք որ Վեհափառը յատուկ ուշադրութիւն կեդրոնացուցած է մեր մտաւորականութեան վրայ եւ հիմա կը սպասենք որ իր պատգամը շնորհէ մեր մտաւորականութեան»:

Հավաքվածներին այնուհետեւ Հայրապետական իր խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ասելով. «Հանդիպում Հայրապետի ու Պոլսո մտավորականության: Այս հանդիպումը կարևոր նշանակություն ունի և առիթ է, որպէսզի ես իմ գնահատանքի խոսքը փոխանցեմ ձեզ: Այն, ինչ որ կա այստեղ որպէս հաջողության արտահայտություն, ձեռքբերումն է հայ մտավորականության: Հայ մտավորականությունը մեծ վաստակ ունի ոչ միայն հոգևոր կյանքից ներս, այլև ամենա-

տարբեր բնագավառներում: Այնքան ժամանակ, որ հավատարմություն կցուցաբերեք դեպի մեր մշակութային արժեքները, այնքան մեր ընթացքը կուղղվի և հաստատուն կլինի դեպի ապագան:

Դուք շատ փառավոր մի մտավորական սերնդի ժառանգորդներն եք: Այս հանգամանքը որքան պատվաբեր, այնքան էլ պարտավորեցնող է:

Բայց դուք պատվով եք կատարում ձեր պարտքը, և արդյունքը ահավասիկ այս հայաշունչ և հայաբույր գաղութն է, արդյունքը 38 եկեղեցիներն ու 16 ազգային վարժարաններն են, երկու ամենօրյա հայկական լրագրերը»: Վեհափառ Հայրապետը նաև հույս հայտնեց, որ Հայաստանի հետ հարաբերությունների սերտացումը նոր ավիշ է հաղորդելու պոլսահայ կյանքին:

Վերջում Նորին Սրբությունը տեղի հայ մտավորականությանը հրավիրեց հյուրընկալվել Ս. Էջմիածնում, ապա հանդիպման ավարտին ներկաները խմբովին նկարվեցին Հայոց Հայրապետի հետ:

Մտավորականների հետ հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը Պատրիարքարանի դահլիճում հանդիպեց նաև երիտասարդության հետ՝ հորդորելով միշտ հավատարիմ մնալ ազգային-եկեղեցական ավանդներին: Ի հիշատակ այս հանդիպման՝ Նորին Սրբությունը հավաքված բոլոր երիտասարդներին բաժանեց հուշանվերներ:

Երեկոյան ի պատիվ Վեհափառ Հայրապետի Պատրիարքարանում հյուրասիրություն կազմակերպվեց Ս. Մեսրոպ Պատրիարք Մութաֆյանի կողմից, որին հրավիրված էին Կ. Պոլսոց հայոց Պատրիարքության հոգևորականները և Պատրիարքարանի աշխատակազմը: Ի հիշատակ այս հանդիպման Վեհափառ Հայրապետը բոլոր քահանաներին նվիրեց Մայր Աթոռում պատրաստված արծաթյա մասնատուփեր:

24 հունիսի. Առավոտյան Նորին Սրբությունը և Հայրապետական շքախմբի անդամները այցելեցին ճարտարապետ Կարապետ Պալյանի նախագծով կառուցված Տոհմապահչեի պալատ: Դիտելով այս շինությունը և այնտեղ ցուցադրվող գործերը՝ Վեհափառը իր տպավորությունները գրի առավ պատվո հյուրերի մատյանում:

Օրվա հաջորդ հանգրվանը Սուրբ Մոֆյայի տաճարն էր, ուր Նորին Սրբությունը ուշադրությամբ դիտեց տաճարի հոյակերտ խճանկարները և սրբապատկերները:

Կեսօրին Վեհափառ Հայրապետը այցելեց Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցի: Եկեղեցու գերեզմանատանը Նորին Սրբությունը աղոթեց և հոգվոց ասաց Պետրոս Դուրյանի, Մատթեոս Զարիֆյանի, Պալյան գերդաստանի և այստեղ ամփոփված հասարակական-մշակութային մյուս գործիչների հոգիների խաղաղության համար:

Նորին Սրբությանը Սկյուտար և այս եկեղեցի բարիգալստյան խոսք ասաց Ս. Մեսրոպ Պատրիարք Մութաֆյանը՝ ներկայացնելով նաև Ս. Խաչ եկեղեցու պատմությունը: Այնուհետև հավաքվածներին դիմեց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով Սկյուտարի հայության եկեղեցանվեր գործունեությունը և Ս. Խաչ դպրեվանքի դերը ոչ միայն պոլսահայության, այլև սփյուռքահայության կյանքում: Նկատի ունենալով Գարեգին Ա Տրապիզոնցի Պատրիարքի «Աշխարհի լոյսը ի Հայս» գիրքը, Վեհափառ Հայրապետը ասաց. «Բարեհիշատակ Պատրիարքը այս

դպրեվանքը կառուցեց, որպեսզի «աշխարհի լույսը ի Հայս» ծավալվի նաև այս դպրեվանքով: Աղոթք և խոնարհում Գարեգին Պատրիարքի հիշատակին, որի ջանքերով հոգևորականներ պատրաստվեցին, որոնցից ոմանք այսօր մեզ հետ են»: Վեհափառը հատկապես շեշտեց այն հանգամանքը, որ ուր գնացել է, հանդիպել է դպրեվանքի սաներին:

Այնուհետև եկեղեցուն կից սրահում կազմակերպվեց ընդունելություն, որի սկզբում Վեհափառ Հայրապետին ողջույնի խոսքով դիմեց «Ս. Խաչ» դպրեվանքի տնօրեն Հայկ Նշանը, ապա ի հիշատակ այս այցելության Վեհափառ Հայրապետը քանդակագործ մի խաչ նվիրեց, իսկ Ս. Խաչ եկեղեցու թաղային խորհրդի կողմից Հայոց Հայրապետին տրվեց արծաթյա մի ափսե և սափոր: Դպրեվանքի խնամակալության ատենապետ դոկտ. Թազվոր Անանն էլ նվիրեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի համապատկերի վրա Հայոց Հայրապետին և Կ. Պոլսո Ամենապատիվ Պատրիարքին ներկայացնող մի նկար: Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը դպրեվանքի պարտեզում լուսանկարվեց հին և նոր դպրեվանքիների հետ:

Երեկոյան պալլանակերտ Զրադան պալատի սրահներից մեկում ի պատիվ Հայրապետական այցելության կազմակերպվեց համայնքային հյուրասիրություն Պատրիարքարանի և Վեհափառի ընդունելության կարգադիր հանձնախմբի կողմից, որին մասնակցեցին 400 հրավիրյալներ:

Օրվա հանդիսավարն էր Նարոտ Սահակոյլին, որը բացելով երեկոյթը՝ ասաց. «Վեհափառ Տեր, ինչպես դուք ալ կը նշմարեք, մեր բարեպաշտ համայնքը իր համեստ պայմաններով միշտ կանգուն կը պահէ իր սուրբ եկեղեցիները, վարժարաններն ու հիվանդանոցները»:

Վեհափառ Հայրապետին այնուհետև ողջույնի ջերմ խոսքով դիմեց «Ս. Փրկիչ» հիվանդանոցի հոգաբարձության ատենապետ և Նորին Սրբության այցելության կազմակերպման կարգադիր հանձնախմբի նախագահ Պետրոս Շիրինոյլին:

Երեկոյի ընթացքում գեղարվեստական կատարումներով հանդես եկան երգչուհի Լյուսի Գահվեճիոյլին և Շուշան Գալաթաշը, որոնց երգեհոնային կատարումներով ընկերակցեց Մելիքճան Զամանը:

Երեկոյի ընթացքում ձեռամբ Վեհափառ Հայրապետի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրվեցին «Ս. Փրկիչ» հիվանդանոցի հոգաբարձության նախկին ատենապետ Սեդրակ Թոքատը (տե՛ս էջ 44), պոլսահայ ճանաչված գործիչ և բարերար Հայկ Արսլանյանը (տե՛ս էջ 42) և Պետրոս Շիրինոյլին (տե՛ս էջ 46): Նորին Սրբությունն ասաց, որ առաջիկային «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով կպարգևատրվեն նաև Մկրիտիչ Սերթիմշեքն ու Հակոբ Թերզյանը:

Հայրապետական պարգևաբաշխությունից հետո Նորին Սրբությանը ողջույնի խոսքով դիմեց Ս. Մեսրոպ Պատրիարքը: Ամենապատիվ Սրբազան Հայրը պատմական անվանելով այս այցելությունը, ասաց, որ այն պատմական է, որովհետև 370-ական թվականներից մինչև այսօր 12 հայրապետներ է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանգամանքով այցելել են Կ. Պոլիս: Ամենապատիվ Պատրիարքը նշեց, որ իրենց սերունդը նախ վայելել է ներկայությունը Վազգեն Ա Հայրապետի, ով իր այցելությամբ եկավ մեղմելու Գարեգին Խաչատուրյան Պատրիարքի վախճանման սուգը: Այնուհետև Պատրիարք Հայրը Վեհափառ Հայրապետին նվիրեց Հովհաննես

Կոլոտ Պատրիարքի ճարմանդի հետևողությամբ պատրաստված մի ճարմանդ: Հոգևոր խոր խորհուրդ հաղորդելով այս նվերին, Ամենապատիվ Պատրիարքն ասաց, որ ինչպես ճարմանդը, որը որպես մասը եկեղեցական զգեստավորման, իրար է միացնում փիլոնի երկու թևերը, այնպես էլ Վեհափառ Հայրապետը իրար միացած թող պահի Հայրենիքն ու Սփյուռքը:

Հավաքվածներին այնուհետև սիրո և գնահատանքի իր խոսքը ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՀԸՆԹԱՑՍ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ**

*Սիրելի Ամենապատիվ Սրբազան Պատրիարք,
Գերաշնորհ, Հոգեշնորհ, Արժանապատիվ Հայրեր,
Ի Քրիստոս հոգևոր եղբայրներ, Քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ,
Սիրելի հավատավոր հայորդիներ,*

Մեր այս այցելության ուրախադիմ հանդիպումներին այսօր գումարվում է ճաշի սեղանի շուրջ մեր հանդիպումը ձեզ հետ: Ջերմ ու մտերմիկ այս մթնոլորտում մինչ մենք կանդրադառնանք եկեղեցական մեր կյանքի հաջողություններին և մեզ հուզող հարցերին, ցանկանում ենք գոհունակության Մեր խոսքը ուղղել Ամենապատիվ Տ. Մեսրոպ Սրբազան Պատրիարքին, ում ազնիվ հրավերով առիթն ունեցանք ձեզ հետ լինելու:

Նախորդ օրերի խանդավառությունը, մեր ապրած ոգևորությունն ու հպարտության զգացումն է այսօր Մեր հոգում: Անկեղծ գոհունակություն էր Մեզ համար Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի հրավերով եղբայրական փոխադարձ այցով լինել իր հյուրը և մտերմիկ զրույցներով ու միասնական աղոթքներով վերահաստատել ու նոր ներշնչանք հաղորդել մեր Եկեղեցիների եղբայրությանն ու սերտ համագործակցությանը, որոնք նախանձախնդրորեն խնամվում են Տիեզերական Պատրիարքության և Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության ամենօրյա առնչություններով: Արդարև, եղբայրական սիրո ու համագործակցության ոգին է իշխում Հայ Եկեղեցու և մեր Քույր Եկեղեցիների հարաբերություններում: Մեր Եկեղեցիները նույն խնդիրներն ունեն ներկա կյանքի հրամայականների առջև և Ավետարանի քարոզության նույն առաքելությունը՝ մեր ժողովուրդների կյանքում:

Հովվապետական Մեր այցելությունը անջինջ հուշեր է թողնելու Մեր հոգում: Անհուն բերկրանք ու խնդություն ենք ապրում ձեզ հետ՝ հավատավոր Մեր զավակներիդ հետ ջերմ ու խանդավառ հանդիպումներով, տեսնելով ձեր հավատավոր կյանքը, համախմբությունը մեր Եկեղեցու շուրջ, հավատարմությունը մեր սրբություններին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության վեցդարյա հիշատակներին ու ավանդներին: Մեր գնահատանքը ձեզ, Մեր սերը, Մեր օրհնությունը, որ թեև փոքր ածու՝ թվով նվազյալ, սակայն հանձնառու սիրով, անսակարկ նվիրումով, լա-

վատես ու քաջեռանդ, զորացյալ եք պահպանում եկեղեցական ու համայնքային կյանքը: Մեր հոգու զգացումների լավագույն թարգմանը այս պահին Առաքյալի խոսքերն են. «Մեծ վստահություն ունեմ ձեր հանդեպ, մեծապես հպարտ եմ ձեզանով, լի եմ մխիթարությամբ» (Բ Կորնթ. Է 4):

Միրելիներ, այսօր ամբողջանում է Մեր ուրախությունը, երբ տեսնում ենք ձեր եկեղեցասեր ու ազգասեր ընթացքը, երբ անդրադառնում ենք, որ հոգևոր կյանքի վերադարձոնք է մեր Հայրենիքում ու Սփյուռքի մեր թեմերում, որը զորություն է առնում Հայաստանի անկախ Հանրապետության նոր ու ազատ կյանքի հույսերից: Այլևս չկան արգելքները, որոնք խոչընդոտում էին մեր ժողովրդին ազատորեն դեպի Աստված ընթանալու և միասնաբար գործելու ի սեր եկեղեցական և հայրենական մեր կյանքի պայծառության: Սուրբ Էջմիածինն այսօր ազատ է գրկաբաց ընդունելու իր բոլոր զավակներին, ազատ է իրագործելու իր առաքելությունը: Նոր զարթոնք են ապրում մեր Եկեղեցու Սփյուռքի համայնքները: Սփյուռքահայությունն այսօր ոչ միայն ավելի ու ավելի արթնություն ու զորություն է հաղորդում իր հոգևոր ու ազգային կյանքին, այլև սատար է Հայրենիքին, մասնակից հայրենական մեր կյանքի առաջընթացի ու զարգացման ծրագրերին, նաև շարունակում է աջակիցը լինել Մայր Աթոռի՝ եկեղեցաշինական բազմազան ծրագրերի իրականացման գործում:

Փառք Տիրոջը, այսօր փոքր չեն մեր հաջողությունները: Բազմաթիվ նոր եկեղեցիներ են կառուցվում և խոնարհվածները՝ նորոգվում: Մեծ ուշադրություն է դարձվում եկեղեցականների պատրաստությանը Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Վազգենյան Դպրանոցում, ուր ուսանում են թվով 240 սաներ, շուտով կվերաբացվի նաև Շիրակի Ընծայարանը: Ծրջանավարտ ուսանողներից այսօր շատերը՝ շուրջ 30 սարկավազներ և արեղաներ, իրենց աստվածաբանական կրթությունն են կատարելագործել և կատարելագործում արտերկրի բարձրագույն կրթական հաստատություններում: Գոհունակություն է Մեզ նշել, որ Մեր գահակալության յոթ տարիներին ձեռնադրել ենք շուրջ 130 ամուսնացյալ և կուսակրոն եկեղեցականներ:

Հանրակրթական դպրոցներում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող 7 Հայորդյաց Տներում (երիտասարդաց կենտրոններում), ուսումնական տարբեր հաստատություններում մեր երեխաները քրիստոնեական մեր հավատքը ճանաչում են «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդությամբ: Քրիստոնեական կրթություն է մատուցվում նաև եկեղեցիներին կից գործող երիտասարդական կազմակերպությունների միջոցով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Շողակաթ» հեռուստաընկերության, այլ հեռուստաընկերությունների և ռադիոյի ծրագրերով, տարբեր միջոցառումներով:

Մեր ժողովրդի հոգում հավատն ու հույսը հավելվում են իրականացվող սոցիալական ծրագրերով: Մայր Աթոռի հովանու ներքո գործում են բարեգործական 6 ճաշարաններ, որոնցից յուրաքանչյուրից ամեն օր անվճար օգտվում է 200 հոգի: Հովանավորվում են ավելի քան 5000 ծնողազուրկ երեխաներ, առաջիկային կրացվեն մանկատուն և ծերանոց: Մերն են այլևս այս իրագործումները, որոնք պիտի շարունակվեն, առավել հետևողականորեն ծավալվեն, ընդարձակվեն, որպեսզի առավել զորանա հոգևոր կյանքը, բարեգարդվեն ու հավատացյալ ժողովրդով միշտ բազմա-

մարդ լինեն Աստծո մեր տաճարները: Մենք բոլորս գործում ենք հավատով, որ Աստծո Խոսքը լույս պիտի դառնա մեր ժողովրդի հոգիներին՝ իր արտահայտությունը գտնելով կյանքի բոլոր ասպարեզներում, նոր ծաղկունք բերելով մեր մշակույթին ու գիտությանը, զարգացնելով ու զորացնելով պետական հասարակական մեր կյանքը: Հավատում ենք, Աստծո Խոսքով բոլոր ժողովուրդները պիտի գտնեն խաղաղության և ի մարդիկ հաճության օրհնյալ ճանապարհները, աշխարհի բարեփոխման և միշտ առաջագնաց կյանքի ուղիները:

Աստված մեր ժողովրդին էլ պարզեց փրկության Իր շնորհն ու հույսը և պարզեց Սուրբ Էջմիածինը, որ լինի փրկության տապանը հայ հոգու: Սուրբ Էջմիածնի օրհնության հետ, պատգամ ու հորդոր ենք բերել ձեզ, պատգամ ու հորդոր սիրո ու միաբանության, օգնական ու աջակից լինելու միմյանց, աստվածասեր, ազգասեր ոգով կրթելու ձեր զավակներին, որպեսզի նրանք էլ հավատավոր հոգով շարունակեն լինել հարազատ զավակը մեր Եկեղեցու, շարունակեն ապրել քրիստոնեական ժառանգությամբ, շարունակեն ապրել մեր նախնյաց արժեքներով, որոնցով մեր ժողովուրդը ստեղծել ու ստեղծագործել է, ճանաչվել ու գնահատվել է և այսօր էլ շարունակվում է գնահատվել:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Բարձրյալն Աստված միշտ վերելքի ընթացքի մեջ պահի Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունը և նրա հովանու ներքո՝ ձեր կյանքը, խաղաղության մեջ պահպանի աշխարհը համայն և օրհնի բոլոր ժողովուրդների ազնիվ ու արդար ջանքերը, զորացնի բարի կամեցողության ու համագործակցության ոգին մարդկանց սրտերում, ազգերի ու պետությունների մեջ:

Եվ թող Աստված օրհնի մեր հանդիպման այս օրը և բոլոր օրերը, որ ապրեցինք ու պիտի ապրենք ձեզ հետ, և որոնք ընդմիշտ պիտի պահենք մեր սրտում: Թող Տեքորը Ամենախնամ Իր Խաչի հովանու ներքո հաստատուն ու պայծառ պահպանի Հայ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ Նվիրապետական իր Աթոռներով, օրհնի ամենքիս և համախումբ ազգս հայոց:

Այս հավաքի առիթով վերստին գնահատանքի Մեր խոսքն ենք բերում Ձեզ, սիրելի Ամենապատիվ Պատրիարք, Կրոնական Ժողովի անդամներին՝ Մեր այցելությունը կազմակերպելու և ջերմ ընդունելության համար: Մեր գնահատանքն ենք բերում ձեզ, սիրելի ուխտապահ հոգևորականներ, ձեզ՝ եկեղեցական վարչությունների և դպրաց դասերի պատվարժան անդամներ, բարձրապատիվ ազգային բարերարներ, կրթության ու մշակույթի նվիրյալ գործիչներ, մամուլի ջանադիրներ կայացուցիչներ՝ ձեր ջանքերի, նվիրումի ու ծառայությունների համար, նաև այն խանդավառության համար, որ ունեք ձեր սրտում Մեր այցելության առիթով: Շնորհակալության Մեր խոսքն ու գնահատանքն ենք բերում Մեր շքախմբի անդամ, Մեզ ուղեկից Գերաշնորհ Սրբազան Հայրերին, ովքեր միացան Հովվապետական Մեր այս այցելությանը՝ ժամանելով նաև տարբեր երկրներից:

Ուրախ ենք, որ Մեր այցելությունը Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքություն համընկել է Պատրիարքության հաստատման հոբելյանական՝ 545-ամյակի տարում, երբ վերարժեվորվում են փառավոր ու նվիրական հիշատակները՝ մեր ժողովրդի առավել դժվարին ու բախտորոշ պատմության պանծալի էջերը:

Հայրապետական այս այցելության առիթով իր գնահատանքը հայտնելով պոլսահայ մամուլին, Վեհափառ Հայապետը իր ստորագրությունը կրող գրչով ու ժամացույցով պարգևատրեց ստամբուլահայ մամուլի խմբագիրներին՝ «Մարմարայի» խմբագիր Ռոբերտ Հատտեճյանին, «Ժամանակի» խմբագիր Արա Գոչունյանին, «Ակոսը» ներկայացնող Երվանդ Կոպեյանին, «Ս. Փրկիչ» ամսագրի խմբագիր Մաքրուհի Պ. Հակոբյանին և Պատրիարքարանի պաշտոնաթերթ «Լրաբերի» խմբագիր Վաղարշակ սարկավագ Սերոբյանին:

Այս պարգևաբաշխությունից հետո Պատրիարք Հայրը, դիմելով հավաքվածներին, ասաց, որ բոլորով երգեն «Հայրապետական մաղթանքը», որի երգեցողությամբ, Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվեց այս երեկոն:

Հունիսի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Պատարագ մատուցեց Ստամբուլի Սուրբ Աստվածածին աթոռանիստ եկեղեցում: Ս. Պատարագի երգեցողությունը կատարեց Սևան Շենճյանի գլխավորած միացյալ երգչախումբը:

Հայրապետական պատարագի սրբազան արարողությանը ներկա էին Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանը, Հայրապետական շքախմբի անդամները, Քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների կազմակերպությունում ՀՀ ներկայացուցիչ տիար Կարեն Միրզոյանը և հարյուրավոր հավատավոր հայորդիներ:

Ս. Պատարագի ընթացքում առնթերականերն էին ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և ԱՄՆ հայոց Արևելյան թեմի միջեկեղեցական գրասենյակի պատասխանատու, ԱՄՆ Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ Գերաշնորհ Տ. Վիգեն եպս. Այքազյանը:

Հայրապետական քարոզից առաջ Պատրիարք Հայրը խորան բարձրացավ և ասաց, թե ինքը ցանկանում է հիշեցնել, որ այս տարի Ս. Զատիկին ասել էր, որ այս տարի երկու Զատիկ ենք ունենալու, որոնցից երկրորդն է լինելու Վեհափառ Հայրապետի գալուստը, որը կրկնազատիկ էր դառնալու պոլսահայության համար:

Շարունակելով խոսքը՝ Պատրիարք Հայրը ասաց, թե այս անցնող օրերին տեսել է, թե ժողովուրդը ինչպիսի խանդավառ ընդունելություն է ցույց տալիս իր Հայրապետին և այդ ընդունելությունը իրեն հիշեցնում է Հիսուսի մուտքը Երուսաղեմ: Մեկ անգամ ևս բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին՝ Ամենապատիվ Պատրիարք Հայրը խնդրեց, որ Նորին Սրբությունը ժողովրդին ուղղի իր պատգամը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Խաչ Քո եղիցի մեզ ապաւեն, Տէ՛ր Յիսուս»:
(Ժամագիրք)

Միրելի Ամենապատիվ Սրբազան Պատրիարք,

Միրելի հոգևոր եղբայրներ,

Միրելի բարեպաշտ հավատացյալներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու,

Ուրախություն և բերկրանք է Մեր հոգում այսօր: Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքություն Հայրապետական Մեր առաջին այցելությամբ ենք Պոլսի հավատավոր հայորդիներից հետ և բերել ենք Ձեզ լույսն ու օրհնությունը Սուրբ Էջմիածնի, սերն ու ողջույնները Սայր Աթոռի միաբանության և բարեպաշտ մեր ժողովրդի: Սրբազան Պատարագի պահին աղոթում ենք ձեզ հետ միասին և կրկնում հայոց հոգեհարազատ աղոթքի խոսքերը. «Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէ՛ր Յիսուս»:

Դարերի ընթացքում խաչի ապավինությունը հայցող այս աղոթքով է ապրել ու ստեղծել մեր ժողովուրդը: Խաչով է պսակել գմբեթները եկեղեցիների, խաչի գեղանի պատկերաքանդակները կերտել, խաչով ծաղկել հազարազանձ մատյանները աղոթալի, խաչի գովքն ու փառաբանությունը՝ որպես աղոթք ու շարական, երկինք վերառաքել: Իր օրհնաբեր ներկայությամբ, իր փրկագործ խորհրդով մեզ միշտ հովանի է եղել գործությունը Սուրբ Խաչի՝ հանդիսանալով այն նեցուկը, որին ապավինել ենք մեր ընթացքներում, այն ցուպն ու զավազանը, որով մովսիսանման հաստատականությամբ կարողացել ենք երկփեղկել ազգիս դառնությունների ու փորձանագ ալեկոծյալ ծովը: Խաչի գործությամբ անցանք Մեծ Եղեռնի գողգոթայի ճանապարհներով և վերապրեցինք՝ հասնելով խաղաղ ափերը մեր նոր ու վերածնված կյանքի:

Մեր Տիրոջ Սուրբ Խաչի հանդեպ այս անսասան հավատով է զորացրել նաև հայոց կյանքը Կոստանդնուպոլսի Պատրիարքության հովանու ներքո: Դուք նույնպես, սիրելիներ, մեր ողջ ժողովրդի հավատավոր սրտի նույն զգացումներով, առաքյալի նման ձեր պարծանքն եք համարել Քրիստոսի Խաչը և ձեր ճանապարհը՝ հավատի կյանքը: Ձեր հավատքով են պայծառ մեր հնագույն եկեղեցիները, ձեր նախանձախնդրությամբ են գործում համայնքային հաստատություններն ու միությունները, ձեր նվիրումով ու սիրով ազգային վարժարանները Սահակ-Մեսրոպյան ավանդն են փոխանցում մեր զավակներին: Ուրախ է Մեր հոգին տեսնել այդ ամենը և գոհության աղոթքով խոսել այդ մասին այսօր այս սուրբ եկեղեցու կամարների ներքո և այսուհետև՝ Հայրենիքում, երբ վերադառնանք, և Սփյուռքի մեր համայնքներում, երբ այցելենք:

Միրելի զավակներ մեր, Խաչին ապավինությամբ մեր ժողովուրդը վերահաստատել է անկախ պետականությունը Հայաստանի: Այսօր առավել ամուր ու սերտ են կապերը Հայրենիքի ու Սփյուռքի միջև, և Սուրբ Էջմիածնով ճառագող մեր հավատքն է կամրջում ազգս հայոց: Ազգովի շատ իդձեր ու նպատակներ ունենք, որոնց իրականացման ճանապարհը պիտի անցնենք այդ նույն հավատքով, «Խաչ քո եղիցի մեզ ապաւեն» մեր դարավոր աղոթքով, մեր հայրերից ժառանգություն ստացած միաբանության սուրբ ուխտով, հանձնառությամբ, նվիրումով ու սիրով: Գի-

տենք և զգում ենք հոգով, որ ազգասեր ու եկեղեցասեր հայորդիներից սրտերում մշտավատ է սերը հանդեպ համազգային մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որի լուսավորչատեսիլ երկնահեղ լույսը պայծառ լուսավորում է հավատավոր ուղին աշխարհասփյուռ մեր ժողովրդի:

Այսօր հոգևոր վերազարթոնք է ապրում աշխարհասփյուռ մեր ժողովուրդը: Հարուցյալ է հոգին մեր ժողովրդի: Նոր ձեռքբերումների ու պայծառ գալիքի հույսն է թնաձում հայոց երկնականարում: Հավատաշեն գործերով, քրիստոնեական կրթությամբ, եկեղեցաշինությամբ, ազգանպաստ բազում ազնիվ իրագործումներով բարեգարդվում է մեր հոգևոր ու ազգային կյանքը, ամրապնդվում հավատավոր ոգին մեր ժողովրդի:

Միևնույն ժամանակ, եկել ենք պատգամելու ձեզ, որ պահեք ձեր արի ոգին, որով հաստատուն եք ձեր հավատքի մեջ, եկեղեցանվիրումի ու ազգասիրության մեջ և նախանձախնդիր՝ հոգևոր մեր արժեքներին, մեր նախնյաց անգին ժառանգությանը: Ամուր պահեք նույն քաջակորով եռանդը՝ Բարձրյալն Աստուծո օրհնությամբ առավել ևս արդյունավորելու ձեր հավատքը, ձեր սրտերում մշտավատ սերը հանդեպ Մայր Հայաստանը և Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ հայոց հավերժական հոգևոր Հայրենիքը:

Հայրապետական Մեր ողջունն ու օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ, Մեր սերն ու գնահատանքը՝ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին, նրա գլխավորությամբ՝ Պատրիարքության ուխտապահ ողջ հոգևոր դասին, եկեղեցական վարչությանը, հայրենանվեր կազմակերպությանը անդամներին՝ Պոլսի հայ գաղթօջախում հավատքն ու ազգային ոգին մշտաբար պահելու համար: Մեր գնահատանքն ու շնորհակալությունն ենք բերում կարգադիր հանձնախմբին մեր այցելությունը Կոստանդնուպոլսի բարեխղճությամբ ու ջերմ ոգով կազմակերպելու համար:

Աղոթենք առ Քրիստոս՝ ասելով. «Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէ՛ր Յիսուս», որպէսզի Սուրբ Խաչի հովանու ներքո և աստվածառաք շնորհների գործությամբ շարունակ լուսավորվի համազգային մեր կյանքը, և հավատաբուխ բարի գործերով բարգավաճի ազգս հայոց՝ անդադրում օրհնաբանություններով գովերգելով Խաչը Տերունական և փառաբանելով Միածին Որդուն «ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյն. ամեն»:

Հայրապետական իր պատգամից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը եկեղեցուն նվիրեց քանդակազարդ խաչ, իսկ Ամենապատիվ Տ. Մեսրոպ Պատրիարքին շնորհեց երկու պանակե և լանջախաչ Սուրբ Էջմիածնից՝ ի գնահատություն Կ. Պոլսի հայոց Պատրիարքի երկարամյա նվիրյալ ծառայության:

Ս. Պատարագի ընթացքում ձեռամբ Վեհափառ Հայրապետի տրվեց Ս. Հաղորդություն:

Այնուհետև Ամենապատիվ Ս. Պատրիարք Հայրն ու ներկա հոգևորականները խորան բարձրացան և Վեհափառ Հայրապետի հետ միասին ոգեկոչեցին հիշատակը Կ. Պոլսո երջանկահիշատակ պատրիարքների, որից հետո Հայոց Հայրապետը

աղոթեց Կ. Պոլսո հայոց Պատրիարքության հարատևության և Տ. Մեսրոպ Պատրիարքի գործոց հաջողության համար:

Հավարտ Սուրբ Պատարագի Պատրիարքարանում ի պատիվ Նորին Սրբության տեղի ունեցավ ընդունելություն, հընթացս որի Ամենայն Հայոց Հայրապետը վերստին իր գնահատանքը հայտնեց Հայրապետական այցի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետին և անդամներին՝ այցի կազմակերպման գործում իրենց նվիրյալ ջանքերի համար:

Նույն օրը Պատրիարքարանում տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որի ընթացքում Գաբրելին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց Թուրքիայի մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչների հարցերին:

Մամուլի ասուլիսը վարում էր Պատրիարքարանի խոսնակ Լուիզ Բաքարը: Բացման խոսքով հանդես եկավ Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրբաֆյանը: Կ. Պոլսո հայոց Պատրիարքը դիմելով լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ ասաց.

- Բարով եկաք: Վեհափառ Տերն այսօրվա իր ծրագրում Ձեզ համար կարողացել է հատկացնել կես ժամ: Նա Ֆեների Հունաց և Կ. Պոլսի հայոց Պատրիարքների հրավերով ժամանել է այստեղ Հայրապետական այցով: Նա մեզ հետ կլինի մինչև հունիսի 27-ը: Նորին Սրբության այցի նախօրեին որոշ լրատվամիջոցներում տեղ են գտել բավականին տարօրինակ լուրեր, որոնք մեզ մոտ էլ զարմանք առաջացրին: Դրանցում ասվում էր, թե հայ համայնքը և Պատրիարքարանն անհանգիստ են այս այցից, սակայն համայնքում այդպիսի անհանգստություն չկար: Մինչ այս պահին այցն իրականացվել է նախատեսվածի պես: Առաջին երկու օրը Կաթողիկոսը հյուրընկալվել է Հունաց Պատրիարքի կողմից՝ համաձայն իրենց պատրաստած ծրագրի, ապա՝ միանալով մեզ, այցելել է հայկական եկեղեցիներ և Ստամբուլի տեսարժան վայրեր, թանգարաններ: Քանի որ մենք ունենք սահմանափակ ժամանակ, խնդրում եմ չկրկնել արդեն տրված հարցերը: Այժմ կարող եք տալ ցանկացած հարց:

Հարց.- Վեհափառ Տեր, Դուք այստեղ գտնվում եք որպես Ֆեների Հունաց Պատրիարքի հյուրը: Նա ջանքեր է գործադրում մերձեցնելու երկու Եկեղեցիները: Ի՞նչ եք մտածում այդ մասին, և որո՞նք են լինելու Ձեր քայլերը:

Պատասխան.

- Մենք այցելել ենք Կ. Պոլիս ինչպես հայոց Պատրիարքի, այնպես և Հունաց Տիեզերական Պատրիարքի հրավերով: Եկել ենք Հովվապետական այցով Կ. Պոլսի հայոց Պատրիարքություն և եղբայրական փոխադարձ այցն ենք կատարում նաև Տիեզերական Պատրիարքություն: Մեր հանդիպումների ընթացքում քննարկեցինք մեր Եկեղեցիներին հուզող դավանաբանական խնդիրներ, որոնց շուրջ արդեն երկար ժամանակ բանակցություններ են ընթանում: Ժողովներ տեղի են ունեցել և դրանք պիտի շարունակվեն: Տիեզերական Պատրիարքին այցելության նպատակը մեր Եկեղեցիների միջև եղբայրական կապերի ամրապնդումն ու զորացումն էր, ինչպես

նան մեր Եկեղեցիների միջև առկա համագործակցության նոր շնչով, նոր ջերմությամբ շարունակումը:

Հարց.- Ստամբուլի կուսակալի հետ Ձեր հանդիպման ժամանակ ասել էք, թե *Դուք շատ գոհ եք, որ սկսվել են Երևան-Ստամբուլ չվերթները, սակայն պետք է շարունակել նման քայլերը: Ի՞նչ նկատի ունեք քայլեր ասելով:*

Պատասխան.

- Մենք գոհունակություն ենք հայտնել, որ Երևան-Ստամբուլ չվերթներ են տեղի ունենում: Ինչպես գիտեք, Հայաստանի Հանրապետությունը տրամադիր է հարաբերությունները սերտացնել Թուրքիայի հետ, և դրանց արդյունքում, վստահ ենք, միաժամանակ, զուգահեռաբար լուծումներ պիտի կարողանանք փնտրել և գտնել մեր երկու ժողովուրդների հարաբերություններում առկա խնդիրներին: Ինչպես ծանոթ է ձեզ՝ Ցեղասպանության հարցը:

Հարց.- *Ինչպես քիչ առաջ անդրադարձաք, Թուրքիայի և Հայաստանի միջև գոյություն ունի Ցեղասպանության հարցը: Մենք, ի նկատի ունեմ Թուրքիայի հասարակական կարծիքը, չենք սահմանափակվում Հայաստանի հայերով, մենք տեսնում ենք հայերի 3 խմբավորում՝ Մփյուռք, թուրքահայեր և Հայաստան: Ի՞նչ եք կարծում, Թուրքիան այս քննարկումների ժամանակ ու՞մ պետք է հաշվի առնի: Իսկ հայերն ու՞մ են հաշվի առնում՝ Թուրքիայի կառավարության՞ը, թե՞ ...*

Ինչպես գիտեք, Թուրքիայի որոշ մտավորական շրջանակներում քննարկվում է այս հարցը: Տարբեր համալսարաններում, հատկապես Բիլգի համալսարանում տեղի ունեցած գիտաժողովների ժամանակ, որին ներկա է գտնվել նաև հայոց Պատրիարք Մութաֆյանը, քննարկվել է այդ հարցը: Ելնելով վերոնշյալից, ես կուզենայի ուղղել երկու տարբեր հարց. ովքե՞ր պետք է ներկայացնեն թուրքական և հայկական կողմերը և ի՞նչ քայլեր պետք է արվեն: Իսկ երկրորդ հարցը. *Դուք ինչպե՞ս եք գնահատում Թուրքիայում ժողովրդավարական քննարկման մթնոլորտը:*

Պատասխան.

- Մենք մեկ ժողովուրդ ենք և աշխարհասփյուռ, սակայն պետականություն ունեցող ժողովուրդ: Եվ, բնականաբար, Թուրքիայի Հանրապետությունն այդ խնդիրները կարող է քննարկել և լուծումներ գտնել ի դեմս Հայաստանի Հանրապետության: 90 տարի է, աշխարհի գիտնականների կողմից Ցեղասպանության խնդիրն ուսումնասիրվում է: Բազում հատորներ են գրված: Մեր ժողովրդի համար Ցեղասպանությունն ուսումնասիրման խնդիր չէ: Դա կատարված փաստ է, որը պետք է ճանաչել: Դա, բնականաբար, ցանկալի տարբերակն է, կամ կարող է ժխտական կեցվածք արտահայտվել երևույթի նկատմամբ:

Եթե գիտական նման համաժողովները Թուրքիայում նպատակ են հետապնդում Թուրքիայի հանրությանը խնդիրը մատուցելու, լուսաբանելու, ապա դա ողջունելի է: Եթե դա պատվեր է քաղաքական՝ ժխտողական գիծն առաջ մղելու, բնականաբար, դա դրական ներգործություն չի կարող ունենալ խնդրի լուծմանը: Մեզ համար գոհունակության առիթ է տեսնել, որ թուրք հասարակական կյանքի մեջ ժողովրդա-

վարական գործընթացներում այլևս որոշակի կերպով խոսվում, անդրադարձ է լինում Առաջին աշխարհամարտի տարիներին տեղի ունեցած այս Ցեղասպանության խնդրին:

Հարց. *Կաթողիկոսը Ստամբուլի կուսակալի հետ հանդիպման ժամանակ ասել է, թե «Թուրքիայի հասարակական կյանքում նկատվում է որոշ առաջընթաց: Եթե կատարվեն անհրաժեշտ քայլեր, ապա ամեն ինչ ավելի լավ է լինելու»: Այդ խոսքերը թարգմանել է Մուրաֆյան Պատրիարքը: Ինչե՞ր են պակաս Թուրքիայի հասարակական կյանքում, ի՞նչ նկատի ունեք:*

Պատասխան.

- Նահանգապետի հետ խոսակցության ընթացքում Մենք ասել ենք, որ ուրախ ենք, որ ազգային ու կրոնական փոքրամասնությունների կյանքում, թե՛ Հայ Առաքելական Եկեղեցուն, թե՛ Տիեզերական Պատրիարքությանը վերաբերող հարցեր դրական լուծումներ ստանում են: Տեսնում ենք՝ տասնամյակներ շարունակ, որ հնարավոր չէր Պատրիարքարանը նորոգել, այսօր Պատրիարքարանը նորոգված է, եկեղեցիները բարենորոգվում են: Սակայն Մենք անդրադարձել ենք, որ առկա են մի շարք այլ խնդիրներ, որոնց լուծումը կնպաստեր համայնքային կյանքի առավել զորացմանը: Այդ խնդիրներից են, գործինակ, կալվածական, ուսումնական գործընթացների կազմակերպման հարցերը և այլն:

Հարց. *Կաթողիկոսը նշեց, որ երկու պետությունները պետք է քննարկեն Ցեղասպանության հարցը, սակայն վերջին ժամանակներում Թուրքիայում տեղի ունեցած քննարկումներ, որոնց մասնակցեցին նաև երկու թուրքահայ, այդ թվում՝ Հրանտ Դինքը: Ֆրանսիայում քննարկվող՝ Ցեղասպանության փաստը հերքողներին քրեական պատժի ենթարկելու օրինագծի դեմ հանդես եկան 9 թուրք մտավորականներ, որոնք նամակ ուղղեցին Ֆրանսիային: Նրանք պնդում էին, թե Ցեղասպանության մասին կարծիք հայտնելը չպետք է խնդիրներ առաջացնի: Մա մի օրինակ է այն փաստի, թե Թուրքիան և Հայաստանն այս հարցը քննարկելիս միայնակ չեն, այլ կան ուրիշ պետություններ, որոնք իրենց խորհրդարաններում որոշումներ են կայացնում Ցեղասպանության վերաբերյալ: Այդ առումով հարցը ստանում է միջազգային բնույթ: Ի՞նչ եք կարծում, ճի՞շտ է այս գործին այլ պետությունների ներգրավվումը:*

Պատասխան.

- Ցեղասպանություն՝ գործված որևէ ազգի դեմ, չի սահմանափակվում այդ ժողովրդի կյանքի շրջագծերում: Ցեղասպանությունը չի ճանաչում ազգություն: Ցեղասպանությունը համամարդկային տարողություն ունի: Եվ այդ իմաստով պետություններ, ազգեր, երբ նմանատիպ երևույթներ աշխարհի որևէ ծայրում կատարվում են, իրենց ձայնն են բարձրացնում, դատապարտում՝ կանխելու համար այդպիսի երևույթները մարդկային կյանքից ներս: Միայն այդ ճանապարհով հնարավոր պիտի լինի զերծ պահել մարդկությունը նման ողբերգություններից: Իսկ հարցադրման առաջին մասը, թե միայն Թուրքիան և Հայաստանը պետք է այդ

հարցով զբաղվեն, կուզենք մի փոքր ավելի լուսաբանել: Հայ ժողովուրդն ունի պետականություն: Բայց խնդիրը վերաբերում է ողջ հայ ժողովրդին, աշխարհասփյուռ հայ ժողովրդին, յուրաքանչյուր անհատ հայորդուն: Բայց ազգի իրավունքները ներկայացնող մարմինը, իրավունքների երաշխավորը, բնականաբար, պետությունն է:

Հարց.- *Դուք ասում եք, որ Ցեղասպանության հարցը Հայաստանի հասարակության համար ուսումնասիրման առարկա չէ, այլ իրականություն: Իսկ նման կեցվածքը արդյոք չի խոչընդոտում հարցի լուծմանը, քանի որ թուրքական կողմը ևս ժխտում է Ցեղասպանությունը: Այսինքն՝ Ցեղասպանությունը չի կարելի ուսումնասիրել:*

Պատասխան.

- Բնականաբար, եթե Թուրքիան մերժում է, հնարավոր չէ հարցի լուծում: Եթե փաստը առկա է, փաստի առնչությամբ ի՞նչ քննարկման անհրաժեշտության մասին կարող է խոսք լինել: Կամք պետք է դրսևորվի այդ փաստը արձանագրելու, հաստատելու և ընդունելու:

Հարց.- *Դուք ի՞նչ եք առաջարկում այս հարցի լուծման համար:*

Պատասխան.

- Մենք կարծում ենք, որ ինչպես բազմաթիվ պետություններ ու երկրներ, Թուրքիան նույնպես հնարավորություն ունի իր համար համապատասխան ուսումնասիրություններ կատարելու և այդ բազմաթիվ երկրների շարքը նույնպես լրացնելու՝ ճանաչելով Հայոց Ցեղասպանությունը: Ոչ մի այլ պետության հետ նման քննարկումներ Հայաստանը չի իրականացրել Հայոց Ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու առումով: Որովհետև փաստերն առկա են, փաստերը կարող են ուսումնասիրվել, և այդ փաստերի հիման վրա որոշում և կեցվածք որդեգրել. քննարկումների անհրաժեշտության խնդիր չի կարող լինել և դրվել:

Հարց.- *Դուք ասում եք, որ մարդկային կյանքում նման ցավերը չկրկնելու համար դրանք պետք է ուսումնասիրվեն և ընդունվեն: Իսկ Դուք երբեք հանդես եկե՞լ եք թե՛ Թուրքիային, թե՛ Հայաստանին շատ մոտ գտնվող Իրաքում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ: Ինչպես գիտեք, այնտեղ առկա է ԱՄՆ-ի միջամտությունը: Դուք ի՞նչ եք մտածում և անում այդ կապակցությամբ:*

Պատասխան.

- Մենք որպես Եկեղեցի, վրդովմունք ենք ապրում և Մեր ձայնը բարձրացնում ամեն առիթով, երբ ձեռք է բարձրացվում Աստծո արարչագործության գերագույն արժեքի՝ մարդկային կյանքի նկատմամբ:

Հարց. - *Դուք այցելեցիք Հեյպելի կղզու Դպրեվանք: Ի՞նչ եք մտածում, որ այժմ այդ Դպրեվանքը չի գործում:*

Պատասխան.

- Ես ուրախ եմ ժողովրդավարական այն գործընթացներով, որ այսօր տեղի են ունենում Թուրքիայի Հանրապետությունում: Ես վստահ եմ, որ ժամանակի մեջ այդ բոլոր հարցերն իրենց դրական լուծումները պիտի գտնեն:

Հարց.- Հավանեցի՞ք Ստամբուլը:

Պատասխան.

- Մենք Ստամբուլը ամբողջապես տեսնելու հնարավորություն չենք ունեցել: Բայց այս օրերին Մեր խոսքում ասացինք, որ Ստամբուլում շատ արժեքավոր և գեղեցիկ իրագործումներ են առկա: Սակայն ամենաարժեքավորը, ամենագեղեցիկը՝ մեր ժողովուրդն է, մեր համայնքը, որին Մենք կատարում ենք Մեր Հովվապետական այցը: Որպես առաջնային խնդիր ունենալով այս, բնականաբար, Մենք Մեր ամբողջ ժամանակը տրամադրել ենք մեր ժողովրդի հոգևոր կյանքի զորացման, նրա հավատքի ամրացման գործին: Բայց վստահ եմ, որ այլ առիթ կստեղծվի, և կկարողանանք լիարժեքորեն ժամանակ ունենալ և տեսնել տեսարժան վայրերը Ստամբուլի: Ինչպես, օրինակ, երեկ այցելեցինք Դոլմաբահչե պալատ ու նաև Այա Սոֆյա, որոնք մեծապես տպավորեցին Մեզ:

Հարց.- Կա նման լուր, թե Դուք Այա Սոֆյայում ցանկացել եք աղոթել, բայց թույլ չի տրվել:

Պատասխան.

- Նման երևույթի Մենք ծանոթ չենք:

Հարց.- Ձեր այցի առաջին իսկ օրվանից տեղի են ունեցել բողոքի ցույցեր: Ի՞նչ եք մտածում այդ մասին:

Պատասխան.

- Բողոքի ցույցերը որևէ կերպով չեն անդրադարձել ո՛չ իմ տրամադրության և ո՛չ էլ իմ առաքելության վրա: Պիտի չցանկայինք, որպեսզի նման դրսևորումներ տեղ գտնեին մեր ժողովուրդների հարաբերությունների մեջ: Մեզ վերապահված է կողք-կողքի ապրել որպես հարևաններ, և պետք է հարևան ժողովուրդներին համապատասխան հարաբերություններ մշակել, կրթել դաստիարակել: Վստահ եմ, որ հաջորդ հանդիպմանը նման ցույցերի չենք հանդիպի, ինչպես և նման արտահայտությունների: Իսկ եթե նույնիսկ նման ցույցեր էլ լինեն, պիտի հասկանանք, որ մենք տակավին աշխատանք ունենք կատարելու, մենք՝ ձեզ հետ միասին՝ նման երևույթները բացառելու համար:

Հարց.- Եվրատեսիլ մրցույթի ժամանակ Թուրքիան 10 միավոր է տվել Հայաստանին: Ինչպե՞ս եք գնահատում այդ փաստը:

Պատասխան.

- Որևիցե ժխտական բան չեմ տեսնում:

Հարց.- Մա արդյո՞ք քայլ է Թուրքիայի կողմից:

Պատասխան.

- Անշուշտ, քայլ է, որ պետք է գնահատել դրական կերպով: Տա Աստված, որ այդ դրական ընթացքն առաջնորդի մեզ դեպի հիմնական խնդրի լուծում:

Հարց.- 1961 թ. մինչ այժմ նման իրադարձություն տեղի չէր ունեցել: Չնայած Ձեր այցը կրում է ոչ պաշտոնական բնույթ, հյուրընկալվեցիք Մտամբուլի կուսակալի կողմից: Ի՞նչ եք մտածում այդ մասին: Նման հյուրընկալությունը Դուք գնահատո՞ւմ եք որպես դրական քայլ: Եղե՞լ են հյուրընկալության այլ առաջարկներ: Եթե այո, ապա ի՞նչ պատճառով տեղի չեն ունեցել:

Պատասխան.

- Մենք նահանգապետի հետ Մեր հանդիպումը ընկալում ենք որպես նահանգապետի կողմից հայ համայնքի նկատմամբ դրսևորած գնահատանք՝ Թուրքիայի հասարակական կյանքում նրա ունեցած կարևոր ծառայությունների, ներդրման համար: Մենք որևէ առարկություն չենք ունեցել և չունենք որևէ պետական գործչի հետ հանդիպելու, եթե նման առաջարկ արվում է Մեզ մեր համայնքի կամ որևէ այլ կառույցի կողմից: Ժամանակին գաղափար կար հանդիպում կազմակերպելու Թուրքիայի կրոնապետի հետ, սակայն այն կյանքի կոչել հնարավոր չեղավ: Պարզապես իրավիճակները, մեր ժամանակացույցի ծանրաբեռնվածությունը հնարավորություն չտվեցին:

Կուզեմ շնորհակալություն հայտնել այս հանդիպման և այսպիսի ազատ զրույցի համար: Ամենայն բարիք ձեզ:

26 հունիսի. Առավոտյան Վեհափառ Հայրապետը այցելեց Բերայի Ս. Երրորդություն եկեղեցի: Եկեղեցու մուտքին Նորին Սրբությանը դիմավորեցին թաղային խորհրդի ատենապետ Աբիկ Հայրապետյանը, թաղական խորհրդի և տեղի մի շարք կազմակերպությունների անդամներ:

Եկեղեցում Նորին Սրբությանը շրջապատեցին Էսայան վարժարանի սաները:

Տ. Մեսրոպ Պատրիարքը ներկայացնելով այս եկեղեցու պատմությունը, Վեհափառ Հայրապետին հրավիրեց իր օրհնության խոսքը ուղղելու հավաքված ժողովրդին: Նորին Սրբությունը ասաց, որ արդեն հինգ օր է, ինչ գտնվում է պոլսահայ համայնքի հետ և տեսնում է այն խանդավառությունը, որ ճառագում է բոլորի աչքերից, և իր գնահատանքը հայտնեց թաղական վարչությանը, Էսայան վարժարանի տնօրինությանը, աշակերտներին և ծնողներին:

Եկեղեցուց դուրս գալիս Վեհափառ Հայրապետը և Պատրիարք Հայրը հոգեհանգստյան արարողություն կատարեցին Հակոբ Դ Ջուղայեցի Հայրապետի դամբանի մոտ:

Այնուհետև, ընդունելություն կազմակերպվեց եկեղեցուն կից Նարեկյան սրահում, ուր եկեղեցական վարչության կողմից Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթեց Վաղարշակ Զիլճյանը:

Ի հիշատակ այս հանդիպման, Վեհափառ Հայրապետը եկեղեցուն նվիրեց արձայա խաչ, իսկ թաղային խորհուրդը Նորին Սրբությանը՝ արձայա թեյամանների մի հավաքածու: Վերջում Վեհափառ Հայրապետը իր օրհնության խոսքը թողեց եկեղեցու Հուշամատյանում:

Ս. Երրորդություն եկեղեցուց Վեհափառ Հայրապետը Ամենապատիվ Պատրիարքի և եկեղեցական ջրախմբի հետ առաջնորդվեց Ղալաթիայի Ս. Գրիգոր Լու-

սավորիչ եկեղեցի՝ դիմավորվելով թաղային խորհրդի ատենապետի ու անդամների, ինչպես նաև Կեդրոնական վարժարանի տնօրենի կողմից:

Եկեղեցական արարողությունից հետո եկեղեցու գետնահարկում հոգեհանգստյան արարողություն կատարվեց Հովհաննես Կոլոտ Պատրիարքի դամբանի առջև:

Այնուհետև ընդունելություն կազմակերպվեց Կեդրոնական վարժարանի Հովհաննես Կոլոտ Պատրիարքի անունը կրող սրահում:

Այստեղ Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց թաղական խորհրդի ատենապետ Մկրտիչ Արծիվյանը, ապա Կեդրոնական վարժարանի տնօրեն Սիլվա Գույումճյան-Մարկոսյանը: Վարժարանի կողմից Վեհափառ Հայրապետին դպրոցի տնօրենը նվիրեց Կեդրոնականի դուռը խորհրդանշող մի արծաթյա գավաթ և վարժարանի հրատարակած գրքերից:

Ի հիշատակ այս հանդիպման, Նորին Սրբությունը վարժարանին նվիրեց Ս. Էջմիածնի պատկերով արծաթյա ափսե՝ մաղթելով, որ այն ուսուցիչներին և աշակերտներին միշտ հիշեցնի Ս. Էջմիածինը:

Հայրապետական այս այցելության ընթացքում Կ. Պոլսի թաղային հայոց եկեղեցիներին տրված այցելությունների շարքը եզրափակվեց Ֆերիզյուղի Ս. Վարդանանց եկեղեցի այցելությամբ:

Ինչպես մյուս եկեղեցիներում, այնպես էլ այստեղ հավատացյալ ժողովուրդը իր Հայրապետին դիմավորեց ուրախության ինքնաբերական արցունքներով և, ինչպես Վեհափառը ասաց՝ «Հավատարմության ձեր այս արցունքները թող չցամաքեն ձեր աչքերի մեջ»: Այստեղ ևս երեխաները բոլորվեցին Հայոց Հայրապետի շուրջը:

Հայրապետական այս այցելության առիթով եկեղեցի էր եկել նաև Շիշլիի քաղաքապետ Մուստաֆա Մարըզյուլը՝ փոխքաղաքապետ Վազգեն Պարընի ընկերակցությամբ:

Եկեղեցու մասին պատմական տեղեկություններ տվեց Ամենապատիվ Պատրիարք Հայրը և Նորին Սրբությանը հրավիրեց փոխանցելու իր պատգամը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՖԵՐԻԳՅՈՒՂԻ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ
«ՀՐԱՇԱՓԱՌ»-Ի ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ**

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Զի ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինելոց էք»:
(Հովհ. ԺԴ 19)*

Փառք և գոհություն ենք մատուցում Բարձրյալն Աստծուն, որ Իր բարերար Կամքով պարզեց Մեզ շնորհը Հովվապետական Մեր անդրանիկ այցելությունը կատարելու Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքություն և այսօր Ձեզ հետ, սիրելի Ամենապատիվ Պատրիարք, ի Քրիստոս հոգևոր եղբայրներ և հավատավոր սիրելի

ժողովուրդ հայոց, աղոթք բարձրացնելու երկինք և հնչեցնելու ավետաբեր պատգամը մեր Տիրոջ ու Փրկչի՝ «Ես կենդանի եմ, և դուք կենդանի եք լինելու»:

Այս է մեր վստահությունը. կենդանի է Քրիստոս, և բոլոր նրանք, ովքեր կհավատան Նրան՝ մեզ համար խաչյալ, թաղյալ և երրորդ օրը հարուցյալ Փրկչին աշխարհի: Այսպես ուսանեց մեր ժողովուրդը: Այս հավատով հայրենի հողին կառուցեց Լուսավորչատեսիլ Սուրբ Էջմիածինը, իբրև երկնային շնորհ ընդունեց Մաշտոցյան գրերը, հաստատվեց քրիստոնեական իր ինքնության մեջ, ու երբ ժամը հնչեց՝ հանձն առավ հանուն հավատի մահն իմացյալ և ապրեց ու ստեղծեց Աստծո հետ:

Արդարև, առանց Աստծո չուզեց ապրել մեր ժողովուրդը: Վկայությունը այդ հոգեղեն ու ոգեղեն իրողության ամենավավերական կերպով մատուցում է նաև վեց դարյա պատմությունը Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության: Անմահ են անունները մեծագործ Պատրիարքների, ովքեր անձնուրաց հոգացին իրենց վստահված ժողովրդի համար, պահպանեցին, աճեցրին ու զորացրեցին հավատի լույսով և իրենց շնորհաշատ մտքի ու հավատավոր հոգու ազնիվ արգասիքները փոխանցեցին սերունդներին: Անմահ են արվեստի, կրթության ու գիտության գործիչների անունները, գործն ու ավանդը նրանց, հավատով ստեղծած արժեքները, որ գծագրում են մեր ժողովրդի պատմության մեջ լուսավորության լայն ուղի, արարումի ու առաջընթացի տեսլական ճանապարհ: Հավատի ուժով լուսավորության ջահակիր է Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունը: Ձեզ հետ այս օրերի ընթացքում մեկ անգամ ևս ունեցանք ապրումը, որ մեր ժողովուրդը իր հոգևոր ներաշխարհի խորքերում կրում ու պահպանում է մշտանորոգ կյանքի խորհուրդը: Նույնիսկ Մեծ Եղեռնը չմարեց այդ խորհուրդը, երբ թվում էր, թե կյանքը կանգ պիտի առնի Պատրիարքության սահմաններում: Հավատով կենդանի հոգին մեր ժողովրդի փորձությունների մեջ գտավ գործությունը վերածնվելու և ապրելու, բարիք ստեղծելու ու դեպի բարին ձգտելու: Մեր հայրերից իբրև ամենամեծ ժառանգություն ստացած հավատն առ Աստված, առ Տերը մեր Հիսուս Քրիստոս, դուք, սիրելիներ, և ձեր ծնողները պահպանեցիք ու խնամեցիք ձեր հոգիներում՝ դարձնելով սեր միմյանց հանդեպ, գործ միմյանց համար ու պայծառություն՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Փառք Քեզ, Տեր, Փառք Քեզ, հաղագս ամենայնի, Տեր, փառք Քեզ:

Փառք Քեզ, որ առաջնորդեցիր Մեր քայլերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, և ականատեսը դարձանք ազգային ու եկեղեցական ծաղկուն կյանքին ու հավատավոր ու ավանդապահ ոգուն մեր ժողովրդի: Եկանք մեր հավատքի նվիրական օրրան ու կենտրոնից, որպեսզի միասին՝ Հայրապետ և ժողովուրդ, մեր սուրբ հայրերի հիշատակով, պատգամով ու ավանդով, մեր միասնական աղոթքով այս Սուրբ եկեղեցու կամարների ներքո վկայենք, որ ազգս հայոց հաստատուն ու անսասան է Աստծո հետ իր ուխտին: Հավատարիմ է իր հայրերի Սուրբ ժառանգությանը՝ միաբանության ուխտով Սուրբ Էջմիածնի: Հավատարիմ է Աստծո Խոսքին և իր քրիստոնեական առաքելությանը, բարու, արդարի, ճշմարտության, խաղաղության, լուսավորության ու առաջընթացի իր դարավոր ձգտումին: Այսօր հուսառատ, նոր օրեր է ապրում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, հուսառատ օրեր է ապրում համայն մեր

ժողովուրդը: Բոլոր դժվարություններով հանդերձ՝ օրեցօր շենանում է Հայաստանը, գորանում է Մփյուռքը՝ վերածնունդ ապրող հոգով, վերածնունդ ապրող կյանքով, Տիրոջ՝ «Ես կենդանի եմ, և դուք կենդանի եք լինելու» խոսքի վստահությամբ: Հայաստանի ազատ երկնքի ներքո բարձրանում են խոնարհված եկեղեցիները, կառուցվում են նորերը, դպրոցներում մեր երեխաները ուսանում են պատմությունը մեր Եկեղեցու, Աստծո Խոսքը ավելի ու ավելի լսելի է դառնում սրտերին մեծերի ու փոքրերի, հավատը ամրանում է, հույսը՝ նորոգվում առ Հայրենին և մեր Մայր Եկեղեցին: Ձեզ հետ, սիրելիներ, ուզեցինք կիսել մեր հոգևոր ու ազգային կյանքի այս նոր շունչն ու նրա պարզևած ուրախությունն ու քաջալերությունը, որը միասնաբար պիտի պահպանենք ու առաջ տանենք՝ անվարան հավատով, առ Փրկիչը ապավինությամբ: Աստված է մեր ապավինությունը: Առ Աստված վստահությամբ ու հավատով է, որ մեր հոգին գտնում է գորությունը իրականություն դարձնելու իր դավանած սկզբունքներն ու արժեքները: Արդարև, Աստծո հետ մարդկությունը պիտի գտնի իր նոր կյանքի, խաղաղության ու գործակցության ուղիները, առաջադիմության ընթացքները:

Այս զգացումներով, խաղաղ ու երջանիկ աշխարհի հայցով Մեր այցելության առաջին օրերին առ Աստված Մեր աղոթքը միավորեցինք Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի աղոթքի հետ՝ վկայելով մեր եղբայրությունը ու կարևորելով մեր Եկեղեցիների սերտ համագործակցությունը: Վերստին սիրո ջերմ զգացումով Մեր շնորհակալությունն ենք հայտնում Նորին Ամենասրբությանը՝ հրավերի և Իր հյուրընկալ հարկի տակ ապրած ուրախության համար:

Սիրելի բարեպաշտ, հավատավոր հայորդիք, Հայրապետական Մեր հորդորն ենք բերում, որ դուք զորացյալ պահպանեք ձեր հավատքի կյանքը, նույն նվիրումով ու սիրով շենացնեք ու պայծառացնեք եկեղեցական և ազգային հաստատությունները, որպեսզի ձեր կյանքը զարդարեն նոր բարի արդյունքներ, լուսավորության ու առաջընթացի բարձունքներ, որոնցով Մենք պիտի ուրախանանք ու մխիթարվենք Սուրբ Էջմիածնում և մեր ժողովուրդը՝ ի սփյուռս աշխարհի: Առեք Աստծո սպառազինությունը, հաստատուն կանգնեք, ձեր ոտքերը ամրացրեք խաղաղության Ավետարանի պատրաստությամբ, առեք հավատի վահանը, փրկության սաղավարտն ու հոգու սուսերը, որ է Խոսքն Աստծո, որպեսզի Տիրոջով օրհնյալ լինի մեր կյանքը և մեր ընթացքը և շեն ու պայծառ լինի այսօր ու միշտ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունը:

Մեր մեկնումից ու բաժանումից առաջ, սիրելի Ամենապատիվ Պատրիարք եղբայր, շնորհակալության Մեր խոսքն ենք բերում Ձեզ, Կրոնական Խորհրդի անդամներին այն ջերմագին ընդունելության համար, որ կազմակերպվեց Մեր այցի այս օրերին: Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության ուխտապահ հոգևոր դասին, եկեղեցական պատվարժան վարչականներին, դպրաց դասի նվիրյալ երգիչ-երգչուհիներին, ազգային կառույցների ու միությունների, բարեգործական հաստատությունների ծառայասեր պատասխանատուներին ու բարեջան անդամներին, կրթության ու մշակութի շնորհալի գործիչ-

ներին, հայ մամուլի ներկայացուցիչներին, ձեզ բոլորիդ, սիրելի հավատավոր ժողովուրդ՝ մեր սուրբ ժառանգությանը, հայրենական արժեքներին հավատարմության համար, Ձեր արի ու անսակարկ նվիրումի համար: Ձեզանով ապրում է փրկության ու վերածննդի հույսով շաղախված վեցդարյա պատմությունը Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության: Օրհնում ենք բոլորիդ, որ այստեղ եք, ձեր ընտանիքների անդամներին և մեր ողջ հավատացյալներին՝ եկեղեցասեր ու ազգասեր մեր ժողովրդին:

Սուրբ և անմահ Պատարագի խորհրդով «Միշտ աղոթում ենք ձեզ համար, որպեսզի Աստված ձեզ արժանի դարձնի ձեր կոչմանը, մինչև լրացնի ձեր բոլոր փափագները և հավատի գործերը գործությամբ, որպեսզի փառաբանվի մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունը ձեր մեջ, և դուք փառավորվեք նրա մեջ՝ մեր Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի շնորհի համաձայն» (Ա Թեսաղ. Բ 11-12)

Թող շնորհն ու խաղաղությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի լինեն մեզ հետ և բոլորի. Ամեն:

Այնուհետև (Ֆերիգյուղի տիկնանց միության կողմից) հյուրասիրություն կազմակերպվեց եկեղեցուն կից «Նազար Շիրինօղլի» սրահում: Այստեղ Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց Ֆերիգյուղի վարժարանի տնօրեն Արփի Մանուկյանը:

Գեղարվեստական հայտագրով հանդես եկավ եկեղեցու երգչախումբը, որի 75-ամյակը լրանում է հաջորդ տարի: Երգչախմբի անդամներից Մեղրակ սարկավագ Դավությանը ասաց, որ այս առիթով իրենք ցանկանում են լինել Ս. Էջմիածնում և Մայր Տաճարում մասնակցել Ս. Պատարագի երգեցողությանը, որին Վեհափառ Հայրապետը սիրով ընդառնեց:

Վերջում Վեհափառ Հայրապետը ներկաներին ասաց, որ այս պահին աղոթքով է հիշում Նազար Շիրինօղլուն, ում անունն է կրում այս սրահը: Նազար Շիրինօղլին հանգուցյալ եղբայրն է Պետրոս Շիրինօղլու:

Ի հիշատակ այս հանդիպման, Վեհափառ Հայրապետը թաղային խորհրդին հանձնեց մի գեղեցիկ խաչ և հայկական մանրանկարչության ավանդներով կատարված մի սրբանկար: Շիշլիի փոխքաղաքապետ Վազգեն Պարենն էլ քաղաքապետի կողմից Վեհափառ Հայրապետին նվիրեց մի հախճապակյա ափսե: Թաղային խորհրդի կողմից էլ տրվեց Ս. Վարդան Զորավարի քանդակով մի ափսե:

27 հունիսի. Առավոտյան Վեհափառ Հայրապետը այցելեց Ասորիների Եպիսկոպոսապետին և առաջնորդվեց ասորական եկեղեցի, ուր կատարվեց եկեղեցական արարողություն:

Վեհափառ Հայրապետը կարևորեց երկու եկեղեցիների միջև առկա կապերը՝ մաղթելով, որ դրանք առավել սերտանան ու զորանան: Ասորիների Եպիսկոպոսապետ Յուսուֆ Չեթինն էլ իր ուրախությունը հայտնեց այս հանդիպման համար:

Ի հիշատակ այս հանդիպման, Վեհափառ Հայրապետը Կ. Պոլսի Ասորի Եկեղեցու Առաջնորդին նվիրեց եպիսկոպոսական պանակե, իսկ վերջինս էլ Նորին Սրբությանը՝ արծաթյա մի սկուտեղ:

Այնուհետև ընդունելություն կազմակերպվեց ի պատիվ Վեհափառ Հայրապետի, որից հետո կատարվեց եկեղեցու պատին զետեղված խաչքարի բացումը, որի վրա հայերեն և ասորերեն գրված էր, որ այն կանգնեցվում է ի հիշատակ Հայոց Հայրապետի այցելության:

Կեսօրին Նորին Սրբությունը Ս. Մեսրոպ Պատրիարքի հետ այցելեց հայ Կաթողիկե համայնքի վիճակավոր Ս. Հովհաննես արքեպս. Չոլաքյանին: Հանդիպմանը ներկա էին նաև Մարովիչ Սրբազանը և վիճակավորի փոխանորդ Գերապայծառը, Մխիթարյան միաբանությունից՝ Ն. Հակոբոս վարդապետը:

Կաթողիկե հայոց Ս. Աստվածածին եկեղեցում կատարված արարողությունից հետո կազմակերպվեց ընդունելություն եկեղեցու վերնահարկի ընդունելությունների սրահում: Այստեղ բարիգալստյան ողջույնի խոսքով Վեհափառ Հայրապետին դիմեց Չոլաքյան Գերապայծառը՝ ասելով. «Առաջին անգամն է, որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցույ Գահակալ մը կը պատուէ մեր Առաջնորդարանը: Ուստի՝ հաճէք ընդունիլ մեր բոլորին երախտիքը եւ անկեղծ շնորհակալութիւնները:

Վեհափառ Տէր,

Կուգաք յարաբերաբար հեռաւոր երկրէ մը՝ սուրբ գրական Արարատի երկրէն, սուրբ քաղաք Էջմիածինէն, կուգաք երկրէ մը, որուն ժողովուրդը, պատմականօրէն, առաջինը եղաւ ընդունելու Քրիստոնէութիւնը որպէս պետական, ազգային կրօնք: Կուգաք, վերջապէս մեր հաւատոյ հասարակաց հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աթոռէն, մեզի բերելով Ս. Հայրապետին օրհնութիւնները:

Նոյն ազգի զաւակներն ենք, ունինք նոյն լեզուն, նոյն Աւետարանը, նոյն խորհուրդները, նոյն ծիսակատարութիւնները, նոյն նուիրական աւանդութիւնները, նոյն կոչումը. հայ ժողովուրդին ա՛յս է որ քարոզած է Քրիստոսի նոյն Աւետարանը, որ եղբայրական սիրոյ, արդարութեան ու խաղաղութեան պատգամ մըն է: Այս պահուն այս գեղեցիկ մթնոլորտէն ներշնչուած, բնագոյաբար կը տարուիմ վերյիշելու Սաղմոսերգուին խօսքը. «Ինչքան բարի է, ինչքան քաղցր, եղբայրաբար միասին բնակիլը»:

Պատասխան խոսքում Հայոց Հայրապետը ասաց, որ ուրախ է Կ. Պոլսոյ հայոց Կաթողիկե Եկեղեցի այս այցելության համար, անդրադարձավ Եկեղեցիների գործակցությանը, այս շրջագծում կարևորելով Հովհաննես Պողոս Բ Պապի Հայաստան այցելությունը:

Հանդիպման վերջում հայ Կաթողիկե համայնքի ներկայացուցիչները լուսանկարվեցին Վեհափառ Հայրապետի հետ, իսկ Չոլաքյան Գերապայծառը Նորին Սրբությանը նվիրեց իր գործերը ամփոփող հատորը:

Այս այցելությունից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Շիշլիի գերեզմանատուն, ինչպես որ նախորդ օրը Ֆերիզյուլի եկեղեցու խորանից ասել էր, որ ցանկանում է աղոթել Շիշլիում գտնվող մեծանուն պատրիարքների դամբարանների առջև:

Գերեզմանատանը Վեհափառ Հայրապետը աղոթք երկինք վերառաքեց՝ այստեղ ամփոփված մեծանուն պատրիարքների և մշակութային նշանավոր գործիչների շիրիմների առջև:

Վեհափառ Հայրապետը այնուհետև առաջնորդվեց Պալըքլի գերեզմանատուն, ուր ևս իր խոնարհումը բերեց այստեղ ամփոփված հայորդիների շիրիմների առջև և իր աղոթքը վերառաքեց երկինք նրանց հոգիների խաղաղության համար:

Հայոց Հայրապետը այնուհետև այցելեց Պալըքլի գերեզմանատան դիմաց գտնվող հունական վանք:

Կ. Պոլիս Հայրապետական այս այցելության վերջին կայանը Եշիլցյուղի եկեղեցին էր, ուր կատարված արարողությունից հետո տեղի ունեցավ ընդունելություն եկեղեցուն կից սրահում, հավարտ որի Վեհափառ Հայրապետը իր շնորհակալությունը հայտնեց Հայրապետական այս այցելության կազմակերպման համար՝ բարձրորեն գնահատելով պոլսահայության համայնքային-հոգևոր կյանքը:

Նույն օրը Նորին Սրբությունը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ թե՛ թողնելով և թե՛ տանելով անմոռաց տպավորություններ:

Հայրապետական այս այցելության և Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի թողած ու ստացած տպավորությունների կենդանի արտահայտությունն են «Մարմարա» օրաթերթի հետևյալ տողերը. «Վեհափառ Հայրապետը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոս երեկ կես գիշերին իր շքախումբին հետ միատեղ Ս. Էջմիածին վերադարձաւ, փակելով անդրանիկ հովուապետական այցելութեան էջը, որ Պոլսահայ հաւատացեալ ժողովուրդին սրտին ու մտքին մէջ պիտի մնայ անմոռանալի ու ներշնչող: Վեհափառին այցելութիւնը վերանորոգեց մեր հաւատացեալներուն սէրն ու յարգանքը մեր Եկեղեցիին նկատմամբ, առիթ տուաւ որպէսզի ժողովուրդը անգամ մը ևս իր կուրծքը լեցնէ Ս. Էջմիածնի խորհուրդով և կապեր հաստատէ մեր Եկեղեցիին ու մշակոյթին ծառայած մեր մեծանուն պապերուն հետ»:

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ Տ. ԱՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇԵԱՆԻՆ
ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱԽՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՇԵԱՆ,
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐԳԻԱ**

Համայն հայության հոգևոր կենտրոն Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:
Սիրելի Սրբազան,

Տիրոջ կամքով եւ օրհնութեամբ Կ. Պոլսի Սուրբ Խաչ Դպրեվանքի եւ ապա Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանի յարկի ներքոյ ամբողջացնելով հոգևոր Ձեր ուսումնառութիւնը, բարեյիշատակ Շնորհք Պատրիարքի ձեռամբ արժանացաք կուսակրօն քահանայութեան սուրբ օծման՝ պատասխանատու առաքելութեան կոչուելով աստուածասէր մեր ժողովրդի կեանքում:

Մեզ համար գոհունակութիւն է անդրադառնալ, որ մեր Եկեղեցու անդաստանում Ձեր երեսնամեայ ծառայութիւնը արդիւնաւորուած է աստուածահաճոյ իրագործումներով: Երկար տարիներ հովուական պաշտօններ վարելով Կ. Պոլսի Պատրիարքութեան տարբեր եկեղեցիներում, Դուք պատրաստակամ յօժարութեամբ գնահատելի աւանդ էք բերել հայորդիների հաւատն ամրացնելու, նրանց հոգիներում մեր սրբազան ժառանգութեան եւ մայրենի լեզուի պահպանութեան հանդէպ սէրն ու նախանձախնդրութիւնը զօրացնելու սրբազան առաքելութեանը:

Ուրախ ենք, որ ներկայիս, որպէս Կրօնական Ժողովի ատենապետ եւ Պատրիարքութեան լուսարարապետ, ամենայն նուիրուածութեամբ ու ջանասիրու-

թեամբ շարունակում էք ներդնել Ձեր ջանքերը, որպեսզի միշտ շին ու պայծառ լինի Պատրիարքությունը եւ նրա հովանու ներքոյ՝ աշխոյժ հայորդեաց ազգային-եկեղեցական կեանքը:

Սիրելի Սրբազան,

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն բերած տասնեակ տարիների Ձեր անսակարկ ծառայության ու վաստակի բարձր գնահատանքով՝ Հայրապետական այսու Կոնդակով Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրական Մեր սէրը եւ ընդառաջելով Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրբաթեանի միջնորդութեանը, շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻ:

Մեր մաղթանքն է, որ Տէրը օգնական լինի եւ զօրացնի նուիրեալ եկեղեցականիդ՝ Ձեր բարձր կոչման մէջ եւ պարգևի մնայուն ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի երկար տարիներ՝ ի պայծառութիւն Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու եւ Կ. Պոլսի հայոց Պատրիարքութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Յունիսի
յամի Տեառն 2006 եւ ի թուին Հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 349

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԿ ԱՐՄԼԱՆՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՀԱՅԿ ԱՐՄԼԱՆԵԱՆ,
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐԹԻԱ**

Համայն մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները: Հայրապետիս համար գոհունակութիւն է անդրադառնալ եկեղեցանուէր եւ ազգաշէն Ձեր գործունեութեան բարի արդիւնքին, որին ականատես եղանք Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքութիւն կատարած Հովուապետական Մեր այցի ընթացքին:

Յարգարժան պրն Արսլանեան,

Տակաւին բարեյիշատակ Շնորհք Պատրիարքի գահակալութեան տարիներից սկսեալ Դուք բազում ծառայութիւններ էք մատուցել պոլսահայ աւանդապաշտ համայնքին, նախանձախնդիր, որ մեր ժողովրդի գաւակները ապրեն բարօրութեան մէջ, հաւատարիմ ազգային մեր աժէքներին ու նախնեաց ժառանգութեանը: Երկար տարիներ վարչական պաշտօններում նուիրեալ ծառայութեամբ, ինչպէս եւ Ձեր ազնիւ նուիրատուութիւններով գնահատելի նպաստ էք բերել «Գարակէօեան Տան», «Կազդուրման Կայանի», «Թարգմանչաց Վարժարանի», «ՄԻՐԷ» կրթական հիմնարկի եւ ազգային այլ կառոյցների գործունեութեանը, որոնք կոչուած են սնելու հայ կեանքը Պոլսում եւ ծառայելու հայապահպանութեան սրբազան առաքելութեանը:

Հայրդող ազգանուէր ոգու եւ բարեգործութեան շնորհիւ մեծապէս ընդլայնուեց Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի աստուածահաճոյ գործունեութիւնը, որտեղ Տիրոջ կամքով առիթ ունեցանք լինելու Պոլիս կատարած Մեր այցելութեան օրերին: Ուրախութիւն էր Հայրապետիս համար ականատես լինել, որ Ձեր նուիրաբերութեամբ կառուցուած երկու նոր յարկաբաժինները, նախատեսուած նորաձիւնների եւ չափահասների համար, առաւել արդիւնատուր են դարձնում պատմական հաստատութեան ծառայութիւնը կարիքատուր անձերին:

Գովութեան է արժանի նաեւ Ձեր եկեղեցանուէր ծառայութիւնը, որը եւս Բարձրեալի օրհնութեան ներքոյ արգասաւորուած է բարի արդիւնքով: Ձեր սրտաբուխ, ազնիւ նուիրատուութիւնները Պատրիարքարանին եւ եկեղեցիներին մեծապէս նպաստում են պոլսահայոց հոգեւոր կեանքի շէնութեանն ու պայծառութեանը: Գո-

հուրիւն եւ փառք ենք մատուցանում առ Աստուած, որ Տէրը մեր ազգին շնորհում է Ձեզ պէս հաւատաւոր անձինք, ովքեր իրենց առաւելագոյնն ի գործ են դնում՝ հայոց ազգային-եկեղեցական կեանքը բարեգարդելու եւ հայութեան բարօրութեանն իրենց նպաստը բերելու համար:

Բարձր գնահատանքի արժանացնելով որդիական Ձեր սէրն ու նուիրումը հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը, սիրով ընդառաջ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միաձնի Իջման Սուրբ Սեդանի առջեւ ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ շարունակէք Ձեր ծառայութիւնը բերել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատացեալ ժողովրդին:

Թող Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ քաջառողջ ու երջանիկ պահի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ արժանացնելով Իր առատ ողորմութեանն ու բիւր շնորհներին:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Յունիսի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 370

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍԵՂՐԱԿ ԹՈՔԱՏԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԵՂՐԱԿ ԹՈՔԱՏ,
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐԹԻԱ**

Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Աստուծոյ ողորմած կամքով Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքութիւն կատարած Հովուապետական Մեր այցի ընթացքին ուրախ առիթ ունեցանք հանդիպել Ձեզ եւ իրազեկ դառնալ Ձեր ազգաշէն ու եկեղեցաշէն գործունէութեան հարուստ վաստակին:

Պոլսահայ կեանքից ներս ծաւալած Ձեր բազմադիւն գործունէութիւնը իրաւամբ արժանի է բարձր գնահատանքի: Երկար տարիներ լինելով անդամ Կ. Պոլսի Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան, եւ ապա ընտրուելով նաեւ ատենապետ, Դուք Ձեր փորձն ու կարողութիւնները, ինչպէս եւ նիւթական միջոցները սիրով ի սպաս էք բերել, որպէսզի խնամատար հաստատութիւնը յաջողութեամբ յաղթահարի իր առջեւ ծառացած դժուարութիւնները եւ շարունակի իր կոչմանը հաւատարիմ անհրաժեշտ խնամք ու օգնութիւն պարգեւել կարօտեալ անձերի: Կ. Պոլիս Մեր այցի ընթացքին Պատրիարք Սրբազանի եւ Մեզ ուղեկից հոգեւորականների հետ եղանք Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցում, ականատես դարձանք ինչպէս Ձեր գործունէութեան տարիներին, այնպէս եւ դրանից յետոյ իրենց ծառայութիւնը բերող բոլոր պատասխանատուների անձնուէր աշխատանքի բարի արդիւնքներին: Ուրախութիւն է Հայրապետիս համար, որ Ձեր երկարամեայ նուիրեալ ծառայութիւններով վաստակել էք անկեղծ սէրն ու յարգանքը պոլսահայ համայնքի:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ եկեղեցական կեանքից ներս Ձեր իրագործումներին: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին շէն ու պայծառ տեսնելու նախանձախնդրութեամբ Դուք աշխուժօրէն մասնակցել էք Սկիւտարի եկեղեցու համայնքային կեանքին, կամաւորաբար ստանձնել բազմաթիւ յանձնառութիւններ ի նպաստ Պատրիարքարանի գործունէութեան, յամենայնի դրսեւորելով Ձեր եկեղեցասէր ու ազգասէր ոգին: Ուրախ ենք նշելու, որ եկեղեցաշէն ծրագրերին բերած

Ձեր՝ դրուատանքի արժանի մասնակցությունը մեծ արգասաւորութեամբ ծառայում է ի փառս մեր Մայրենի Եկեղեցու եւ յանսասանութիւն մեր ժողովրդի:

Ձեր հաւատաւոր ու ազգասէր ոգու եւ ազգային-եկեղեցական մեր կեանքում Ձեր վաստակի բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միաձնի Իջման Սուրբ Սեդանի առջեւ Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Ամենախնամն Աստուած՝ հայցելով, որ Տէրը Ձեր կեանքը օրհնի երկնատուր բարիքներով եւ գործոց յարանորոգ յաջողութիւններով՝ Իր օրհնութեան ներքոյ պահպանելով Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Յունիսի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 371

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԵՏՐՈՍ ՇԻՐԻՆՕՂԼՈՒԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՊԵՏՐՈՍ ՇԻՐԻՆՕՂԼՈՒ,
ՈՐ Ի ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՈՒՐԹԻԱ**

Փառք ենք վերառաքում առ Բարձրեալն Աստուած, որ ամենուր մեր ժողովրդի զաւակաց հոգիներում մշտաբարուն է սերը հանդէպ ազգային ու եկեղեցական մեր աւանդներն ու սրբութիւնները, եւ զօրեղ է հաւատն առ Աստուած նրանց կենդանի գործերով:

Գոհունակութիւն էր Հայրապետիս համար Կ. Պոլսի հայոց Պատրիարքութիւն կատարած Հովուապետական Մեր այցի ընթացքին ճանաչել Ձեզ եւ հաւատաւոր հայորդոյդ ազգանպաստ ու եկեղեցանուէր յանձնառութիւնները, որոնք զարդարում են Ձեր կեանքի ճանապարհը եւ պանծացնում Ձեր անունը՝ որպէս արժանաւոր ու նուիրեալ զաւակը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Տարիներ շարունակ Դուք հոգեւոր ու նիւթական Ձեր կարողութիւններն ի սպաս էք դնում պոլսահայութեան ազգային-եկեղեցական կեանքի բարգաւաճմանն ի խնդիր: Ծառայասէր ոգով զօրացեալ՝ առատաձեռն նուիրաբերութիւններ էք կատարում Պատրիարքութեան եկեղեցիների վերանորոգութեան ու պայծառութեան համար, Ձեր սրտաբոյս բարերարութիւններով շարունակում էք օժանդակել պոլսահայ համայնքի հոգեշէն ու ազգանպաստ ծրագրերի իրագործմանը: Ձեր ազնիւ գործերը, որոնք մեծապէս նպաստում են համայնքային կեանքի աշխուժացմանը, վկայութիւն են Ձեր մեծ եկեղեցանուիրումի եւ աստուածսիրութեան: Արդարեւ, վառ է Ձեր հոգում գիտակցութիւնը, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շուրջ համախմբումով մեր ժողովուրդը անխաթար պիտի պահպանի իր հոգեւոր, ազգային ու մշակութային կեանքը:

Յարգարժան Տիար Շիրինօղլու, Տիրոջ օրհնութեամբ բեղուն ու արգասաւոր է Ձեր ծառայութիւնը նաեւ՝ որպէս Սուրբ Փրկիչ հիւանդանոցի Հոգաբարձութեան Խորհրդի ատենապետ: Ձեր ձեռնհաս ղեկավարութեան եւ նիւթական մեծ աջակցութեան շնորհիւ առաւել արդիւնատրուել է հիւանդանոցի առաքելութիւնը՝ ապաքինման կարօտեալ անձանց հոգեւոր ու մարմնական կազդուրում եւ հոգու սէր ու ջերմութիւն բաշխելով: Մենք սիրով յիշում ենք Մեր այցը Ս. Փրկիչ ազգային հիւան-

դանոց եւ նրա հովանու ներքոյ Ձեր կողմից հաստատուած «Պետրոս Շիրինօղլու» թանգարան, երբ անկեղծ գոհունակութիւն ապրեցինք՝ տեսնելով Ձեր կատարած նուիրեալ աշխատանքը, մեր հոգեւոր գանձերի, ազգային արժէքների հանդէպ Ձեր որդիական նախանձախնդրութիւնը:

Համայն հայութեան նուիրական սրբօրրանից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ ազգային-եկեղեցական մեր կեանքում Ձեր ծառայութիւնների բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սուրաֆեանի միջնորդութեանը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ի Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Տէրն Ամենակալ, բարեխօսութեամբ առաքելապատիւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մեր Հայրապետի, հանապազ օրհնութիւն բաշխի Ձեզ եւ Ամենախնամ Իր Աջի ներքոյ շէն ու երջանիկ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը՝ շնորհելով յարանորոգ յաջողութիւններ հայրենանուէր ու եկեղեցաշէն Ձեր բարի գործերին:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Յունիսի
յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 372

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳՈՒՐԳԵՆ ՍԱՐԳԻՍՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳՈՒՐԳԵՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ,
ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ, ԿԱՆԱԴԱ**

Կանադայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանեանից գոհունակութեամբ տեղեկացանք, որ այս տարի լրանում է «Զօրեան Հիմնարկի» հիմնադրման 25-ամեայ յոբելեանը, եւ այս առիթով կազմակերպուող հանդիսութեան ընթացքին բարձր պատուի պիտի արժանանաք Դուք՝ հաստատութեան հիմնադրմանը եւ նրա ազգօգուտ գործունէութեանն ի նպաստ մատուցած Ձեր ծառայութիւնների համար:

Մեծարգոյ պրն Սարգիսեան,

Հայրապետիս համար գոհունակութիւն է գնահատանքի խօսք ուղղել Ձեզ՝ ազգային-հասարակական Ձեր բեղուն գործունէութեան, ի մասնաւորի Հայոց ցեղապանութեան ճանաչմանն ուղղուած Ձեր հետեւողական ջանքերի համար: Ձեր կողմից հիմնադրուած «Զօրեան Հիմնարկը» քառորդ դար բազմաթիւ ուսումնասիրութիւններով ու հրապարակումներով, միջազգային այլ կառոյցների հետ համագործակցաբար կազմակերպած դասընթացների, համաժողովների ու այլ միջոցառումների միջոցով շարունակում է գիտական ու հասարակական լայն շրջանակներին ճանաչելի դարձնել դարասկզբին մեր ժողովրդի նկատմամբ իրականացուած ոճիրը, գնահատելի աւանդ բերելով Հայոց Մեծ եղեռնի համընդհանուր դատապարտութեանն ուղղուած համազգային ջանքերին:

Ազգային մեր կեանքում Ձեր արդիւնաշատ գործունէութեան բարձր գնահատանքով համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ, սիրով ընդառաջ թեմակալ Ձեր առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Ս Ա Հ Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ Մ Ե Ս Ր Ո Պ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր՝ շարունակելու Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը Աստուածասէր մեր ժողովրդին:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինի ընտանեկան Ձեր յարկից:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մենջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Յունիսի

Յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 348

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով մայիս-հունիս ամիսներին

«Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել է.

Գուրգեն Սարգիսյան (Կանադայի հայոց թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Արմինե Փիլիկյան (Բուլղարիայի հայոց թեմ)

Մարի Պասմաջյան (Բուլղարիայի հայոց թեմ)

Մարի Սարգսյան (Բուլղարիայի հայոց թեմ)

Սիսի Աբելյան (Բուլղարիայի հայոց թեմ)

Կանադայի հայոց թեմի պատգամավորական ժողովին

Կանադայի հայոց թեմի հոգևորականաց համագումարին

Սուրբ Խաչ եկեղեցու ծխական խորհրդին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

*ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ*

*Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԵՐԵԱՆ
Առաջնորդ ԱՄՆ հայոց Արևմտեան թեմի*

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ
ԱՅՅԸ Կ. ՊՈԼԻՍ**

Յունիս 20-ին կը ժամանեմ Կ. Պոլիս, միանալու համար Վեհափառ Հայրապետի Կ. Պոլիս իր անդրանիկ հովուապետական այցելութեան շքախումբին: Տարօրինակ, բայց նոյնքան ալ արդար երեւի, որ խառն զգացումներ կը պարուրեն միտքս, հոգիս ու էութիւնս, քանզի Կ. Պոլիս այցելութիւնը անտարակոյս իւրաքանչիւր հայոյ համար հոգեցունց պիտի ըլլար, միայն անոր համար, որ ամէն քայլափոխի կը լսենք ձայնը նահատակ սերունդին՝ Կոմիտասեան «Տէր ողորմես»-ին մէջ խտացած: Ուրեմն կարելի է ըսել, որ կեցութեանս ամբողջ ընթացքին ներքին ձայն մը անբացատրելի յուզումով մը կը լեցնէր էութիւնս: Յաջորդիւ ներկայացուած առանձին դրուագներու նկարագրականներէն ոմանց մէջ երբեմն որոշ չափով տեղի պիտի տամ զգացումներուս, երբ հիմնականին մէջ պիտի ներկայացնեմ Վեհափառի հովուապետական այցի ժամանակացոյցի մանրամասնութիւնները, որոնց մէջէն նաեւ ընթերցողը պիտի տեսնէ Հայոց Հայրապետով նորոգուող ժողովուրդը:

Յունիս 21-22 – Հայոց Հայրապետը կը հիւրընկալուի Յունաց Տիեզերական Պատրիարքի կողմէ: Բնականօրէն ուղեւորութեան այս մասը իր ամբողջ խորքովը երկու Եկեղեցիներու միջեւ փոխադարձ յարգանքի ու սիրոյ արտայայտութիւնը կարելի է համարել: Պաշտօնական այցելութեամբ մը կը հիւրընկալուինք Յունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սուրբ Օծութիւն Բարթողիմէոս Բ.-ի կողմէ, որ իր կողքին կ'ունենայ Սինոդի անդամները: Հիւրընկալ Պատրիարքը ինք անձամբ կ'ողեկցի Վեհափառ Հայրապետին՝ Յունաց Պատրիարքարանը իր բոլոր բաժանմունքներով ներկայացնելով: Կեսօրուայ հիւրասիրութենէն առաջ Հայոց եւ Յունաց կողմերու միջեւ տեղի կ'ունենայ մտերմիկ երկխօսութիւն՝ գլխաւորութեամբ երկու Եկեղեցիներու Պետեր Հայոց Հայրապետի եւ Յունաց Տիեզերական Պատրիարքի ու մասնակցութեամբ ուղեկից եպիսկոպոսներու: Այստեղ ուրախութեամբ պետք է ընդգծել, որ տիրող ընդհանուր մթնոլորտը դրական էր, մանաւանդ ի նկատի ունենալով նաեւ այն հանգամանքը, որ երկու հոգեւոր Պետերու միջեւ տիրող սիրալիր ու յարգանքի անվերապահ մթնոլորտը կը դրսեւորուէր նաեւ երկխօսութեան մասնակից եպիսկոպոսներու միջեւ: Երկխօսութեան հիմնական եզրակացութիւնն այն էր, որ եղբայրական սէրն ու յարգանքի ոգին պետք է խթանը հանդիսանար համագործակցութեան նոր մակարդակներու:

Օրուան երկրորդ մասին Յունաց Տիեզերական Պատրիարքը փոխադարձ այցելութիւն կուտայ Հայոց Հայրապետին Կ. Պոլսոյ հայոց Պատրիարքարան այցելու-

թեամբ, ուր Վեհափառի կողքին կը գտնուէր նաեւ Պոլսոյ հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆեան: Օրը իր փակումին կը հասնի Յունաց Պատրիարքի կողմէ Վեհափառ Հայրապետին ի պատիւ տրուած ընթրիքով մը:

Յունիս 22-ին Յունաց Տիեզերական Պատրիարքի առաջնորդութեամբ Վեհափառ Հայրապետը եւ ուղեկից եպիսկոպոսները կ'ուղեւորուին Հէյպելի կղզի, դէպի Այա Թրիատայի վանքը, որը եղած էր Յունաց Պատրիարքութեան հոգեւորականաց պատրաստութեան կարեւորագոյն ուսումնական կեդրոններէն: Բնական է, վանքը ներկայիս դադրած է գործելէ, չունենալով պետական համապատասխան արտօնութիւնը: Իր տպաւորիչ կայքով եւ տարողութեամբ վանքը կը խօսէր ու կը վկայէր այն մասին, որ ամլութեան դատապարտուած վանքը պէտք է եղած ըլլար երբեմնի հզօրագոյն կեդրոններէն մէկը: Համատեղ արտասանուած աղօթքէ ու միասնական ճաշէն յետոյ նաեւ կ'ուղեւորուինք Գնալը Հայոց եկեղեցին, Յունաց Տիեզերական Պատրիարքութեան հետ պաշտօնական այցը աւարտած համարելով: Այստեղ տեղին է անդրադառնալ Յունաց Տիեզերական Պատրիարք Բարթողիմէոս Բ.-ի անձին գէթ քանի մը խօսքերով: Ուղեկից բոլոր եպիսկոպոսներու համար խորապէս տպաւորիչ էր տեսնել յարգանքի այն բացառիկ վերաբերմունքը, զոր ան տածեց Հայոց Հայրապետի անձին նկատմամբ: Իր կեցուածքով ու սիրոյ արտայայտութիւններով ան դրսեւորեց ճշմարիտ քրիստոնեայի մօտեցում: Իր այնքան խոնարհ ու հեզա-համբոյր վերաբերմունքով անտարակոյս շարժեց բոլորիս հոգիները: Մէկ խօսքով Տիեզերական Պատրիարքի բարի վերաբերմունքը աննկատ չմնաց բոլորիս կողմէ:

Կեսօրէ վերջ կը հասնինք Գնալը: Այնքան յաճախ էինք լսած Գնալը կղզիի մասին, որն այլեւս կը թուէր ըլլալ հեքիաթային երկիր մը: Գնալը մուտքէն սկսեալ հայկականութիւնը տիրապետող էր: Նաւամատոյցին հաւաքուած հայերը գրեթէ գրկախառնութեամբ ընդունեցին Հայոց Հայրապետը, կարծէք կարօտով սիրող հօր մը ներկայութեան: Մէկ կողմէ Վեհափառի յուզումը եւ միւս կողմէ ժողովուրդի բուռն ծափահարութիւնները՝ հովիւ եւ հօտ սիրտերը մէկի կը վերածէին: Թափօրը կը շարժի դէպի Գնալը Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, ուր հարիւրաւոր ժողովուրդ անհամբեր կը սպասէին Վեհափառին: «Հրաշափառ»-ի աւանդական արարողութենէն յետոյ եկեղեցւոյ շրջափակին մէջ Վեհափառը կը հանդիպի իր հօտի զաւակներուն հետ: Բառերով կարելի չէ նկարագրել տիրող մթնոլորտը: Եկեղեցւոյ ուրախ դողանջներուն ներքոյ, Վեհափառի աչքերուն մէջէն խօսող սրտի բարութիւնը եւ ժողովուրդի կարօտի գեղուն զգացումները նոր յոյս ու կեանք կը տարածէին բոլորին մէջ: Ներքին յուզում մը կը լեցնէ հոգիս: Դէպի եկեղեցի փութացող մայրիկներն ու երիտասարդ մայրերը իրենց փոքրիկներով կ'ուզէին Վեհափառի սքեմին հպումովը զգալ Մայր Հայրենիքի ու Ս. Էջմիածնի ներկայութիւնը: Անուշիկ բալիկներու շրթներուն վրայ լսուող քաղցրահնչուն հայերէնը նոր պատգամ մը ըլլար կարծես նաեւ ինձ համար: Ես այդ մանուկներու ձայնին ու խօսքին մէջ ամփոփուած հայերէնով կ'ապրէի հայուն մէջ վճռական ոգիին արտայայտութիւնը: Ճշմարիտ հերոսներ են անոնք, որոնք կ'ապրին չսպասուած ճնշումներու ծանրութեան տակ: Իրենց մէջ հայութիւնը մնացած է անաղարտ եւ ինչ խօսք անոնց եկեղեցասիրութեան մասին, բառերն անկարելի պիտի ըլլան տալու ամբողջական պատկերն անոնց երկիւ-

ղած աղօթքին ու համայնքային կեանքին: Թերեւս ճիշտ պիտի ըլլար ըսել, որ տակաւին ակնյայտ էր այն, որ Տրապիզոնցի Խաչատուրեան Պատրիարքի հոգիները շարժող պատգամները արթուն էին անոնց մէջ եւ հոգելոյս Շնորհք Պատրիարքի միտոնաբոյր ներկայութեան ոգին կ'արտայայտուէր անոնց երկիւղած աղօթքին մէջ: Այս զգացումներով եւ տակաւին սրտիս մէջ ծրարուած բայց չքակուած ապրումներով կը վերադառնանք Կ. Պոլիս Պատրիարքարան՝ Մայր եկեղեցւոյ մէջ կանաւիք «Հրաշափար»-ի պաշտօնական արարողութեան:

«ՀՐԱՇԱՓԱՐ»-Ի ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱԹՈՌԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Ինչքան էական էր տեսնել այն պահը, երբ Հայոց Հայրապետը իր սիրտը լայնօրէն կը բանար իր զաւակաց համար, որոնք կարօտակէզ կը սպասէին Ս. Էջմիածնի օրհնութիւններուն: Թափօրը նոր իմաստ կ'առնէր ինձ համար: Հայոց Հայրապետի սիրոյ դրսեւորումն էր, որ կ'արձանագրուէր թափօրի ամբողջ տեւողութեանը: Հաւատաւոր ժողովուրդի համար երազը կը դառնար իրական եւ ապա պատմութիւնը՝ Հայոց Հայրապետի Կ. Պոլիս այցելութեամբ: Դպրոցական մանուկներ, պատանիներ թափօր կազմած, իրենց սրտերուն մէջէն ճանապարհ կը հարթէին Վեհափառի համար մինչեւ Խորան: Հայրապետական պատգամը անընդհատ հազար փառք կը վերառաքէր առ Աստուած ի տես արթուն հաւատքին, որ առկայ էր ժողովուրդի կեանքին մէջ: Խանդավառութեան ալիքը հետզհետէ նոր եռանդով ու թափով փոխանցիկ կը դառնար նաեւ յաջորդող օրերուն:

ՈՒՐԲԱԹ, 23 ՅՈՒՆԻՍ 2006

Օրուան ամբողջ ժամանակացոյցը հոգեցունց արարողութիւններով կը լեցնէ բոլորս: Հերթաբար կ'այցելենք Պաքըզիւ Օնուկ Ս. Աստուածածնի եկեղեցի, Ս. Փրկիչ Մատուռ եւ հիւանդանոց, Սամաթիա Ս. Գեորգ եկեղեցի, այնուհետեւ Ազգային Պատրիարքարանի մէջ հանդիպում մտաւորականներու եւ արուեստագետներու հետ, հանդիպում երիտասարդներու հետ եւ երեկոյեան ընթրիք՝ հոգեւորականներու եւ Պատրիարքարանի Յանձնախումբերու հետ: Իսկ օրուան ընթացքին Վեհափառ Հայրապետը պաշտօնական այցով մը կը գտնուի Ստամպուլի նահանգապետին մօտ:

Իւրաքանչիւր այցելութիւն իր խոր տպաւորութիւնը թողուց բոլորիս վրայ: Յատկապէս ներշնչող էր դպրոցականներու հետ հանդիպումը եւ անոնց շրթներուն վրայ արտասանուող հայերէնը: Ամէն վայրկեան կը մտածէի այն մասին, որ երբեմնի Կ. Պոլիսը, որ արեւմտահայ գրականութեան օրրանն էր եղած, ինչո՞ւ համար այս բախտին արժանի պիտի դառնար: Բայց կ'ուզեմ ըսել նաեւ, որ այն ինչ կայ այսօր Պոլսոյ մէջ, եկեղեցիներ ու դպրոցներ, թէկուզ եւ թիւով անհամեմատելիօրէն քիչ անցեալի յուշ դարձած փառքի օրերէն, տակաւին մեզ կը ներշնչէ բացառիկ հայկականութեամբ: Խորքը ըմբռնելու ատակ մարդը յստակօրէն կը կարդայ պոլսահայութեան պայքարի կեանքը, որն աւելի զոհողութիւնը կը պահանջէ քան այն, ինչ որ կը

կատարուի այսօր արտասահման: Կ. Պոլսոյ մէջ պահուածը հերոսական աշխատանքի վկայութիւնն է: Լաւապէս հասկնալու համար իրավիճակը պէտք է ըլլալ հոն, քալելու թաղերուն մէջէն, որպէսզի պատկերացումն ըլլայ շատ յստակ եւ արժեւորումն ալ ըստ այնմ եւ արդար:

Ինչքան հաճելի էր հանդիպիլ Պոլսոյ հայ մտաւորականութեան հետ, որոնցմէ թիւով շուրջ քառասուն հոգիներ եկած էին յարգանքի իրենց տուրքը մատուցելու Վեհափառին: Անձնապէս ուրախ մնացինք անգամ մ'եւս ըմբռնելով ներկայութիւնը բոլորին եւ ի մասնաւորի Ռոբեր Հատտէճեանի, Զահրատի, Զարեհ Խրախունիի, Վարդ Շիկահերի, որոնց հետ երկար տարիներու բարեկամութիւն ենք մշակած:

Մտաւորականութեան հետ հանդիպմանը յաջորդեց երիտասարդութեան հետ երկխօսութիւնը, որը այնքան յուսալից եւ ոգեւորող էր: Շատերու պարզ հարցադրումները կը բացատրէին այն մասին, որ Հայրենիքն ու Եկեղեցին իրենց կեանքի նպատակն էր: Տարակոյս չունինք, որ նոյն երիտասարդութիւնը պիտի շարունակէ վերապրեցնել պոլսահայ համայնքէն ներս երբեմնի փառքի օրերն Պոլսոյ:

ՇԱԲԱԹ, 24 ՅՈՒՆԻՍ 2006

Կեսօրէ առաջ կազմակերպուած է այցելութիւն պատմական-մշակութային արժէք ներկայացնող վայրեր Տօլմապահչէ-պալատ-թանգարան, Այա Սոֆիա:

Կեսօրէ յետոյ այցելեցինք Սկիւտարի գերեզմանատուն, Ս. Խաչ եկեղեցի եւ Ս. Խաչ Դպրեւանք: Ինչպէս նախկին այցելութիւնները, այս այցելութիւնները եւս իրենց խորքով ուխտագնացութիւններ էին: Սկիւտարի գերեզմանատանը աղօթք կատարեցինք: Աղօթք կատարեցինք նաեւ Պետրոս Դուրեանի շիրիմին: Ինչպէս մեր նախորդ այցելութեանը Կ. Պոլիս, Շիշլիի գերեզմանատուն այցելութիւնը մեզի համար կարեւոր էր, ապա այս անգամ Սկիւտարի գերեզմանատուն այցելութիւնը եւս ներշնչող էր:

Շաբաթ, երեկոյեան, Հայոց Հայրապետին ի պատիւ սարքուած ընդունելութեամբ օրը կը հասնի իր լրումին: Ընդունելութեան ողջ ընթացքին կը տիրէր տօնական մթնոլորտ մը: Հայերէնը կը տիրապետէր հոգիներէն ներս: Անտարակոյս Հայոց Հայրապետի պատգամը նոր մարտահրաւէր մըն էր ուղղուած ներկայ հանդիսականներուն, որպէսզի Յարութեան շունչը շարունակէին դարձնել իրենց հոգեւոր ու ազգային կեանքին թթիւմորը: Ինձ համար յստակ դարձաւ, որ ժողովուրդը կարօտ էր հայրենասիրական ոգով օծուն խօսք ու բառի: Խանդավառութեան ալիքը դարձաւ երեկոն արշալոյսին օղակող ներքին զգացողութիւնը...

ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆԻՍ 2006

Գում-Քափուի հայոց Պատրիարքութեան Մայր եկեղեցւոյ մէջ կը մատուցուի Հայրապետական Ս. Պատարագ: Եկեղեցւոյ զանգերու ղողանջները կ'արձագանգէին Ս. Էջմիածնի խորհուրդը: Լսուող ղողանջներուն մէջ նոր արձագանգ կը դառնար նահատակներուն ընծայուած կեանքը «Վասն Յիսուսի - վասն հայրենեաց»:

Հայոց Հայրապետը թափօրով կ'առաջնորդուի Մայր եկեղեցի, ուր Պատարագի ամբողջ տևողութեանը ժողովուրդը յոտնկայս կը լսէ ու կը հետեւի Սրբազան Պատարագին: Շատ անգամներ ներկայ եմ եղած Վեհափառի Պատարագին, բայց այս Պատարագը ուրիշ էր իր հոգեշարժ ուժականութեամբ: Ամէն անգամ, երբ Վեհափառը Ս. Սեդանէն դէպի ժողովուրդ դառնալով կը խաչադրօշմէր հաւատաւոր ժողովուրդը, կարծէք նոր լոյս կը տարածուէր բոլորիս սրտերուն մէջ: Մայր եկեղեցւոյ պատերէն դուրս արեւու լոյսին տակ համակ խաւար կը տիրէր: Անապատին մէջ կարծես Քրիստոսի լոյսի ու յոյսի օվասիսն ըլլար Մայր եկեղեցին: Թափօրով սկսուող ու թափօրով աւարտուող Ս. Պատարագը նորօրինակ հոգեւոր ամուր միութիւն մը կը հաստատէր Հայոց Հայրապետի ու հաւատաւոր ժողովուրդի սրտերուն միջեւ:

Անյոգնաբեկ Հովուապետը Հայց. Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի օրհնութիւնը կը դրօշմէր ամէն մէկու սրտին վրայ: Հաւատաւոր սրտերուն մէջէն ճառագայթող գոհունակութեան զգացումները լոկ երկու բառով մը մտնէր դարձած կը զօրացնէին հոգիս. *«Վեհափառ, փառաւոր մնաս, օրհնուած մնաս»:*

Սրբազան Պատարագին յաջորդող թղթակիցներուն հանդիպումը կը հանդիսանար ամէնէն զգայացունցը: Իրեն ուղղուած բազում հարցերուն Վեհափառը կը պատասխանէր վճռական ու Հայրապետին յատուկ քաջութեամբ. *«Յեղասպանութիւնը պատմական փաստ է. մեզի համար վիճարկելի հարց չէ Եղեռնը»:* Պատմութեան ձայնը կ'արձագանգէր Վեհափառի հոգիէն: Ազատ աշխարհի մէջ նոյն խօսքը չէր կրնար ունենալ նոյն կշիռը՝ քան այն տեղին մէջ, որտեղ նահատակներու ոգին կը սաւառնէր՝ լսելու համար արդարութեան ձայնը:

Վեհափառ Հայրապետի Կ. Պոլիս Հովուապետական այցելութիւնը արթնութեան կոչն է ուղղուած ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս ապրող մեր ժողովուրդի զաւակաց: Հայոց Հայրապետի կոչը արթնութեան հրաւերն է, որպէսզի դառնանք մօտիկ անցեալին պատմութեան վկայախօսները: Կ. Պոլիս իր Հովուապետական այցելութենէն Վեհափառը Ս. Էջմիածին կը դառնար իր ժողովուրդի կարօտի ապրումներով: Աստուծոյ նախախնամութիւնը նոր հանգրուան մը կը հաստատէր Հայոց Հայրապետի հոգիին խորքը եւ նոր հանդիպում մըն ալ բոլորիս եւ Վեհափառին միջեւ: Նահատակներու կտակէն բխած նոր կտակը կը բերուէր առաւել բոցավառելու յաւերժական կրակը, որը ուրիշ բան չէ եթէ ոչ արշալոյստուող նոր Հայաստանը, Ս. Էջմիածնի ժայռին վրայ խարսխուած:

Քաջարի Հայրապետ, քու սրտին մէջ թթխմորուած Աստուծոյ սէրը իր մէջ կը խտացնէ մեր նախնեաց լոյս հաւատքի զօրութիւնը: Բաշխէ այդ լոյսը անընդհատ, զի այդ լոյսին մէջ Ս. Էջմիածինը կը բաշխէս ազգիդ զաւակաց: Ս. Էջմիածնի խորհուրդին առջեւ խոնարհուած Վեհափառութիւնդ թող իր սրտէն ու հոգիէն Քրիստոսի սէրը լեցնէ բոլորիս էութեան մէջ Ս. Էջմիածնի ոգեղէն ներկայութիւնը՝ նոր կեանք ներառնէ Հայց. Եկեղեցւոյ զաւակաց հոգիներուն մէջ, որպէսզի բոլորիս մէջ յաւերժական Սուրբ Միւռոնը դառնայ Ս. Էջմիածինը, զի Ս. Էջմիածինը Աստուծոյ ձայնն է, նոր կեանքի հրաւիրող պատգամն է, հոգիները միացնող ու ամրացնող հայոց Սրբութիւն Սրբոցն է Ս. Էջմիածինը:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՍԿՋԲՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ¹

Աստվածաշունչը հայ թարգմանական գրականության հնագույն և պատմամշակութային ամենակարևոր հուշարձանն է, որի հայերեն թարգմանության սկզբնավորությունը կապված է գրերի գյուտի հետ: 405/406 թ. Մեսրոպ Մաշտոցը, ստեղծելով հայերեն գրերը, Աստվածաշնչից հայերենի թարգմանեց Առակաց գիրքը և հիմք դրեց ազգային դպրությանը: Հայաստանում Աստվածաշունչը կարևոր նշանակություն է ունեցել քրիստոնեության ամրապնդման և հայ ժողովրդի հոգեկերտվածքի ձևավորման համար: Նրա հայացմամբ փոխվեց ամբողջ երկրի նկարագիրն ու ժողովրդի ճակատագիրը:

Աստվածաշունչը Հայաստանում գործածության մեջ է եղել դեռևս գրերի գյուտից շատ առաջ, քանի որ Հայոց Եկեղեցին IV դ. սկզբից գործում էր որպես լիովին ձևավորված մի հաստատություն²: Աստվածաշունչը Հայաստան են բերել Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, իսկ քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելուց հետո Գրիգոր Լուսավորիչը և նրա հաջորդներն այն տարածում են ամբողջ երկրով մեկ:

Հայոց դարձից մինչև գրերի գյուտն Աստվածաշունչը քարոզվում էր միայն բանավոր թարգմանությամբ: Այդ աշխատանքը կատարում էին Եդեսիայում, Անտիոքում, Աթենքում և Ալեքսանդրիայում կրթություն ստացած մի խումբ աշակերտներ, ովքեր կոչվում էին *Թարգմանիչներ*: Նրանց հիմնական պարտականությունը եկեղեցական արարողությունների ժամանակ հունարեն և ասորերեն սուրբգրային ընթերցումները բանավոր հայերենի թարգմանելն էր:

V դարում Աստվածաշնչի գրաբար թարգմանությունը կատարվել է երկու փուլով: Առաջին թարգմանությունը, որ մասամբ ասորերեն և մասամբ հունարեն սկզբնագրերից կատարված թարգմանություն էր, արվել է գրերի գյուտից անմիջապես հետո՝ 407-412 թթ. ընթացքում, երկրորդը՝ Եփեսոսի ժողովից (431 թ.) հետո՝ 433-436 թթ. ընթացքում, որը նախորդի վերանայումն ու սրբագրումն էր՝ Բյուզանդիոնից բերված հունարեն բնագրի հետևողությամբ³:

Հայոց այբուբենն ամբողջացնելուց և հույն գրիչ Հռոփանոսի օգնությամբ տառե-

¹ Աստվածաշնչի մատենագրական վկայակոչությունների վերաբերյալ, «Վաղ շրջանի մատենագիրների աստվածաշնչական հղումների նշանակությունը» խորագրով, 1999 թ. զեկուցում ենք կարդացել Օշականում «Աստվածաշնչական Հայաստան» միջազգային գիտաժողովում. տե՛ս Զեկուցումների դրույթներ, Օշական, 1999, էջ 88-89:

² Նախաքրիստոնեական հայ մատենագրության մասին տե՛ս Պ. Անանյան, Քրիստոնեության հետքեր Հայաստանի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզչության առաջ (պատմական ուսումնասիրություն), Վենետիկ, 1980:

³ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Բ հ., Երևան, 1976, էջ 309-310:

րը ձևավորելուց հետո Մաշտոցը Սամոսատում իր աշակերտներ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ «եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի...»⁴: Մաշտոցն Աստվածաշնչի թարգմանությունն ավարտում է Հայաստանում Սահակ Պարթևի օգնությամբ: Առակաց գրքից հետո հայերենի են թարգմանվում Մովսեսի Հնգամատյանը, Մարգարեական գրքերը, Պողոսի և Առաքելական թղթերը, Ավետարանները: Այդ նախնական փորձից հետո առաջին թարգմանիչներ Եզնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին, Կորյունը, Ղևոնդը ուղակվում են Եդեսիա և Կոստանդնուպոլիս՝ թարգմանական գործում հմտանալու և, 432 թ. վերադառնալով Հայաստան, սկսում են Աստվածաշնչի թարգմանության վերանայման երկրորդ փուլը՝ հետևելով Յոթանասնից թարգմանությանը⁵:

V դ. 30-ական թթ. հետո Աստվածաշնչի հայերեն բնագիրն այլևս էական խմբագրման չի ենթարկվել, ուստի և այն անվանվել է «Սահակ-Մեսրոպյան թարգմանություն», որը, դառնալով Հայոց Եկեղեցու կանոնական բնագիրը, այնպիսի հեղինակություն է ձեռք բերել, որ նրա որևէ փոփոխություն հետագա դարերում անընդունելի է համարվել⁶: Աստվածաշնչի առաջին հայերեն թարգմանությունը չի ընդգրկել Հին Կտակարանի երկրորդականոն գրքերը (*Եզրի Ա, Յուդիթ, Տովբիթ, Մակաբայեցոց Ա-Դ, Իմաստութիւն Սողոմոնի, Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիւրաբայ և Բարութ*⁷): Հին և Նոր Կտակարանների այս կանոնը զգալի փոփոխություն է կրել Աստվածաշնչի թարգմանության երկրորդ՝ հետեփեսոսյան շրջանում, երբ հայերեն բնագիրը վերանայվել է Բյուզանդիոնից բերված հաստատուն, ճշմարիտ և ստույգ օրինակների հիման վրա: Այդ ժամանակ հայերենի են թարգմանվել և կանոնական համարվել վերը թվարկված բոլոր երկրորդականոն բնագրերը, բացառությամբ *Մակաբայեցոց Դ* և *Յովհաննու Յայտնութեան* գրքերի: Այսպիսով, Հին և Նոր Կտակարանների հայերեն թարգմանությունները հիմնված էին պաշտոնական կանոնների վրա թե՛ նախափեսոսյան շրջանում (պեշիտտայական-ասորական կանոն) և թե՛ հետեփեսոսյան շրջանում (կեսարական-բյուզանդական կանոն)⁸: Այս փաստի արդյունքն այն էր, որ V դարի առաջին կեսում հայերն ունեին երկրորդ՝ վե-

⁴ Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 50:

⁵ «Յոթանասնից» բառը, որը հաճախ նշվում է լատինական LXX թվանշանով, ոչ թե թարգմանության անվանումն է, այլ «վավերականության կնիքը թարգմանության վրա». տե՛ս Ն. Ներսեսյան, Աստվածաշունչը և հայ մշակույթը, Երևան, 2001, էջ 18:

⁶ Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հնագույն թարգմանությունների մատենաշար, Ա. Զեյթունյան, Գիրք Ծննդոց, Ներածություն, Երևան, 1985, էջ 66:

⁷ Հ. Անապան, Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, «Էջմիածին», 1966, No 11-12, էջ 72: Նույնի՝ Հայկական մատենագիտութիւն, Բ հ., էջ 315-316: Հ. Անապանը, առաջնորդվելով Խորենացու թելադրած ուղիով, ենթադրում է, որ հայերեն առաջին թարգմանության «Նոր Կտակարանի կանոնն էլ հարկ է որոնել Ասորական Եկեղեցու ազդեցության սահմաններում, ինչպես Հին Կտակարանին»: Ըստ այդմ, հայերեն բնագիրը՝ Պեշիտտայի նման, չպետք է ունենար *Պետրոսի Բ, Յովհաննու Բ-Գ և Յուդայի* թղթերը, ինչպես նաև *Յովհաննու Յայտնութիւնը* (փութանակի թագմանությունը ընդգրկել է նաև Պողոսի 15-րդ՝ *Գորնթացոց Գ* թուղթը): Տե՛ս Հ. Անապան, Աստվածաշունչ..., էջ 73:

⁸ Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 72: Հ. Անապան, Հայկական մատենագիտութիւն, Բ հ., էջ 317-318:

րանայված ու լրացված թարգմանությամբ կանոնյալ Աստվածաշունչ մատյան, որի բնագիրը հասել է մինչև մեր օրերը և հանդիսանում է հայկական Աստվածաշնչի ընկալյալ բնագիրը⁹:

Ինչպես նշեցինք, նախապես աստվածաշնչական գրքերն ըստ բովանդակության ամփոփված են եղել առանձին հատորներում՝ հնգամատյան, մարգարեություններ, Ավետարաններ, Պողոսի թղթեր և այլն: Դա բացատրվում է նրանով, որ երկաթագիր տառատեսակի խոշորությունը հնարավորություն չէր տալիս մեկ ձեռագրում ընդգրկել Աստվածաշնչի ողջ բնագիրը: Բոլորգիր տառատեսակի կիրառումը լուծում է այդ խնդիրը: XII դ. վերջում Ներսես Լամբրոնացին (1153-1198 թթ.) կազմում է աստվածաշնչական գրքերի առաջին ամբողջական ժողովածուն¹⁰: Այնուհետև Աստվածաշնչի բնագիրը կարգավորել է Գևորգ Սկևռացին (1246-1301 թթ.), որի գրչի արդյունքն են հայերեն բնագրի նախադրություններն ու գլխակարգությունները: Հայերեն և լատիներեն աստվածաշնչական բնագրերի համեմատությունը հեշտացնելու նպատակով ձեռագրերում հայկականի կողքին տեղ են գտնում Հեթում Երկրորդ թագավորի (1265-1307 թթ.) նորամույձ լատինական գլխաբաժանումները: Հետագայում, XV դ. սկզբին, հայկական աստվածաշնչական բնագրեր են թափանցում նաև Եվրոպայում տարածում գտած տնատումները, որոնք ծագում են Իսահակ Նաթանի 1437-1445 թթ. կազմած եբրայական համաբարբառից: Այդ տնատումներն առաջին անգամ հանդիպում են Երևանի Մատենադարանի № 351 (1619 թ.) ձեռագրում՝ ընդօրինակված Լվովում Ղազար Բաբերդացու (Վալաքացու) պատվերով՝ ձեռամբ գրիչ Միթրոյի որդի Թորոսի: Բացի տնատումներից՝ Ղ. Բաբերդացին իր Աստվածաշնչի լուսանցքներում նշել է նաև հայկական ու լատինական գլխաբաժանումները և, նույնիսկ, գլուխների հուռնյան հատվածները, որոնց կիրառումը տնատումների առկայությամբ արդեն անիմաստ էր¹¹: Դա հայերեն Աստվածաշնչի երրորդ խմբագրումն էր, որ բազմիցս ընդօրինակվել է Սպահանի (Պարսկաստան) գրիչների կողմից¹²: Աստվածաշնչի կարգավորման ուղղությամբ վերջին նշանակալից քայլը կատարել է Ռսկան Երևանցին՝ բոլորովին հրաժարվելով հայկական գլխաբաժանումներից և ուղղակիորեն առաջնորդվելով լատինական գլխաբաժանումներով ու տնատումներով: Այն հետագայում սովորական դարձավ հայերեն բնագրի բոլոր հրատարակությունների համար¹³:

Ինչպես բոլոր արևելաքրիստոնեական գրականություններում, հայ գրականության մեջ նույնպես թարգմանությունները նախորդել են ինքնուրույն մատենագրության սկզբնավորմանը: Ինքնուրույն մատենագրության ստեղծմամբ, սակայն, թարգմանչական գործը Հայաստանում ո՛չ միայն չդադարեց, այլև հետզհետե ընդգրկելով

⁹ **Հ. Անապան**, նշվ. աշխ., էջ 317-318:

¹⁰ Տե՛ս **Ն. Ալիևյան**, Ներսես Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսուի, Կեանքն եւ գրական վաստակները՝ հանդերձ ազգաբանությամբ Պաղատունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց, Վիեննա, 1956, էջ 318-321:

¹¹ Մանրամասն տե՛ս **Հ. Անապան**, Աստվածաշունչ..., էջ 88-89:

¹² **Ն. Ներսեսյան**, Աստվածաշունչը և հայ մշակույթը, Երևան, 2001, էջ 30:

¹³ **Լ. Տեր-Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 73-75:

ավելի լայն բնագավառներ՝ գոյատևեց ընդհուպ մինչև նորագույն ժամանակները¹⁴։ Աստվածաշնչից անմիջապես հետո առաջին հայ թարգմանիչները հայերենի են թարգմանել քրիստոնեական Եկեղեցու սուրբ հայրերի երկերը (Բարսեղ Կեսարացու (329-379 թթ.), Գրիգոր Նազիանզացու (328-389 թթ.), Եփրեմ Ասորու (350-380 թթ.), Հովհան Ոսկեբերանի (354-407 թթ.), Կյուրեղ Երուսաղեմացու (III-IV դդ.) և այլոց մեկնությունները, ճառերը, կանոնները), ինչպես նաև մի շարք ծիսական գրքեր (Պատարագամատույց, Ժամագիրք, Ճաշոց) և այլն։ Դասական շրջանի թարգմանչական գլխավոր սկզբունքը եղել է բնագրի հարազատ, բայց ո՛չ ստրկական վերարտադրությունը, որը հնարավորություն էր տալիս ճշգրիտ կերպով արտահայտել բնագրի բովանդակությունը և իմաստային երանգները։ Սակայն հետագայում V դարի վերջի-VIII դարի սկզբի հունաբան դպրոցի ներկայացուցիչներն առաջնորդվել են բնագրի բառացի, նյութական վերարտադրության սկզբունքով, որը հայերենում առաջացրեց անհարազատ շարադասական կառուցվածքներ։ Կիլիկյան շրջանում մասամբ շարունակվում են դասական շրջանի թարգմանական ավանդույթները. թարգմանվում են նորանոր վարքեր, վկայաբանություններ, ճառեր, մեկնություններ և այլն¹⁵։ Այս ժամանակահատվածում էլ կազմավորվում են ամբողջական («ի մի տիի») Աստվածաշունչ մատյանները։

Աստվածաշունչ մատյանն ունեցել է բազմաթիվ ընդօրինակություններ և տպագրություններ։ Հայերեն Աստվածաշնչի քննական-համեմատական հրատարակության առաջին փորձը կատարել է Հովհաննես վրդ. Ջոհրապյանը։ 1805 թ. նրա հրատարակած Աստվածաշնչի հիմքում ընկած է 1319 թ. Կիլիկիայում ընդօրինակված՝ Վենետիկի Մխիթարյան մատենադարանի No 1508 ձեռագիր մատյանը՝ համեմատված Աստվածաշնչի հայերեն ինն այլ ձեռագրերի հետ։ Այն մինչև այժմ էլ մնում է գիտական շրջանակներում օգտագործվող լավագույն հրատարակությունը։

Հայերեն Աստվածաշնչի խմբագրությունների համեմատական աշխատանքների ընթացքում նկատված բնագրային տարբերեցվածների քննության ժամանակ անհրաժեշտություն առաջացավ պարզելու նաև կիլիկյան խմբագրությունից առաջ գոյություն ունեցող Աստվածաշնչի պատկերը։ Ձեռագրացուցակների ուսումնասիրությունից պարզվեց, որ պահպանված հնագույն ընդօրինակությունները XII դարից են և, հիմնականում, Աստվածաշնչի այս կամ այն գրքերից են (նկատի չունենք միայն Ավետարաններ պարունակող ձեռագրերը)։ Հետևապես, անհրաժեշտություն դարձավ հետազոտել նաև հայ մատենագրության մեջ սփռված սուրբգրային վկայակոչությունները և կատարել խմբավորման աշխատանքներ։ Քննությունը ցույց տվեց, որ V-XII դդ. հեղինակների՝ պատմիչների, մեկնիչների մոտ պահպանված սուրբգրային վկայակոչությունները քաղված են, համարյա, Աստվածաշնչի բոլոր գրքերից։ Առանձնանում են Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Բարսեղ Կեսարացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու, Հովհան Մանդակունու, Անանիա Մանահնեցու և այլոց աշխատություններում կիրառված վկայակոչությունները, ինչպես նաև Ճաշոցներում և Մաշտոցներում եղած աստվածաշնչական հատվածները։

¹⁴ Անդ, էջ 5-6։

¹⁵ Մանրամասն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984։

Աստվածաշնչով զբաղվող հայագետները (Հ. Պ. Էսապայան, Ա. Ջեյթունյան, Հ. Ամալյան, Պ. Մուրադյան, Տ. Շահե արքեպս. Աճեմյան, Կ. Կոքս և ուրիշներ) իրենց աշխատություններում անդրադարձել են Աստվածաշնչի մատենագրական վկայակոչություններին և նշել նրանց ունեցած կարևորությունը:

«Հանդէս ամսօրեայի» 1935-1936 թթ. համարներում Հ. Պ. Էսապայանի հրապարակած «Հայերէն Աւետարաններու սկզբնագրի հարցը և Ագաթանգեղոսի ու Ղազար Փարպեցոյ կոչումները» հոդվածում¹⁶ հեղինակն անդրադարձել է նշված պատմիչների, ինչպես նաև Կորյունի, Բարսեղ Կեսարացու և այլոց աշխատություններում հանդիպող ավետարանական հղումներին: Համեմատության եզր ընտրելով Զոհրապյան հրատարակության Ավետարանները և, որպես հայերեն հնագույն թարգմանություն, Եփրեմի մեկնությունից քաղված Տատիանոսի Համաբարբառը, հոդվածի հեղինակը պատմիչների ավետարանական հղումները համեմատել է ասորերենի (3), հունարենի (5) և հայերեն ձեռագրական այլ տարբերակների հետ: Ագաթանգեղոսի և Փարպեցու ավետարանական «յառաջբերությունները» հոդվածագիրը խմբավորել է այսպես. «1. տեղիքներ, ուր երկու պատմագիրները հաւանաբար ազատ յարաբերութիւն կ'ընեն. 2. տեղիքներ, ուր կը համընթանան Աւետարաններու հետ և՛ 3. Աւետարաններու և Տատիանի հետ, և 4. տեղիքներ, որոնք սերտ աղերս կը ցուցնեն Տատիանի հետ՝ շեղելով Աւետարաններէն»¹⁷:

Ներկայացնելով բազմաթիվ օրինակներ (որոնց մի մասն առիթ ենք ունեցել համեմատելու մեր ձեռքի տակ եղած այլ հղումների հետ)՝ Հ. Պ. Էսապայանը հանգում է հետևյալ եզրակացությանը. «1. Ագաթանգեղոս և Փարպեցի աչքի առջև ունեցած են Աւետարանները: 2. Այն յառաջբերութիւնները, որոնք խոտորելով Զոհրապի բնագրէն տառացի կը համաձայնին Աւետարաններու մէկ եզական խմբագրութեան հետ՝ Համաբարբառ կոչուած: Երկու պատմագիրներուն գործածած Աւետարանը հայերէն հնագոյն թարգմանութեան բնագիրն էր, ա՛յն, անտարակոյս, զոր Կորիւն «յանկարծագիւտ փութանակի թարգմանութիւն» կ'անուանի: 3. Ագաթանգեղոս և Փարպեցի իրենց կոչումներով միակ ներկայացուցիչը չեն հայերէն առաջին թարգմանութեան բնագրին, Եզնիկ ևս Տատիանեան երանգներ կը կրէ: Ագաթանգեղոսի և Ժամագրքին համաձայնութիւնը պատճառ էր արդէն ընդունելու, որ վերջնոյս բնագիրը պատմագրին ժամանակակից է...: Ժամագրքի մէջ պահուած բնագիրը Աւետարաններու առաջին թարգմանութենէն առնուած է, թարգմանութիւն մը, որ յեցած է Համաբարբառի վրայ»¹⁸: Այնուհետև ավելացնում է. «Այժմեան հայերէն Աւետարաններէն յունական նկարագիրը կը մերժէ ասորերէն Աւետարաններէ թարգմանութիւն մը կամ անոնց գործածութիւնը հայերէն թարգմանութեան ժամանակ: Հայերէն Աւետարաններու մէջ յունականէ բխած թիրիմացութիւններու գոյութիւնը լաւագոյն փաստն է այս տեսակետէ»¹⁹ և այլն:

¹⁶ Հ. Պ. Էսապայան, Հայերէն Աւետարաններու սկզբնագրի հարցը և Ագաթանգեղոսի ու Ղազար Փարպեցոյ կոչումները, «Հանդէս ամսօրեայ», 1935 թ., հմր 10-12, էջ 571-596, 1936 թ., հմր 1-9, էջ 21-40, 185-195, 338-349:

¹⁷ Անդ, էջ 579-580:

¹⁸ Անդ, էջ 338-346:

¹⁹ Անդ, էջ 347:

Պարույր Մուրադյանը «Ղազար Փարպեցու մի տեղեկության պատմա-մշակութային նշանակությունը» հոդվածում²⁰ մեջբերելով Փարպեցու՝ ԺԶ սաղմոսից արված «Յագեցան կերակրօք, ասէ, **-որ միւս ևս թարգման՝ խոզենեաւ ասէ**, և թողին զմնացուածս տղայոց իւրեանց» հղումը նշում է, որ այն նույնական է վրացական խմբագրության (Մ. Շանիձեի հրատ.) հետ: Փարպեցու հիշատակած **միւս ևս թարգմանի** տարբերակը վերաբերում է նախաեփեսոսյան, «յանկարծագիտ փութանակի» (Կորյուն) թարգմանությանը, որը կատարվել է գրերի գյուտից հետո (405/6 թ.), բայց մինչև Եփեսոսի ժողովը (431 թ.), մինչև սահակյան կրկին թարգմանությունը: «Մուրբգրական աղբյուրից քաղում կատարելու Փարպեցու այս օրինակը, - նշում է հոդվածագիրը, - բարեխղճության ակներև վկայություն է. նա ձեռքի տակ ունի սաղմոսի **միւս ևս թարգմանի** տարբերակը, որի հիմամբ էլ մեկնաբանում է բուն վկայությունը, բայց կանոնական դիտված բնագրին հարազատ մնալու համար բերում է և այդ հատվածը: Այստեղից հետևում է, թե սուրբգրական հուշարձանների քննության-հրատարակության ժամանակ առանձնակի վստահությամբ պիտի դիմել Փարպեցու քաղումներին»²¹: Այնուհետև ավելացնում է. «Փարպեցու հիշատակած տարբեր թարգմանությունը, ինչպես համոզվեցինք, բանավոր աղբյուրից չի գալիս: Հենց այս փաստը, որ Ե դարի վերջերին, երբ Փարպեցու Պատմությունն էր շարադրվում, ընդհանուր ճանաչում գտած խմբագրության կողքին կար ու գոյատևում էր և այլ թարգմանություն, ինքնին վկայում է, թե գործ ունենք գրավոր ավանդույթի հետ: Այս դրույթը առավել հաստատուն է դառնում վրաց մատենագրության մեջ պահպանված փաստերի ու հաղորդումների օգնությամբ»²²: Վերջում Պ. Մուրադյանն ամփոփում է. «Մնում է ենթադրել, թե «փութանակին» բացառապես Պեշիտտայից չի բխում և կամ, եթե ասորական և հունական խմբագրությունների համադրական գործածությունն անկարելի նկատենք, այն ևս զերծ չի եղել ըստ հունական նախօրինակի սրբագրվելու հնարավորությունից: Վճռական եզրակացության համար մեր ունեցած այս օրինակը ամեննին բավարար չէ, բայց և այլևս չկան աղբյուրներ, որոնցից հուսալիք նախնական թարգմանության նոր տվյալներ քաղել: Թերևս հայերենով և վրացերենով գոյություն ունեցող **մեկնությունների** ուսումնասիրությունը այդպիսիք ընձեռի (ընգծումն իմն է - Ա. Մ.)»²³:

Այստեղ պետք է նշենք, որ մեր կատարած ուսումնասիրության ընթացքում նկատել ենք Ղազար Փարպեցու՝ Եսայու մարգարեությունից մեջբերված միևնույն հատվածի երկու տարբեր վկայակոչությունների.

*Եսայու Մարգարեություն, Լ 1. «... Զի խորհեցարուք խորհուրդ և ո՛չ ինն, և դաշինս կռեցեք՝ և ո՛չ իմով հոգով. յաւելով մե՛ դս ի վերայ մեղաց»*²⁴:

Ղ. Փարպեցի. 1. «Թագաւորեցին, և ոչ ինն, և դաշինս կռեցին, և ոչ իմով կամաւ»,

²⁰ Պ. Մուրադյան, Ղազար Փարպեցու մի տեղեկության պատմա-մշակութային նշանակությունը, «Էջմիածին» ամսագիր, հ. 1, 1980, էջ 54-57:

²¹ Անդ, էջ 54, ծնթ. 2:

²² Անդ, էջ 56:

²³ Անդ, էջ 57:

²⁴ Բոլոր օրինակների համեմատության համար հիմք ենք ընդունել Աստվածաշնչի Զոհրապյան հրատարակությունը. տե՛ս «Աստուածաշունչ մատենան Հին և Նոր Կտակարանաց», Վենետիկ, 1805:

և

2. «Խորհեցան ոչ ինն, և դաշինս կոեցին, և ոչ իմով բանի»²⁵:

«Էջմիածին» ամսագրի 1996 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր միացյալ համարում Շահե արքեպս. Աճեմյանը «Նոր Կտակարանի համարի մը հայերէն նոր թարգմանութեան առիթով» հոդվածում²⁶ բերում է Պողոս առաքյալի՝ Առ Փիլիպեցիս Թղթի Գ գլխի 10-րդ տան՝ «Հաւատովք ճանաչել զնա և զգօրութիւն նորա» հատվածի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1994 թվականին հրատարակած արևելահայերէն նոր թարգմանությունը՝ «որպէսզի ճանաչեմ նրան և նրա յարութեան գօրութիւնը»²⁷, և իրավացիորեն նշում է, որ «...հայերէն նոր թարգմանությունները, ինչպէս նաև օտար լեզուով կատարուած նոր թարգմանությունները, հիմնուած են յունարէն բնագիրի ընթերցումով վրայ: Յունարէնին մէջ, «հաւատով» բառը տեղափոխուած է նախորդ համարին վերջաւորութեան և արդի թարգմանությունները հետևած են յունարէն այդ շարադրանքին» և որ «...հայերէն նորագոյն թարգմանությունները անգիտացած են հայերէն հին բնագիրը»²⁸: Այնուհետև ավելացնում է. «Հարց կը ծագի այստեղ, թէ մեր նախնիներու Փիլիպեցոց թողթի յիշեալ երկու համարներուն թարգմանությունը ինչպիսի՞ յունարէն սկզբնաղբիւրի վրայ հիմնուած է: Չենք գիտեր: Սակայն կրնանք հաստատել, թէ հայերէն բնագիրին մէջ պահուած կետադրութիւնը... կրնայ հիմ ծառայել սրբագրելու յունարէն ընդունուած բնագիրը»²⁹: Փիլիպեցոց Թղթի վերոնշյալ հատվածը համեմատեցինք ձեռքի տակ եղած մատենագրական մեջբերումների հետ: Անանիա Սանահնեցու «Բան Հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» աշխատությունում նույն հատվածը հղված է այսպէս. «Հաւատովք իմանալ զՆա և զգարութիւն Յարութեան Նորա»³⁰, իսկ Երևանի Մատենադարանում պահվող 1154 թվականին գրված Ճաշոցի 169բ էջում այսպէս է. «Հաւատովք ճանաչել զՆա. և զգարութիւն յարութեան Նորա. և զհաղորդութիւն չարչարանացն Նորա. կերպարանակից լինել մահու Նորա»: Այսինքն՝ նշված աղբյուրներում պահպանված հատվածները և բառանջատումները ևս համապատասխան են Չոհրապյան հրատարակությանը:

Հայ մատենագրության մեջ սուրբգրային վկայակոչությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրիստոնեական Եկեղեցու սուրբ հայրերի աշխատությունների թարգմանությունների ընթացքում հայ թարգմանիչները կա՛մ իրենք են թարգմանել սուրբգրային հատվածները, կա՛մ էլ ձեռքի տակ ունեցել են արդեն իսկ թարգմանված հայերէն Աստվածաշունչը: Աստվածաշնչական հղումները քաղելով և ի մի բերելով նկատեցինք, որ նույն հեղինակի տարբեր գործերում հանդի-

²⁵ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուրք Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 178 և 228:

²⁶ Շահե արքեպս. Աճեմյան, Նոր Կտակարանի համարի մը հայերէն նոր թարգմանութեան առիթով, «Էջմիածին» ամսագիր, հմր 10-11, 1996 թ., էջ 85-88:

²⁷ «Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 258: Տե՛ս նաև վերահրատարակությունը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1999 թ., էջ 258:

²⁸ Շահե արքեպս. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 85:

²⁹ Անդ, էջ 88:

³⁰ Թակոբ Քեռսեան, Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւնը», «Գանձասար», հ. Գ, 1993, էջ 206:

պող Աստվածաշնչի՝ միևնույն գրքից արված մեջբերումները, համարյա, բառացի կրկնվում են, ասել է, թե՝ մեջբերումները քաղված են գրավոր միևնույն աղբյուրից: Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն Մատթէի» և «Յաւետարանագիրն Մատթէոս» գործերում Մատթէոսի Ավետարանից քաղված մեջբերումները նույն են (նրանք ունեն նաև կարևոր տարբերություններ), օրինակ՝

1. *Մատթէոս, Բ 11*. «Եւ իբրևս **մտին** ի տուն, տեսի՛ն զմանուկն հանդերձ Մարեմաւ մա՛րբն իւրով»:

3. *Ոսկեբերան*. «Իբրևս **եկին** ի տունն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով»³¹:

2. *Մատթէոս, Գ 13*. «Յայնժամ զայ Յիսուս ի Գաղիլէէ ի կողմանս Յորդանան գետոյ»:

3. *Ոսկեբերան*. «Յայնժամ, ասէ, զայ Յիսուս ի Գաղիլէէ (Գալիլէէ) ի կողմանս Յորդանան գետոյ»³²:

3. *Մատթէոս, Դ 12*. «Իբրևս լուաւ Յիսուս, եթէ Յովհաննէս մատնեցաւ, **մեկնեցաւ զնաց ի Գալիլէա**»:

3. *Ոսկեբերան*. «Իբրևս լուաւ Յիսուս, եթէ մատնեցաւ Յովհաննէս, **խոյս ետ ի կողմանս Գաղիլէացոց** (Գալիլէացոց)»³³:

Ուսումնասիրության ընթացքում նկատել ենք նաև, որ Անանիա Սանահնեցու մեջբերած վկայակոչությունների մի որոշ մասը համընկնում է Եփրեմ Ասորու սուրբգրային վկայակոչությունների հետ: Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ Անանիա Սանահնեցին օգտագործել է ասորերեն հիմք ունեցող կա՛մ Աստվածաշունչ, կա՛մ էլ սուրբգրային մեկնություն: Այսպես, նրա՝ Մատթէոսի Ավետարանի մեկնության սուրբգրային հղումները համեմատելով Եփրեմ Ասորու Համաբարբառի մեկնության սուրբգրային մեջբերումների հետ՝ ստացել ենք հետյալ պատկերը:

1. *Մատթէոս, Դ 6*. «Եւ ասէ ցնա. Եթէ որդի ես Աստուծոյ՝ ա՛րկ զքեզ **աստի ի վայր**. զի գրեալ է՝ թէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո՝ և ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքարի գոտն քո»:

Եփրեմ Ասորի. «Ասէ ցնա. Արկ զքեզ **ի վերուստ ի վայր**, զի գրեալ է՝ թէ **պահեսցեն զքեզ**, զի մի՛ երբէք հարցի զքարի ոտն քո»³⁴, «Արկ զքեզ ի վերուստ ի վայր»³⁵:

Անանիա Սանահնեցի. «Արկ զքեզ **ի վերուստ ի վայր**, զի գրեալ է, թէ **պահեսցեն զքեզ**, զի մի՛ երբէք հարցի զքարի ոտն քո»³⁶:

2. *Մատթէոս, Դ 8*. «Դարձեալ առնու ածէ զնա սատանայ ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի, և զփառս նոցա»:

³¹ «Յովհաննու Ոսկեբերանի ի Մեկնութենէ Մատթէի», Վիեննա, 1849, էջ 43 և Յաւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, գիրք առաջին, 1826, էջ 112:

³² «Ի Մեկնութենէ Մատթէի», էջ 71 և «Յաւետարանագիրն Մատթէոս», էջ 171:

³³ «Ի Մեկնութենէ Մատթէի», էջ 137 և «Յաւետարանագիրն Մատթէոս», էջ 198:

³⁴ «Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք», հ. Բ, «Մեկնութիւն համաբարբառի, որ ըստ չորից աւետարանչաց և թարգմանութիւն առակաւոր բանից և աւետարանական ճառք», Վենետիկ, 1836, էջ 41:

³⁵ *Եփրեմ Ասորի*, նշվ. աշխ., էջ 44:

³⁶ «Անանիայի Սանահնեցոյ Մեկնութիւն Մատթէի Աւետարանի», աշխատասիրութեամբ՝ Յակոբ Քեռսէանի, «Գանձասար», հ. Ե, Երևան, 1994 թ., էջ 278:

Եփրեմ Ասորի և Ան. Սանահնեցի. «Դարձեալ առ զնա ած հան ի լեառն մի բարձր յոյժ և ասէ ցնա. Իմ են այս ամենայն թագաւորութիւնք»³⁷:

3. *Մատթէոս, Դ 9.* «Եւ ասէ ցնա. Ջայս ամենայն քեզ տաց, եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ»:

Եփ. Ասորի և Ան. Սանահնեցի. «Անկցիս (անկցես) ի վերայ երեսաց քոց, եւ ինձ խոնարհ երկիր պագցես»³⁸:

4. *Մատթէոս, Դ 11.* «Ապա եթող զնա սատանայ. և ահա՝ հրեշտակք մատենան՝ և պաշտէին զնա»:

Եփ. Ասորի. «Եկին հրեշտակք և պաշտէին զնա»³⁹:

Ան. Սանահնեցի. «Եկին հրեշտակք և պաշտէին զնա» և «Եւ ահաւասիկ եկին հրեշտակք և պաշտէին զնա»⁴⁰:

5. *Մատթէոս, Ե 18.* «Ամէն ասեմ ձեզ՝ մինչև անցցեն երկինք և երկիր, յովտ մի՝ որ նշանախեց մի է, ո՛չ անցցէ յօրինացն և ի մարգարէից՝ մինչև ամենայն եղիցի»:

Եփ. Ասորի. «Դիւրագոյն է երկնի եւ երկրի անցանել, քան յօրինաց անտի միում նշանախեցի անկանել...»⁴¹:

Ան. Սանահնեցի. «Դիւրագոյն է երկնի եւ երկրի անցանել, քան յաւրինաց անտի միում նշանի անկանել»⁴² և այլն:

Այսպիսով, պատմիչների, մեկնիչների կամ առանձին ժողովածուների (Ճաշոց, Մաշտոց) Աստվածաշնչից արված վկայակոչությունների ո՛չ միայն տարբերությունները, որոնց մի մասը բնագրային կարևոր սրբագրումներ է կատարում, այլև բառաձևերն ու բառակապակցությունները, բառանշատումներն ու կետադրությունը կողմնորոշիչ դեր կարող են ունենալ համեմատվող ձեռագրերի կամ ձեռագրական խմբերի տարբերությունների ընտրության գործում:

Ստորև ներկայացնենք մատենագրության մեջ հղված աստվածաշնչական մեջբերումների ունեցած տարբերությունների բազմաթիվ օրինակներից մի քանիսը⁴³:

1. *Ծնունդք, Զ 6.* «Եւ ստրջացա՛ւ Աստուած զի արար զմարդն ի վերայ երկրի...»⁴⁴:

Ոսկեբերանի, Եփրեմայ, Յիպողիտեայ. «Զղջացաւ Տէր, զի արար զմարդն ի վերայ երկրի»⁴⁵:

Անանիա Սանահնեցի. «Զղջացաւ Աստուած, զի արար զմարդն ի պատկեր Իւր»⁴⁶:

³⁷ *Եփրեմ Ասորի*, նշվ. աշխ., էջ 42, և *Ան. Սանահնեցի*, նշվ. աշխ., էջ 278:

³⁸ *Եփրեմ Ասորի*, նշվ. աշխ., էջ 42, և *Ան. Սանահնեցի*, նշվ. աշխ., էջ 279:

³⁹ *Եփրեմ Ասորի*, նշվ. աշխ., էջ 46:

⁴⁰ *Ան. Սանահնեցի*, նշվ. աշխ., հ. Ե, էջ 282 և հ. Զ, Երևան, 1996, էջ 233:

⁴¹ *Եփրեմ Ասորի*, նշվ. աշխ., էջ 59:

⁴² *Ան. Սանահնեցի*, նշվ. աշխ., հ. Զ, էջ 275:

⁴³ Ձեռագրերի դեպքում նշված են մեջբերված ամբողջական հատվածի էջահամարները:

⁴⁴ Այսպես է նաև քննական բնագրում. տե՛ս «Գիրք ծննդոց», աշխատասիրությամբ Ա. Ս. Զեյթունյանի, Երևան, 1985, էջ 170:

⁴⁵ «Մեկնութիւն թագաւորութեան Վասն Դաթի և Սաւուղայ ի սպանելոյն Գաւղիաթի՝ Յովհաննու Ոսկեբերանի և Եփրեմի և Յիպողիտեայ ասացեալ», աշխատասիրությամբ՝ Յակոբ Քեռսէեանի, «Գանձասար», հ. Գ, էջ 221:

⁴⁶ «Անանիայի վարդապետի Հայոց Բան Հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց»,

2. *Իմաստություն Սողոմոնի, Զ 3.* «Ո՛ւնկն դիք որ ունիք զբազմություն, և պերճացեալ էք ի վերայ ամբոխից **ազգաց**»:

Ճաշոց, 1154 թ. «Ունկն դիք որ ունիք զբազմություն. և պերճացեալ էք ի վերայ ամբոխից **բազմաց**»⁴⁷:

3. *Իմաստություն Սողոմոնի, Զ 7.* «Այլ **ռամիկն** ներելի ողորմութեան է...»:

Ճաշոց, 1154 թ. «Այլ **խառնիճաղանճն** ներելի ողորմութեան է...»⁴⁸:

4. *Գիրք Յոբայ, ԺԶ 20.* «Եւ արդ ահա յերկինս է վկայն իմ, և **իրաւագէտն** իմ ի բարձունս»:

Ճաշոց, Թ-Ժ դդ. «Եւ արդ ահա յերկի՛նս է վկայ իմ: Եւ **իրագէտն** իմ ի բարձո՛ւնս»⁴⁹:

5. *Գիրք Յոբայ, ԻԲ 21-22.* «...Եւ եղիցի իբրն հա՛յր բնակչացոյ Երուսաղէմի և բնակչացոյ Յուդայ: 22 Եւ տա՛ց **զփականս** Դարթի նմա. իշխեսցէ, և ո՛չ ոք իցէ որ նմա ընդդէմ դառնայցէ»:

Ճաշոց, 1154 թ. «Եւ տաց **զփառսն** Դարթի նմա. իշխեսցէ. և ոչ ոք իցէ որ նմա ընդդէմ դառնայցէ»⁵⁰:

6. *Մարգարէություն Եսայեայ, ԼԳ 13.* «Լուիցեն **հեթանոսք** զոր արարի. ծանիցեն մերձաւորք զգաւրություն Իմ»:

Ճաշոց, 1154 թ. «Լուարուք **հեռաւորք** զոր արարի. ծանիցեն մերձաւորք զգաւրություն Իմ»⁵¹:

7. *Մարգարէություն Եսայեայ, ՄԸ 8.* «Յայնժամ ծաւալեսցի կանուխ լոյս քո, և **բժշկութի՛ւն** քեզ վաղվաղակի հասցէ...»:

Ճաշոց, 1154 թ. «Յայնժամ ծաւալեսցի կանուխ լոյս քո. և **փրկություն** քեզ վաղվաղակի հասցէ...»⁵²:

8. *Մարգարէություն Եզեկիէլի, ԺԸ 17.* «Եւ յանիրաւութենէ դարձո՛յց **զձեռս** իւր. վաշխս և տոկոսիս ո՛չ առ. արդարություն գործեաց...»:

Ճաշոց, 1154 թ. «Եւ յանիրաւութենէ դարձոյց **զանձն** իւր. վաշխ և տոկոսիս ոչ առ. արդարություն գործեաց...»⁵³:

9. *Մարգարէություն Ովսեայ, Է 7.* «... Ամենայն **դատաւորք** նոցա անկան, և ո՛չ ոք էր ի նոցանէ որ կարդայր առ իս»:

Ներսէս Լամբրոնացի. «Ամենայն **թագաւորք** նոցա անկան, և ո՛չ ոք էր ի նոցանէ որ կարդայր առ իս»: Այնուհետև Ն. Լամբրոնացին մեկնել է այսպէս. «Անկան **թագաւորքն** ամենայնքն՝ որք նստան ի Սամարիա ի խորխորա՛տ կռապաշտութեանն, զոր փորեաց Յերոբոամ որդի Նաբատայ, և ո՛չ ոք ի նոցանէ սիրեաց կարդալ առ

աշխատասիրութեամբ՝ Յակոբ Քեռսէեանի, «Գանձասար», հ. Ա, էջ 220:

⁴⁷ ՄՄ ձեռ. No 832, էջ. 47բ-48ա:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ ՄՄ ձեռ. 985, էջ 75բ-76ա:

⁵⁰ ՄՄ ձեռ. 832, էջ 28ա-29ա:

⁵¹ Նույն տեղում, էջ 141ա-143ա:

⁵² Նույն տեղում, էջ 130բ-132բ:

⁵³ Նույն տեղում, էջ. 80ա-բ:

ճշմարիտն Աստուած»⁵⁴:

10. *Աւետարան Մատթէի, Բ 9 (նույնը նաև Երզնկայի և Այրիվանեցու ընդօրինակած աստվածաշնչերում)*. «... Եւ ահա աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց **ի վերայ՝ ուր** էր մանուկն»:

Յովհան Ոսկերբան. «Ահաւասիկ աստղն առաջնորդէր նոցա, մինչև եկեալ եկաց **ի վերայ տեղւոյն ուր** էր մանուկն»⁵⁵:

11. *Աւետարան Մատթէի, ԺԱ 2 (նույնը և Ստ. Սիւնեցի, Մեկնութիւն չորից աւետարանչացի»⁵⁶, Երզնկայի»⁵⁷ և Այրիվանեցու»⁵⁸ աստվածաշնչերում)*. «Իսկ Յովհաննէս իբրև լուաւ ի բանտին **զգործսն** Քրիստոսի, առաքեաց ի ձեռն աշակերտաց Իւրոց»:

Ճաշոց, 1154 թ. «Իսկ Յովհաննէս իբրև լուաւ ի բանդին **զլուրն** Յիսուսի, առաքեաց ի ձեռն աշակերտացն Իւրոց»⁵⁹:

12. *Աւետարան Ղուկասու, ԺԱ 28*. «Եւ նա՛ ասէ. Նա՛ երանի՛ այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ, և **առնիցեն**»:

Ճաշոց, 1154 թ. (նույնը և Երզնկայի և Այրիվանեցու աստվածաշնչերում). «Եւ նա ասէ. Նա երանի այնոցիկ որ լսեն զբանն Աստուծոյ և **պահիցեն**»⁶⁰ (Երզնկայի Աստվածաշնչում **պարհիցեն** ձևով է):

13. *Աւետարան Ղուկասու, ԺԶ 21*. «Եւ ցանկա՛յր **լնուլ զորովայն** իւր ի փշրանացն՝ որ անկանէին ի սեղանոյ մեծատանն: Այլ և շո՛ւնք ևս՝ գային և լիզուին զվերս նորա»:

Ճաշոց, 1154 թ., նույնը և Այրիվանեցու և Երզնկայի աստվածաշնչերում. «Եւ ցանկայր **յազել** ի փշրանացն որ անկանէին ի սեղանոյ մեծատանն. այդ և շունք ևս գային լեզուին զվերս նորա»⁶¹:

14. *Աւետարան Ղուկասու, ԺԶ 31*. «Եւ ասէ ցնա. Եթէ Մովսիսի և մարգարէիցն ո՛չ լսեն, և ո՛չ թէ ի մեռելոց որ յառնիցէ՝ **հաւանեցին**»:

Ճաշոց, 1154 թ. (նույնը նաև Երզնկայի աստվածաշնչում). «Եւ ասէ ցնա. Եթէ Մովսէսի և մարգարէիցն ոչ լսեն. և ոչ եթէ ի մեռելոց որ յառնիցէ՝ **հաւատասցեն**»⁶²:

15. *Գործք Առաքելոց, Ը 30-31 (նույնը և Թ-Ժ դդ. Ճաշոցում»⁶³)*. «... Եւ ասէ. Գիտիցե՛ս արդևք զոր ընթերնուցուաւ: 31 Եւ նա ասէ. Զիա՛րդ **կարիցեմ**, թէ ոչ որ առաջնորդեցէ ինձ...»:

Ճաշոց, 1154 թ. «... Եւ ասէ. Գիտիցե՛ս արդևք զոր ընթերնուցուաւ: 31 Եւ նա ասէ.

⁵⁴ **Ներսէս Լամբրոնացի**, Մեկնութիւն սրբոց երկոտասան մարգարէից, աշխատասիրութեամբ՝ Տ. Անդրէաս վրդ. Նարինեան Ակնեցոյ, Կոստանդնուպոլիս, 1826, էջ 35: Այսպէս է նաև քննական բնագրում. տե՛ս «Գիրք երկոտասան մարգարէից», աշխատասիրութեամբ Հ. Ամալեանի, Երևան, 2000, էջ 34:

⁵⁵ «Յովհաննու Ոսկերբանի Կոստանդիանուպոլսի եպիսկոպոսապետի Յաւետարանագիրն Մատթէոս», գիրք Ա, Վենետիկ, 1826, էջ 83-84:

⁵⁶ **Ստեփանոս Միւնեցի**, Մեկնութիւն չորից աւետարանչացն, Երևան, 1994, էջ 67:

⁵⁷ Երուսաղեմի Սրբոց. Հակոբյանց վանք, ձեռ. No 1925:

⁵⁸ ՄՄ ձեռ. No 1500:

⁵⁹ ՄՄ ձեռ. No 832, էջ 29բ-30ա:

⁶⁰ Անդ, էջ 49ա-50ա:

⁶¹ Անդ, էջ 162ա:

⁶² Անդ, էջ 162ա-165ա:

⁶³ ՄՄ ձեռ. 985, էջ 276բ-278ա:

Զիա՞րդ **գիտիցեմ** եթե ոչ որ առաջնորդեսցե՛ ինձ...»⁶⁴:

16. *Թուղթ Պողոսի առ Հռովմայեցիս, ԺԲ 14*. «Աւրինեցե՛ք **գանիծիչս** ձեր, աւրինեցե՛ք և մի՛ անիծանէք»:

Յովհան Ոսկեբերան (նույնը և 1154 թ. Ճաշոցում). «Աւրինեցեք **գիւլածիչս** ձեր, աւրինեցեք և մի՛ անիծանէք»⁶⁵:

Վկայակոչությունների ներկայացված տարբերակների քանակն, ինքնուշտիքյան, վկայում է նրանց ունեցած դերի կարևորության մասին:

Աստվածաշնչի մատենագրական վկայակոչությունների ուսումնասիրությունն ուշագրավ է նաև հետևյալ առումով: Որոշակի քննությունից հետո եթե պարզվի, որ հիշյալ հեղինակների գործերում պահպանված աստվածաշնչական ընթերցվածները համապատասխանում են Աստվածաշնչի հայերեն որևէ ընդօրինակությանը, ապա հաստատապես կարելի է ասել, որ այն ներկայացնում է Աստվածաշնչի հենց նախնական վիճակը: Չէ՞ որ վերոնշյալ հեղինակների գրեթե բոլոր երկերը թարգմանվել են Աստվածաշնչից անմիջապես հետո, Վ դարում: Այս հեղինակների գործերից բացի, մեզ է հասել նաև Հովհան Մանդակունու «Մաշտոց» ծիսարանով ավանդված Եկեղեցու հիմնարկեքի կանոնը, ուր ևս կան աստվածաշնչական ընթերցվածներ: Դրանց համեմատությունն Աստվածաշնչի օրինակների հետ դարձյալ կնպաստի ընտրելու հնագույնը, քանի որ Մանդակունին իր կանոնը գրելիս, բնականաբար, ձեռքի տակ պիտի ունենար Վ դարում ընդօրինակված Աստվածաշունչ:

Ինչպես տեսանք, հայ մատենագրության մեջ աստվածաշնչական վկայակոչությունները կարիք ունեն մանրակրկիտ ուսումնասիրության: Իրավացիորեն նշում է Պ. Մուրադյանը, որ թերևս մեկնությունների ուսումնասիրությունից կարելի է քաղել նախնական թարգմանության նոր տվյալներ: Կորյունի, Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու և Վ դարի հայ այլ հեղինակների, ինչպես նաև նույն դարում կատարված թարգմանական երկերի նման ուսումնասիրությունները մեզ կարող են մատնանշել Աստվածաշնչի այն ձեռագրերը, որոնց համար հիմք է հանդիսացել Վ դարի մի օրինակ:

⁶⁴ ՄՄ ձեռ. 832, էջ 226ա-227բ:

⁶⁵ *Յովհաննես Ոսկեբերան*, Մեկնութիւն թղթոցն Պաղոսի, Վենետիկ, Ս. Ղազար, 1862, էջ 317: Նաև՝ ՄՄ ձեռ. No 832, էջ 143ա-145բ:

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ 420-430-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Համաձայն Կորյունի վկայության, Հայաստանի բյուզանդական բաժնում Մաշտոցի կրթա-լուսավորչական առաքելության վերջնափուլում նրա մոտ է ժամանում «այր մի երեց աղուան ազգաւ, Բենիամէն անուն», որի միջոցով ծանոթանալով աղվաններեն լեզվի հնչյունային առանձնահատկություններին, Մաշտոցն «ըստ վերնապարզև կորովի սովորութեան իւրում», ստեղծում է աղվաններեն նշանագրերը¹: Դրանից հետո նա հրաժեշտ է տալիս բյուզանդական հատվածի եպիսկոպոսներին, իշխաններին «և յամենայն եկեղեցեաց» և այնտեղ իբրև վերակացուներ թողնելով իր երկու աշակերտներին՝ Ենովքին ու Դանանին, ինքը «բազում աշակերտների հետ» վերադառնում է Վաղարշապատ և «յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ և թագաւորին Հայոց, որում անուն Արտաշես կոչէին»²:

Հայոց վերջին Արշակունի թագավոր Արտաշեսը գահակալել է 422-428 թթ.: Ըստ այդմ, Վաղարշապատ Մաշտոցի վերադարձն ընկնում է այդ ժամանակահատվածում, ամենայն հավանականությամբ, 423 թվականին: Վերադարձից մի քանի օր հետո Մաշտոցը մեկնում է Աղվանից աշխարհ³:

Ըստ Մովսես Խորենացու, աղվաններեն գրերը հնարելուց հետո Մաշտոցն ավարտում է բյուզանդական բաժնում իր ծավալած կրթալուսավորչական առաքելությունը Բարձր Հայքի Շաղագոմբ գավառում, ապա այդ կողմերում վերակացուներ է թողնում իր աշակերտներին՝ Ղևոնդին ու Ենովքին՝ Սպերում, Գինդ եպիսկոպոսին՝ Դերջանում, Դանանին՝ Եկեղյաց գավառում, որից հետո վերադառնում է Այրարատ և մեկնում Գողթն գավառ⁴:

Մովսես Խորենացու հաղորդմամբ, Մաշտոցը լուսավորչական առաքելությամբ Աղվանք է մեկնում վրացերեն գրերը հնարելուց և Վրաստանում կրթա-լուսավորչական գործընթացները հաստատուն հիմքերի վրա դնելուց հետո: Պատմահայրը հավաստում է, որ Բենիամինը սյունեցի էր, որին փութապես Մաշտոցի մոտ է ուղարկում Սյունյաց իշխան Վասակը նահանգի Անանիա եպիսկոպոսի միջոցով: Բենիամինի ու Անանիայի օգնությամբ Մաշտոցը գրեր է ստեղծում Աղվանքի ցեղերից մեկի՝ գարգարացիների «կոկորդախոս, կոշտ ու խժալուր ու կոպտահունչ լեզվի համար», ապա, այնտեղ վերակացու թողնելով իր աշակերտ Հովնաթանին, վերադառնում է Հայաստան⁵:

Ըստ Մովսես Կաղանկատվացու, աղվաններեն գրերը հնարելուց հետո Մաշտոցն ուխտագնացության է մեկնում Երուսաղեմ⁶:

Պատմագիրը գրում է նաև, որ իբր Աղվանից առաջին քարոզիչ Եղիշան՝ Թադեոս առաքյալի աշակերտը, Աղվանից երկրում քրիստոնեություն է տարածում Երուսաղեմում ձեռնադրվելուց հետո, «խոյս տուեալ ի Հայաստանեայցն»: Եղիշան նախ ժամանում է Ուտիք՝ Գիսում կառուցելով Աղվանից առաջին եկեղեցին⁷: Մաշտոցը, Երուսաղեմից գալով Ուտիք, նույն Գիս անունով վայրում «նորոգեալ զեկեղեցոյ հաստատէ զհաւատս»⁸: Ասվածից հետևում է, որ Կաղանկատվացին ջանում է Մաշտոցի լուսավորչական քարոզչությունը ներկայացնել իբրև Եղիշայի առաքելության շարունակություն: Անգամ Մաշտոցի վախճանվելուց հետո նրա աղվան աշակերտները որոշում են մեկնել Երուսաղեմ, որպեսզի, ասում են, «ի նոցանէ խնդրեսցուք մեզ առաջնորդս. զի բնական լուսաւորութեան երկրիս արևելեայցս ի ձեռն Սրբոյն Եղիշայի յԵրուսաղեմէ եղեալ սկիզբն»⁹:

Եղիշայի մասին պատումը մեր մյուս մատենագիրների մոտ վկայված չէ: Այն Կաղանկատվացու հնարածն է¹⁰: Վերջինս այդպիսով կամենում էր ապացուցել Աղվանից եկեղեցու առաքելական ծագումը, հետևաբար, ինքնուրույնությունը: Եղիշա անվանաձևը վերցվելով Ս. Գրքից¹¹, տրվել է Աղվանից կարծեցյալ քարոզչին: Հասկանալի է, որ վավերական չէ նաև Երուսաղեմ Մաշտոցի մեկնելու մասին հաղորդումը¹², որը չի հանդիպում Կորյունի, Խորենացու և Փարպեցու վկայություններում:

Կորյունի հավաստմամբ, Աղվանքում լուսավորության տարածման գործում Երեմիա եպիսկոպոսը գրեթե նույն դերն էր խաղում, ինչ Սահակ կաթողիկոսը Հայաստանում: Երեմիային սատարում էր Աղվանից թագավոր Արսվաղը (Խորենացու մոտ՝ Արսվաղեն): Նրանք միասին «յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ, տային ևս հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել և գումարել՝ ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց, դասս դասս դպրոցաց...»¹³:

Աղվանից աշխարհի վերնախավը, որը քրիստոնեություն էր ընդունել տակավին Ուտնայր թագավորի օրոք՝ 370-ական թթ. սկզբներին, շահագրգռված էր հպատակների մեջ լուսավորության տարածմամբ, ինչը հանգեցնելու էր երկրում քրիստոնեության արմատավորմանը և երկրի միասնությանը: Ուտի «երկիւղածն յԱստուծոյ արքայն Աղուանից... փութով հրաման տայր» իր ժողովրդին՝ հրաժարվել հեթանոսական հավատալիքներից և հնազանդվել քրիստոնեական կրոնին¹⁴: Մաշտոցը լուսավորություն է տարածում նաև Բաղասականում՝ Աղվանքի այն գավառում, որը տարածվում էր Կուրի ձախափնյակում, նրա ստորին ավազանում¹⁵: Մաշտոցի կողմից աղվաններեն գրերի ստեղծումը հնարավորություն տվեց Աստվածաշունչը թարգմանել աղվաններեն: Դա իրականացրեց նույն Երեմիա ե-

պիսկոպոսը¹⁶, հավանաբար Ս. Գրքի հայերեն առձեռն թարգմանության հիման վրա:

Բաղասականից Մաշտոցը ժամանեց Ուտիքի Գարդման գավառ՝ լուսավորություն տարածելու: Այստեղ, ըստ Խորենացու¹⁷, հարկ եղավ անգամ դարձի բերել տեղի իշխան Խուրսին: Մինչդեռ, ըստ Կորյունի, Խուրսը «աստուածասեր երկիւղածութեամբ, առաջի դներ գանձն վարդապետին, հանդերձ իշխանութեամբն իւրով»¹⁸: Պատմիչներն Ուտիքի մյուս գավառներում լուսավորություն տարածելու մասին ոչինչ չեն հաղորդում: Ըստ երևույթին այդ գավառներում կրթալուսավորչական գործընթացները տեղի էին ունեցել Արցախի հետ միաժամանակ, ուստի այս անգամ Մաշտոցը և նրա աշակերտները չեն մեկնել այնտեղ:

Գարդմանից Մաշտոցը վերստին ժամանեց Վրաստան, ուր այդ ժամանակ թագավորում էր Արշիլ (Կորյունի «Վարքում»՝ Արձիւղ, Խորենացու «Հայոց պատմությունում»՝ Արձիլ) թագավորը, որն, ըստ Կորյունի, մեծապես «պայծառացուցեալ, ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն»: Այնուամենայնիվ Մաշտոցը «շրջեալ գամենայն աշակերտօքն, պատուիրեալ կալ ի ճշմարտութեանն»¹⁹: Խորենացին ոչինչ չի հաղորդում Վրաստան Մաշտոցի երկրորդ անգամ գնալու մասին: Բայց պատմահայրը Կորյունի հետևողությամբ հիշատակում է Տաշիրք գավառում Աշուշա իշխանի խնդրանքով Մաշտոցի վարդապետելու մասին: «Յայնժամ, - գրում է Կորյունը, - իշխանին Տաշրացուց, առն պատուականի և աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա գանձն ամենայն գաւառովն իւրով»²⁰: Այս վկայությունից կարելի է հետևեցնել, որ Գուգարքի Տաշիր գավառում մինչ այդ լուսավորությունը դեռևս չէր ծավալվել, թեև ոչ միայն հարևան Վրաստանում, այլև Գուգարքի մյուս մասերում պատկերն այլ էր: Կորյունը Աշուշային հիշում է որպես «տաշրացիների իշխան», այն դեպքում, երբ Խորենացին նրան գիտե որպես «գուգարացոց բղեշխ»: Աշուշային, ինչպես հայտնի է, վրաց բղեշխ է հիշում Ղազար Փարպեցին՝ 482-484 թթ. Վահան Մամիկոնյանի գլխավորած ժողովրդական պատերազմի առնչությամբ: Եթե Աշուշան Մաշտոցին հրավիրել է միայն Տաշիրում լուսավորություն տարածելու, ապա դրանից հետևում է, որ նրա իշխանությանը ենթակա մյուս գավառներում մինչ այդ կրթալուսավորչական գործընթացներն արդեն ցանկալի հունի մեջ էին դրվել: Տաշիրում Մաշտոցի լուսավորչական առաքելությունը ևս հաջողությամբ պսակվեց: Կորյունի հավաստմամբ, այդ գավառում Մաշտոցի «ամենասփիւռ վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ, քան զայլոցն գաւառաց անցուցեալ»²¹: Նույնն է վկայում նաև Խորենացին²²: Տաշիրում նույնպես Մաշտոցը հոգ տարավ լուսավորության հաջողությամբ ծավալած գործը բարձիթողի չթողնելու համար՝ նրա վերահսկողությունը վստահելով Սամուել եպիսկոպոսին:

Տաշիրում լուսավորության տարածումը Կորյունն ու Խորենացին դիտում են

որպես Մաշտոցի քարոզչական առաքելության վերջնափուլ: Բայց լուսավորությունը կարելի էր հաստատուն հիմքերի վրա դնել միայն հայերեն գրականություն ստեղծելու միջոցով: Կորյունը գրում է, որ Տաշիրից Վաղարշապատ վերադառնալուց հետո Մաշտոցն ու Սահակն իրենց ջանքերը կենտրոնացրին «զիրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և դիւրացուցանել»: Սահակ կաթողիկոսը շարունակում էր թարգմանել և գրել²³: Այստեղ պատմագիրը, հավանաբար, նկատի ունի նաև Սահակի կողմից մեկնողական գրվածքներ շարադրելու փաստը: Սահակ-Մաշտոցյան լուսավորությամբ սկիզբ առած դասական հայերենի ուղղությամբ ներդրված ջանքերում թարգմանության նպատակը նաև մեկնությունն էր (ասորերենից փոխառյալ «թարգման» բառը նշանակում էր նաև մեկնիչ)²⁴: Հունարենում նույնպես այդ բառերն ուներ «թարգմանել» և «մեկնել» իմաստը (բյուզանդական հունարենում այն նշանակում էր միայն մեկնություն, վրացերենում ուներ թարգմանելու, նաև մեկնելու իմաստ): Ս. Սահակի և Մաշտոցի օրոք անհրաժեշտ դարձավ նաև մեկնել թարգմանած երկասիրությունները, որպեսզի դրանք հասցվեն ժողովրդի էությանը, զորացնեն Հայոց հավատքը և Եկեղեցին: Սահակի ու Մաշտոցի լիաբուռն ջանքերով կատարվեցին Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու և Եկեղեցու մյուս հայրերի՝ Աստվածաշնչի տարբեր գրքերի մեկնությունների թարգմանությունները: Թարգմանությամբ էին զբաղվում նաև Ս. Սահակի ու Մաշտոցի Կ. Պոլիս մեկնած աշակերտները՝ Հովսեփը, Եզնիկը, ապա նաև «կրտսեր թարգմանիչներ» Կորյունն ու Ղևոնդը, որոնք մոտ 431 թ. արդեն թարգմանել էին մի քանի գրքեր՝ հունարենից, մասամբ նաև ասորի մեկնիչներից: Այդպես սկիզբ դրվեց Հունաբան դպրոցին²⁵:

Նույն թվականին նրանք վերադարձան Վաղարշապատ՝ իրենց հետ բերելով Ս. Գրքի հունարեն հարազատ բնագիրը, որից Սահակն ու իր աշակերտները Մաշտոցի հետ միասին կատարեցին Աստվածաշնչի երկրորդ և լավագույն թարգմանությունը²⁶: Այն դարձավ դասագիրք թե՛ դպրոցների և թե՛ գործնական քարոզչությամբ զբաղվողների համար՝ էականորեն նպաստելով հեթանոսական պաշտամունքի մնացորդների վերացմանը և քրիստոնեության արմատավորմանը²⁷: Նրանք, ինչպես հաղորդում է Կորյունը, նաև «շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանէին»²⁸:

Մովսես Խորենացին գրում է, որ երբ Ս. Սահակի ու Մաշտոցի աշակերտները վերադարձան Կ. Պոլսից, «գտին զմեծն Սահակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ, և մատուցին զթուղթսն և զկանոնս ժողովոյն Եփեսոսի, վեց սահմանեալ կանոնաւ, և զստոյգ օրինակս Գրոց»²⁹: Աշտիշատում Ս. Սահակի ու Մաշտոցի գտնվելու փաստն, անշուշտ, ուներ ծանրակշիռ պատճառներ: Հայաստանի հարավային գավառներում դեռևս պահպանվում էին հեթանոսության վերապրուկները, որոնք կարող էին վերացվել միայն քրիստոնեական լուսավորության տարածմամբ: Աշ-

տիշատը դարձավ այն վայրը, որտեղից Ս. Սահակն ու Մաշտոցը ուղղություն էին տալիս այդ գավառներում ծավալվող կրթա-լուսավորական գործընթացներին: Հովհան Օձնեցուն վերագրված «Սակս ժողովոց որ եղեն ի Հայս» գրվածքում ասվում է, որ Սահակն ու Մաշտոցը Աշտիշատում ժողով են գումարել, որտեղ նրանց է հասցվել Կյուրեղ Ալեքսանդրացու և Կ. Պոլսի պատրիարք Պրոկլի թղթերը³⁰: Այս հաղորդումը վավերական է համարվել³¹, թեև Կորյունի, Խորենացու և Փարպեցու պատմություններում նման վկայություն չկա: Հավանաբար նշված գրվածքի համար հիմք է ծառայել Խորենացու վերը հիշված հաղորդումը: Բիարկե, Պրոկլ պատրիարքն իրոք թուրք է ուղարկել Սահակին ու Մաշտոցին՝ զգուշացնելով Թեոդորոս Մոպսուեստացու գրվածքներն օգտագործելուց³²: Թեոդորոսը երկաբնակության նշանավոր տեսաբան էր, հայտնի Աստվածաշնչին նվիրված մեկնողական երկերով: Ասորի պատմագիր Մշիխա Ջեխան գրում է, որ Թեոդորոսն «առաջին անգամ փիլիսոփայության և տրամաբանության միջոցով բացատրեց մեր Տիրոջ ծննդյան և չարչարանքի խորհուրդը և մեր Տիրոջ՝ Քրիստոսի անձի մեջ եղած երկու բնության վարդապետությունը»: Նույն պատմագրի հավաստմամբ, Թեոդորոսը «Նեստորի առաջին ուսուցիչն էր»³³: Թեոդորոս Մոպսուեստացին նաև անողորմ պայքար էր տանում Արիոսի, Մակեդոնի, Ապոլլինարի և ուրիշ հերձվածողների դեմ³⁴: Մոգության դեմ գրած իր աշխատությունը Թեոդորոսն ուղարկում է հայոց Մաստուրբիոս քորեպիսկոպոսին: Վերջինս նույնացվում է Մաշտոցի հետ³⁵: Ս. Սահակին ու Ս. Մեսրոպին ուղարկած նամակում Կ. Պոլսի Պրոկլ պատրիարքը զգուշացնում էր Թեոդորոսի և Նեստորի գաղափարները Հայաստանում տարածելու վտանգից: «Արք ոմանք,- ասվում էր այդ երկարաբան թղթում,- ժանդախաւսք ցնորախաւսք, անկան ի յաշխարհ այդր, և կամին ժանդաժող իմն գրովք, հակառակութեամբ, ստաբան խստախորհուրդ գիտութեամբ, խոտորել զպարզամտութիւն, զանպաճոյճ, զանմեքենայ, զուղղափառ գեղն հաւատոյն... Զգոյշ լինիջիք գուցէ իցէ ոք, որ զձեզ կապուտ կողոպուտ թողուցու ճարտարամտութեան բանիւք, և ընդունայն խաբէութեամբ վարդապետութեան...»³⁶:

Պատասխան թղթում Սահակն ու Մաշտոցը հավաստեցին, որ անողորմ պայքար են տանելու Թեոդորոսի ու նրա հետևորդների դեմ, որոնց «ոչ միայն չընդունիմք կամ հալածեմք,- ասվում է նշված թղթում,- այլ բազում և մեծամեծ պատիժ պատուհասի առնել ոչ դանդաղիմք»³⁷:

Կաթողիկոսի հետ Մաշտոցին ևս թուրք հղելը պատահական չէր: Պատրիարքը համոզված էր, որ Մաշտոցն անձամբ ծանոթ էր Թեոդորոս Մոպսուեստացու հետ: Ենթադրվում է, որ իբր Մաշտոցը Թեոդորոսի հետ ծանոթացել է Սամոսատ քաղաքում³⁸: Սակայն որևէ աղբյուրում այդ մասին հիշատակություն չկա: Մաշտոցն անմիջական կապեր չի ունեցել Թեոդորոսի հետ³⁹, որը 392-ից մինչև իր մահը՝ 428 թ., եղել է Մամեստիայի եպիսկոպոս: Հավանաբար հենց այդ տարիներ-

րին են Թեոդորոսի գրվածքները մուտք գործել Հայաստան:

Թեոդորոսն, ըստ Լիբերատուսի, պայքարում էր հերձվածողների դեմ: Մոգության դեմ ուղղված գրվածքում նա հերքում էր գրադաշտականությունը, ուստի այն կարող էր գրավել նաև Մաշտոցի ուշադրությունը, մանավանդ, եթե իրոք այդ գրվածքն ուղղված է եղել նրան⁴⁰: Մաշտոցի ապրած ժամանակներում Թեոդորոսի նկատմամբ Եկեղեցու վերաբերմունքն այնքան խիստ չէր, ինչպես եղավ հետագայում՝ 553 թ., երբ նա բանադրվեց հինգերորդ հորջորջված տիեզերական ժողովում, Հուստինիանոս I կայսեր օրոք⁴¹: Զրադաշտականության դեմ Թեոդորոսի գրվածքը Մաշտոցին ուղղելու փաստը, բնականաբար, կարող էր տեղիք տալ նրանց հնարավոր գաղափարակցության շուրջ եղած կասկածներին: Սահակին ու Մաշտոցին Պրոկոպատիարքի ուղարկած թուղթը կարող է կոդմնակի ապացույց ծառայել այդ մասին, թեև նույն նամակի հունարեն բնագրում և ասորերեն թարգմանության մեջ բնավ չի հիշվում Թեոդորոսի անունը⁴²: Սակայն հայտնի իրողություն է, որ Ս. Սահակի ու Մաշտոցի ժամանակներում նեստորականությունն արդեն բույն էր հյուսել Հայաստանի հարավային գավառներում, ինչը Պրոկոպի գրած պատասխան նամակում ընդունել են Ս. Սահակն ու Մաշտոցը⁴³: Նշելի է նաև այն փաստը, որ Սահակ կաթողիկոսին Մելիտենեի Ակակ եպիսկոպոսի ուղարկած թղթում հիշատակվում է Թեոդորոս Մոպսուեստացու անունը և զգուշացվում Հայաստանում նրա ազդեցության տարածման մասին⁴⁴: Ակակն, ինչպես նշվել է, Մելիտենեի եպիսկոպոս էր 431-438 թթ., ուստի Ս. Սահակին նրա հղած թուղթը պետք է ուղարկված լինի այդ թվականներին (այն դրվում է մոտ 432 թ.)⁴⁵: Ենթադրվում է, որ Մելիտենեի Ակակ եպիսկոպոսն անձամբ ծանոթ էր Մաշտոցի և նրա աշակերտների հետ, սկսած 420 թվականից, երբ նրանք Հայաստանի բյուզանդական բաժին ժամանելիս այցելեցին այդ եպիսկոպոսին⁴⁶: Սակայն Ակակը 420 թ. Մելիտենեի եպիսկոպոս չի եղել, ուստի բացառվում է Մաշտոցին նրա վաղածանոթ լինելը: Ակակը նաև ուղարկեց երկրորդ թուղթը՝ այս անգամ ուղղված հայ նախարարներին: Այդ թղթում նա հայ նախարարներին հայտնում էր, որ Թեոդորոս Մոպսուեստացու և Նեստորի հետևորդները «ոչ հեղգացան գովիչք լինել ամպարշտութեան նոցա և մինչ ի սահմանս ձեր փութացան առաքել զթունատր և զապականիչ վարդապետութիւնն, անմարթ և անկարգ համարեցաք լռել, որք ունին զճշմարիտ վարդապետութեան քարոզութիւն... աւգնել անձանց անմեղաց և յստակամիտ մարդկան, զի մի վնասեցին ի խարդախամտացն և ի նենգատր մշակացն»: Նույն թղթում ասվում էր նաև, որ թեև «սուրբ և ճշմարիտ վարդապետքն ձեր հաստատուն և անշարժ կան ի վերայ հիման ճշմարիտ հաւատոյ, և ոչ տան տեղի յափշտակող գայլոցն», սակայն Ակակը նախարարներից խնդրում է. «Մի որ զձեզ խաբեսցէ, մի պատուականութիւն երեսաց, մի՛ բազմութիւն, մի՛ թողացուցուք զճշմարիտ հարցն կրանս և զհաւատ որով հաւատացայքն, որով

ապրեցայքն... Մի՛ ընդունիցիք զսուտ համբաւս նոցա զոր բերեն առ ձեզ ի կողմանցն արևելեայց»⁴⁷:

Ակակի զգուշացնող թղթի նպատակը նախարարների միջոցով Թեոդորոսի, Նեստորի գաղափարների դեմ Հայաստանում պայքար ծավալելն էր, նաև հայ ազատանու միջոցով դրանց արմատավորման կանխարգելումը: Այսպես թելադիր են Ակակի «ես երկնչիմ գուցե զոք շարժիցե ի ձենջ պատրանք մոլորութեանն» խոսքերը⁴⁸: Այս թուղթը մնաց անպատասխան: Բայց Պրոկղ պատրիարքի թղթին պատասխանեցին Սահակն ու Մաշտոցը, իսկ Ակակի առաջին թղթին հղած պատասխան նամակում Ս. Սահակը դարձյալ հավաստեց, որ անզիջում պայքար են տանելու նեստորականության դեմ⁴⁹:

Այս փաստերը խոսուն վկայություն են այն իրողության, որ հայերեն գրերի ստեղծումից հետո Հայոց Եկեղեցին այնքան էր զորացել, որ մյուս Եկեղեցիների հայրերը նրա առաջնորդներին էին դիմում եկեղեցու հիմքերը սասանող հերձվածողական հոսանքների դեմ պայքար տանելու համար: Հասկանալի է, այդ պայքարն առաջին հերթին ուներ գաղափարական բնույթ: Գրերի գյուտով ստեղծված հայալեզու կրոնական գրականությունը դարձավ հուսալի զինանոց այդ նպատակադրման իրագործման համար: Հայերեն այբուբենի, մայրենի լեզվով գրականության ստեղծմամբ Հայաստանը բուռն կերպով հաղորդակցվեց քրիստոնեական քաղաքակրթության, նրա ստեղծած մտավոր-մշակութային և գիտական արժեքների հետ: Սեփական լեզվով գիրը և գրականությունը էականորեն նպաստեցին հայ ժողովրդի ազգային-հոգևոր ընդհանրությանն ու միասնական իրավակեցությանը, երկրի օրինակարգի ամրակայացմանը: Առաջին անգամ հայերեն լեզվով ստեղծվեցին կանոնական օրինակարգող փաստաթղթեր: Սահակ կաթողիկոսի ստեղծած 55 կանոնները⁵⁰ հայ հեղինակի կողմից դասական հայերենով ստեղծված կանոնական գրությունների երախայրիքն էին: Կորյունը Հայոց գրերի ստեղծումը նմանեցնում է աստվածաշնչական օրինադիր Մովսես մարգարեի կատարածի հետ⁵¹, դրանով իսկ նա շեշտում է օրենքները ժողովրդի մեջ սերմանելու սրբասուրբ խորհրդի կարևորությունը՝ այն համարելով երկրի լուսավորության կարևորագույն կովաններից մեկը: Ուշագրավ է, որ 447 թ. Շահապիվանի ժողովում ընդունված կանոնախմբի առաջաբանում Սահակն ու Մաշտոցը հիշվում են որպես «ճշմարիտ արեւնադիր» առաջնորդներ, որոնք լուսավորեցին Հայոց աշխարհը⁵²: Ղազար Փարպեցին Վահան Մամիկոնյանին հղած Թղթում Գրիգոր Լուսավորչից և Ներսես Մեծից հետո հիշում է «Հայոց մեծ լուսավորիչ տեր Սահակին»⁵³՝ այդպիսով նրան համարելով երկրի լուսավորության տարածման գործում իր նախորդների կատարածի շարունակողն ու զարգացնողը:

Սահակի, Մաշտոցի և նրանց աշակերտների ջանքերով Հայաստանն ընթացավ հոգևոր հեղափոխման լուսածիրով, հայ ժողովուրդը զինվեց ազգային գոյա-

պահպանման գորեղ ու հարամնա արժեքներով: Ազգային լեզվով գիրն ու գրականությունը հայ ժողովրդի հոգևոր և քաղաքական պայքարի գորեղ ու հարամնա զինամիջոցն էին, որոնք կոփեցին նաև նրա քաղաքական ճակատագիրը՝ դառնալով հետագա գոյատևման կայուն գրավական: Մայրենի լեզվով գիրն ու գրականությունը անխաթար պահեցին նրա ազգային-հոգևոր դիմագիծը՝ էապես բարոյակրթելով լայն զանգվածներին: Հայոց այբուբենը սրբազնագործվեց՝ դառնալով պաշտամունք, աստվածային հայտնություն: Փոխվեց գրաբարյան ոսկեդենիկ հայերենը, բայց հավերժ հարատևեց Մաշտոցյան այբուբենը, քանի որ այն ստեղծված էր հայ ժողովրդի լեզվի հնչյունային համակարգի մշտակուռ հենքի վրա, որն անմահ է, ինչպես ժողովուրդը: Հենց դրանումն էր Հայոց այբուբենի հմայքն ու զորությունը, որի դեմ անգոր գտնվեցին անգամ աշխարհի հզորագոր տիրակալները: Մեսրոպատառ այբուբենը դարձավ ոգեղեն այն ուժը, որը պետականության կորստի պայմաններում մեծացրեց ժողովրդի հոգևոր ու քաղաքական կորովը, համախմբեց նրան՝ դառնալով ամուր պատնեշ օտարի ձուլող ազդեցության դեմ: Այն նաև նպաստեց ժողովրդի հոգևոր-մշակութային զարթոնքին: Մաշտոցյան այբուբենի միջոցով դասական հայ լեզվի ու գրականության ավանդներն իրենց դյուրական գործությամբ փոխանցվեցին գրական նոր հայերենին՝ դառնալով նրա հաղթական երթի սրբազան շունչը:

ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈՒՅԱՆ

*ԵՊՀ հայ արվեստի տեսության և
սպորտային ամբիոն*

ԶՎԱՐԹՆՈՑԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

(Պատկերաքանդակների մեկնաբանման հարցի շուրջ)

Զվարթնոցի տաճարը վաղ միջնադարյան հայ ճարտարապետության թերևս ամենահայտնի հուշարձանն է: Այն հանդիսացել է իր ժամանակի լավագույն կառույցը թե՛ ճարտարապետական հորինվածքի, թե՛ կոնստրուկտիվ լուծումների, թե՛ դեկորատիվ հարդարման, թե՛ խորհրդաբանական իմաստավորման առումով: Զվարթնոցի տաճարը կարևորվել և գնահատվել է դեռ ժամանակակիցների կողմից, որի մասին են խոսում հուշարձանի մասին թողած նրանց հիշատակումները (Սեբեոս, Հովհաննես Դրասխանակերտցի, Ասողիկ): Այդ են վկայում նաև Զվարթնոցի հորինվածքը վերարտադրող մի շարք եկեղեցիները՝ Բանակի տաճարը Տայքում¹ և Լյակիտը Աղվանքում² (7-րդ դար), Գագկաշենը Անիում (10-րդ դար): Ավաղ, 10-րդ դարի երկրորդ կեսին Զվարթնոցի տաճարը արդեն ավերակ էր:

Հայտնի է, որ Զվարթնոցի տաճարը կառուցել է Ներսես Տայեցին իր կաթողիկոսության տարիներին՝ 642-662 թթ.: Զվարթնոցից բացի Ներսեսը ձեռնամուխ է եղել մի շարք այլ եկեղեցիների կառուցման՝ ստանալով «Շինարար» անունը: Նրա կողմից են կառուցվել Վաղարշակերտի³ և Բագավանի եկեղեցիները⁴, Դվինի Ս. Գրիգոր Մայր տաճարը (վերակառուցվել)⁵, Խոր Վիրապի փոքր եկեղեցի-ռոտոնդան⁶,

¹ Ավանդաբար համարվում էր, որ Տայքի Իշխանի տաճարը նույնպես զվարթնոցատիպ է եղել, սակայն, համաձայն վերջին ուսումնասիրությունների, այն ունեցել է այլ հորինվածք: Տե՛ս 30-րդ հղումը:

² Աղվանքի զվարթնոցատիպ տաճարը նույնպես նվիրված էր Ս. Գրիգորին և, ինչպես հայտնում է Մովսես Կաղանկատվացին, Վարազ Տրդատը՝ երկրի կառավարիչը, իր հոգևորականներից մեկին՝ Բսրայելին, ուղարկում է Հայաստան՝ Լուսավորչի մատույններից խնդրելու: Տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից Աշխարհի (թարգմ. և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի), Երևան, 1969, էջ. 267:

³ Վաղարշակերտը նույն Ալաշկերտն է՝ պատմական Այրարատ նահանգի Բագրևանդ գավառի կենտրոնը: Ներսես կաթողիկոսը այստեղ կառուցել է Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին, որը դառնում է եպիսկոպոսական աթոռանիստ կենտրոն:

⁴ Համաձայն աղբյուրների՝ Վաղարշակերտի և Բագավանի եկեղեցիները Ներսեսը կառուցել է դեռ իր եպիսկոպոսության տարիներին: Տե՛ս **Мнацаканян С. Х.**, Звартноц. Памятник армянского зодчества VI-VII веков. М., 1971, с. 8.

⁵ Դվինի Մայր տաճարը ավանդաբար համարվում է վերակառուցված Սմբատ Բագրատունու կողմից, և այդ աշխատանքները շարունակվում են մինչև Կոմիտաս կաթողիկոսի գահակալության տարիները՝ 608-628 թթ. (Կ. Ղաֆադարյան, Վ. Հարությունյան), սակայն նորագույն ուսումնասիրությունների համաձայն՝ վերակառուցումը իրականացվել է 640-ական թվականներին Ներսես կաթողիկոսի կողմից (Ա. Ղազարյան): Այն միտքը, որ Զվարթնոցում և Դվինում նույն վարպետներն են աշխատել, առաջին անգամ առաջ է քաշել Կ. Ղաֆադարյանը՝ վկայակոչելով այդ հուշարձանների արտաքին սյունակամարաշարերի նմանությունները: Տե՛ս **Ղաֆադարյան Կ.**, Դվին քաղաքը և նրա պեղումները. հ.1, Երևան, 1952, էջ 82-90:

⁶ Խոր Վիրապի եկեղեցի-ռոտոնդան կառուցվել է մինչև Զվարթնոցը՝ մոտավորապես 641-43 թթ.: Նրա

Գառնիի տաճարը, Տայքում՝ Օլթիի փոքր օկտագոն եկեղեցին⁷, Բանակի և Իշխանի տաճարները⁸:

7-րդ դարի հայկական ճարտարապետական կոթողների շարքում Զվարթնոցն ուրույն տեղ է գրավում: Այն հանդիսանում էր տաճար-մարտիրիոն, որտեղ ամփոփված էին Գրիգոր Լուսավորչի մասունքները: Տաճարի կառուցումը պայմանավորված էր Հայաստանում Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի լայն տարածմամբ⁹: Պատահական չէր տաճարի կառուցման համար ընտրված վայրը: Համաձայն ավանդության՝ այստեղ էր տեղի ունեցել Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի հանդիպումը Ս. Գրիգորի Վիրապից ելնելուց հետո¹⁰:

Լուսավորչի մասունքները տաճարի մեջ ամփոփելու գաղափարը, որ գալիս էր վաղ քրիստոնեական ավանդույթներից, հիրավի, որոշիչ դեր է ունեցել կառույցի ընդհանուր հորինվածքի, ինչպես նաև արտաքին և ներքին հարդարանքի ձևավորման հարցում:

Զվարթնոցի ծավալա-տարածական հորինվածքի հիմքում ընկած էր ռոտոնդայի և քառակոնք (տետրակոնիս) ձևերի համակցությունը, արտաքինից այն բրգաձև էր, եռահարկ, որն իր նախադեպը չունեցող հայկական ճարտարապետության մեջ:

Կլոր հատակագծով (բազմանիստ) շինությունները մինչ քրիստոնեական, ինչպես նաև վաղ քրիստոնեական ժամանակաշրջանում ունեին մեմորիալ նշանակություն¹¹՝ հանդիսանալով դամբարաններ կամ մատուռներ¹²: Նման հորինվածք ունեին նաև քրիստոնեական գլխավոր սրբատեղիներ՝ Ս. Հարության տաճարը՝ կառուցված Քրիստոսի գերեզմանին Կոստանդինոս կայսեր կողմից: Հենց այս՝ քրիստոնյաների համար սրբազան կառույցի կերպարն է, որ վերարտադրվել է Զվարթնոցի տաճարում Ներսես կաթողիկոսի կողմից:

վերակազմությունը կատարել է Ս. Խ. Մնացականյանը՝ համաձայն արաբ ճանապարհորդ Ալ-Մուկադդիսի նկարագրության: Տե՛ս **Мнэцаканян С. Х.**, Звартноц. с. 30, 41, ил. 20, примечание 57.

⁷ Չնայած այն բանին, որ Օլթիի վերակառուցվել է վեց խորան եկեղեցու 1032 թ., այնտեղ պահպանվել է Ներսես կաթողիկոսի կողմից թողած հունա-հայկական արձանագրությունը: Տե՛ս **Edwards R.**, Medieval architecture in the Oltu- Penek Valley. // *Dumbarton Oaks Papers*, №39, 1985, p.21-23.

⁸ Տայքի եկեղեցիները կառուցվել են 653-659 թթ. ժամանակահատվածում, երբ Ներսեսը ժամանակավորապես «աքսորված» էր իր ծննդավայր:

⁹ Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը լայն տարածում է գտնում հատկապես 7-րդ դարում: Այդ ժամանակ է, որ Գրիգոր Մամիկոնյանի ջանքերով Հայաստան են բերվում Լուսավորչի մասունքները և դրվում Զվարթնոցի տաճարում: Տե՛ս **Арутюнова-Фиданян В. А.**, Повествование о делах армянских. VII в. Источник и время. М., 2004, с. 55-56, 203-207. Դա են վկայում Գրիգոր Լուսավորչին նվիրված եկեղեցիները՝ կառուցված ոչ շուտ քան 7-րդ դարում: Տե՛ս **Асратян М.**, Армянская архитектура раннего христианства. М., 2000, ил. 146, 150, 164.

¹⁰ Ակնհայտ է, որ Ներսես կաթողիկոսը մեծ նշանակություն էր տալիս Հայաստանում քրիստոնեության ընդունման փաստին և իր նախաձեռնած կառույցները կապում Գրիգոր Լուսավորչի, Տրդատի և ընդհանրապես քրիստոնեության գաղափարի հետ (Խոր Վիրապը՝ Լուսավորչի բանտարկման գուրը, Զվարթնոցը՝ Լուսավորչի և Տրդատի հանդիպման վայրը, Բագավանը՝ Լուսավորչի կողմից Տրդատի և արքայական ընտանիքի մկրտման վայրը, Գառնին՝ Խոսրովիդուխտի՝ Տրդատի քրոջ և Լուսավորչի աջակցի դամբարանը):

¹¹ **Grabar A.**, Martyrium. Recherches sur le culte des reliques et l'art chrétien antique. Paris, 1946, Vol. I, p. 27-32, 204-313; **Krautheimer R.**, Early Christian and Byzantine Architecture. London, 1965, p. 17-65.

¹² Այդ իմաստով հետաքրքրություն են ներկայացնում հայկական երկու հուշարձան՝ Փարաքարի կլոր դամբարանը (մ.թ. ա. 1-ին դարի երկրորդ կես) և Բարեկամավանի դամբարանը (6-րդ դ.):

Առաջին անգամ Չվարթնոցը Ս. Հարության տաճարի հետ համադրել է Ս. Մնացականյանը¹³։ Նմանապես Լ. Դուրնովն, հիմնվելով Չվարթնոցի ներքին որմնակամարաշարի¹⁴ վերլուծության և ձեռագրերի խորանների ձևերի հետ համեմատության վրա, արտահայտել է այն կարծիքը, որ կամարաշարը պատկերագրորեն գալիս է Երուսաղեմի Ս. Հարության տաճարից¹⁵։ Կատարելով Չվարթնոցի և Ս. Հարության տաճարի համեմատական վերլուծությունը՝ Ա. Ղազարյանը համոզիչ կերպով ցույց է տվել, որ, իսկապես, Չվարթնոցի տաճարը իր ծավալա-տարածական հորինվածքով և արտաքին հարդարման ընդհանուր սկզբունքով, ինչպես նաև դեկորատիվ մի շարք տարրերով, սերում է Տիրոջ Գերեզմանի վրա կառուցված ռոտոնդայից¹⁶։

Չվարթնոցի արտաքին հարդարման հիմնական մոտիվներից մեկը որմնակամարաշարն է, որը շրջանցում է տաճարն ամբողջությամբ՝ զարդարելով նրա երեք հարկաբաժինները։ Առաջին հարկում զույգված սյուներ են, իսկ երկրորդում և երրորդում՝ մեկական։ Այս որմնակամարաշարը, որը պատկերագրական և խորհրդաբանական առումով սերում է Ս. Հարության տաճարի սյունասրահից¹⁷, Չվարթնոցում ստանում է լիովին դեկորատիվ լուծում և հետագայում վերածվում հայկական տաճարների արտաքին հարդարման ամենասիրված և, կարելի է ասել, պարտադիր էլեմենտներից մեկը հատկապես 11-13-րդ դդ.¹⁸։

Եվ այսպես, Չվարթնոցը իր կերպարով նույնանում էր ժամանակի գլխավոր սրբավայրի՝ Երուսաղեմի Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված Ս. Հարության տաճարի հետ, որը, համաձայն ժամանակակիցների նկարագրության և բյուզանդագետների վերակազմության, բրգաձև, եռամաս (եռահարկ) ռոտոնդա էր, որի ներսում գտնվող Քրիստոսի գերեզմանը շրջապատում էր բաց սյունասրահը¹⁹։

Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ Ս. Հարության տաճարի սյունասրահը զարդարված է եղել հյուսվածքավոր խոյակներով, այն էլ երկմաս՝ նման Չվարթնոցի խոյակներին։ Հյուսվածքավոր զարդանախշերով խոյակները լավ հայտնի էին 5-6-րդ դդ. բյուզանդական եկեղեցական կառույցներում²⁰, սակայն կիրառված լինելով հատկապես Ս. Հարության տաճարում՝ ձեռք են բերում խորհր-

¹³ Мнацаканян С. Х., Звартноц, с. 45.

¹⁴ Որմնակամարաշարով հարդարված էին ինչպես արտաքին երեք հարկաբաժինները, այնպես էլ առաջին հարկաբաժինը ներսից, ընդ որում, եթե արտաքինից կամարները կիսակլոր էին, ապա ներսից իրար էին հաջորդում կիսակլոր և եռանկյունաձև կամարները։

¹⁵ Дурново Л. А., Стенная живопись в Аруче. // Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, 1952.

¹⁶ Казарян А. Ю., Ротонда Воскресения и иконография раннесредневековых храмов Армении. // Восточнохристианский храм. Литургия и искусство. С-Пб., 1994.

¹⁷ Казарян А. Ю., Ротонда Воскресения.. с.107-120.

¹⁸ Казарян А. Ю., Фасадная аркатура армянских и грузинских церквей VII-XI вв. Структурные отличия и взаимосвязь традиций. // Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները։ Գիտաժողովի նյութեր, Երևան, 2003.

¹⁹ Ս. Հարության տաճարը կառուցել է Կոստանդինոս կայսրը, որը հիմնովին վերանորոգել է Երուսաղեմի Մոդեստես պատրիարքը 614-629 թթ. և այն կանգուն է մնացել մինչև 1009 թ.։ Wilkinson J., The Tomb of Christ. An Outline of its Structural History. // Levant. Vol. IV, London, 1972; Беляев Л. А., Христианские древности. С-Пб., 2000, с. 31-40, там же вся библиография по этому вопросу.

²⁰ Кондаков Н., Археологическое путешествие по Сирии и Палестине. С-Пб., 1904, ил. 28, 32, 39, 45; L'art Copt en Egypte. Gallimard, 2000, fig. 82.

դաբանական իմաստ ու նշանակություն և դրանով հանդերձ տարածում գտնում քրիստոնեական տարբեր կառույցներում, այդ թվում նաև՝ Զվարթնոցի տաճարում: Փաստորեն, հյուսված խոյակները, հետևաբար՝ հյուսվածքավոր զարդատարրերը ընդհանրապես, առաջին անգամ ի հայտ են գալիս հենց Զվարթնոցում և լայն տարածում գտնում հայկական մի շարք այլ տաճարների արտաքին հարդարանքում՝ Դվին, Բանակ, Թալինի Կաթողիկե և այլն²¹:

Զվարթնոցը նույնանում է Ս. Հարության տաճարի հետ նաև իր ֆունկցիոնալ նշանակությամբ՝ հանդիսանալով սրբազան մասունքներն ամփոփող տաճար-մարտիրիոն: Ինչպես Ս. Հարության տաճարի կենտրոնում, Զվարթնոցում նույնպես գտնվում է կիսագետնափոր կրիպտա²²՝ շրջապատված բաց սյունասրահով (Զվարթնոցում՝ քառակոնք սյունասրահով), որտեղ ամփոփված էին Լուսավորչի մասունքները²³:

Զվարթնոցի մարտիրիոն լինելու գաղափարն են հաստատում տաճարի չորս հիմնական մույթերը պսակող արծվախոյակները: Հայտնի է, որ դեռ անտիկ ժամանակաշրջանում այդ թռչունը խորհրդանշում էր հարության գաղափարը²⁴, և այդ է պատճառը, որ վաղ միջնադարում Քրիստոսին նույնացնում էին նաև արծվի հետ: Հարության և հավերժության գաղափարն են արտահայտում արծիվների պատկերները քրիստոնյա Եգիպտոսի Էլ-Բագավատի դամբարան-մատուռներում (թևատարած արծիվները պատկերվում են առազաստներում)²⁵, ինչպես նաև գերեզմանային կոթողների՝ ստելաների վրա²⁶:

Սակայն անդրադարձը պաղեստինյան սրբավայրերին չի սահմանափակվում միայն Ս. Հարության տաճարի կերպարով: Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ներսես կաթողիկոսի կողմից իրագործվել է մի ամբողջական ծրագիր, որի հիմքում ընկած էր Սուրբ Երկրի կարևորագույն սրբավայրերի (սրբավայրերի կերպարների) փոխադրումը Հայաստան²⁷, մի երևույթ, որ ընդհան-

²¹ Ելնելով սրանից՝ կարծում ենք, որ Դվինի խոյակը, թեև վերագրվում է 6-րդ դարին, սակայն ավելի հավանական է թվագրել 7-րդ դարով՝ Ներսես կաթողիկոսի կողմից կատարած շինարարական աշխատանքների շրջանով:

²² Այս իմաստով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Թալինի մեծ եկեղեցու կենտրոնում գտնվող գուբը, որը նույնպես կարող էր կրիպտա լինել, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ իր եռակոնք հորինվածքով այն նույնանում է Դվինի Մայր տաճարի հետ և պատկերագրորեն կապվում Բեթղեհեմի Ս. Ծննդյան տաճարի հետ: Տե՛ս 30-րդ հղումը:

²³ Համաձայն Ս. Մնացականյանի՝ այս կրիպտայի վրա վեր էր խոյանում սյունը, որտեղ պահվում էին Ս. Գրիգորի մասունքները: Տե՛ս **Мнацаканян С. Х.**, Звартноц. с. 29.

²⁴ Համաձայն ուշ անտիկ պատկերացումների՝ երբ արծիվը ծերանում է, նա բարձրանում է դեպի արևը և ընկղմվելով սրբազան աղբյուրի մեջ՝ վերակենդանանում: Տե՛ս *Мифы народов мира*, т. II, М., 1982, с. 260.

²⁵ Օրինակ՝ Էլ-Բագավատ, մատուռ № 7:

²⁶ *L'art Copt en Egypte*. Gallimard, 2000, fig. 118, 120, 121.

²⁷ Հայտնի է, որ Հայաստանը սերտ կապեր ուներ Սուրբ Երկրի հետ, և նրա սրբավայրերը բազմիցս հիշատակվել են հայ պատմագրության մեջ: Տե՛ս **Мкртычян Л. Х.**, *Армянские источники о Палестине V-XVIII вв.*, М., 1991. Պաղեստինյան սրբավայրերը արտացոլում են գտել նաև գեղանկարչության մեջ. հայկական վաղ ձեռագիր գրքերում պատկերված տաղավարիկը խորհրդանշում է Ս. Հարության տաճարը, իսկ Տեկորի եկեղեցու խորանում եղել է տաճարի պատկեր (համաձայն Ն. Մառի) բազմաթիվ ճախրող քերվիթներով (համաձայն Յ. Ստրժիգովսկու), որ խորհրդանշել է Ս. Հարության տաճարն ու Երկնային Եկեղեցին:

րապես տարածում ուներ քրիստոնյա աշխարհում²⁸: Ինչպես ցույց է տվել Ա. Ղազարյանը, Ջվարթնոցը վերաբարձրում էր Ս. Հարության, իսկ Դվինի Մայր տաճարը՝ Բեթհեղեմի Ս. Ծննդյան տաճարը²⁹: Ավելին, իր «աքսորի» տարիներին հայրենի Տայքում Ներսեսը մեկ անգամ ևս կրկնում է այս ծրագիրը՝ կառուցելով երկու հայտնի տաճարներ՝ Բանակը՝ Ս. Հարության կամ արդեն Ջվարթնոցի, Իշխանը՝ Ս. Ծննդյան կամ Դվինի տաճարների օրինակով³⁰:

Ջվարթնոցը նոր խոսք էր ոչ միայն ճարտարապետական կառույցի առումով, այլև իր արտաքին ու ներքին հարդարանքով: Համաձայն ուսումնասիրությունների՝ Ջվարթնոցի պատերը (ոչ ամբողջությամբ) հարդարված են եղել որմնանկարով, իսկ խորանը՝ խճանկարով, որտեղ օգտագործվել է ոսկեգույն սմալտա³¹: Խճանկարը, որից հասել են միայն խաչը պատկերող դրվագներ (ամբողջությամբ միայն մեկը), հանդիսացել է զարդագոտու մաս: Իսկ հայտնաբերված որմնանկարի դրվագները իրենցից ներկայացրել են մարմարի ֆակտուրայի նմանակում³²: Ամենայն հավանականությամբ Ջվարթնոցում փորձ է արվել նմանակել բյուզանդական տաճարների ներքին հարդարանքի մաս կազմող մարմարյա պատերը³³: Կարելի է միայն երևակայել, թե ինչ ուժեղ ներգործություն է ունեցել տաճարը ներս մտնողների վրա՝ հաշվի առնելով ներքին շքեղ հարդարանքն ու առատ լուսավորությունը, որ ներս էր թափանցում բազմաթիվ պատուհաններից:

Ջվարթնոցի տաճարում է, որ առաջին անգամ ճարտարապետական հորինվածքն ու նրա արտաքին հարդարանքը ստանում են ներդաշնակ և համալիր լուծում՝ ի հայտ բերելով տաճարի հարդարման բոլորովին նոր սկզբունք: Այն պայմանավորված է, ինչպես վերը նշվեց, դեկորատիվ որմնականարաշարերի կիրառմամբ: Արտաքին հարդարման մյուս կարևոր բաղադրիչը Ջվարթնոցի քանդակազարդ գոտին է:

Հարկ է նշել, որ Բյուզանդիայում ընդհանուր առմամբ չի դրվել տաճարի արտաքին հարդարման խնդիրը, սակայն եթե անդրադառնանք կայսրության արևելյան տարածքներին՝ Փոքր Ասիայի արևելյան մասին, Պաղեստինին, Եգիպտոսին և Սի-

²⁸ Օրինակ՝ Սան Ստեֆանոյի ռոտոնդան Բոլոնիայում:

²⁹ **Казарян А. Ю.**, Крестово-купольные храмы-триконхи в зодчестве Закавказья и Византии. // Византийский мир: Искусство Константинополя и национальные традиции. Тезисы докладов Международной конференции. М., 2000, с. 24-27.

³⁰ Իշխանի տաճարի կենտրոնագմբեթ եռակոնք լինելու հանգամանքը ամբողջացնում է եռակոնք տիպի եկեղեցիների զարգացման շղթան, համաձայն որի այն ի հայտ է գալիս 7-րդ դարի հայկական ճարտարապետության մեջ և իր հետագա զարգացումն է գտնում, հանձինս Իշխանի, Տայքի և Վրաստանի 10-11-րդ դդ. մի շարք տաճարներում (Օշքի, Ալավերդիի և Քոյախիսի տաճարները), մինչև ժամանակ տարածում է գտնում նաև Բյուզանդիայում՝ Աթոս լեռան վանական կառույցներում (Մեծ Լավրայի 1002 թ., Վատոպեղի 1000 թ., Իվիրոնի 1029-30 թ. եկեղեցիները): Տե՛ս **Казарян А. Ю.**, Крестово-купольные храмы-триконхи... с. 25-26.

³¹ **Дурново Л.**, Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957, с. 14©

³² **Дурново Л.**, Древние фрески Армении. // Очерки по истории искусства Армении. М.-Л., 1939, с. 28-29:

³³ Բյուզանդական ավանդույթների ազդեցության մասին է խոսում ոչ միայն տաճարի ներքին հարդարանքը, այլև այն, որ Ջվարթնոցում եղել է տեղադրված ամբիոն, և տաճարի կենտրոնով է անցել (շրջանցելով կրիպտան) խորանապատնեշը (templon): Այս ամենը, իհարկե, զարմանալի չէ, եթե հաշվի առնենք Ներսես կաթողիկոսի բյուզանդամետ ուղղվածությունը: Տե՛ս **Казарян А. Ю.**, Алтарная преграда и литургическое пространство храма Звартноц. // Иконостат. М., 2000.

րիային, ապա կտեսնենք, որ տաճարների արտաքին հարդարման ավանդույթը, այդ թվում նաև դեկորատիվ կիսասյուներով, զարդաքանդակներով և պատկերաքանդակներով³⁴, լայն տարածում է ունեցել³⁵: Այստեղ, անշուշտ, մեծ էր հելլենիստական ավանդույթների դերը, որոնք, շարունակվելով վաղ միջնադարում, իրենց ազդեցությունն են ունեցել նաև հայկական, ինչպես նաև վրացական հուշարձանների վրա, հատկապես եթե հաշվի առնենք Հայաստանի և վերը նշված տարածաշրջանի սերտ մշակութային առնչությունները³⁶:

Զվարթնոցի զարդագոտին բոլորում է տաճարը ամբողջությամբ՝ պսակելով առաջին հարկաբաժնի որմնակամարաշարը: Գոտին բաղկացած է իրար կցված մեծ սալերից, որոնց վրա հաջորդաբար քանդակված են խաղողի և նռան ծառաթմբեր: Քանդակագարդ գոտին աչքի է ընկնում բավականին բարձր ռելիեֆով և կատարյալ մշակմամբ, որը միանգամայն կենդանանում է արևի շոյալ լույսի ներքո:

Խաղողի և նռան պատկերները, որոնք այնքան հարազատ են հայ մարդուն և հաճախակի դիտվում են որպես ժողովրդական պատկերացումների արտահայտություն, Զվարթնոցում հանդես են գալիս իրենց խորհրդաբանական իմաստով:

Քրիստոնեական սիմվոլների շարքում առավել հայտնի է խաղողի որթը, որը խորհրդանշում է Քրիստոսին և քրիստոնեական ուսմունքը: Ի տարբերություն խաղողի՝ ավելի քիչ է հանդիպում նռան ծառը կամ պտուղը, որը կապվում է մահվան ու անորշիբիմյան աշխարհի հետ՝ սկսած դեռևս անտիկ ժամանակներից: Նռան պատկերը մեզ լավ հայտնի է Գառնիի տաճարի զարդաքիվից³⁷: Սակայն մահը, ինչպես հայտնի է, նաև նոր կյանքի սկիզբն է, և համաձայն արդեն քրիստոնեական պատկերացումների՝ նռան ծառը խորհրդանշում է նաև Դրախտային այգին: Կարելի է ասել, որ նռան պատկերը, ինչպես և խաղողը, Զվարթնոցի տաճարի արտաքին հարդարանքում արտահայտում են կրկնակի իմաստ՝ հանդիսանալով և՛ որպես մահվան ու հավերժության, և՛ որպես Դրախտային այգու խորհրդանշ:

Զվարթնոցի զարդագոտին, որ ներկայանում է իր խորհրդաբանական և գեղարվեստական մեկնաբանությամբ, լայն կիրառում է ստանում միջնադարյան Հայաստանում: Բերենք մի քանի օրինակ: Առաջինը Դվինից գտնված հայտնի բարավորի դրվագն է, որտեղ ծաղկած խաչի մի կողմում (համապատասխանաբար եղել է նաև մյուս կողմը) պատկերված է խաղողուտը, որի խոշոր ողկույզների մեջ ներկայացված են երկու կանացի ֆիգուրներ բերքահավաքի պահին: Այստեղ «բերքահավաքը» ունի սիմվոլիկ իմաստ. խաղողը Քրիստոսն է, իսկ ֆիգուրները խորհրդանշում են

³⁴ Կարևոր ենք համարում նշել այն, որ, համաձայն որոշ ուսումնասիրողների, Ս. Հարության տաճարը հարդարված է եղել նաև պատկերաքանդակներով: Այդ մասին է փաստում նաև Ս. Մնացականյանը՝ հիմնվելով Վ. Այնալովի աշխատության և Ս. Հարության տաճարը վերարտադրող որոշ պատկերների վրա: Տե՛ս **Մնացականյան Ս. Խ.**, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 129:

³⁵ **Thierry N.**, Notes sur l'un des bas-reliefs D'Alahan Manastiri, en Isaurie. // Cahiers Archéologiques, vol. XIII, 1962; **Crippa M., Zibawi M.**, L'art paléochrétien. Paris, 1998.

³⁶ **Казарян А. Ю.**, Архитектура Армении V-VI вв. и раннехристианское зодчество Капподокии, Киликии и Исаурии. // Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը: Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2000:

³⁷ Գառնիի տաճարում, որը, համաձայն Ֆ. Տեր-Մարտիրոսովի ուսումնասիրության, հանդիսացել է թագավորական տան սրբացված նախնիների պաշտամունքին նվիրված տաճար (героон) և քրիստոնեական ժամանակաշրջանում վերածվել է Խոսրովիդուխտի դամբարանի, ապա նռան պատկերը լավագույն արտահայտում է վերջինիս ֆունկցիոնալ նշանակությունը: Տե՛ս **Тер-Мартirosов Ф. И.**, Храм в крепости Гарни – героон, мартирий. Ереван, 1995, с. 24-31.

հավատացյալներին, որոնք «սնվում են» հավատի աղբյուրից: Հայտնի է, որ Զվարթնոցի օրինակով կառուցված Բանակի տաճարը նույնպես ունի նման զարդաքանդակ գոտի՝ խաղողի և նռան պատկերներով, որը, սակայն, վատ է պահպանվել, իսկ հուշարձանը, գտնվելով Թուրքիայի տարածքում, հասանելի չէ ուսումնասիրության համար:

Զվարթնոցի արտաքին հարդարման հետ անմիջական առնչություն ունի հայկական մեկ այլ հայտնի հուշարձան՝ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին: Տաճարը հայտնի է իր հարուստ զարդագոտիներով, որոնցից մեզ առավել հետաքրքրական է «որթագալարի» գոտին, որ խորհրդանշում է Դրախտը³⁸: Զվարթնոցի և Ս. Խաչ եկեղեցու կապը թե՛ պատկերագրորեն, թե՛ խորհրդաբանորեն ակնհայտ է: Բավական է միայն նշել, որ Զվարթնոցի կառուցումից մոտ երեք հարյուր տարի հետո Գրիգոր Լուսավորչի մասունքները հայտնվում են Վասպուրականում, այն ժամանակ, երբ Գագիկ Արծրունին կառուցում է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին³⁹: Նշենք նաև, որ հարդարման այս սկզբունքը կիրառվել է նաև Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցում, որի զարդագոտին հայտնի է իր բուսական և կենդանական պատկերներով:

Զվարթնոցի արտաքին հարդարանքում արտահայտված Դրախտի գաղափարը ակնհայտ է դառնում արդեն իսկ տաճարի անվանումից: «Զվարթնոցը», որ հիշատակվում է Սեբեոսի մոտ, նշանակում է «Երկնային ուժեր» կամ «Երկնային հրեշտակների դաս»՝ համաձայն Մովսես Կաղանկատվացու, մինևույն ժամանակ խորհրդանշում է Երկնային Երուսաղեմը՝ համաձայն Կոմիտաս կաթողիկոսի մեկնաբանության: Ս. Գրիգորի տաճարը՝ Զվարթնոցը, իր այս խորհրդաբանությամբ նույնպես կապվում է Ս. Հարության տաճարի հետ, որը, համաձայն Եվսեբիոս Կեսարացու, հանդիսացել է Երկնային Երուսաղեմը⁴⁰:

Սակայն, բացի համաքրիստոնեական պատկերացումներից, ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, հայկական միջնադարյան պատկերացումներում առկա էր նաև ազգային աշխարհընկալումը⁴¹: Այսպես, Խորենացին հենց Հայաստանն է նույնացնում Նոր Երուսաղեմի՝ Դրախտի հետ՝ զարդարված առաքյալների, մարգարեների և սրբերի լուսեղեն դասով⁴², իսկ Ղազար Փարպեցին Այրարատ գավառն էր համարում աստվածատուր Դրախտ⁴³, և սա պատահական չէր, քանի որ հենց այստեղ էին սկիզբ առնում դրախտային երկու գետերը՝ Եփրատը և Տիգրիսը, իսկ Նոյը՝ տնկում իր այգին⁴⁴: Ակնհայտ է, որ ստեղծելով Զվարթնոցը՝ Ներսես կաթողիկոսը առաջնորդվել է նաև այս պատկերացումներով:

Հետաքրքիր է, որ Զվարթնոցի Դրախտային այգում, բացի ավանդական ծա-

³⁸ Համաձայն Ա. Մնացականյանի մի մեկնաբանության՝ Աղթամարի որթագալարի գոտին ստեղծվել է Աստվածաշնչում առկա խաղողի վազի այլաբանական ըմբռնումների հենքի վրա: Տե՛ս **Մնացականյան Ա.**, Նոր փորձ Աղթամարի վանքի որմնաքանդակների մեկնաբանության: // Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական 5-րդ կոնֆերանսի թեզեր: Երևան, 1982:

³⁹ **Мнацаканян С. Х.**, Звартноц, с. 29.

⁴⁰ **Eusebius.** Vita Constantini. Ed. F. Winkelmann. Berlin, 1975, III:25.

⁴¹ **Պետրոսյան Հ.**, Հայ միջնադարեան պատկերացումները իդէալական կենսատարածքի եւ կենսընթացի մասին. աշխարհը որպէս այգի: // Հանդես ամսօրեայ, 1-12, 2002:

⁴² **Մովսես Խորենացի**, Սուրբ Հովփսիմէին եւ նրա վկայակիցների յիշատակին եւ նրանց նահատակութեանը [նուիրում] ներբողեան՝ հրաշագարդ յօրինումածներով: // «Գանձասար», Գ, Երևան, 1993, էջ 14-15:

⁴³ **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 23-24:

⁴⁴ **Պետրոսյան Հ.**, Հայ միջնադարեան պատկերացումները..., էջ 413:

ռաթմբերից, հանդիպում ենք մարդկանց և կենդանիների պատկերների: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում արջի պատկերը, որի ներկայությունն այստեղ նույնպես պատահական չէ: Արջը պատկանում է այն կենդանիների թվին, որոնց պաշտամունքը դարեր շարունակ գոյություն է ունեցել Հայաստանում և շարունակվելով նաև քրիստոնեական ժամանակաշրջանում՝ ստացել որոշակի վերաիմաստավորում⁴⁵: Հայաստանում արջը նույնացվել է մեռնող և հարություն առնող աստվածության հետ (Զվարթնոց)⁴⁶, մինևույն ժամանակ հանդիսացել անտառի⁴⁷ տիրակալ (Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի)⁴⁸:

Առավել հատաքրքրական են և առեղծվածային զարդագոտու մյուս պատկերները: Զվարթնոցի Դրախտային այգու ֆոնի վրա՝ կամարների անտրվոլտներում, ոչ լրիվ հասակով տրված են մարդկային ֆիգուրներ, որոնց ձեռքերում կան գործիքներ՝ բահ, մուրճ և այլն: Ֆիգուրները հավանաբար համապատասխանել են պատի նիստերի քանակին, սակայն պահպանվել են միայն իննը:

Իր նախադեպը չունեցող այս ֆիգուրների մեկնաբանության հարցում կա երկու հիմնական կարծիք: Կարծիքներից մեկի համաձայն, որ առաջ է քաշել Բ. Առաքելյանը⁴⁹, Զվարթնոցի անտրվոլտներում պատկերված են տաճարը կառուցող շինարար-վարպետները: Համաձայն մյուս մեկնաբանության, որը պատկանում է Ս. Մնացականյանին, Զվարթնոցում պատկերված են տաճարի պատվիրատուները⁵⁰: Եթե ընդհանրացնենք այս երկու տեսակետները, ապա կարելի է եզրակացնել, որ Զվարթնոցում առկա են աշխարհիկ բնույթի պատկերներ, ինչը բոլորովին չի համապատասխանում թե՛ տաճարի խորհրդաբանական կերպարին, թե՛ դարաշրջանի մտածելակերպին: Նախ և առաջ, մեզ ստույգ հայտնի է, որ Զվարթնոցի պատվիրատուն մեկն էր՝ Ներսես կաթողիկոսը, բացի այդ, ելնելով միջնադարյան չափանիշներից, գիտենք, որ ճարտարապետ-վարպետները կամ նկարիչ-ծաղկողները երբեք չեն մեծարվել, և նրանց մասին տեղեկություններ մեզ գրեթե չեն հասել: Այս ամենը հիմք է տալիս չհամաձայնվելու վերը նշված տեսակետներից և ոչ մեկի հետ: Բայց և այնպես, պետք է նշել, որ Ս. Մնացականյանը իր մի շարք դրույթներով ընդհուպ մոտեցել է պատկերաքանդակների խորհրդաբանական մեկնաբանությանը: Մենք թույլ կտանաք անել միայն մի քանի սկզբունքային պարզաբանումներ, որոնք կամբողջացնեն պատկերների մեկնաբանությունը:

Զվարթնոցի պատկերաքանդակներից հատկապես առանձնանում է մեկը՝ հոգևորականի հագուստով, որը, մեր կարծիքով, հանդիսանում է այն հանգուցային պատկերը, որը թույլ է տալիս հասկանալ պատկերների էությունը: Հայտնի է, որ հոգևորականի պատկերը ունի արձանագրություն, որտեղ հայերեն տառերով նշված է «Հովհաննես» անունը հունացված տարբերակով՝ «Յոհան»: Ուսումնասիրողները գտնում են, որ դա ավագ ճարտարապետի պատկերն է, որի հետ նույնպես չենք կարող համաձայնվել:

Մեր խորին համոզմամբ՝ Զվարթնոցի պատկերաքանդակների շարքում տեղ

⁴⁵ Тер-Мартиросов Ф. И., Медвежонок и другие персонажи армянской мифологии. Ереван, 1996, с. 8-31.

⁴⁶ Այս իմաստով հետաքրքրական է նշել, որ Բարեկամավանի դամբարանի զարդաքիվում կա արջի գլուխ, բացի այդ, արջի պատկեր հայտնի է վրացական Բոլնիսի Սիոնում (478-493 թթ.):

⁴⁷ Որտեղ «անտառը», ինչպես կտեսնենք ստորև, խորհրդանշում է նաև «այգին» և «աշխարհը»:

⁴⁸ Ինչպես դա տեսնում ենք Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու զարդագոտում:

⁴⁹ Առաքելյան Բ., Հայկական պատկերաքանդակները 4-7-րդ դդ., Երևան, 1949, էջ 73:

⁵⁰ Մնացականյան Ս. Խ., Զվարթնոցը..., էջ 131-132:

գտած հոգևորականի պատկերը ներկայացնում է Տրդատ Գ-ին: Այս իմաստով կարևորում ենք այն, որ Ներսես կաթողիկոսը իր կառույցները կապում էր Տրդատի և Լուսավորչի անվան հետ: Մյուս հանգամանքը վերաբերվում է «Յոհան» անվանը: Եթե անդրադառնանք պատմական անցյալին, ապա կարող ենք հիշել, որ Տրդատ թագավորը Լուսավորչի կողմից մկրտվելիս ստանում է «Հովհաննես» անունը⁵¹, որով նա նույնացնում է իրեն Հովհաննես Մկրտչի հետ, իսկ իր գործը՝ վերջինիս առաքելության հետ: Ի նշան այս իրադարձության՝ Բագավանում կառուցվում է Ս. Հովհաննես տաճարը⁵²:

Այն հանգամանքը, որ Հովհաննեսը պատկերված է հոգևորականի հագուստով, նույնպես իր բացատրությունն է գտնում ժամանակի պատմական անցուդարձում: Հայտնի է, որ Խորենացին շատ բարձր է գնահատել Տրդատ Գ-ին՝ անվանելով նրան «սուրբ, լուսավորության նախաշավիղ և երկրորդ նահատակ»⁵³: Ինչպես հայտնում է Խորենացին, Տրդատը ջանք չի խնայում հավատը ամրապնդելու և տարածելու համար, սակայն «շատերը, անտարբեր լինելով, դիմադրում են թագավորի կամքին» և ի վերջո «թագավորը < ... > գցում է երկրային պսակը, գնում է երկնային պսակի հետևից»⁵⁴:

Ըստ էության՝ քրիստոնեության հաղթանակը Հայաստանում ամենից առաջ հռոմեական կողմնորոշում ունեցող թագավորի և նախարարների հաղթանակն էր, որոնց հակադրված էին նրանք, ում շահերը սերտորեն կապված էին Սասանյանների հետ: Եվ արդյունքում, համաձայն ավանդության, Տրդատը կյանքի վերջին տարիներին հեռանում է Սեպուհ լեռան Այրք կոչված վայրը՝ ընդունելով հոգևոր աստիճան, որտեղ էլ թունավորվում է թշնամի նախարարների ձեռքով:

Հնարավոր է, որ Զվարթնոցի քանդակների շարքում եղել է նաև Գրիգոր Լուսավորչի պատկերը, քանի որ Ս. Մնացականյանը խոսում է հոգևորականի հագուստով մեկ այլ քանդակի մասին, բայց քանի որ պատկերաքանդակներից միայն յոթն են պահպանվել լավ վիճակում, ապա ավելի ստույգ հնարավոր չէ նկարագրել այն: Այսպիսով, առաջնորդվելով Ս. Մնացականյանի մեկնաբանությամբ, կարելի է փաստել, որ Զվարթնոցի զարդագոտում ներկայացված պատկերները ներկայացրել են երկրում հավատի ընդունման, հաստատման և տարածման ջատագովներին Տրդատի և Լուսավորչի գլխավորությամբ:

Այն հարցը, թե ինչու պատկերված մարդիկ գործիքներ ունեն իրենց ձեռքին, կարելի է բացատրել՝ ելնելով նույն խորհրդաբանությունից: Իհարկե, գործիքները ևս հանդես են գալիս այլաբանական իմաստով: Կրկին անդրադառնալով միջնադարյան աղբյուրներին՝ տեսնում ենք, որ Ագաթանգեղոսը Գրիգոր Լուսավորչին և Տրդատին ներկայացնում է որպես «շինարարների»⁵⁵՝ հավատի և Եկեղեցու կառուցողների: Գործիքների առկայությունը Զվարթնոցի քանդակներում շեշտում է հենց այս գաղափարը: Հնարավոր է, որ Ներսես կաթողիկոսին տրված «Շինարար» անունը կրում է նաև այս իմաստային երանգը:

⁵¹ **Ագաթանգեղոս**, Հայոց Պատմություն (թարգմ. և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի), Երևան, 1983, էջ 465-67; **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 539:

⁵² **Օրբելի И.**, Багаванский храм и его надпись. // **Օրբելի И.**, Избранные труды. Ереван, 1963.

⁵³ **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց (թարգմ. և ծանոթագրությունները Ստ. Մախաթյանի), Երևան, 1968, էջ 232:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ **Мнацаканян С. Х.**, Звартноц, с. 54.

Որպեսզի ամբողջացնենք Զվարթնոցի զարդագոտու մեկնաբանությունը, որոշ գուգահեռներ անցկացնենք Աղթամարի որթագալարի գոտու հետ, քանի որ, ինչպես վերը նշվեց, այս երկու հուշարձանների խորհրդաբանական կապը ակնհայտ է:

Ինչպես Զվարթնոցում, այնպես էլ Աղթամարում տրված է Դրախտի պատկերը: Սակայն միջնադարյան խորհրդանիշները ունենին իմաստավորման մի քանի աստիճան և, ինչպես արդեն նշվեց, Դրախտի պատկերը այս հուշարձաններում հանդես է գալիս ինչպես քրիստոնեական, այնպես էլ ազգային մտածելակերպի համատեքստում:

Ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, Հայաստանում դեռ նախաքրիստոնեական ժամանակներից ի վեր այգու հիմնադրումը հանդիսանում էր թագավորների սրբազան պարտականությունը: Հայտնի է Երվանդ արքայի «Ծննդոց անտառը», նմանապես գիտենք Խոսրով արքայի անտառը, որը Փավստոս Բուզանդը անվանում է «տաճար մայրի»⁵⁶՝ շեշտելով վերջինիս սրբազան նշանակությունը: Այգին կամ անտառը խորհրդանշում էր երկիրը⁵⁷ և վերջինիս հիմնադրումը խորհրդանշում էր երկրի բարգավաճումը⁵⁸: Այդպիսի «Դրախտային անտառ» կամ «Դրախտային աշխարհ» է ներկայացված Զվարթնոցում և Աղթամարում: Աղթամարում այդ «Դրախտային աշխարհ» կառուցվում է Գագիկ Արծրունու (պատկերված է արևելյան ճակատին, լուսապսակով՝ որպես մի սրբի), իր որդիների ու ժողովրդի կողմից և ըստ ամենի՝ Գագիկը իրեն տեսնում է արդեն Դրախտում: Դրախտային աշխարհը Զվարթնոցում կառուցվում է Տրդատի և իր համախոհների կողմից, որոնք իրենց արդար գործով նույնպես արժանանում են Երկնային Դրախտի:

Այսպիսով, ակնհայտ է, որ Զվարթնոցի, ինչպես նաև Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու զարդագոտիների մտահղացման հիմքում դրված են միջնադարյան պատկերացումներն աշխարհի և Տիեզերքի, Աստծո և մարդու փոխհարաբերությունների մասին: Այս պատկերացումների պլաստիկ արտահայտությունն առաջին անգամ իրագործվելով Զվարթնոցի տաճարում՝ լայն տարածում է գտնում հայկական միջնադարյան արվեստում⁵⁹: Հիմք ընդունելով Երուսաղեմի Ս. Հարության տաճարի խորհրդաբանական կերպարը, վերջինիս ֆունկցիոնալ և ճարտարապետական սկզբունքները, ի դեմս Զվարթնոցի, Ներսես կաթողիկոսը կարողացավ ստեղծել մի յուրահատուկ և անկրկնելի շինություն, որտեղ այնքան վառ են արտահայտված մի կողմից ուշ անտիկ և վաղ քրիստոնեական ճարտարապետական ավանդույթները և պատկերացումները, մյուս կողմից՝ ազգային ճարտարապետական և գեղարվեստական մտածելակերպը: Դրանով է պայմանավորված այն, որ Զվարթնոցը իր առանձնակի տեղն է գրավել ինչպես հայկական, այնպես էլ քրիստոնեական արվեստի համատեքստում:

⁵⁶ Պետրոսյան Հ., Հայ միջնադարյան պատկերացումները..., էջ 423-424:

⁵⁷ Համաձայն Հովհաննես Դրասխանակերտցու՝ Զվարթնոցի տաճարի հարևանությամբ պալատական համալիրի կառուցումից հետո Ներսեսը տնկում է խաղողի այգի:

⁵⁸ Պետրոսյան Հ., Հայ միջնադարյան պատկերացումները..., էջ 426:

⁵⁹ Այդ իմաստով հետաքրքրություն են ներկայացնում Միսավանի և Հնեվանքի եկեղեցիները, որտեղ տեղ են գտել պատվիրատուների և առաքյալների պատկերաքանդակներ:

Է. Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ՌՈՒԲԻՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՌՈՒԲԵՆ Ա ԻՇԽԱՆԸ ԵՎ ԻՐ ԳՈՐԾԸ

Մերձավոր Արևելքի պատմությունը լի է ազգերի ու ցեղերի տեղաշարժերով, որոնք սրի ուժով նվաճել են նոր տարածքներ և ստեղծել նոր պետականություններ, սակայն այդ ամենի մեջ առանձնանում է Կիլիկիայում հայկական պետության ստեղծումը: Բյուզանդական կայսրությունը, հետևողականորեն մեկը մյուսի հետևից ոչնչացնելով հայոց թագավորությունները և հայ ավատատերերին բռնագաղթի ենթարկելով դեպի Կապադովկիա, Կիլիկիա և հարակից վայրերը, նպատակ էր հետապնդում ոչ միայն նրանց շոշափելի ռազմական ուժերը օգտագործել իր սահմանների պաշտպանության համար, այլև իրականացնել սեփական իշխանությունից զրկված Հայաստանի բնակչությանը և մայր հողից կտրված հայ վտարանդիներին ձուլման ենթարկելու իր վաղեմի նկրտումները: Սակայն կարճ ժամանակ անց պարզվեց Բյուզանդական քաղաքականության կործանարար լինելը ոչ միայն հայության, այլև հենց Բյուզանդական կայսրության համար:

Բնական է, որ հայրենիքից բռնությամբ հեռացված հայ ավատատեր իշխանները և արքաները, ինչպիսի տիրույթներ ու տիրադոսներ էլ ստացած լինեին Բյուզանդական կայսրերից, աստվությամբ լցված այդ տերության նկատմամբ, պատեհ առիթով պետք է ըմբոստանային նրա դեմ: Այդպես ստեղծվեցին Փիլարտոս Վարաժնունու, Գող Վասիլի և մի շարք այլ հայկական իշխանություններ, որոնք բոլորն էլ, ցավոք, կարճ կյանք ունեցան: Բոլորովին այլ ընթացք ունեցավ Կիլիկիայում ստեղծված Ռուբինյան իշխանության ճակատագիրը. այն ոչ միայն գոյատևեց երեք դար, այլև բռնագաղթի ենթարկված պետությանն ստիպեց ընդունելու իր սեփական տարածքի վրա հայկական անկախ պետության գոյությունը:

Նկատենք, որ ԺԱ դարի վերջին և ԺԲ դարի սկզբի խառնակ ժամանակներում, երբ մի կողմից Բյուզանդական կայսրության թուլացման և սելջուկյան մեծ սուլթանության մասնատման, մյուս կողմից խաչակրաց արշավանքների շնորհիվ զանազան վայրերում արագորեն ստեղծվում և նույնքան էլ արագ կործանվում էին բազմաթիվ իշխանություններ, Ռուբեն Ա-ի ստեղծած Կիլիկյան հայկական իշխանությունը պետք է որ առանձին ուշադրության չարժանանար, այլ միայն մի փոքր ուշ, երբ այդ իշխանությունը սկսեց հզորանալ և ընդարձակվել, կապեր հաստատեց հարևան երկրների և Արևելք ներխուժած խաչակիրների հետ, այն դարձավ համընդհանուր ուշադրության առարկա: Թերևս դրանով պետք է բացատրել այն փաստը, որ իշխանության հիմնադիր Ռուբեն Ա-ի անձը և գործունեությունը, ինչպես իրավացիորեն նկատում է այդ խնդրին հանգամանակից անդրադարձած Երվանդ Քասունին, «Կը մնան անորոշութեան մէջ»¹:

¹ Երուանդ Ն. Քասունի, Ռուբեն Ա. եւ Ռուբինեան իշխանութեան հիմնադրութիւնը, Պէյրոս, 1972, էջ 10

Նույն հարցին անդրադառնալով, հակիրճ լինելու համար, մենք հաճախ ի բաց պիտի առնենք այլ ուսումնասիրողների կարծիքները, կրկնած չլինելու համար այն, ինչ բարեխղճորեն արել է Քասունին, թերևս բացառություն անելով Գ. Միքայելյանի դեռևս 1952 թ. ռուսերենով հրատարակված «Կիլիկյան հայկական պետության պատմությունը» գիրքը, որը առ այսօր մնում է Կիլիկիայի պատմությանը նվիրված ամենանշանակալի ուսումնասիրություններից մեկը²:

Արդ, ինչպես Միքայելյանը, այնպես էլ Քասունին իրավացի են՝ նշելով, թե Ռուբենի անձի ու նրա հաստատած իշխանության մասին որևէ եզրակացության հանգելու համար հարկ է ներկայացնել սկզբնաղբյուրների վկայությունները: Երկու հեղինակներն էլ նկատում են, որ Ռուբինյան իշխանության հիմնադիր Ռուբեն իշխանի մասին եղած աղբյուրների տեղեկությունները տարբեր են: Ընդ որում, եթե Միքայելյանը բավարարվում է քննության առնելով ժամանակակից և ժամանակագրական առումով հարցին մոտ կանգնած աղբյուրները, ապա Քասունին շատ ավելի առաջ է գնում՝ քննության ենթարկելով ոչ միայն ԺԲ-ԺԴ դարերի, այլև ավելի ուշ շրջանի հեղինակների գործերը՝ Հեթում Բ թագավորի Ճաշոցի հիշատակարանը, Ներսես Պալիանենցի ժամանակագրությունը, ԺԷ դարի հեղինակներ Դավիթ Բադիշեցու, Մարտիրոս Դրիմեցու, Անանուն ժամանակագրի և այլոց հաղորդումները, այսինքն՝ գրեթե լրիվ օգտագործելով մեր մատենագրության մեջ եղած տեղեկությունները Ռուբեն Ա իշխանի և Ռուբինյանների իշխանության հաստատման մասին:

Հակառակ Ռուբեն Ա-ի գործունեության մասին երկու հեղինակների մոտ եղած կարծիքների տարբերության, նրա ծագման և հայ արքայական տների՝ Բագրատունիների, Արծրունիների, իսկ որոշ աղբյուրների համաձայն՝ նաև Հայկազունների հետ ազգակցության խնդրի վերաբերյալ եզրակացությունը նույնն է: Երկու հեղինակներն էլ, շեղվելով մինչ այդ բազում ուսումնասիրողների ընդունած տեսակետներից, մերժում են Ռուբինյանների ազգակցությունը հայ արքայական տների հետ, գտնում են, որ Ռուբենը Գագիկ Բագրատունու ենթակա իշխաններից մեկն էր, և Ռուբինյան տոհմի ազգակցությունը հայ արքայական ընտանիքների հետ հետագա հորինվածք է, որը նպատակ ուներ Ռուբինյանների իշխանությունն ընդունելի դարձնել ինչպես հայերի, այնպես էլ օտարների համար³: Այսինքն՝ ժամանակակից եզրով արտահայտելով, այն քաղաքական պատվեր է եղել⁴:

Մինչ Ռուբեն Ա-ի գործունեությանը վերաբերող առկա թեկուզ աղքատիկ տեղեկություններին անդրադառնալը, քննության առնենք նրա ծագման խնդիրը:

Ռուբենի ծագման և նրա գործունեության մասին մեր պատմագրության մեջ առաջին հանգամանակից տեղեկությունն առկա է Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ: Ըստ որում՝ Ժամանակագրության մեջ Ռուբենի և Ռուբինյանների մասին տարբեր առիթներով խոսվում է երկու անգամ, որը և ուսումնասիրողներին առիթ է տվել մերժելու Ժամանակագրության մեջ եղած փաստերի հավաստիությունը:

(այսուհետ՝ Քասունի):

² Գ. Գ. Միքայելյան, История Киликийского Армянского Государства, Ереван, 1952 (այսուհետ՝ Միքայելյան):

³ Միքայելյան, էջ 82: Քասունի, էջ 37:

⁴ Հարկ է նշել, որ Քասունին իր վարկածը հաստատելու համար բարեխղճորեն անդրադառնում է իրենից առաջ հարցին անդրադարձած բոլոր հեղինակների կարծիքներին. տե՛ս Քասունի, էջ 49-63:

Ի՛նչ է հաղորդում մեզ Անեցու Ժամանակագրությունը.

«ՌՀԷ. ... ի սոյն ամի, և այլք ասեն թէ ի ՌՀԷ. (ձեռագրում սխալմամբ ՇՀԷ. - Է. Բ.) ամին գնաց թագաւորն Գագիկ ի Տարսուս առ Ապլղարիպ իշխան Հայոց վասն խնամութեան և ի դառնալն մեր յԱռիճաս՝ կալան գնա իշխանքն յունաց և խեղդեցին գնա Գ. եղբարք, որք էին ի միում բերդի, և ինքն Գագիկ ընդ անցանելն առ նոքօք խոնարհեցաւ ի տես նոցա և յողջոյն: Եւ այլք ասեն, թէ ի յորս կայր և ի քուն գտեալ Մանդաւեանքն՝ տարան ի բերդն Կանդոսկաւի և անդ սպանին:

Իսկ իշխանքն հայոց և ամենայն զօրք նոցա լքան և յամենայն տեղիս ցրուեցան, յորոց իշխան մի արեանառու Գագկայ՝ Ռուբէն անուն, որ կալեալ ունէր Գօսիտառայ բերդն, յորժամ լուաւ զմահն Գագկայ՝ յարուցեալ ամենայն զարմօք իւրովք և եկն ի կողմանս Փոխիգիոյ՝ դիմելով ի գիւղ մի Կօլիմօգօլօ անուն և անդ բնակեալ, յորում լեռինն էին բնակեալ բազումք յազգէն հայոց՝ զորս զամենեսեան զնոսա առ ինքն կալեալ մեծն Ռուբէն և նոքօք զօրացեալ, էառ զլեռնային կողմանսն՝ զհոռոմսն անտի ի բաց մերժեալ և զնոցա տեղիսն առեալ: Եւ Հ. (70) ամաց լեալ՝ բարեպաշտ կենօք վերափոխեցաւ առ Քրիստոս և թաղեցաւ ի սուրբ ուխտն Կաստաղոն՝ թողեալ զիշխանութիւն յիւր հարազատ որդին ի Կոստանդին, որ և տիրեաց հռչակաւոր բերդին՝ որ Վահկայ կոչի, յորում տուն եղ ինքեան անդ և զտէրութիւն իւր հաստատեաց. և նովաւ բազում տեղիս էառ»⁵:

Ինչպէս նկատում ենք, ընդօրինակության հեղինակը թէն նշում է, որ Գագիկի Տարսոն գնալու տարեթվի, ինչպէս և Գագիկի գերեվարության ու մահվան մասին առկա են տարբեր աղբյուրներ, սակայն Ռուբենի՝ Գագիկի հետ ազգակցական կապ ունենալու, Գագիկից հետո ծավալած գործունեության, իշխած և ապրած տարիների մասին տալիս է հավաստի տեղեկություններ: Բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ Անեցու Ժամանակագրության մեջ եղած այս կարևոր ընդմիջարկությունը որևէ կասկածի տեղիք չէր տա, եթե նույն պատմիչի երկում առկա բազմաթիվ ընդմիջարկությունների թվում, 1201 թվականի իրադարձությունների արձանագրումից հետո, չլիներ Կիլիկյան իշխաններին վերաբերող մի ընդարձակ մեջբերում, որն, ի դեպ, ինչպէս նկատել է Սամուէլի հրատարակիչ Արշակ Տեր-Միքայելյանը, ուշ շրջանի միայն մեկ ձեռագրում է ներկայացված⁶:

Բերենք այդ մեջբերման մեզ հետաքրքրող հատվածը. «Եւ գիտել պարտ է վասն իշխանացն Ռուբինեանց, որք յետոյ թագաւորեցին ի Սիս, զի զանազան կերպիւ պատմեն վիպասանքն զԺամանակ և զթիւ ամաց նոցա: Որոց առաջինն է Ռուբէն, որի ՇԻԷ. թվին ի սպանանելն Գագկայ՝ եկեալ ի գիւղն Կօմօգօլօ՝ և առեալ զլեռնային կողմանսն՝ և զկնի սակաւ ամաց մեռանի. և որքանն չէ յայտ: Եւ զկնի Կոստանդին որդի նորա տիրէ Վահկային և այլոց բազմաց. մեռանի ի ՇԽԹ. թվին. ընդ ինքն և ընդ հայրն կացեալք ամս ԻԴ. (20)»:

Ահա այն ամենը, ինչ մեզ հաղորդում է Սամվել Անեցու Ժամանակագրությունը Ռուբենի անձի ու նրա գործունեության մասին: Արդ, ինչ փաստարկներ են բերում

⁵ Ա. Տեր-Միքայելյանի աշխտ., Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի Ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893, էջ 116-117 (այսուհետ՝ Սամուէլ Անեցի):

⁶ Սամուէլ Անեցի, էջ 135 :

Միքայելյանը և՛ հատկապես, Քասունին՝ մերժելու համար այդ տեղեկությունների հավաստիությունը: Միքայելյանը բավարարվում է նշելով այն հանգամանքը, որ Անեցու ժամանակագրության հնագույն՝ 1176 թ. գրված բնագրում Ռուբենի մասին հատվածը բացակայում է և այն առկա է միայն 13-րդ դարի սկզբին գրված ձեռագրերում, մինչդեռ Քասունին հարցին շատ ավելի հանգամանալից է անդրադառնում: Նա ևս նշում է. «ԺԲ. դարու մատենագիր Սամուել Անեցիի հրատարակուած ժամանակագրութեան՝ Ռուբենի մասին մեզի փոխանցած տեղեկութիւնը անհրաժեշտ կըլլայ անտեսել նկատի առած որ Սամուել Անեցիի հնագոյն մէկ ձեռագիրը, որ կը պատկանի 1176 թ.-ին, Ռուբենի մասին ոչ մէկ տեղեկութիւն կը բովանդակէ իր մէջ»⁷: Ապա և հենվելով Վազգեն Հակոբյանի հրատարակած «Մանր ժամանակագրությունների» վրա, հավելում է, որ Անեցու հրատարակված ժամանակագրության վերջում «Ռուբինեան իշխանների կարգը նոյնպէս չկայ անոր «ամենահնագոյն բնագրերում»⁸: Այս ամենը ճիշտ է և, ինչպես վերջերս էլ փաստեց Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը ուսումնասիրած Կարեն Մաթևոսյանը, Ռուբինյանների ծագման և նրանց սկզբնական գործունեության մասին Անեցու բուն ժամանակագրության մեջ ոչինչ չկա գրված⁹: Սրանից հետևում է, որ Անեցու ժամանակագրության մեջ Ռուբինյանների մասին տեղեկությունները վերաբերում են ժամանակագրության շարունակողներին և ընդմիջարկություններ են, հետևաբար որևէ չափով չեն կարող նսեմացնել Անեցու բուն ժամանակագրության հավաստի լինելը: Այլ հարց է, թե այդ ընդմիջարկությունները որքա՛ն հավաստի են: Անեցու ժամանակագրության մեջ առկա բազմաթիվ ընդմիջարկությունների հավաստիությունը կամ ժամանակագրության շարունակողների ինքնությունը պարզելու չափազանց բարդ հարցերը մեր խնդրից դուրս են¹⁰. մեր նպատակը որոշակի է՝ Անեցու ժամանակագրության մեջ Ռուբինյանների մասին եղած ընդմիջարկությունները վերադարձնել պատմագիտության ու բանասիրության քննության դաշտ և արժեվորել նրանց հավաստիությունը:

Վերը հիշված գործում Քասունին շարունակում է. «Անկախ վերոյիշեալ փաստերէն, հրատարակուած Սամուել Անեցիի մօտ երկու պարագաներ կը հետաքրքրեն մեզ ու կասկած կը ստեղծեն անոր հաւաստիութեան շուրջ: Առաջինը՝ «մեծն Ռուբէն» բացատրութիւնն է: Դժուար թէ «մեծն» ածականը հոս օգտագործուած ըլլայ «նախահայր» իմաստով: Կը նշանակէ թէ Ս. Անեցիի ձեռագրին վրայ այդ յաւելումը կատարուած է ուշ՝ հաւանաբար ԺԳ. դարուն, երբ արդէն Ռուբէնի անձին շուրջ ստեղծուած էին գրոյցները: Ու ասոր լաւագոյն փաստը կարելի կ'ըլլայ գտնել ժամանակագրութեան վերջաւորութեան՝ Ռուբինեան իշխաններու կարգին սկիզբը դրուած սա խօսքին մէջ. «Եւ գիտել պարտ է վասն իշխանացն Ռոբինեանց, որք յետոյ թագաւորեցին ի

⁷ Քասունի, էջ 35:

⁸ Անդ:

⁹ Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը. «Ակադեմիկոս Նիկոլայու Մառ», Երևան, 2005, էջ 37-48:

¹⁰ Թեև ժամանակին անդրադարձել ենք ժամանակագրության շարունակողներից մեկի հեղինակությանը՝ պարզելով, որ այն իրոք պատկանում է միջնադարի ականավոր գործիչ Ստեփանոս Օրբելյանի գրչին. տե՛ս է. Բաղդասարյան, 13-րդ դարի մի ժամանակագրության (Ստեփանոս Օրբելյան) հեղինակի մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1971, թ. 2, էջ 210-216:

Միս, զի զանազան կերպիւ պատմեն վիպասանքն զԺամանակ և զթիւ ամաց նոցա»։ Նախ ըսենք թէ 1100-1190 թթ. միջև ապրած Ս. Անեցին չէր կրնար խօսիլ ԺԲ. դարուն վերջին տասնամեակին մեջ հռչակուած Կիլիկեան թագաւորութեան մասին։ Ապա՝ «զանազան կերպիւ պատմեն վիպասանքն» խօսքը ինքնին կը բացատրէ թէ ԺԳ. դարէն սկսած բազմաթիւ գրոյցներ սկսած էին շրջիլ Ռուբենի անձին և իշխանութեան հիմնադրման մասին»¹¹։

Թվում է՝ իրոք, ամեն ինչ ճիշտ է և անառարկելի։ Սակայն, ցավոք, պիտի արձանագրենք, որ և՛ Գ. Միքայելյանը, և՛ Հ. Քասունին այստեղ թույլ են տվել լուրջ վրիպում։ Ինչպես վերոհիշյալ հարգարժան հեղինակներին, այնպես էլ ժամանակագրությունների, մասնավորապես աղյուսակաձև գրված ժամանակագրությունների ուսումնասիրությամբ զբաղվող բոլոր հեղինակներին հայտնի է, որ ժամանակագրություններում տարբեր անձինք տարբեր ժամանակներում ընդմիջարկություններ են կատարել։ Հետևաբար, պնդելու համար, թե ժամանակագրության մեջ եղած տեղեկությունները հետագայի հորինվածք են և չեն կարող հավաստի համարվել, նախ անհրաժեշտ էր մանրակրկիտ համեմատել եղած ընդմիջարկությունները։ Խնդիրն այն է, որ վերը նշված երկու ընդմիջարկությունների համեմատությունը պարզում է, որ իրոք դրանք կատարված են տարբեր ժամանակներում, տարբեր անձանց կողմից և հավանաբար տարբեր վայրերում։

Պարզենք մեր միտքը։ Վերն ասվեց, եթե առաջին ընդմիջարկության հեղինակը Գագիկ Բ-ի Տարսուն՝ Ապլղարիբի մոտ գնալու, ապա նաև նրա եղերական մահվան մասին խոսելիս գրում է, որ այդ մասին աղբյուրները տարբեր են նշում՝ ՌՀԷ, «և այլք ասեն թէ ՇԻԵ»¹², ապա Ռուբեն իշխանի անձի և նրա գործունեության մասին խոսում է առանց որևէ տարակուսանքի, բերում մանրամասներ նրա գործունեության, ապրած տարիների, թաղման տեղի, իշխանությունը իր որդուն՝ Կոստանդինին թողնելու մասին։ Մեծ հավանականությամբ, կարծում ենք, նույն հեղինակին պետք է վերագրել նաև Կոստանդինի մահվան մասին վկայությունը, որը հետաքրքիր է նաև Ռուբենի գործունեությունը գնահատելու առումով։ «ՌՃԻ. ի ՇԽԹ. թվին... մեռալ իսկ և թաղեցաւ ընդ հօրն իւրում ի սուրբ ուխտն Կաստաղօն»¹³։ Սրան կանոնադրական ստորև։

Մինչդեռ «Եւ գիտել պարտ է վասն իշխանացն Ռուբինեանց, որք յետոյ թագաւորեցին ի Միս, զի զանազան կերպիւ պատմեն վիպասանքն զԺամանակ և զթիւ ամաց նոցա» հաստատելիս որոշակի երևում է, որ երկրորդ ընդմիջարկության հեղինակի աղբյուրները բազմազան են, ուշ շրջանի, և տարբեր կերպ են հաղորդում իշխանների ու թագավորների իշխած տարիների և նրանց գործունեության մասին։ Ավելին, պարզ երևում է, որ այս հեղինակը ոչ միայն այլ անձնավորություն է, այլև ծանոթ չէ նախորդ հեղինակին, այլապես Ռուբենի մասին չէր գրի. «Եկեալ ի գիւղն՝ Կոռմօզօլօ և առեալ զլեռնային կողմանսն և զկնի սակաւ ամաց մեռանի, և որքան՝ չէ յայտ»։

Ե՞րբ է կատարվել առաջին ընդմիջարկությունը՝ ճշգրիտ որոշել հնարավոր չէ,

¹¹ Քասունի, էջ 35։

¹² Հրատարակված բնագրում ՇԼԵ, որը բացահայտ գրչական սխալ է։ Ինչ վերաբերում է ՌՀԷ եւ ՇԻԵ թվականներին, ապա դա տոմարագիտական շփոթի հետեւանք է, քանզի մի դեպքում այն բերված է փրկչական, մյուս դեպքում՝ Հայոց մեծ տոմարի հաշվարկով, որը նման շեղումներ թույլ է տալիս։

¹³ Սամուել Անեցի, էջ 121։

սակայն այնտեղ եղած մանրամասն և վստահ հաղորդումները հիմք են տալիս ենթադրելու, որ այն կատարվել է իրադարձություններին մոտ ապրած և լավատեղյակ անձի կողմից: Ուշագրավ է, որ հետագա հեղինակների հաղորդումները եթե ուղղակի չեն կրկնում, ապա նաև չեն ժխտում սույն հեղինակի արձանագրած իրադարձությունները: Մինչդեռ երկրորդ ընդմիջարկության հեղինակը ոչ միայն ուշ շրջանի անձնավորություն է, այլև մեկը, որը լուրջ քննության է առել իր ունեցած բազմաթիվ աղբյուրները, կատարել տոմարական հաշվարկներ և համեմատություններ հունական աղբյուրների հետ: Շարունակության մեջ նա կրկնում է, որ որոշ հեղինակներ Ռուբենի և Կոստանդինի իշխած տարիները համարում են 26 տարի, և որ ինքը համաձայն չէ մի շարք հեղինակների հետ, քանզի նրանց տվյալները չեն համապատասխանում հունական կայսրերի իշխած տարիների հետ: Ընդ որում գրելով, թե «Լևոն Ժ. ամ պարոն և ԻԲ. ամ ևս թագաւոր, և զկնի այլքն կարգաւ...»¹⁴, պարզորոշ ցույց է տալիս իր շատ ուշ շրջանի հեղինակ լինելը: Երկրորդ հեղինակը, ի տարբերություն առաջինի, Ռուբենի բնակավայրի Կոլիմոգոլո անվանման փոխարեն օգտագործում է Կոռնոգոլո տարբերակը՝ ինչպես ուշ շրջանի հեղինակները: Բացի այդ, եթե մենք չգիտենք երկրորդ հեղինակի ով և որտեղացի լինելը, ապա առաջին ընդմիջարկության հեղինակը ակնարկում է իր կիլիկեցի լինելը՝ գրելով. «Գնաց թագաւորն Գագիկ ի Տարսուս առ Աբղարիբ իշխանն հայոց վասն խնամութեան և ի դառնալն մեր յԱռճիաս՝ կալան գնա իշխանքն յունաց և խեղդեցին գնա...»¹⁵:

Վերջապես հարկ է նշել, որ երկրորդ ընդմիջարկության հեղինակը թերևս միակն է, որը բոլորովին չի անդրադառնում Ռուբինյանների ծագման հարցին: Կարծում ենք, ասվածը բավարար հիմք է տալիս պնդելու, որ երկրորդ ընդմիջարկությունը որևէ առնչություն չունի առաջինի հետ, հետևաբար դույզն իսկ չափով չի կարող հերքել առաջին ընդմիջարկության հավաստի լինելը:

Արդ, տարանջատելով Սամվել Անեցու ժամանակագրության մեջ եղած ընդմիջարկությունները, այժմ, օգտվելով Քասունու կատարած մանրագնին ուսումնասիրությունից, հակիրճ անդրադառնանք Ռուբենի Բագրատունիների, Արծրունիների, իսկ ըստ որոշ աղբյուրների՝ նաև Հայկազունիների հետ ունեցած ազգականության խնդրին:

Ո՞վ էր Ռուբենը: Ինչպես ասվեց, ըստ Անեցու ժամանակագրության՝ «իշխան մի արեանառու Գագկայ», որ ինքնին նշանակում է մեծ իշխան: Ըստ Ուռհայեցու մոտ եղած ընդմիջարկության և Սմբատ Գունդստաբլի, Ռուբենը ոչ միայն Գագիկի իշխաններից է, այլև մեծ իշխաններից, քանզի եթե նրա որդի Կոստանդինի մասին օգտագործվում է «մեծատոհմիկ», «մեծ իշխան» ածականը, բնականաբար դրանք վերաբերում են առաջին հերթին Ռուբենին: Գրեթե նույնը կրկնում է Վարդան Արևելցին: Արքունի մատենագիր Վահրամ Բաբունին, ինչպես և նկատում է Քասունին, գրեթե կրկնում է Սամվել Անեցուն, գրելով «արեանառու Գագկայ... Մեծն Ռուբեն»: Կոռնիկոսի իշխան Հեթում պատմիչը Ռուբենին համարում է «Ռուբեն Մեծն ազգական ոմն եւ իշխան թագաւորին Հայոց Գագկայ»:

¹⁴ Սամուել Անեցի, էջ 136:

¹⁵ Անդ, էջ 116: Հենց միայն այս փաստը բավական էր հասկանալու համար, որ հաղորդում կատարողը Անեցին չէ, այլ անանուն կիլիկեցի է:

Մխիթար Այրիվանեցին Ռուբենին համարում է Սասնեցի իշխան: Ըստ Հեթում Բ - թագավորի՝ Ռուբենը Գագիկի ազգականն է: Նույն Հեթում Բ թագավորի Ճաշոցի հիշատակարանում ասվում է. «Մեծափառ ոմն իշխան իշխանաց ի սեռե՛ թագաւորութեանն, արեանառու մեծին Գագկայ Ռուբեն անուն»: Ներսէս Պալիանենց՝ «Ռօպինացիք, որք էին ազգի եւ յարմատոյ թագաւորացն հայոց... ազգական Գագիկ թագաւորին»: ԺԷ դարի անանուն ժամանակագիր՝ Ռուբենը Գագիկի ազգական: Նույն դարի հեղինակ Մարտիրոս Դրիմեցի՝ «Պարոն Ռուբեն զարմէ Գագկին»:

Եվ, վերջապէս, կան հեղինակներ, որոնք Ռուբենին համարում են սերված Արծրունիներից, կամ Արծրունիներից և Հայկազուններից միաժամանակ: Այս շարքում, կարծում ենք, հատուկ ուշադրության պէտք է առնել Կիրակոս Գանձակեցու վկայությունը Ռուբենի և Ռուբինյանների ծագման մասին: Անշուշտ, Գանձակեցու մոտ Ռուբինյանների ծագման մասին եղած գրույցը գիտական առումով չի կարելի լուրջ ընդունել, քանզի այնտեղ ժողովրդական գրույցի մեջ խառնված են մի շարք փաստեր, որոնք վերաբերում են Գագիկի կողմից Կեսարիայի Մետրոպոլիտ Մարկոսի սպանությանը և հենց Գագիկի սպանությանը, ապա նաև Գագիկին սպանող Մանդայան եղբայրներից Թորոս Ա իշխանի վրեժխնդիր լինելուն: Առավել իրական է հնչում նրա հաղորդումը թուրքական արշավանքներից հետո հայ ավատատերերի հեռանալու և Կիլիկիայում ու մերձակա տարածքներում հաստատվելու մասին, որոնց մեջ էին նաև Ռուբինյանները՝ «Մերեալ թագաւորագունք»: Ընդ որում, Գանձակեցին Ռուբենին համարում է «յազգականութենէ եւ ի զօրացն Գագկայ Արծրունեաց», իսկ մեկ այլ ընթերցմամբ՝ «...ի զաւակացն Գագկայ Արծրունեաց»: Դժվար չէ նկատել, որ Գանձակեցու մոտ այս հատվածում ևս շփոթ կա, քանզի եթե Ռուբենի ազգակցական կապը Գագիկ Արծրունու հետ միանգամայն տրամաբանական է, ապա նրա՝ «ի զաւակացն կամ ի զօրացն» լինելը բացառվում է: Գագիկ Արծրունին մահացել է Ժ - դարի առաջին կեսին, մինչդեռ Ռուբենը ծնվել ու գործել է ԺԱ դարում: Բացի այդ, Հայոց թե՛ Բագրատունյաց և թե՛ Արծրունյաց թագավորներն ու իշխանները Մեծ Հայքից արտագաղթել են ԺԱ դ. առաջին կեսին, հետևաբար Ռուբենը չէր կարող ո՛չ Գագիկ Արծրունու զավակը և ո՛չ էլ նրա զորավարը լինել:

Սակայն մեր այն ենթադրությունը, թե Գագիկ Արծրունու հետ Ռուբենի ազգակցության հարցը միանգամայն տրամաբանական է, որոշակի ուժ է ստանում Սամվել Անեցու Ժամանակագրության Մատենադարանի թիվ 7261 և թիվ 10202 ձեռագրերով, որոնց մեջ, Թորոս իշխանի՝ Գագիկ Բ-ին սպանողներից վրեժխնդիր լինելու և իշխանությունը վերականգնելու մասին պատմելուց հետո, կա հետևյալ ուշագրավ հաղորդումը. «Այս Թորոս իշխան եւ եղբայր իւր Ստեփանէ, որդիք էին Լեւոնի իշխանին, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, թոռունք Գագկայ Արծրունեաց»¹⁶:

Նկատի առնելով, որ այս հատվածը համառոտագրությունն է Կիրակոս Գանձակեցու պատմության մեջ նույն խնդրին վերաբերող երկու տարբերակներով մեզ հասած «ի զօրացն» կամ «ի զաւակացն Գագկայ Արծրունեաց» անընդունելի տարբե-

¹⁶ Մատենադարան, ձեռ. թիվ 7261, էջ 58ա, Մատենադարան, ձեռ. թիվ 10202, էջ 61բ: Խորին շնորհակալություն ենք հայտնում Մատենադարանի ավագ գիտաշխատող Կարեն Մաթևոսյանին, որ մեր ուշադրությունը հրավիրեց սույն խնդրի վրա:

րակների¹⁷, հարկ է ենթադրել, որ ժամանակին սույն ընդմիջարկությունը կատարողներին ծանոթ է եղել Կիրակոս Գանձակեցու առավել ճիշտ և միանգամայն ընդունելի ընթերցումը:

Ուշադրության արժանի է նաև ԺԷ դարի հեղինակ Դավիթ Բաղիշեցու հաղորդումը, քանզի նշելով հայոց արքայական հարստությունների՝ Հայկազունիների, Արշակունիների, Բագրատունիների մասին, շարունակության մեջ ասվում է. «Չորրորդ՝ այժմ յԱրծրունեաց խառնեալ խնամութեամբ ընդ Հայկազունուն»¹⁸: Բնական է, որ Բաղիշեցին մեջբերում է անում Կիլիկյան թագավորության շրջանում ապրած հեղինակից:

Այսպես, ուրեմն, հակառակ աղբյուրների տարբեր վկայություններին, նրանցում լուրջ հակասություններ չենք գտնում գոնե Ռուբենի ծագման մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ Ռուբենին վերագրվում է Հայկազունիների և Սենեքերիմյան խնամիության ծնունդ: Բոլոր աղբյուրները վկայում են, որ Ռուբենը Գագիկի իշխաններից էր, ընդ որում՝ մեծագլխի ծնունդ, քանզի, կրկնենք, երբ Սմբատ Սպարապետը Ռուբենի որդի Կոստանդինի մասին է նշում «իշխան ոմն մեծագլխի, յիշխանացն Գագկայ, Կոստանդին անուն», մի՞թե պարզ չէ, որ նույնը վերաբերում է նրա հորը՝ Ռուբենին¹⁹:

Ինչ վերաբերում է օտար աղբյուրներից Միքայել Ասորու հաղորդմանը հայ իշխանների Կիլիկիայում հաստատվելու մասին, ապա եթե բացառում ենք հետագա ընդմիջարկությունները, որոնք ինքնին հետաքրքրություն են ներկայացնում, քանզի այնտեղ ևս խոսվում է Ռուբինյանների իբրև հայոց արքայազունների մասին, ընդ որում խոսվում է իբրև վասպուրականցի արքայազունների, ինչպես այն հեղինակները, որոնք Ռուբինյաններին վասպուրականցի, այսինքն՝ Արծրունիներից են սերված համարում: Մնացալը մի ընդհանուր խոսք է պատմական և ժամանակագրական մի ընդարձակ շրջանի մասին: Ասել է, թե Միքայել Ասորու հնագույն բնագիրը ապացույց է, թե հեղինակը միայն շատ ընդհանուր տեղեկություններ է հայտնում ԺԱ դ. վերջի և ԺԲ դ. սկզբի իրադարձությունների մասին, գրելով, թե՝ «Այդ ժամանակ կային հայեր, որոնք Փիլարտոսի ժամանակներից զբաղեցրել էին մի շարք տարածքներ: Նրանցից մեկը Գող Վասիլն էր՝ Քեսունի և Ռաբանի տիրակալը: Կային նաև հայեր, որոնք տիրում էին Կիլիկիայում մի շարք վայրերի, նրանց կոչում էին Ռուբինյաններ»²⁰:

Արդ, այս ամենը ի մի բերելուց հետո աչքի է զարնում մի էական հանգամանք: Բոլոր այն հեղինակները, որոնք խոսում են Ռուբենի՝ Գագիկ Բագրատունու հետ ունեցած առնչության մասին, նշում են Ռուբենի՝ Գագիկի իշխան լինելու կամ նրա հետ արյունակցական կապ ունենալու՝ «արենառու» լինելու մասին: Մինչդեռ այն հեղինակները, որոնք խոսում են Ռուբենի՝ Արծրունիների, իսկ ավելի որոշակի՝ Սենեքերիմ արքայի և Հայկազունիների հետ առնչության մասին, առանց երկմտանքի նրան համարում են արքայազուն:

Կարծում ենք, այս թնջուկը մասամբ հնարավոր է պարզել՝ քննության առնելով

¹⁷ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 109:

¹⁸ Քասունի, էջ 24:

¹⁹ Սմբատ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1856, էջ 101-102. տե՛ս նաև Քասունի, էջ 13:

²⁰ Միքայելյան, էջ 83-84:

ձեռքի տակ եղած այն փաստերը, թե ազգակցական ինչ կապերով էին շաղկապված հայոց Բագրատունյաց, Արծրունյաց, Հայկազունի (Սյունյաց) արքայական տները և ինչ հարաբերության մեջ էին նրանք հայրենիքից հեռացվելուց հետո: Ցավոք, եթե այսօր հնարավոր չէ մանրամասն փաստել այդ հարաբերությունները, այնուամենայնիվ ուրուշակի տեղեկություններ հայ արքայական ու իշխանական տների ազգակցական կապերի մասին պատմիչները հաղորդում են: Հայտնի է, որ Սյունյաց մեծ իշխան Վասակ Գաբուրը ամուսնացած էր Աշոտ Ա Բագրատունու դուստր Մարիամի հետ, և, ինչպես Ստեփանոս Օրբելյանն է հայտնում՝ «Վասակը փառքով ու իշխանությամբ իր նախնիներից անցավ՝ խառնվելով Բագրատունի թագավորող տոհմին»²¹:

Սյունյաց գահերեց իշխան, ապա և թագավոր Սմբատը ամուսնացած էր Արծրունի Գրիգոր-Դերենիկի դուստր Սոփայի հետ²²: Իր հերթին Գագիկ Ա Բագրատունին փեսայացել էր Սյունյաց Հայկազունի թագավոր Սմբատի և Աղվանից մեծ իշխան Սևադայի դստեր՝ Շահանդուխտից ծնված Վասակ թագավորի աղջիկ Կադրամիտեի հետ²³: Գագիկ Բ-ն փեսայացել էր Սենեքերիմ Արծրունուն²⁴: Անգամ այս մի քանի օրինակը բավարար են, որպեսզի մեծ վստահությամբ ընդունենք Միքայել Ասորու ժամանակագրության մեջ առկա այն ընդմիջարկությունը, թե «Այդ ժամանակները հայոց արքայազունները որք Վասիլ կայսեր օրոք եկած էին Վասպուրականէն եւ բնակած Մեքաստիա, Կեսարիա և Խալատանէքն, և բռնացեալ ունէին տեղեր, մտան Կիլիկեցւոց երկիրը: Անոնցմէ ոմանք Ռուբենեանք կոչւած, որոնք մեծամեծ զարմերէն էին՝ Հայկազունք և Սենեքերիմեանք. խնամութեամբ իրարու խառնուած, որոնք կը թագաւորէին Վասպուրականի վրայ՝ մինչ Բագրատունիք Մեծ Հայքի վրա կը թագաւորէին, եւ հիմա սկսան տիրել Կիլիկեցւոց երկրին եւ (ապա) թագաւորեցան արիական քաջութեամբ: Ռուբեն նաև, եւ Կոստանդին եւ Լեւոն ու Թորոս, եւ այլք մի ըստ միոջէ»²⁵:

Դեռ առիթ կունենանք անդրադառնալու Ռուբենի՝ Արծրունի ծագման խնդրին, սակայն չափազանց կարևոր է ճշտել, թե ինչ հարաբերություններ գոյություն ունեին հայրենիքից աստանդական դարձած Բագրատունյաց և Արծրունյաց արքայական տների միջև:

Հայտնի է, որ Արծրունիները հայրենի Վասպուրականից հեռացան Սենեքերիմ թագավորի գլխավորությամբ 1021 թվականին, մինչդեռ Գագիկ Բագրատունին երկրից հեռացվեց 1041 թվականին, սակայն, ինչպես պարզվում է Ուռհայեցու չափազանց արժեքավոր հաղորդումից՝ կապված բյուզանդական Դուկաս Թ կայսեր Հայոց Եկեղեցու դեմ սանձազերծած նոր հալածանքների մասին, բյուզանդական տարածքներում հաստատված արքայազուն իշխաններն ու հոգևորականները հայությանը և Հայ Եկեղեցուն վերաբերող հարցերում անվերապահ ընդունել են Գագիկի գերագա-

²¹ **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, աշխատասիրությամբ և թարգմանությամբ Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 172-173 (այսուհետ՝ Օրբելյան): Այն դեպքերում, երբ առկա են սկզբնաղբյուրի գիտական բարձրակարգ թարգմանություններ, հղում ենք այդ հրատարակությունները, որոնք ավելի մատչելի են բազմաթիվ ընթերցողների համար:

²² Գնդեվանքի կառուցողը. **Օրբելյան**, էջ 232:

²³ Անիի Մայր տաճարի կառուցումը ավարտին հասցնողը. անդ, էջ 256-258:

²⁴ **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, թարգմանությունը Հ. Մ. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 105 (այսուհետ՝ Ուռհայեցի):

²⁵ **Մ. Ասորի**, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ 411:

հույությունը:

Դուկաս կայսեր պահանջին, թե՛ «Մեր թագավորական հրամանն է, որ դուք և Հայոց երկրի բոլոր իշխանները ընդունեք մեր հոռոմոց ազգի հավատո կնիքը», Մենեքերիմ Արծրունի արքայի որդիներ Ատոմը և Ապուսահլը պատասխանում են. «Մենք առանց Գագիկի՝ Աշոտի որդու, ոչինչ անել չենք կարող. նա մեր փեսան, քաջ է և թագավոր: Մարդ ուղարկիր և նրան այստեղ հրավիրիր, որովհետև եթե մենք առանց նրան որևէ բան անենք, նա հենց մեր գավառում մեզ ողջակեզ կանի»²⁶:

Ինքը՝ Գագիկը ևս Կոստանդնուպոլսում փայլուն կերպով պաշտպանելով Հայոց Եկեղեցու դավանանքը, միաժամանակ կայսեր ներկայությամբ հայտարարում է. «Ես թագավոր եմ, հայոց թագավորների զարմ, բոլոր հայերն իմ հրամաններին են ենթարկվում: Ես քաջագիտակ եմ Աստծո Կտակարաններին, թե՛ Հին և թե՛ Նոր, բոլոր հայերը կհաստատեն իմ ասածը, քանզի ինձ դասում են վարդապետների շարքին»²⁷: Ինչպես հաղորդում են աղբյուրները, Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո Գագիկը փաստորեն վարում էր բացարձակ հակաբյուզանդական քաղաքականություն և ձգտում էր ազգակցական կապեր ստեղծել նաև Արծրունի մեկ այլ իշխանի՝ Ապլղարիայի հետ, որը Մենեքերիմի հետ տեղափոխվելով Սեբաստիա՝ Կոստանդին Մոնոմախ կայսրից ստացել էր Տարսոնի, Մամեստիայի, Ադանայի, Պապեռոնի և Լամբրոնի կառավարումը²⁸: Հավանաբար Գագիկի՝ Բյուզանդիայից անկախ քաղաքականությունից սարսափած՝ Ապլղարիայը չհամաձայնեց խնամիական կապեր հաստատել Գագիկի հետ:

Ստացվում է այնպես, որ Արծրունիների Մենեքերիմյան ճյուղը, որը ազգակցական սերտ կապերի մեջ էր Բագրատունիների հետ, ընդունում էր Գագիկի գերագահությունը, մինչդեռ Ապլղարիայի ճյուղը խուսափում էր նրանից: Թերևս դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ Գագիկի սպանությունից հետո Ռուբենը թողնում է Ապլղարիայի տարածքներում գտնվող Կոստանու կամ Կոպիտառ ամրոցը, ապստամբում է Բյուզանդիայի, հետևաբար՝ նաև Ապլղարիայի դեմ, և հետանալով Կիլիկիայի լեռնային մասերը՝ հիմք դնում իր իշխանությանը, այնտեղից քշելով բյուզանդացիներին, և նրանց տիրությունները գրավում: Որ իսկապես Գագիկի նկատմամբ հայոց գրեթե բոլոր արքայազունները և իշխանները գտնվում էին ստորադաս վիճակում, հաստատվում է նաև Ուռհայեցու այն հաղորդումով, թե ինչպես Գագիկի ձերբակալումից հետո, «Ուր օր անց հայոց բովանդակ երկիրը՝ Աբասի որդի Գագիկը (Կարսի նախկին թագավորը), Մենեքերիմի ողջ տոհմը՝ Ատոմն ու Ապուսահլը, և հայոց մյուս իշխանները ելան բերդի դեմ: Մի քանի օր կռիվ մղեցին, բայց ոչինչ չկարողացան անել, որովհետև բերդը շատ անառիկ էր»²⁹:

Սակայն, անկախ վերը նշված հաղորդումներից, զարմանք է հարուցում այն իրողությունը, որ Ռուբինյանների ծագմանը անդրադարձած ուսումնասիրողներից ոչ ոք քննության չի առել ԺԳ դարի մեծագույն գիտնական վարդապետ Հովհաննես Պլուզ Երզնկացու այդ առթիվ քանիցս ասված մտքերը: Երզնկացին, ավելի քան որևէ այլ

²⁶ Ուռհայեցի, էջ 105:

²⁷ Անդ, էջ 106:

²⁸ Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 674:

²⁹ **Ուռհայեցի**, էջ 144: Կարծում ենք, ուշագրավ է, որ այս շարքում բացակայում է Ապլղարիի անունը:

հեղինակ, ո՛չ միայն մի քանի անգամ է խոսում այդ մասին, այլև շատ ավելի հանգամանակից, որը, կարծում ենք, իսկապես կարող է լուծել Ռուբինյանների առնչությունը ինչպես Բագրատունիների, այնպես էլ Արծրունիների հետ: Խնդիրն այն է, որ եթե, հրատարակված չլինելու պատճառով, Երզնկացու մի շարք անդրադարձները Ռուբինյանների ծագմանը անձանոթ են եղել ուսումնասիրողներին, ապա ուղղակի անհասկանալի է, որ ուսումնասիրողներից ոչ ոք չի անդրադարձել 1275 թ. Երզնկայում Ներսես Մեծի նշխարների գյուտին նվիրված՝ Հովհաննես Երզնկացու նշանավոր ճառին, որն իր ժամանակին «Սոփերքում» հրատարակված, գնահատված և անգամ ծանոթագրված է³⁰:

Երզնկացին շատ ջերմ հարաբերություններ է ունեցել Կիլիկյան արքունիքի և հոգևոր իշխանությունների հետ, բազմիցս եղել է այնտեղ: Լևոն Գ, Հեթում Բ արքաների, ինչպես և կաթողիկոսների և բարձրաստիճան այլ հոգևորականների հորդորներով գրել է ճառեր ու քարոզներ, Երզնկայում գտնված ժամանակ հորդորական նամակ է հղել Կիլիկյան իշխաններին³¹, իսկ ավելի ուշ՝ իր կյանքի վերջին տարիներին, գտնվելով Կիլիկիայում, ավարտին է հասցրել իր նշանավոր «Հաւաքումն Մեկնութեան քերականի» նշանավոր ուսումնասիրությունը³²:

Առաջին անգամ Երզնկացին այդ հարցին անդրադառնում է 1275 թ. Երզնկայի Թիլ ավանում Ներսես Մեծի նշխարների գյուտի առիթով:

Նշխարների գյուտը դիտելով որպես նշան Հայաստանի և Հայոց Եկեղեցու փրկության՝ ցնծությամբ դիմում է Լևոն Գ թագավորին՝ շնորհավորելով նրան, որ հենց իր թագավորության օրոք տեղի ունեցավ այդ հայտնությունը. «Սուրբն Ներսէս, սինն լուսոյ և խարիխսն անշարժելի հաւատոյ, ամենառատ բարեաց ճոխութիւն, և ամենագիւտ գանձուց փարթամութիւն, շնորհեցաւ այսօր Հայաստանեաց արքայական աթոռոյդ, զի յաջողակ Աջոյն Յիսուսի եղև քեզ զօրութիւն, և զօրութեամբ բազկին բարձրելոյ թագաւորական փառաց քոց բարձրութիւն և ի Տեառնէ տուաւ թագաժառանգ զարմիտ Արծրունեաց յաղթութիւն: Զի թէպէտ դասիւ վերջին ըստ ժամանակի, այլ զօրութեամբ և պատուով առաջինն ըստ հաստատութեան հաւատոյ, Արշակունեաց թագին թագընկալ, և Բագրատունեաց փառացն փոխանորդ, ծնունդ ազնուական տոհմին Արծրունեաց, ամենակալ արքային Յիսուսի անեղական և աննման փառացն պատկեր և կերպարան եղական»: Այնուհետև նշելով, որ նշխարների գյուտը տեղի է ունեցել 1275 թվականին՝ «Ի հայրապետութեանն Հայոց տեառն Յակոբայ հոգեշնորհ վարդապետի, ի թագաւորութեանն Հայոց Լևոնի», շարունակում է. «Որդոյ Հեթում և թոռին քաջին Լևոնի, որդոյ Ստեփանեայ, որդոյ Լևոնի, որդոյ Ռուբենի մեծի իշխանին, որ էր ի զօրացն Բագրատունեաց, և ազգէ նորին և ի տանէ և ի տոհմէ Արծրունեաց, որ և մեր պսակաւորն զերկուցն ունի թագաժառանգ ազգաց զազգականութիւն»:

Ուշադրության առնենք այն հանգամանքը, որ այս ամենը Երզնկացին գրում է այն ժամանակ, երբ դեռ կենդանի էր նշանավոր գորավար, պատմիչ և իրավագետ Կոս-

³⁰ «Պատմութիւն յայտնութեան նշխարաց Սրբոյն Ներսիսի», Սոփերք հայկականք, հտ. Զ, Վենետիկ, 1853, 32-80:

³¹ Տե՛ս Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977 թ., էջ 204-205:

³² Լ. Խաչերյան, Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս Անջելոս, 1989, էջ 299-300:

տանդին Գունդատաբլը, որը ևս Ռուբենին համարում է Գագիկ Բ-ի իշխաններից և մեծատոհմիկ իշխան: Երզնկացին Կիլիկյան արքունիքի հետ գրեթե երկու տասնամյակ տևած հարաբերությունների ընթացքում այլ առիթներով ևս, ուղղակի կամ անուղղակի, անդրադառնում է Ռուբինյանների ծագման հարցին:

1284 թվականին գտնվելով Կիլիկիայում՝ Լևոն արքայի և կաթողիկոսի հանձնարարությամբ (Քրիստոսի Ծննդյան տոնի առթիվ) կարդում է իր նշանավոր ճառերից մեկը՝ «Ամենայն մարդ որ ընդ իշխանութեամբ է՝ ի հնազանդութիւն կացցէ, յաւուրն յորում օրհնեցան ձիաւորք արքայորդիքն մեր Հեթում և Թորոս և այլք մանգունք իշխանաց և յարքունական սպասաւորացն» վերտառությամբ: Խոսելով արքայորդիների և այլ իշխանագունների ասպետական տիտղոսին արժանանալու առթիվ ընդհանուր ցնծության մասին, անուղղակի ակնարկ է անում Ռուբինյանների ծագմանը՝ գրելով. «Ուրախանան և նախնիքն սուրբ և արքայագունքն առաջինք, արմատքն և սկիզբն թագաւորութեան Հայոց, սերունդքն որ Ռուբինեաց և թագիւ պսակեալքն որ ի նոցունց»³³: Ինչպէս ասվեց, վերջին անգամ Հովհաննէս Երզնկացին Ռուբինյանների ծագումնաբանությանը անդրադառնում է իր մահից քիչ առաջ: 1291 թ. մեկնելով Կիլիկիա, ուղղակի իր կյանքի վերջին օրերին Հեթում Բ թագավորի պատվերով գրում և ավարտում է «Հաւաքումն մեկնութեան քերականի» նշանավոր ուսումնասիրությունը, որին կցած ընդարձակ հիշատակարանում գրում է. «Արդ, վերնական եւ աստուածային բարեացն ի կերպ կազմածին ստուգապէս պատկերագրաւոյն, բարեպաշտութեան և իմաստութեան տիրապէս տարփաւորն աստուածասէր թագաւորն Հայոց Հեթում, որդի Լեոնի բարեպաշտի, որդւոյ իմաստուն արքային Հեթմոյ՝ հաւր եւ մաւր Զապէլի սրբոյ թագուհւոյ՝ դստեր առաջին պսակաւորին Լեոնի, որդւոյ Ստեփանեայ, որդւոյ Լեոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռոբէնի Մեծի իշխանին: Յերկուց թագաւորական ցեղիցն սերեալ զարմի՝ ի Բագրատունւոյն եւ յԱրծրունւոյն, յայսոսիկ թագընկալեաց եւ իշխանաց բարձրագահից բողբոջ բարեպաշտութեան բուսեալ և ծաղիկ զարնանոյ ի ձմերացեալ ժամանակիս երեւեալ սաղարթաւոր եւ բազմոստեան...»³⁴:

Կարծում ենք, Հովհաննէս Պլուզ Երզնկացու՝ քննախույզ ականավոր գիտնական վարդապետի, որը երկար տարիներ ապրել և գործել է Կիլիկիայում, վայելել Լևոն Գ, Հեթում Բ արքաների և կաթողիկոսների ջերմ վերաբերմունքը և, բնականաբար, օգտվել և՛ արքայական, և՛ կաթողիկոսական արխիվներից, հաղորդումները մեզ բավարար հիմք են տալիս պնդելու, որ իսկապէս Ռուբեն Ա-ն ազգակից և արյունակից է եղել ինչպէս Բագրատունիներին, այնպէս էլ Արծրունիներին: Հատկապէս կարևորում ենք Երզնկացու հետևյալ արտահայտությունը. «Յերկուց թագաւորական ցեղիցն սերեալ զարմի՝ ի Բագրատունւոյն եւ Արծրունւոյն, յայսոսիկ թագնկալեաց եւ իշխանաց բարձրագահից բողբոջ բարեպաշտութեան բուսեալ...»:

Վերջապէս՝ դատելով Երզնկացու նախորդ հաղորդումից, թե Ռուբեն մեծ իշխանը

³³ Մատենադարանի ձեռ. 2173, էջ 88բ: Այս առիթով նշենք, որ ինչպէս այս ճառում, այնպէս էլ այլուր Երզնկացին ևս, ինչպէս և բազմաթիվ այլ հեղինակներ, խոսելով Ռուբինյան թագավորների մասին, նրանց համարում է «Մեր թագավորներ», ինչը մեկ անգամ ևս հաստատում է Ալիշանի այն կարծիքը, թե Լևոն Գ-ից սկսած «թագավոր ամենայն հայոց» տիտղոսը վերաբերում էր նաև բուն Հայաստանին, և մերժում այն տեսակետը, թե դա վերաբերել է միայն Լևանտի երկրում ապրող հայերին:

³⁴ Լ. Խաչերյան, Յովհաննէս Երզնկացի, «Հաւաքումն մեկնութեան քերականի», Լոս Անճելոս, 1983, էջ 299-300:

«ի զօրացն և յազգէ» Բագրատունյաց էր և «ի տանէ եւ ի տոհմէ Արծրունեաց», պետք է ենթադրել՝ Արծրունի ծագումով իշխանը մոր կողմից եղել է «արեանառու», արյունակից Գագիկ Բ Բագրատունուն:

Այժմ փորձենք համառոտակի անդրադառնալ նաև Ռուբեն Ա-ի գործունեությանը: Նախապես նշենք, որ թվարկած երկու պատմաբաններից Գ. Միքայելյանը, մերժելով հանդերձ Ռուբենի հայ արքայական տների հետ ունեցած ազգակցությունը, հենվելով Մամուել Անեցու ժամանակագրության մեջ եղած առաջին ընդմիջարկության, ինչպես և Վահրամ Բաբունու ժամանակագրության և Սմբատ Սպարապետի պատմության հաղորդումների վրա, ընդունում է, որ Ռուբենը մինչև Բյուզանդիայի դեմ ըմբոստանալը տիրում էր Կապիտառ ամրոցին, և նրա գործունեության կարևորագույն քայլ է համարում այն, որ Ռուբենը ընդարձակեց իր տիրույթները Կիլիկիայում բնակվող հայերի հակաբյուզանդական պայքարի շնորհիվ³⁵:

Ռուբենի գործունեության մասին շատ ավելի մերժողական է Քասունու գնահատականը: Ձգտելով Ռուբենյանների իշխանության հաստատումը կապել Փիլարտոս Վարաժնունու հետ, անտեսվում է այն փաստը, որ Գագիկ Բ-ն բարձրացրել էր հակաբյուզանդական պայքարի դրոշմ այն ժամանակ, երբ Վարաժնունին գտնվում էր Բյուզանդական ծառայության մեջ և դավանանքը փոխելով՝ արժանացել «սևաստ» բարձրագույն տիտղոսի: Մինչդեռ Գագիկը իր հակաբյուզանդական հախուռն գործունեությամբ ձգտում էր միասնական ճակատ ստեղծել բյուզանդական հալածանքների դեմ: Ուռհայեցին բավական հանգամանալից խոսելով Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո Գագիկի հակաբյուզանդական գործունեության մասին, եզրափակում է իր խոսքը հետևյալ կերպ. «Ահա Գագիկի հոռոմաց մեջ կատարածը, մի բան, որ ո՛չ նախկինում, ո՛չ էլ հետագայում որևէ մեկը համարձակվեց անել»³⁶: Անտեսված ու անբացատրելի է մնում այն հանգամանքը, թե ինչո՞ւ Գագիկի սպանությունից հետո Ռուբենը թողնում էր Կոպիտառ ամրոցը և իր ողջ գերդաստանով հեռանում Կիլիկիայի առավել անմատչելի լեռնային վայրերը, երբ Տարսունին և նրա շրջակա վայրերին տիրում էր Արծրունի Ապլդարիպ իշխանը:

Անհասկանալի ու անընդունելի է Քասունու այն պնդումը, թե «Ռուբեն եւ Կոստանդին սահման և տէր կը փոխէին: Ժամանակի իրաւակարգէն թելադրուած, անոնք ստիպուած էին ընդունելու Փիլարտոսի գերիշխանութիւնը: Գագիկի հաւատարիմ հետեւորդներուն, ու Բիւզանդիոնէն հալածական բարձրաստիճան այս հայերուն նկատմամբ Փիլարտոս չէր կրնար անտարբեր մնալ: Ջանտնք կը պահէր իր տէրութեան հարաւ արեւմտեան սահմանին վրայ, պարտն եւ պատշաճը տնօրինելով, ու անոնց վստահելով նաեւ որոշ շրջանի իշխանութեան պաշտոնը»³⁷:

Ի՞նչ տէր փոխելու մասին է խոսքը, երբ Գագիկի սպանությունից հետո Ռուբենյանները, իրենց վտանգված զգալով, իրոք հեռանում են Կիլիկիայի իսկապես առավել անմատչելի վայրերը և հիմք դնում սեփական իշխանության: Սակայն վերադառնանք Ռուբենի գործունեությանը: Ինչպես վերը նշեցինք՝ Անեցու ժամանակագրությամբ

³⁵ Գ. Միքայելյան, էջ 87:

³⁶ Ուռհայեցի, էջ 120:

³⁷ Քասունի, էջ 71:

յան մեջ եղած ընմիջարկությունները կատարված են տարբեր անձանց կողմից, տարբեր ժամանակներում, սակայն Ռուբեն իշխանի գործունեության մասին նրանց հաղորդումները համահունչ են: Եթե առաջին ընմիջարկության հեղինակը մանրամասն նկարագրում է Ռուբենի հեռանալը Կոլիմոզոլ, այնտեղից հույներին հեռացնելն ու նրանց տարածքները գրավելը, ապա ավելի հակիրճ, բայց նույնը կրկնում է նաև երկրորդ ընմիջարկության հեղինակը՝ գրելով, թե Ռուբենը Գագիկի սպանությունից հետո «եկեալ ի գիւղն Կոռօմօզօլ»³⁸ և առեալ զլեռնային կողմանս...»³⁸:

Ռուբենի գործունեությունը հաստատող մեկ կարևոր փաստ ևս անտեսվում է: Խնդիրն այն է, որ Անեցու ժամանակագրության ընմիջարկության մեջ Կոստանդին իշխանի մահվան վերաբերյալ կա հետևյալ կարևոր հաղորդումը, «...որ և մեռաւ իսկ և թաղեցաւ ընդ հօրն իւրում ի սուրբ ուխտն Կաստաղոն»³⁹: Դժվար չէ նկատել, որ Կաստաղոնը գտնվում է Վահկայի անմիջական մոտակայքում, և եթե Ռուբենն այնտեղ է թաղվել, նշանակում է՝ նրա կենդանության օրոք արդեն այդ տարածքները գրավված էին Ռուբենի կողմից:

Ռուբենի գործունեությունը անտեսելու փաստարկ է համարվում այն հանգամանքը, թե պատմիչները Կիլիկիայում Ռուբինյան իշխանության հաստատումը վերագրում են ոչ թե Ռուբենին, այլ նրա որդի Կոստանդինին: Նախ, ինչպես նկատեցինք, այդպես չէ. թեև սուղ, բայց որոշ փաստեր խոսում են այն մասին, որ Ռուբենը եկավ հաստատվեց Կիլիկիայի լեռնային մասերում և սկիզբ դրեց իր իշխանությանը: Ինչ վերաբերում է պատմիչների մեծ մասի առավելապես Կոստանդինի մասին տվյալներ հաղորդելուն, կարծում ենք՝ դա պարզ բացատրություն ունի. Կոստանդինը ոչ միայն ընդարձակեց իր հոր իշխանությունը, այլև գրավեց Կիլիկիայի ամենահեռավոր բերդերից մեկը՝ Վահկան, որի գրավումը համագոր էր ողջ լեռնային Կիլիկիայի տերը լինելուն, ինչպես այդ տեղի ունեցավ նաև ավելի ուշ, երբ Թորոս Բ-ի կողմից Վահկայի վերագրավումը նշանավորվեց իբրև Ռուբինյան իշխանության վերահաստատում: Սակայն Ռուբեն Ա-ն գալով Կոլիմոզոլ կամ Կոռմոզոլ և թաղվելով Ս. Կաստաղոնում, փաստորեն պաշարել էր Վահկան, որի գրավումը իրականացրեց նրա որդին: Պետք չէ անտեսել նաև այն հանգամանքը, որ Ռուբենը մահացել է այն ժամանակների համար առաջացած համարվող 70 տարեկան հասակում: Բնական է, որ իր ծերության շրջանում առավել գործոն լինեի Կոստանդինի գործունեությունը: Նկատենք, որ Սամվել Անեցու ժամանակագրության առաջին ընդօրինակության հեղինակը Ռուբենին մեծ իշխան համարելով հանդերձ, ինքն էլ նշում է Կոստանդինի կողմից Վահկայի գրավման և իշխանության հետագա ընդարձակման մասին:

Վերջապես, այն հարցի պատասխանը, թե ինչո՞ւ պատմիչները առավելապես խոսում են Կոստանդինի մասին, ինքը՝ Քասունին է տալիս իր աշխատության վերջում՝ գրելով. «Միջազգային քաղաքական դեպքերու ընթացքը սակայն պիտի օգնէ Կոստանդինի, որ ան դուրս գայ իր սահմաններէն, ու մասնակցի այդ օրերուն աշխարհը ցնցող անցուղարձերուն»⁴⁰: Եվ, իսկապես, Կոստանդինի օրոք էր, որ Կիլիկիան հայկական իշխանությունը ստացավ միջազգային լայն ճանաչում, բայց դա բնական ըն-

³⁸ Մամուլ, էջ 135:

³⁹ Անդ, էջ 121:

⁴⁰ Քասունի, էջ 81:

թացքն էր իր հոր՝ Ռուբենի իշխանության հզորացման, որ Կոստանդինից հետո էլ դեռ երկար պիտի շարունակվեր:

Ավարտելով մեր խոսքը՝ մեկ անգամ ևս նշենք, որ մեր նպատակը չէր գրախոսության ենթարկել Երվանդ Հ. Քասունու կամ մեկ այլ հեղինակի տասնամյակներ առաջ հրատարակած ուսումնասիրությունները: Մեր նպատակը եղել է ապացուցելը, որ Սամվել Անեցու ժամանակագրության, ավելի ճիշտ՝ ժամանակագրության շարունակողների մոտ եղած տարբեր ընդմիջարկությունները չեն կարող անհավաստի համարվել, և նրանցում Ռուբենի անձի և գործունեության նկատմամբ չկան հակասություններ: Վերջապես, Ռուբինյանների հայ արքայական տների՝ Արծրունիների և Բագրատունիների հետ ազգակցություն ունենալու մասին Հովհաննես Պլուզ Երզնկացու հաղորդումները, ավելի որոշակի, քան որևէ այլ հեղինակի կողմից տրված տեղեկությունները, արժանի են լուրջ ուշադրության: Քանզի եթե շարունակենք հետևելով մեծարգո հեղինակներ Գ. Միքայելյանի, Երվանդ Հ. Քասունու և այլոց պնդումին, թե Ռուբինյանների՝ Բագրատունիների ու Արծրունիների հետ ունեցած ազգակցական կապերը հետագայի հորինվածք են, ապա ստիպված պիտի լինենք պատասխանելու, թե ինչո՞ւ ամենից ավելի շահագրգռված պատմիչը, որ միաժամանակ խոշոր զինվորական, դիվանագետ և իրավագետ էր՝ Սմբատ Սպարապետը, լռում է այդ մասին: Եթե կար նման պատվեր, ապա առաջին հերթին հենց նա է, որ պետք է շեշտեր այդ հանգամանքը: Մինչդեռ նշելով, որ Ռուբենը և նրա որդի Կոստանդինը մեծատոհմիկ էին ու Գագիկ Բ-ի իշխաններից, իր և իր ժամանակակիցների համար հասկանալի է եղել նրանց ազգակցական կապեր ունենալը:

ԿԱՆՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԳԻՐՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԿԱՆՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԴԱՐԵՐԻՆ

Aram Mardirossian, Le livre des canons Arméniens (*Kanonagirk' Hayotc'*) de Yovhannés Awjnec'i: Église, droit et société en Arménie du IV^e au VIII^e siècle, Lovanii, In aedibus Peeters, 2004, XX+711 p. (Corpus scriptorum christianorum orientaliū, vol. 606, subsidia tomus 116).

Արամ Մարտիրոսյան, Հովհաննես Օձնեցու հայկական կանոնների գիրքը (Կանոնագիրք Հայոց). Եկեղեցին, իրավունքը և հասարակությունը Դ-Ը դարերի Հայաստանում, Լուվեն, 2004, Ի + 711 էջ:

Հայկական կանոնագիտական գրականությունը վերջին տարիներին համեմատաբար հետ էր մնում հայագիտության մյուս մարզերից: Ուրախալի է, որ ներկա աշխատանքով հայագիտության ասպարեզ է իջնում կարող մի հայագետ, որն ունի դասական իրավաբանության մասնագիտական կրթություն: Ներկա աշխատանքը 2002 թ. իբրև դոկտորական ավարտաճառ պաշտպանության է ներկայացվել Փարիզ X-Նանտեռ համալսարան և հանձնաժողովի անդամներ պրոֆեսորներ Ժան-Պիեռ Պոլի (ղեկավար), Ժան-Պիեռ Մահեի (համաղեկավար), Էրիկ Բուտնագելի, Ժոզեֆ Մելեզ Մոդրցեսկու և Իվ Սասիեի ներկայությամբ ստացել հայցված կոչումը: Հեղինակը աշխատանքի գրման գործում արժեվորում է նաև պրոֆեսորներ Նինա Գարսոյանի և Սոֆի Լաֆոնի արժեքավոր խորհուրդները: Հեղինակն ընդգծում է գրքի սրբագրման գործում Ագնես Ուգունյանի և Ֆրանսուազ Պոնտ-Բուրնեզի կատարած դերը: Վերջապես արժեվորում է պրոֆեսոր Բեռնար Քուլիի գրքի հրատարակությունը գիտական շրջանակներում մեծ ճանաչում ունեցող *Corpus scriptorum christianorum orientaliū* շարքում հրապարակելու գործում:

Գիրքը բացվում է ճանաչված հայագետ Ժան-Պիեռ Մահեի և Փարիզ X-Նանտեռ համալսարանի իրավունքի պատմության պրոֆեսոր Ժան-Պիեռ Պոլիի առաջաբաններով, ապա ներկայացվում է տրանսլիտերացիայի և հապավումների *Revue des études Arméniennes*-ում ընդունված համակարգը: Բուն աշխատանքը սկսվում է ներածությամբ (էջ 1-40) և բաղկացած է երկու մասից. ա) Գրիգոր Լուսավորչից մինչև Շահապիվանի ժողով. Օագում (էջ 41-251), բ) Շահապիվանի ժողովից մինչև Կանոնագիրք (էջ 253-493), եզրակացությունից (էջ 495-500), երկու բնագրագիտական ակնարկներից (*Excursus*). ա) Շահապիվանի ժողովածուն (էջ 501-532), բ) Հովհաննես Մայրազոմեցու ժողովածուն (էջ 533-625), մատենագիտությունից (էջ 627-692), հավելվածներից (էջ 693-701), երկու քարտեզից (էջ 702-705) և բովանդակության ցանկից: Գիր-

քը մի ձոն է Հովհան Իմաստասեր Օձնեցու հիշատակին:

Ինստիտուտի անդամ Ժ.-Պ. Մահեն իր առաջաբանում ընդգծում է Հայոց պատմությունն ընկալելու տեսանկյունից բնական իրավունքի դերը, անդրադառնում է հայ և արևմտյան վաղ միջնադարյան հասարակությունների կառուցվածքային տարբերություններին, խոսում է Հայաստանում Քաղկեդոնի ժողովից առաջ և հետո քրիստոնեության խաղացած դերի մասին՝ բարձր գնահատելով Արամ Մարտիրոսյանի բնագրագիտական-իրավագիտական հետազոտությունը: Պրոֆեսոր Ժ.-Պ. Պոլին իր առաջաբանում անդրադառնում է հին աշխարհի մշակույթներում բանավոր և գրավոր իրավունքների խաղացած դերին, հռոմեական գրավոր և Արևելքի «բարբարոսական» իրավունքների հարաբերակցությանը, ազգային համախմբման գործում կանոնական իրավունքի և պետության տեղը զբաղեցրած Եկեղեցու խաղացած դերին՝ արժեվորելով Ա. Մարտիրոսյանի աշխատանքն իբրև իրավական նորմերի և մտածողության մի նոր ու ինքնատիպ, երբեմն հակասական աշխարհի բացահայտում:

Ներածության մեջ ելակետ ունենալով Կանոնագրքի հիշատակարանում Հովհաննես Օձնեցի Կաթողիկոսի ձգտումը ի մի բերելու հայոց կանոնական իրավունքի հուշարձանները, Ա. Մարտիրոսյանը անդրադառնում է վաղ միջնադարյան Հայաստանի իրավունքը և հասարակական կառույցը բնորոշող հիմնական հասկացություններին (synode-ժողով, կանոնական իրավունք, օրենք, գերդաստան, իշխանախարար, ազատ, ռամիկ-շինական, զավառ և այլն), ընդգծում է եկեղեցական կազմակերպության դերը ազգային միասնականության պահպանման գործում: Հեղինակը այնուհետև մի հայացք է նետում Դ-Ը դարերի Հայաստանի վարչական և քաղաքական բաժանումներին, հայագիտական գրականության և սկզբնաղբյուրներում կիրառված աշխարհագրական անվանացանկին՝ ընդգծելով Հայաստանի բացառիկ դերը արևմտյան (Հռոմի և Բյուզանդիայի) և արևելյան (Իրան և Արաբական խալիֆաթ) քաղաքակրթությունների խաչաձևման ասպարեզում: Այստեղ ներկայացվում են նաև դարաշրջանի պատմության հիմնական սկզբնաղբյուրները (Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Կորյուն, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Ղազար Փարպեցի, Գիրք Թղթոց)՝ հիմնվելով վերջին տարիների հայագիտական գրականության ըմբռնումների վրա: Այստեղ հիմնական նշանաձողերով հեղինակն անդրադառնում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հանգամանքներին ու նրա պատմությանը, առաջին տիեզերածողությունների հանդեպ Հայոց Եկեղեցու ունեցած դիրքին, որն հարաբերակցում է Բյուզանդական կայսրության և Իրանի քաղաքական հակամարտությանը բուն Հայաստանում ստեղծված հակադիր (հունամետ և պարսկամետ) քաղաքական կուսակցությունների գործունեության հետ:

Հայոց Եկեղեցու վերջնական հակաքաղկեդոնական դիրքորոշումը հեղինակը կապում է Աբրահամ Աղբաթանեցի Կաթողիկոսի գործունեության հետ, որի գահակալությունից մինչև Հովհաննես Օձնեցի համարում է եկեղեցական բախումների դարաշրջան (եջ 19-20), կայունության դարաշրջան համարելով Կոմիտաս Ա Աղցեցու տարիները: Անդրադառնալով Հովհաննես Մայրագոմեցու գործունեությանը, միանշանակորեն այն համարում է հերձվածողական (հուլիանիստական) և հետևե-

լով Ժ.-Պ. Մահեիին, կարծում է, որ նա իր երկերը (նշանակալի մասով կանոնական) տարածել է ուղղափառ հեղինակների անունով: Եզր Ա Փառաժնակերտացուց մինչև Հովհաննես Օձնեցու գահակալման դարաշրջանը համարելով Բյուզանդական Եկեղեցու հետ վերամիավորման շրջան, Արամ Մարտիրոսյանը անդրադառնում է եկեղեցական միության երկուստեք փորձերին: Հայ իրականության մեջ կանոնական իրավունքի ծնունդը կապելով Տրդատ Մեծի կողմից քրիստոնեության ընդունուման հետ, ըստ նրա, կրակապաշտությունից քրիստոնեության անցումով, հին սովորության իրավունքը հետզհետե փոխարինվում է գրավոր կանոնական իրավունքով, ինչպես որ գրադաշտական տաճարների տեղում կառուցվում են քրիստոնեական սրբավայրեր:

Հայոց Եկեղեցին մինչև 373 թ. կապված էր Կապադովկյան Եկեղեցու հետ, նրա միջոցով մասնակցելով Տիեզերական Եկեղեցու ժողովներին և ծանոթանալով կանոնական հուշարձաններին, սկսելով կամաց-կամաց հեռանալ ազգային սովորության իրավունքի նորմերից: Իրավունքի այս երկու տեսակի միաձուլումով, 444 թ. Շահապիվանում սկիզբն է դրվում հայ կանոնական իրավունքի առաջին հուշարձանի: Հովհաննես Մայրազումեցու գործունեության հետ է կապում Հայոց կանոնական իրավունքի թեոկրատական ուղղվածությունը, որի ամբողջականացումն ավարտվում է Հովհաննես Օձնեցու գործունեությամբ: Հարկ է նշել, որ այս ժամանակաշրջանի Հայաստանում կանոնական մտքի զարգացման մասին չկան հստակ սկզբնաղբյուրներ, և հետազոտողները ստիպված են իրենց տեսությունները կառուցել անուղղակիորեն խնդրի հետ կապվող սկզբնաղբյուրների վրա: Այս առումով Հայոց կանոնագրքի գաղափարական հիմքի կապումը Հովհաննես Մայրազումեցու գործունեության հետ, դեռևս կարիք ունի ապացուցման: Բազմակողմանի ապացուցման կարիք ունի նաև Հովհաննես Մայրազումեցու դավանաբանական կրեդոյի պարզաբանումը, խնդիր, որի համակողմանի քննարկման կարիքն է զգում հայագիտությունը: Պահպանված մատենագրական երկերը, դրանց հեղինակային պատկանելության խնդիրների հետ կապված հարցերը դեռևս թույլ չեն տալիս հայտարարություններ կատարել: Պահանջվում է պատմաաստվածաբանական համակողմանի քննություն, Հայոց Եկեղեցու անցած ճանապարհի վերաիմաստավորում: Հետաքրքիր է, որ, ելնելով գրեթե նույն սկզբնաղբյուրներից, Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամներ Հովսեփ Գաթըրճյանը, Հակոբոս Տաշյանն ու Ներսես Ալինյանը ժողովածուի կազմումը վերագրում են Հովհաննես Մանդակունուն:

Կանոնական իրավունքի ձևավորման խնդրին անդրադառնալիս, Արամ Մարտիրոսյանը բացատրում է սովորությանից կանոնական իրավունքին անցման, «աւրէնք» և «կանոն» տերմինների միջնադարյան նշանակության խնդիրներին: Ըստ նրա, «աւրէնքը» Հայաստանում մինչև ԺԲ դարը մնում էր բանավոր, թեպետ դեռևս հելլենիստական դարաշրջանում Հայոց թագավորներն իրենց հրամանագրերն արձանագրում էին քարերի վրա հունարեն կամ արամեերեն: Մինչև Դ դարը հեղինակը հնարավոր է համարում նույնիսկ Մասանյան Դատաստանագրքի օգտագործումը, սակայն մինչև ԺԱ դարը բացառում է գրավոր իրավունքի գոյությունը Հայաստանում (էջ 29, 31): Միայն ԺԲ դարից սկսած, Ներսես Լամբրոնացու ջանքերով շրջանառության մեջ են դրվում հարևան ժողովուրդների գրավոր իրավական հու-

շարժանների հայերեն թարգմանությունները, իսկ դրանից քիչ առաջ ստեղծվում է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, որն իր նշանակալի մասով «Կանոնագիրք Հայոց»-ի սահմանումների վերահաստատումն է, որոնք ուղեկցվում են բազմաթիվ լրացումներով:

Հեղինակը հետևելով Ժ.-Պ. Մահեին՝ առանձնացնում է սովորության իրավունքի ձևավորման հիմնական սկզբնաղբյուրները, որոնց մեջ ընդգծում է Աստվածաշնչի, ազգագրության կողմից հետազոտվող տեղական սովորության նորմերի, Բյուզանդական իրավունքի գրավոր հուշարձանների, հրովարտակի բնույթ ունեցող վիմագիր արձանագրությունների դերը: Հետազոտվող դարաշրջանի համար հեղինակը իրավունքի հուշարձանները բաժանում է երկու տեսակի. հոգևորականության շրջանակներով սահմանափակող գրավոր կանոնական իրավունք և ավելի ընդհանուր նշանակություն ունեցող բանավոր սովորության իրավունք: Վաղ միջնադարյան քրիստոնեական հասարակության համար Արամ Մարտիրոսյանը այս երկվորյունը զարմանալի չի համարում (եջ 31), ընդգծելով «օրենք»-ի նշանակությունը իբրև կրոն Մերձավորարևելյան մոտեցումը, ուր պահպանվում է «Կեսարիներ կեսարին» ավետարանական սկզբունքը, բաժանելով հոգևոր և աշխարհիկ իշխանությունները: Այնուամենայնիվ, Հայաստանում կանոնական իրավունքը միտում ունի զբաղեցնելու քաղաքացիական իրավունքի տեղը: Իհարկե այս խնդրի շուրջ հեղինակի մոտեցումը նոր հետազոտությունների հեռանկարներ է բացում հայագիտության համար, սակայն հարցադրման իր դրվածքով հիշեցնում է արևմտավրոպական մոդելը, որի հավաստիությունը պարզելու համար դեռևս պետք է նյութեր հավաքել, ապացուցել հայկական և արևմտյան մոդելների նոյնությունը: Հեղինակն այնուհետև անդրադառնում է «Կանոնագիրք Հայոց»-ի հրատարակություններին և հետազոտություններին (եջ 32-40)՝ առանձնակի շեշտելով Վազգեն Հակոբյանի հսկայական վաստակը:

Գրքի առաջին մասը անվանված է «Գրիգոր Լուսավորչից մինչև Շահապիվանի ժողով. Օագում», ուր անդրադառնում է Հայոց կանոնական իրավունքի ձևավորման խնդիրներին, իր ասելիքը ներկայացնելով հետևյալ գլուխներում 1. «Հին մարդուց նոր մարդ», 2. «Ժառանգության դեմ պայքարող Եկեղեցի», 3. «Ճակատամարտերը», 4. «Ճակատամարտերի միջոցները. Իրավունք»): Շահապիվանի ժողովի հիմնական խնդիրը համարելով Հովսեփ Հոդոցմեցու կաթողիկոսական ընտրությունը, որով ամբողջացվում էր Հայոց Եկեղեցու նվիրապետական կառույցը ի հակադրություն պարսկական վտանգի, հեղինակն անդրադառնում է Տիեզերական Եկեղեցու այն հիմնական կանոնախմբերին (Անտիոքյան, Նիկիական, Առաքելական և այլն), որոնք հիմք են դարձել այդ ժողովի որոշումների համար, դրանց մեջ ընդգծելով Անտիոքյան կանոնական ժողովածոյի դերը: Անտիոքի կանոնախումբ ասելով հեղինակը նկատի ունի Տիեզերական Եկեղեցու տեղական ժողովների կանոնախմբերի այն ժողովածուն, ուր հավաքված են եղել Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի, Լավոդիկիայի, Սարդիկայի տեղական ժողովների կանոնախմբերը: Այս ժողովածոյի պատմաաղբյուրագիտական քննությունը կարևոր նշանակություն կարող է ունենալ հայկական կանոնական գրքերի հետագա հետազոտության համար, որը լայն ճանապարհ է բացում Քրիստոնյա Արևելքի Կանո-

նագրքերի համեմատական ուսումնասիրության տեսանկյունից:

«Հին մարդուց նոր մարդ» գլխում հեղինակն անդրադառնում է մագդեզականության հայկական տարբերակից քրիստոնեությանն անցման, հին կրոնից նորին ունեցվածքի փոխանցման խնդիրներին: Հեղինակը պաշտպանում է այն տեսակետը, որ Տրդատն ու Գրիգոր Լուսավորիչը ոչնչացնելուց հետո բռնագրավում էին հեթանոսական հիմնական տաճարների ունեցվածքը՝ նաև ծառայության կոչելով հին կրոնի քրմերին (էջ 46-47): Այս դրույթն ապացուցման կարիք ունի: Պիտի չմոռանալ, որ բազմաթիվ հեթանոսական սրբարաններ կանգուն են մնացել քրիստոնեության ընդունումից հետո էլ, դրա լավագույն ապացույցներն են Գառնու տաճարը և Ս. Էջմիածնի տաճարի բեմի տակ պահպանված կրակարանը: Ունեցվածքի անցման խնդիրներին անդրադառնալիս պետք է ճշտել անցման ձևերը: Հեղինակի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ քրիստոնեության առաջին շրջանում յուրաքանչյուր նախարարական տոհմ ուներ իր դրան եպիսկոպոսությունը, և պատահական չէ, որ Ս. Գրիգորին ձեռնադրելու համար նրան Կեսարիա են ուղեկցում Հայոց աշխարհի հիմնական նախարարական տների առաջին դեմքերը: Հանգամանք, որը թույլ է տալիս մտածել, որ նրանք էին հեթանոսական սրբավայրերի կործանման նախաձեռնողները: Ա. Մարտիրոսյանն անդրադառնում է վաղ միջնադարյան Հայաստանում հողատիրության և ունեցվածքի ձևերը բնորոշող եզրերին և հասկացություններին (*դաստակերտ, սահման, գետին, գանձ, հող երդոյ, ագարակ տեղի, տասանորդ, պտուղ*), Եկեղեցու տնտեսական, հոգեխնամ (*զողենոց, արկանոց, աղբատանոց, այրենոց, որբանոց, հիւանդանոց և այլն*) և իրավական կարողություններին, Եկեղեցու բարեգործության և բարեկեցության հիմք հանդիսացող ֆինանսական և հարկային աղբյուրներին՝ համեմատելով երբեմն զրադաշտական և քրիստոնեական որոշ զուգահեռ եզրեր (ջատագով, մոգպետ, դատավոր, քուրմ և այլն), եկեղեցական ժառանգական հողատիրության (հայրենիքի) ձևավորման հիմնական աղբյուրներին: Հեղինակը եզրակացնում է, որ Հայաստանում քրիստոնեության մուտքի հենց սկզբից հոգևոր դասը ձեռք է բերում հասարակության մեջ որոշակի արտոնություններ (հարկային և դասային), որոնք ավելի են ամրապնդվում դարերի ընթացքում, հատկապես Արշակունյաց հարստության անկումից (428 թ.) հետո: Այս առումով արժեք հեղինակի ուշադրությունը հրավիրել հիշատակված խնդիրներին անդրադարձած Նովոսելցևի աշխատության վրա:

Ա. Մարտիրոսյանն անդրադառնում է նաև վաղ Միջնադարյան Հայաստանում եկեղեցական հողատիրության տիրապետման և կառավարման ձևերին, կաթողիկոս-պատրիարքի գլխավորությամբ նվիրապետական համակարգի ինքնագլխությանը, եկեղեցական ողջ կազմակերպության ընդհանուր (ոչ մասնակի) սեփականության խնդրին, այդ արտոնության ետ վերցման համար Պապ թագավորի թափած անպտուղ ջանքերին (էջ 58), հոգևորական-«վիճակավոր»-ների և կրտսեր հոգևորականության «բաժն»-ին, Եկեղեցուն տրվող տուրքերին, եկեղեցական ունեցվածքի օգտագործման ու կաթողիկոսի կողմից վերահսկման խնդիրներին (էջ 60):

Խոսելով Հայաստանում քրիստոնեացման երկու ճանապարհների և դրա հետ կապված մշակութային խնդիրների մասին, հեղինակն անդրադառնում է Դ-Ե դարերի Հայոց Եկեղեցու պատմության հիմնախնդիրներին (էջ 60-69), փորձելով ընկա-

լելի դարձնել Եկեղեցու պատմության վերջին տարիների հետազոտությունների (Գ. Վինկլեր, Ն. Գարսոյան, Մ. վան Էսբրուկ, Ժ.-Պ. Մահե են.) արդյունքները: Քննարկման ենթակա հիմնական հարցերն են քրիստոնեության ընդունման աստրական և հունական ճանապարհները, հռոմեական և պարսկական ազդեցության գոտիները Հայաստանի քաղաքական և կրոնական կյանքում, Հայաստանում գրերի գյուտի և մշակութային կյանքի աշխուժացման ազդակները, կանոնական որոշումների և բառապաշարի հարաբերակցությունը, խնդիրներ, որոնք քննարկման նյութ են դարձել Շահապիվանի ժողովում: Այդ խնդիրների մեջ հեղինակն առանձնացնում է ամուսնության և հուղարկավորության խնդիրները:

«Ինչպե՞ս են ամուսնացնում» բաժնում հեղինակն ընդգծում է, որ Շահապիվանի ժողովի կանոնների մեկ երրորդը վերաբերում է ամուսնական փոխհարաբերություններին: Այդ երկույթը տարօրինակ չէ, քանի որ ամուսնական խնդիրներին անդրադառնում են և՛ Ավետարանները, և՛ Կաթողիկե թղթերը, ինչպես նաև սովորության իրավունքը, քանի որ ամուսնությունը քրիստոնեական հասարակության հիմնաքարերից է: Անդրադառնում է Շահապիվանի Է կանոնին, ուր քննարկվում են առևանգումից հետո ամուսնության կարգավորման, պատժաչափերի կարգավորման և դատական պատասխանատվության հարցերին (էջ 72-73), խնամախոսության, «վարձանքի», «օժիտի», ամուսնության վավերականության խնդիրներին (էջ 74-76), եկեղեցական պսակի, ամուսնության սրբացման, կուսության, նշանելու խնդիրներին (էջ 76-78):

Բաժնի հաջորդ մասը վերաբերում է ամուսնական արգելքներին: Անդրադառնալով Հին Հայաստանում բազմակնության խնդիրներին, հեղինակը ցույց է տալիս, որ այն վերացել է քրիստոնեության ընդունումից հետո և չի պահպանվել նույնիսկ կանոնական արգելքի տեսքով, թեպետ Արշակ Բ-ի ժամանակներում, նույնիսկ Ե դարում բազմակնության հետքեր է նկատում (էջ 79-81, 86): Հեղինակն անդրադառնում է նաև եկեղեցական հնագույն կանոններում արգելված մոտիկ արյունակցության դեպքում ամուսնության, չորրորդ պորտի անհասության, ոչ քրիստոնյայի հետ ամուսնության խնդիրներին (էջ 83-86):

Ամուսնության խզման հետ կապված հարցերը քննարկելիս Ա. Մարտիրոսյանը քննարկում է սկզբնաղբյուրներում օգտագործված ողջ բառապաշարը (*թողեմ և կնաթող, արձակեմ, ելանեմ, հանցեմ, կնահան, ելանեմ, մեկնեմ բաժանեմ, հրաժարեմ*), զույգերի բաժանման պատճառներին և կարգին, բաժանումից հետո ունեցվածքի տնօրինման սկզբունքներին, որոնց նշանակալի մասը, ըստ հետազոտողի, բխում է սովորության իրավունքից: Այստեղ հեղինակն անդրադառնում է նաև անբարոյականության, քահանայի կնոջից բաժանման և այլ և այլ խնդիրների:

Հեղինակը քննարկում է նաև կրկնամուսնության խնդիրը, նշում սահմանափակումները, ընդգծում, որ այն արգելված է քահանաների և երեցկնոջ համար՝ կրկին անգամ հավաստելով, որ սովորության և կանոնական իրավունքի նորմերը շատ դեպքերում միասնաբար են հանդես գալիս: Շահապիվանի ժողովը անհաշտ պայքար է ծավալում նման մնացուկների դեմ:

Երրորդ բաժինը նվիրված է մահացածին թաղելու խնդիրներին, ուր քննարկվում են սկզբնաղբյուրներում վկայված թաղման սովորությունները, որոնք դարձել են

կանոնական կարգավորման առարկա: Կանոնական իրավունքով արգելվում էր լացն ու կոծը մահացածի վրա, ներկայացվում են անդրաշխարհի մասին հայկական հեթանոսական պատկերացումները՝ արալեզներ և այլն:

Առաջին մասի երկրորդ գլուխն անվանված է «Ժառանգականության համար պայքարող Եկեղեցի», ուր հեղինակն անդրադառնում է եկեղեցական կազմակերպության երկու հակադիր ձևերին (միապետականություն և ժողովականություն), որոնց համադրումից ծնվել է այսօրվա եկեղեցական կառույցը: Տրդատ Մեծի ժամանակներից Հայոց Եկեղեցին ձևավորվում է իր պատրիարքի շուրջը՝ ստեղծելով նվիրապետական կառույց՝ ամրացնելով այն եկեղեցական ժողովների որոշումներով: Այդ է պատճառը, որ գլխի առաջին բաժինը հեղինակը նվիրել է Եկեղեցու կառուցվածքին, օրինակներ բերելով Գ-Դ դարերի Կարթագենյան Եկեղեցու պատմությունից, որը, ի տարբերություն Հայոց Եկեղեցու, ժողովական դրությունից է անցել միապետականությանը, հետզհետե ամրապնդելով Կարթագենի եպիսկոպոսի իշխանությունը: Ա. Մարտիրոսյանը անդրադառնում է Հայոց կաթողիկոսական իշխանության ձևավորման ակունքներին (Թադեոս առաքյալից մինչև Ս. Գրիգոր Լուսավորիչ). նա ենթադրում է, որ երկրի քրմապետի հիմնական պարտականություններն անցել են Եկեղեցու առաջնորդին: Այնուհետև քննարկում է մինչև Շահապիվանի ժողովը սկզբնաղբյուրներում վկայված Հայոց Կաթողիկոսի անվանումներին (գլխավոր եպիսկոպոս, կաթողիկոս, քահանայապետ, եպիսկոպոսապետ, հայրապետ և այլն): Հեղինակն անդրադառնում է նաև եպիսկոպոսական իշխանության սահմաններին, քննարկում է Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված եպիսկոպոսական Աթոռների թիվը (12 թե՞ 400)՝ տրամաբանական լուծում համարելով շուրջ 20 եպիսկոպոսական Աթոռների հաստատումը Գրիգոր Լուսավորչի կողմից, նախարարական տների և եպիսկոպոսական Աթոռների հարաբերակցությանը, աշխարհի և գավառի եպիսկոպոս հասկացություններին: Քննարկում է քորեպիսկոպոսի աստիճանի հետ կապված խնդիրները, նույնություն է տեսնում կանոններում (հատկապես Շահապիվան-16) հիշատակված առաջնորդ և քորեպիսկոպոս տերմինների միջև (էջ 114), անդրադառնում է երեց, քահանա, սարկավագապետ, սարկավագ տերմինների գործածությանը, ամուսնացած (նույնիսկ եպիսկոպոս) և կուսակրոն հոգևորականության խնդիրներին, կրտսեր պաշտոնեությանը (կես սարկավագ, սարկավագուհի, դպիր և այլն):

Հեղինակն անդրադառնում է եկեղեցական նվիրապետությանը հատուկ խնդիրների լուծման կոլեգիալ և անհատական (solitaire), ճգնական և վարդապետական սկզբունքներին: Ժողովների տարբեր տեսակներ կային Հռոմեական կայսրությունում, Տիեզերականից մինչև գավառային և տեղական, որոնց անդամները հիմնականում եպիսկոպոսներ էին: Հայոց Եկեղեցին ևս հրավիրում է տեղական բազմաթիվ ժողովներ (Աշտիշատ, Շահապիվան, Արտաշատ ևն.), որոնց մասնակցում էին աշխարհականներ և հոգևորականներ (էջ 125): Ա. Մարտիրոսյանը փորձում է կապ տեսնել վերջին երկու ժողովների և Արշակունյաց շրջանի թագավորական խորհրդի հետ (էջ 126)՝ եկեղեցու անցած անհատական ճանապարհը բնորոշող հաստատություն համարելով ճգնությունը, վարդապետի աստիճանը, որի կրողը հեռանում էր աշխարհից դեպի վանք կամ անապատ: Շահապիվան-16-18-ում «վարդապետ»

տերմինի օգտագործումը Ա. Մարտիրոսյանը վերագրում է Հովհաննես Մայրազումեցու հավելումին, «վարդապետ» բառը կապելով պարսկական «վարձ» արմատի հետ: Վարդապետի (ուսուցիչ, կանոնագետ) շուրջ հավաքվում էին նրա աշակերտները:

Երկրորդ բաժինը անվանված է «Կղերականության հաստատումը»: Հեղինակն անդրադառնում է վաղ միջնադարյան Հայաստանի հասարակական կառուցվածքին և դրա մեջ քրմաց դասի տեղին՝ Խոսեղով Շահապիվան-16-ին, ու այս ժողովում և դրանից առաջ կաթողիկոսի ընտրության սկզբունքների մասին: Այստեղ արձանագրված է այն սկզբունքը, ըստ որի առանց երկրի գլխավոր եպիսկոպոսի համաձայնության որևէ մեկը չի կարող եպիսկոպոս ձեռնադրվել (էջ 151-154):

Երրորդ գլուխն անվանված է «Պայքարը»: Հետևելով Ժ.-Պ. Մահեին, հեղինակը Հայոց Եկեղեցու մղած պայքարի երկու ուղղություն է մատնանշում. ա) Ընդդեմ հեթանոսության, և բ) Ընդդեմ Ասորիքից եկող դասական «երկաբնակության»: Հեթանոսության վերապրուկները, ըստ նրա, շարունակում են կենցաղավարել կյանքի զանազան բնագավառներում (ամուսնություն և թաղում, կախարդություն և դյուրթում են.): Այդ մտահոգությամբ են գրվել Շահապիվանի ժողովի մի շարք որոշումները (թ. 8-10): Ի մի բերելով խնդրի շուրջ առկա հայագիտական ողջ գրականությունը, հեղինակն անդրադառնում է հեթանոսական վերապրուկների մասին պատմող հիմնական սկզբնաղբյուրներին և եզրերին (*գալկապ, յուրուք, չարակն, հարցուկ, բախտ, ճակատագիր, վիճակ են.*)՝ քննարկման նյութ դարձնելով Շահապիվանի ժողովի որոշումների համապատասխան կանոնները (էջ 166-173), ուր եթե ըստ Եղիշեի և Փարպեցու քարկոծման են դատապարտվում, ապա ըստ այդ ժողովի կանոնական որոշումների՝ դրամական տուգանքի կամ մարմնական պատժի (ծեծի):

Նույն գլխի երկրորդ բաժինը նվիրված է նահատակների մասունքների պաշտամունքին, ուր հեղինակն անդրադառնում է Հայաստանում քրիստոնեության առաջին սրբերի հիշատակին կանգնեցված մատուռներին, նախաքրիստոնեական Հայաստանում թագավորական ընտանիքի նախնիների պաշտամունքին վերաբերող տեղեկություններին՝ քննարկելով «փառք», «քաջ» և այլ տերմիններ: Այնուհետև անդրադառնում է Շահապիվան-17 կանոնին, որը վերաբերում է եպիսկոպոսների կողմից վկայարանների սրբացման կարգին (էջ 185-186), Հայոց տոնական տարվա ձևավորմանը վերաբերող սկզբնաղբյուրներին (187):

Գլխի երրորդ բաժինը նվիրված է Շահապիվան-18-20 կանոններին՝ հերձվածների (հատկապես բորբորիտների, մծղնեության) դեմ պայքարին (190-214): Պետք է այստեղ շեշտել, որ գնոստիկական այդ հերձվածներից շատերը անխզելիորեն կապված են Եգիպտոսից սկիզբ առած անապատական շարժումների հետ, որոնց մասին ակնարկում է Ղազար Փարպեցին: Փորձելով զանազանել Ե դարում «աղանդ» և «հերձված» տերմինների նշանակությունը, հեղինակը ճշտում է Եգնիկ Կողբացու տեղը նմանատիպ գրականության ստեղծման գործում:

Առաջին մասի չորրորդ գլուխը անվանված է «Պայքարի միջոցները. Իրավունքը», ուր հեղինակն անդրադառնում է արդարադատության իրականացման հայկական եղանակներին, «ալբենք» և «անալբեն» հասկացությունների, արդարադատությունը իրականացնող սիստեմի մասին վկայություններին (դպիր, դատավոր, գոր-

ծակալ են.): Վիճարկում է Հայաստանյան հայագիտության մեջ տարածված այն տեսակետը, ըստ որի Արշակունի թագավորները նաև երկրի գլխավոր դատավորներն էին: Հետևելով Ն. Գարսոյանին, նա կարծում է, որ Արշակունիները, լինելով առաջինը հավասարների մեջ, չէին կարող նման արտոնություն ունենալ ողջ Հայաստանի տարածքում, այլ միայն իրենց հայրենական կալվածքում (էջ 219-220):

Անդրադառնալով եկեղեցական դատաստանի կառուցվածքին, առանձնացնում է հոգևոր դատարանի կառուցվածքը: Եկեղեցական բարձրագույն դատարանի գոյությունը շարունակությունն է համարում գրադաշտական հոգևոր դատարանի, որի գլուխ կանգնած է եղել մոզպետը: Խոսվում է տարբեր իրավասություններ ունեցող դատավորների, միջնորդ դատարանի, հոգևոր դատարանի պաշտոնետության մասին (223-225): Անդրադառնում է հոգևոր դատարանի իրավասությունների ոլորտներին (225-230), դատարանի աշխատանքի արարողակարգին (230-234):

Այս գլխի երկրորդ բաժնում անդրադառնում է Հայոց եկեղեցական իրավունքում, մանավանդ Շահապիվանի ժողովի կանոններում առկա մարմնական պատիժների տեսակներին (դրամական, ջլերի հատում, աղվեսադրոշմ, քարկոծել են.) (234-245), հոգևոր-եկեղեցական պատիժներ (նզովել, բանադրել, կապել բանիվ են.) (245-251):

Գրքի երկրորդ մասը անվանված է «Շահապիվանի ժողովից մինչև կանոնագիրք. բարեփոխումներ և առաջընթաց»: Այս փուլում, մինչև է դարը, ստեղծվում են Երկրորդ Նիկիական կանոնները, սակայն հեղինակը այս շրջանի հայոց կանոնական իրավունքի մեծագույն կարգավորող է համարում Հովհաննես Մայրագոմեցուն, որը է դարի երկրորդ կեսին հուլիանական ոգով վերախմբագրում է ողջ կանոնագիրքը: Իր տեսակետը հիմնավորելու համար Արամ Մարտիրոսյանը հիմնվում է Ժ. Գարիտի և Մ. վան Էսբրուկի տեսակետների վրա՝ արձանագրելով, որ Հովհաննես Օձնեցին իր Կանոնագիրքը հիմնել է այս խմբագրված տարբերակի վրա:

Այս մասի նախապատրաստական գլուխը հեղինակն անվանել է «Երկու Հովհաննեսները. անուղղելի վարդապետը և ոսկեմորուս փիլիսոփան», ուր անդրադառնում է այս երկու գործիչների կանոնական քաղաքականության ուղղվածությանը: Մայրագոմեցու կերպարը առանձնացնելով, Ա. Մարտիրոսյանը անդրադառնում է նրա անձնավորությանն ու դավանաբանական դիրքորոշմանը՝ հիմնվելով վերջին տարիների հայագիտական գրականության վրա (Քենդերյան, Մահե, վան Էսբրուկ են.): Անդրադառնում է Մայրավանեցի, Մայրագոմեցի և Մանդակունի Հովհաննեսների հետ կապված և բանասիրության մեջ արծարծված խնդիրներին: Հետևելով Ժ. Գարիտին, Ժ.-Պ. Մահեին, նա Հովհաննես Մայրագոմեցուն համարում է եկեղեցական ազգայնականության դրոշակակիր, որը կանոնական իրավունքը ծառայեցրել է «Մի բնութիւն» բանաձևին՝ հետևելով հուլիանական բանաձևին:

Այս տեսությունը հիմնված է ենթադրությունների մի շարքի վրա, որոնք հիմնված են տարաբնույթ սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա և պահանջում են ավելի հետևողական հետազոտություն: Հայոց դավանաբանության կայացումը կապելով Հովհաննես Մայրագոմեցու անվան հետ, այն նույնացնում է հուլիանականության հետ, քանի որ տեղեկություն է պահպանվել, որ նրա աշակերտ Սարգիսը թարգմանել է Հուլիանոս Հալիկառնացու երկերը: Այս վկայությունը բավական ծաղկեցնելով՝ վերապատմում է վրացի հեղինակ Արսեն Սափարացին: Հիմնվելով Ստե-

փանոս Տարոնացու և նրան հետևող հեղինակների տեղեկությունների վրա, Ա. Մարտիրոսյանը Մայրագումեցուն է վերագրում «Խրատ վարուց», «Հաւատարմատ» և «Նոեմակ» ժողովածուները: Փորձում է զուգահեռներ գտնել Հովհաննես Մանդակունուն վերագրված կանոնների և, այսպես կոչված, «Խրատ վարուց»-ի միջև (էջ 260-263): Հեղինակը կարծում է, որ Հովհաննես Օձնեցու ձեռքին եղել է Հովհաննես Մայրագումեցու կազմած 23 կանոնախմբից բաղկացած ժողովածուն: Հետևելով Ժ.-Պ. Մահեիին, Ա. Մարտիրոսյանը Մայրագումեցու ուսմունքը համարում է ծայրահեղ միաբնակ (էջ 266):

Գլխի երկրորդ բաժինը վերնագրված է «Հովհաննես Օձնեցու եկեղեցական քաղաքականության կրկաններից մեկը. Կանոնագիրք Հայոցը» (էջ 268-288): Այստեղ հեղինակը չորս հիմնական փուլերի է բաժանում Իմաստասեր Կաթողիկոսի գործունեությունը. ա) արաբների հետ փոխհամաձայնեցման կայացում, բ) 717 թ. Դվինի ժողովով Հայոց Եկեղեցու ծեսի միասնականացում, գ) այդ ժողովի ընթացքում հաստատել Հայոց Եկեղեցու կանոնական ժողովածուն և դ) Մանագլերտի ժողովով հաստատել և միասնականացնել Հայոց Եկեղեցու դավանաբանությունը:

Բարձրացված հարցերի մեջ հայագիտական գրականության մեջ թեական է Դվինի ժողովի խնդիրը, որի մասին սկզբնաղբյուրները որևէ վկայություն չեն հաղորդում¹: Ըստ Ա. Մարտիրոսյանի, Հովհաննես Իմաստասերը սահմանել է մի այնպիսի դավանաբանական բանաձև, որը միջին տեղ է զբաղեցնում Սևերոս Անտիոքացու և Հուլիանոս Հալիկառնացու քրիստոսաբանական ուսմունքների միջև. մարմինը ապական էր մինչև միավորումը (էջ 271): Այս դավանաբանությունը համատեղման եզրեր ուներ և՛ Քաղկեդոնի, և՛ Հակոբիկ Եկեղեցու դավանաբանության հետ, որը թույլ էր տալիս եկեղեցական միություն կնքել վերջիններիս հետ: Այս հոդվածի վրա է տեսնում Կանոնագիրք Հայոցի ձևավորումը, ուր միաձուլված են Հովհան Մայրագումեցու կազմած Կանոնագրքի 23 կանոնախմբերը և, այսպես կոչված, Դվինի ժողովի (719 թ.) կանոնները, ուր (նկատի ունի Ատենաբանությունը) հաստատվում են Հայոց Եկեղեցու ծիսական ինքնատիպության հիմքերը: Ըստ հեղինակի, այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ Եզր Կաթողիկոսը երբեք նգովված չի եղել Հայոց Եկեղեցու կողմից և որ Կանոնագրքի Անանիա Շիրակացու օգտագործած տարբերակը չունի Մայրագումեցու հավելումները (էջ 276): Կարինի 645 թ. ժողովի կանոնախումբը չի մտել Օձնեցու ժողովածու, քանի որ այն գրված է քաղկեդոնականության հիմքի վրա (էջ 278): Խոսվում է Օձնեցու ժողովածոյի հակաքաղկեդոնական բնույթի մասին (էջ 278-280), տրվում է Կանոնագրքի տեխնիկական բնութագիրը բյուզանդական կանոնագրքերի համեմատության հենքի վրա (էջ 281-288):

Գրքի երկրորդ մասի ամենաընդարձակ գլուխն անվանված է «Հուլիանական Եկեղեցի. Հովհաննես Մայրագումեցու երազը»: Այս գլուխը բաղկացած է երեք մասից, ուր հեղինակն անդրադառնում է Շահապիվանի ժողովի որոշումներին և Եկեղեցու կառուցվածքին, Հայոց Եկեղեցու վանականացմանն ու կրոնական վիճակին, հուլիանիստական դավանաբանություն ընդունած հասարակությանը, կանոնական և սովորության իրավունքի միաձուլման խնդիրներին:

¹ Տե՛ս Ա. Բոզոյան, Հովհաննես Օձնեցին և «Մակա ժողովոց» երկի բնագիրը, տե՛ս «Մուրբ Հովհան Օձնեցին և իր ժամանակը» (Գիտաժողովի նյութեր), Ս. Էջմիածին, 2004, էջ 90:

Առաջին բաժինը նվիրվում է Ե-Ը դարերի Եկեղեցու կառուցվածքին, ուր հեղինակն անդրադառնում է կաթողիկոսական իշխանությանն ու եկեղեցական խորհրդին, որոնք ձևավորվում են զուգահեռաբար: Արձանագրվում է, որ դեռևս կաթողիկոսի իրավասությունները իրավունքում չեն ստանում իրենց գրավոր ձևավորումը: Ե դարից վկայված է «հայրապետ» եզրաբառը (Կանոնագիրք Հայոց, Նիկիայի ժողովի կանոններ, Սահակ Կաթողիկոսի և Դվինի ժողովի կանոնախումբ), որը ուղեկցվում է «քահանայապետ» (Հովհ. Մայրագումեցի) և «գլխավոր եպիսկոպոս» (Շահապիվան) կոչումներով: «Կաթողիկոս» տերմինը շրջանառության մեջ է մտնում Զ դարում (Դվին Ա և Բ ժողովներ), թեպետ Մայրագումեցին Շահապիվանի ժողովի կանոններում այդ տերմինով մեծարում է Սահակ Պարթևին, եզրաբառն օգտագործվում է Սևանտոսի կանոնախմբում: Այստեղ կաթողիկոսին տրվում է «օրենսդիր», «մայրաքաղաքի եպիսկոպոս» անվանումները, քանի որ մետրոպոլիտի ինստիտուտը, ըստ հեղինակի, Հայաստանում հայտնվում է միայն Է դարի սկզբում: Ա. Մարտիրոսյանը քննության է ենթարկում նաև «գլխավոր» և «եպիսկոպոսապետ» եզրերը, որոնք օգտագործվում են ԿՀ-ում: Ա. Մարտիրոսյանը հավաստում է, որ «արքեպիսկոպոս» անվանումը բացակայում է ԿՀ-ի հիմնական ժողովածոյում (էջ 292):

Ըստ հեղինակի, Հայոց Եկեղեցում միապետական սկզբունքը միաձուլված է կոլեգիալ-խորհրդակցական սկզբունքի հետ: Վերջին սկզբունքով ընտրված կաթողիկոսը կայացնում է ինքնուրույն որոշումներ, նշանակում է եպիսկոպոսներ (էջ 292-3): Ըստ Ա. Մարտիրոսյանի, Հայոց եկեղեցական ժողովների մեծամասնությունն ունի խառը կառուցվածք, քերն են բաղկացած եղել միայն կղերականներից (էջ 294-295): Երկրորդ կարգի ժողովներից հեղինակը հիշատակում է նաև Թեոդոսուպոլիս-Կարինում Մորիկ կայսեր հրավիրած ժողովը, որին, ըստ բյուզանդական իրավունքի, մասնակցել են միայն հոգևորականներ: Այստեղ Ա. Մարտիրոսյանը փորձում է ժողովները դասակարգել ըստ տեսակների (էջ 296-297):

Ապա գրքում քննարկվում է եպիսկոպոսաց դասին և նրանց կարգավիճակին վերաբերող խնդիրները (էջ 297-315): Հետևելով Ռ. Հեսենին², Պարսկահայաստանի եպիսկոպոսների թիվը համարում է այնքան, որքան որ վկայված են Զ-Ը դարերի ժողովների փաստաթղթերում (շուրջ 24-28)³: Քննարկում է «վիճակ», «աշխարհ», «գաւառ», «իշխանութիւն», «սահման» (էջ 298-299) և այլ եզրերի օգտագործման շրջանակները, եպիսկոպոսի իրավասությունների սահմանները և ենթակա հաստատությունները. վանք, անապատ, դպրոց, տկարանոց (էջ 300-304): Անդրադառնում է զանցանքների համար եպիսկոպոսներին սպառնացող պատիժներին (էջ 304-305), եպիսկոպոսական իշխանության դեմ ոտնձգություններին (էջ 306-307), նրա ենթակայության տակ գտնվող քրեալիսկոպոսի, առաջնորդի, տեսչի, վերակացուի, ուստիկանի պաշտոններին (էջ 307-310), Հայոց Եկեղեցու ինն աստիճան ունեցող Դիոնիսիոս Արիոպագացուն վերագրվող նվիրապետական կառույցին (էջ 310-312), որի առաջին վկայությունը պահպանված է Աբրահամ Աղբաթանեցու մոտ: Ա. Մարտիրոսյանը անդրադառնում է թեմ-վիճակներում տեղի ունեցող ժողովներին, դրանց հրա-

² Տվյալ պարագայում Ռ. Հեսենը զարգացնում է Ն. Ադոնցի և Բ. Հարությունյանի միտքը:

³ Կյուրիոնի նամակներից մեկում վրաց եպիսկոպոսների թիվը հասցված է 35-ի (տե՛ս Գիրք թղթոց, 1901, էջ 179): Այլ հաշվարկ է անում Ն. Գարսոյանը:

վիրման պարբերականությանն ու կարգին (էջ 312-315):

Հեղինակն անդրադառնում է նաև Կանոնագրքում հիշատակվող քահանա, երեց, նախաթոռ գլխավոր եզրերին, սարկավագի ինստիտուտին և հիշատակված պաշտոնյաների իրավասություններին (էջ 316-319): Այնուհետև խոսում է «Կանոնագիրք Հայոց»-ում առկա եկեղեցական ուխտի ավելի ցածր պաշտոնների՝ դպիր, ուխտի մանկունք, ուխտականք, գրակարդաց, կշտամբից, սաղմոսասաց, ժառանգավոր, երդմնացուցանել, դոնապան, ջահընկալ, կարգ, աստիճան, պաշտոն, սարկավագուհի և այլ եզրերի մասին, փորձում է որոշել նրանց իրավասությունների սահմանները (էջ 319-327): Եզրակացնում է, որ քաղաքական և զինվորական իշխանությունների թուլացման հետ մեկտեղ ուժեղանում էր կաթողիկոսական իշխանությունը (էջ 328):

Հաջորդ հատվածում Ա. Մարտիրոսյանն անդրադառնում է նվիրապետական կառույցի կառավարման, վերահսկման և պատիժների հիմնական սկզբունքներին, որի հիմքերը դրվելով Շահապիվան-16 կանոնում, Հովհաննես Մայրազումեցու կողմից կատարված հավելումներով խորացել են Նիկիա-10, Գրիգոր Լուսավորչի-26 կանոնախմբերում, ուր եպիսկոպոսներին ընտրելու և պատժելու ամենաբարձր իրավասություններով է օժտվել կաթողիկոսը և զուգահեռաբար եպիսկոպոսական ժողովը (էջ 328-335), իսկ եպիսկոպոսները իրավասություններ են ստացել ավելի ցածր պաշտոնյաների ընտրության, ձեռնադրման և ղեկավարման գործում (էջ 335-336): Այնուհետև անդրադառնում է հիշատակված սկզբունքների ներդրման գործում հուլիանական Հովհաննես Մայրազումեցու վաստակին, Հայոց կանոնական իրավունքի տեսական սկզբունքների ձևավորման գործում նրա ներդրմանը (էջ 337-345): Այստեղ դեռևս պետք է ապացուցել, որ Կանոնագրքի հավելումներն ունեն հուլիանիստական ուղղվածություն, իսկ Հովհաննես Մայրազումեցին էլ եղել է այդ գաղափարախոսության կրողը: Ի տարբերություն մեր հեղինակի, հ. Հովսեփ Գաթրճյանը «Կանոնագիրք Հայոց»-ի նախաօձնեցիական խմբագրությունը վերագրել է Հովհաննես Մանդակունուն՝ խնդիրը լուծելով բոլորովին այլ շրջանակներում:

Այնուհետև գրքի հեղինակն անդրադառնում է հոգևորականության ընտրության կանոնների պրակտիկ կիրառությանը, ձեռնադրության ծեսին, ձեռնադրել, օծանել, ընտրել, կարգ եզրերի քննությանը (էջ 345-353): Տրուլի ժողովի լույսի տակ դիտում է Շահապիվանի ժողովի, Մայրազումեցու և Օձնեցու գործերի բարենորոգչական մեծ նշանակությունը մանավանդ հոգևոր ասպարեզում ժառանգականության մերժման և սիմոնականության հալածման տեսանկյունից (էջ 353-355):

Գլխի երկրորդ բաժինը նվիրված է Հայոց Եկեղեցու «կղերականացմանը», որի մեծագույն ջատագով է համարում Հովհաննես Մայրազումեցուն: Հոգևոր կյանքի զարթոնքի տեսանկյունից անդրադառնում է Ե-Ձ դդ. անապատականությունից վանականության անցման խնդիրների, տերմինաբանությանը (էջ 356-361), Հովհաննես Մայրազումեցու կողմից կանոնների միջոցով կղերականության կամ հոգևոր կյանքի վանականացման, ամուսնացյալ և կուսակրոն քահանաների գործունեության համակարգման խնդիրներին, նրանց բնականության վայրերի մասին խոսող աղբյուրների և եզրերի (կուսաստան, տանտիկին, երեցեղբայր, միայնակյաց, սյունակյաց, մոնոգոնություն, կույս) քննությանը, հիվանդանոցներում և ուրկանոցներում ապրելու

սովորույթին (էջ 361-368): Հեղինակն անդրադառնում է նաև վարդապետի ինստիտուտին, որը համարում է հուլիանիստական եկեղեցական քաղաքականության կրող և Ե-Ը դարերում այդ ինստիտուտի զարգացումը քննում է «Կանոնագիրք Հայոց»-ի թարգմանական և ինքնուրույն կանոնախմբերի վկայակոչումների հիմքի վրա (էջ 368-374): Այստեղ Ա. Մարտիրոսյանը նկարագրական անցում է կատարում վարդապետի ուսուցիչ լինելու դերից մինչև հավատի կանոնակարգչի աստիճանի հաստատումը, այնուհետև անդրադառնում է Եկեղեցու «վանականացման» գնին, ուր խոսվում է «Կանոնագիրք Հայոց»-ում արձանագրված վանականության ստացած պարտադիր եկամուտների (ընծա, մատաղենիք, պտուղ, երախայրիք, մուտք, հաս նն.) (էջ 374-381), սիրո սեղանի (հաց պատարագի, ագապի, մատաղ, մասունս) (էջ 381-390), տասնորդի (390-392), անշարժ և շարժական գույքի նվիրատվությունների (էջ 392-394), Եկեղեցու հարկային արտոնությունների (էջ 394-400) վերաբերյալ:

Գլխի երրորդ բաժինն անվանված է «Միակ արդարադատությունը եկեղեցականն է», ուր անդրադառնում է կանոնական իրավունքը քաղաքացիականի վերածելու Մայրագումեցու միտման մասին: Ըստ հեղինակի՝ եկեղեցական արդարադատության ընդլայնված լինելը վկայված է 607 թ. եկեղեցական ժողովի վավերագրում, որի իրավական հիմքերը փորձում է մատնացույց անել ԿՀ-ի քաղաքացիական հանցանքներին վերաբերող կանոններում (էջ 400-417): Ա. Մարտիրոսյանը այնուհետև հետևում է ԿՀ-ում պատժական իրավունքի զարգացմանը, եկեղեցական դատարանի պատիժների տեսակներին, դատական որոշումներ կայացնելու և մեղքի «ճանաչման» գործում վարդապետի կարգավիճակին, դատարանում երդման դերին, կախարդանքներին, մեղքը ապացուցելու ճանապարհին տանջանքի խաղացած դերին (էջ 418-441):

Աշխատության երկրորդ մասի երկրորդ գլուխը անվանվում է «Եկեղեցու թշնամիների փոխակերպումը» (էջ 442-493): Այս գլխի առաջին բաժնում խոսվում է Հայաստանում ծայր առած հերձվածողական շարժումների (մծղնեություն, պավլիկյանություն⁴, թոնդրակեցիների) մասին և դրանց դեմ պայքարող կանոնների մասին (էջ 443-448): Քննվում են «աղանդ», «հերձուած», «թերահավատ» եզրերը և հիշատակվում են դրանց դեմ պայքարի դաժան միջոցները ըստ կանոնական իրավունքի (էջ 449-454): Գլխի հաջորդ բաժինը վերաբերում է ավանդական սովորույթների դեմ պայքարին (էջ 455-463): Այստեղ խոսվում է նահատակների մասունքների պաշտամունքի, սրբացման, թաղման կարգի մասին, որը, ըստ հեղինակի, պատկերապաշտություն էր դիտվում մաքրամաքուր «միաբնակ» Հովհաննես Մայրագումեցու կուսակիցների կողմից (էջ 455-462): Հեղինակն անդրադառնում է կախարդության, դժոխքի տարբեր ձևերը բնութագրող տերմիններին (թով, գրարանք, ջատուկ, հարցուկք, հատահմայություն նն)՝ ուրացողությանը և այդ հանցանքների պատժման կանոններին (էջ 463-469): Այստեղ խոսվում է նաև Կանոնագրքի այն կանոնների մասին, ուր խոսվում է «արգելված ամուսնությունների» մասին (էջ 471-)՝ համարելով այս բանաձևումները խորթ հայոց սովորությանին իրավունքին (հարսնախոսություն, անչափահասություն, առնանգություն նն.), որոնց դեմ պատերազմ է հայ-

⁴ Հեղինակը հավասարեցման նշան է դնում պավլիկյանների և պատկերամարտների միջև:

տարարել Հայոց Եկեղեցին, Հովհաննես Մայրազումեցու նախաձեռնությամբ դրել է բազմաթիվ արգելքներ: Հեղինակն անդրադառնում է Հայաստանում ժառանգական կարգի փլուզմանը, հերձվածողների հետ ամուսնական արգելքներին, ամուսնալուծության կանոնական խնդիրներին (անպտղություն, մարմնական հիվանդություն, ամուսնական դավաճանություն) և կարգին, կրկնամուսնության խնդիրներին (էջ 479-490): Ա. Մարտիրոսյանը քննարկում է Կանոնագրքում թաղման ծեսին վերաբերող խնդիրները (լաց ու կոծ, ողբ), ներկայացնելով հեթանոսական սովորությունների դեմ Հայոց Եկեղեցու կողմից ծավալված պայքարը (էջ 490-493):

Գրքի հիմնական հարցադրումները ներկայացված են ամփոփման մեջ, ուր հեղինակը ի մի է բերում գրքի ողջ բովանդակությունը (էջ 495-500):

Գրքի վերջում դրված են երկու մեծ հավելվածներ. ա) Շահապիվանի ժողովածուն և բ) Հովհաննես Մայրազումեցու ժողովածուն: Դրանցից առաջինում հեղինակը փորձում է վերականգնել այն կանոնական ժողովածուն, որը շրջանառության մեջ էր Շահապիվանի ժողովի նախօրյակին և կարևոր դեր է կատարել Հայոց Կանոնագրքի ստեղծման պատմության մեջ (էջ 501): Շահապիվանի ժողովին հայտնի ժողովածուն բաժանելով երեք տիպի կանոնախմբերի (Անտիոքյան հավաքածու, Առաքյալների վարդապետություն և Շահապիվանի կանոններ), մեկ առ մեկ անդրադառնում է այդ կանոնախմբերին, քննարկում է ձեռագրերում Շահապիվանի կանոնախմբի վերնագրերի բազմազան տարբերակները՝ «Հայոց կանոններ» վերնագիրը համարելով ամենապատճառաբանվածը: Անցնելով կանոնախմբի նախաբանին, հետևում է Ն. Ակինյանի բնագրագիտական հետազոտությանը, որը այն համարում է ավելի ուշ ժամանակի խմբագրություն՝ արձանագրելով «Կաթողիկոս» և «Մեսրոպ» անվանումների օգտագործման անհնարինությունը Ե դարում: Այա նկատի ունենալով բնագրում Ս. Մահակի տեսիլքի, Վարդան Մամիկոնյանի⁵, աշխարհիկ⁶, հոգևոր⁷ պաշտոնեության հիշատակությունը, ներածության խմբագրումը վերագրում է Հովհաննես Մայրազումեցուն: Միաժամանակ բերում է ՄՄ-659 մատյանի ներածության համապատասխան հատվածը⁸, որը համարում է ավելի նախնական, համեմատելով Արտաշատի ժողովի մասնակիցների ցանկերի հետ⁹, որը բերում են Եղիշեն և Փարպեցին (էջ 504-507): Անդրադառնում է Կանոնագրքի բնագիր մուծված առաջին կանոնախմբերին: Անցնելով Շահապիվանի ժողովի կանոններին, նախագգուշացնում է, որ դրանց մեծամասնությունը վերախմբագրվել և վերադասավորվել են Հովհաննես Մայրազումեցու կողմից: Անդրադառնալով Ներսես Մեծի հրավիրած Աշտիշատի ժողովին (էջ 509-510), կարծում է, որ այն Բյուզանդարանի հեղինակի մտասկեռման և Շահապիվանի ժողովի հեղափոխական որոշումները օրինականացնելու փորձ է: Իհարկե բերված փաստարկները անբավարար են հարցի լուծումը վերջ-

⁵ Ըստ Ն. Ակինյանի՝ Կարմիր Վարդան:

⁶ Աշխարհիկ պաշտոնեության հիշատակությունը կապի մեջ է տեսնում Ագաթանգեղոսի բնագրի հետ:

⁷ Հոգևոր պաշտոնեության մեջ վարդապետի առաջադասությունը կապում է Հովհաննես Մայրազումեցու ճառերում առկա վկայությունների հետ:

⁸ Այստեղ հիշատակվում է 40-ի փոխարեն 20 եպիսկոպոս, որն, ըստ Ա. Մարտիրոսյանի, ավելի մոտ է պատմական ճշմարտությանը:

⁹ Այս ժողովին մասնակցած եպիսկոպոսների ցանկերի մասին տե՛ս Համելեան, Բազմավեպ, 1951(109), էջ 256-262, 1952(110), էջ 4-10:

նական համարելու համար, մանավանդ որ հեղինակը անտեղյակ է Կանոնագրքի ձեռագրական ավանդույթից:

Այնուհետև Ա. Մարտիրոսյանն անցնում է «Նիկիական կանոնների» կամ, այսպես կոչված, «Անտիոքի ժողովածոյի» պատմաբանասիրական քննությանը (էջ 510-529): Անդրադառնում է Նիկիայի ժողովին Արիստակեսի մասնակցության և այնտեղ հաստատված կանոնների Հայաստան բերման¹⁰ խնդրին (էջ 510-513): Ցույց է տալիս, որ «Նիկիայի ժողովի կանոններ» ասելիս, ժամանակակիցները նկատի են ունեցել կանոնախմբերի այն ամբողջությունը, որն ընդգրկում է Տիեզերական Եկեղեցու 350 թ. ընդունած կանոնախմբերի ժողովածուն¹¹, որն այլ մատենագրություններում ստացել է նաև «Անտիոքյան հավաքածու»¹² անունը և ընդգրկում է Անկյուրիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի, Լաոդիկիայի կանոնախմբերը, որոնց մուտքը Հայաստան, հետևելով Կորյունին, թվագրում է 435/6 թ.¹³, ընդգծելով նախնական թարգմանության համար ասորական ճանապարհը¹⁴ (էջ 513-524): Ստացվում է, որ Աստվածաշունչը և Կանոնագիրք հայոցը մատենագրություն են մուտք գործել գրեթե նույն ճանապարհով: Այդ ժողովածուն գոյություն չունի այսօր հունարեն և պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ, Հովհաննես Մայրագումեցու լրացումներով: Կանոնագրքի հետօձնեցիական ժողովածոյում պահպանված «Երկրորդ Նիկիական կանոնախմբ»-ը Ա. Մարտիրոսյանը¹⁵ համարում է «Անտիոքյան հավաքածուի» նախնական թարգմանության օրինակը, ուր չեն բերված միայն իրենց այժմեականությունը կորցրած կանոնները (էջ 524-529):

Գլխի երրորդ բաժնում Ա. Մարտիրոսյանն անդրադառնում է «Առաքելական կանոնախմբերին», դրանց թարգմանության լեզվի, թվականի, ծագման խնդիրներին, որոնք վեճի առարկա են դարձել մասնագետների շրջանում (էջ 529-532):

Գրքի երկրորդ հավելվածը վերաբերում է Հովհաննես Մայրագումեցու ժողովածոյին, նրա կազմի մեջ մտնող կանոնախմբերի պատմաբանասիրական քննությանը (էջ 533-625): Այստեղ Ա. Մարտիրոսյանը առանձին-առանձին անդրադառնում է Շահապիվանի ժողովից Հովհաննես Մայրագումեցուն հայտնի Նիկիական կանոնների (կամ Անտիոքյան հավաքածու) կանոնախմբերին, որոնք մտել են Հովհաննես Օձնեցու կազմած (719 թ.) Կանոնագրքի բնագիր, որը, ցավոք, մեզ չի հասել: Վերջին ժողովածուի մասին, ըստ նրա, պատկերացում ենք կազմում մի ձեռագրով, որը մեզ

¹⁰ Թոմասը կարծում է, որ այդ կանոնները Հայաստան պետք է բերած լինի Եզնիկ Կողբացին:

¹¹ Անտիոքում ստեղծված այս ժողովածուի մեջ ընդգրկված են եղել Անկյուրիայի և Նեոկեսարիայի ժողովի կանոնները: Նիկիայի ժողովի կանոնների բացակայությունը այս ժողովածոյում մասնագետներին թույլ է տվել ենթադրել, որ Անտիոքյան հավաքածուն ստեղծվել է արիոսական միջավայրում:

¹² Ա. Մարտիրոսյանը խոսում է Դ-Ե դարերում Տիեզերական Եկեղեցու արևելյան և արևմտյան թեմերում շրջանառության մեջ եղած կանոնական ժողովածուների, նրանց ընդգրկած կանոնախմբերի մասին:

¹³ Այստեղ հիմնվում է Ս. Տիգրանյանի և Մ. վան Էսբրուկի ենթադրության վրա:

¹⁴ Այս թեզը հաստատելու համար հիմնվում է Ն. Գարսոյանի ենթադրության վրա, ըստ որի Սելևկիա-Կոնստանդինոպոլիսի ժողովին (410 և 420 թթ.) մասնակցած Մոկքի եպիսկոպոսները կաղող էին Մեծ Հայք բերած լինել այդ կանոնախմբերը (էջ 523):

¹⁵ Ա. Մարտիրոսյանը գրքի վերջում բերում է այս երկու կանոնախմբերի կանոնների համեմատական տախտակը, ուր ներկա է 163 կանոններից 113-ը:

հասել է 1098 թ. մի ընդօրինակությամբ, որն էլ հրատարակել է Վազգեն Հակոբյանը: Այս ժողովածոյի կանոնախմբերի մի մասը Հովհաննես Օձնեցին վերցրել է հուլիանական աստվածաբան Հովհաննես Մայրագումեցու կանոնական ժողովածոյից և դարձրել ԿՀ-ի անբաժանելի մասը: Հետևաբար, վերցված կանոնախմբերի վրա Ա. Մարտիրոսյանը տեսնում է Հովհաննես Մայրագումեցու խմբագրության հետքերը: Անդրադառնալով Նիկիական կանոնների ժողովածոյին, հեղինակն այն համեմատում է հունարենով պահպանված Անտիոքյան ժողովածոյի (շուրջ 500/501 թ.¹⁶) հետ, գալիս է այն ենթադրության, որ հայերեն ժողովածուն միջին տեղ է զբաղեցնում 435 թ. Հայաստան բերված և հիշատակված բնագրի միջև (էջ 534, ծան. 6): Ըստ հեղինակի՝ Հովհաննես Մայրագումեցին ժողովածուն հարմարեցրել է Հայաստանի պայմաններին, ավելացնելով կանոններ, որոնք խորթ են հունարեն ժողովածոյին, հավելելով աստվածաշնչային բազմաթիվ հղումներ, որոնք չկան հունարեն բնագրում: Անհրաժեշտ է նշել, որ վերջին հանգամանքը ժամանակին նկատել են Գաթրճյանը, Տաշյանն ու Ակինյանը, վերագրելով հավելումները Հովհաննես Մանդակունուն:

Անտիոքյան ժողովածոյի մեջ մտած կանոնախմբերից հիմնականը, ըստ Ա. Մարտիրոսյանի, Նիկիայի ժողովի կանոնախումբն է, որը ենթարկվել է Մայրագումեցու բժախնդիր խմբագրմանը, դրա համար կովան համարելով ներածությունը (էջ 535): Ա. Մարտիրոսյանին թեպետ հայտնի է Հովհաննես Օձնեցու հավաստիացումը, որ ինքը կանոնախմբերը օժտել է ներածությամբ, դրանցից շատերի վրա նշմարում է Մայրագումեցու խմբագրության կնիքը: Այս ենթադրությունը նրան հիմք է տվել կարծելու, որ Մայրագումեցին ներածություններ է գրել որոշ կանոնախմբերի համար, իսկ Օձնեցին վերախմբագրել է դրանք: Այսպես, օրինակ՝ Կոստանդինյան կայսեր նամակը սարքված համարելով Փիլոն Թիրակացու թարգմանած Սոկրատ Մքռլաստիկոսի «Եկեղեցական պատմություն»-ից¹⁷, թույլ է տվել Ա. Մարտիրոսյանին ենթադրել, որ այդ շարադրանքի հեղինակ կարող է լինել Հովհաննես Մայրագումեցին: Նամակին հաջորդում է Նիկիայի ժողովի հավատո հանգանակը, որը հայ մատենագրության մեջ ունի մի քանի խմբագրություն¹⁸: Այս հավատո հանգանակին հաջորդում է ժողովի մասնակիցների և ժողովում նգովքի ենթարկված հերձվածողների ցանկերը, վերջապես ժողովի 20 կանոնները¹⁹: Այս նույն մանրամասնությամբ Ա. Մարտիրոսյանը անդրադառնում է Անկյուրիայի (էջ 540-541), Նեոկեսարիայի (էջ 541-542), Գանգրայի²⁰ (էջ 543-553), Անտիոքի (էջ 553-555), Լաոդիկիայի (էջ 555-557)

¹⁶ Նկատի ունի Հովհաննես Մքռլաստիկոսի կազմած «Մինագոգան»:

¹⁷ Հետևելով Մ. Շիրինյանին, Ա. Մարտիրոսյանը ենթադրում է Սոկրատ Մքռլաստիկոսի պատմության ավելի վաղ, Ե դարի թարգմանություն:

¹⁸ Դրանցից մեկը առկա է Կյուրեղ Աղեքսանդրացու երկերում, մյուսները՝ Աղբաթանեցու առ Կյուրիոն թղթերից մեկում և Դվին 506 թ. ժողովական թղթում: Դրանք բերվում են ըստ Մ. Շիրինյանի, Գ. Մուրադյանի և Ռ. Թոմսոնի հետազոտությունների:

¹⁹ Ա. Մարտիրոսյանը, ցույց է տալիս, որ որոշ կանոններ փոփոխված են, սակայն թիվը մնացել է անփոփոխ: Նա նաև օրինաչափություններ է նկատում մյուս կանոնախմբերի կանոնների քանակի հետ կապված (էջ 539, ծան. 29):

²⁰ Այս հատվածում հետաքրքիր փաստ է արձանագրված. Գանգրայի ժողովի Պահքին վերաբերող 20 և 21 կանոնները ներառված են Մովսես Յուրտավեցու թղթերից մեկում (տե՛ս Garsoian, 1999 B, p. 524-529,

ժողովների կանոնագիրք մտած կանոնախմբերին, հաշվի առնելով այդ խնդիրների շուրջ հայագիտության մեջ արձարծված մոտեցումները:

Կանոնախմբերի երկրորդ շարքը «Առաքելական կանոններն» են: Դրանք հայերեն բնագրում ունեն «Վարդապետության առաքելականք» անունը, որը ծագում է ասորերեն բնագրից: Կան նաև մայր բնագրից տարբեր մոտեցումներ. օրինակ, եթե ասորերեն բնագրում Ծովքի և ողջ Միջագետքի առաքյալ է համարվում 72 առաքյալներից Ադդեն, ապա հայկական բնագրում Եդեսիայի, Մծբինի, Միջագետքի և Հայաստանի առաքյալը Թադեոսն է, որը դասվում է 12 առաքյալների շարքին: Կանոնախումբը կապվում է Եդեսիայի թագավորական դպիր Լաբուբնայի անվան հետ: Այդ բնագիրը Հայաստանում շրջանառության մեջ է եղել սկսած Ե դարի սկզբից, սակայն Մայրագումեցին ազգային ավանդությունների և սեփական վարդապետության շահերից ելնելով կատարել է բազմաթիվ խմբագրումներ (էջ 558-562):

Գրքի այս ընդարձակ գրախոսությունից հետո պիտի ավելացնենք, որ Ա. Մարտիրոսյանի աշխատանքը չափազանց կարևոր ներդրում է հայագիտական հետազոտությունների կանոնագիտական և պատմաբանասիրական հետազոտությունների բնագավառում: Այս մեծարժեք աշխատությունը մեծ ավանդ է «Կանոնագիրք Հայոց»-ի հետազոտման ճանապարհին: Քննարկված խնդիրներից շատերը թեպետ նորայթ են հայագիտության համար և նոր ուղիներ են մատնանշում կանոնական բնագրերի հետազոտության բնագավառում, այնուամենայնիվ, բազմաթիվ դեպքերում պետք է սպասել մատենագրական նոր ապացույցների հայտնաբերմանը: Իհարկե, արձարծված պատմաբանասիրական խնդիրներից շատերը պահանջում են նոր մոտեցումներ: Նման հետազոտություն հնարավոր կլինի կատարել ապագայում, երբ կկազմվի «Կանոնագիրք Հայոցի»-ի գիտաքննական նոր բնագիրը և հաշվի կառնվեն նաև բոլոր կանոնագիտական բնագրերն ու ձեռագրերը: Ցանկանանք հեղինակին ստեղծագործական նոր հաջողություններ, իսկ հայագիտությանը՝ արձարծված հարցերի ավելի խորը վերլուծություններ:

530, n. 35): Հետաքրքիր է, որ նույն վավերագրի Ուխտանեսի բերած տարբերակում այդ հատվածը բացակայում է: Ակինյանն այդ հավելումը վերագրում է Վրթանես Քերթոզին, իսկ Ա. Մարտիրոսյանը, հետևելով Մ. վան Էսբրուկին, Հովհաննես Մայրագումեցուն է վերագրում □Պատճառք Դ ժողովոյն□ երկը (van Esbrouck, 2002):

ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ

ՋՈՒԼԻԵՏԱ ԷՅՆԱԹՅԱՆ

Ֆիզիկա-մաթեմատիկական
գիտությունների թեկնածու

«ԹՈՒԱԿԱՆ»-Ի ՄԱՀՄԱՆՈՒՄԸ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայկական միջնադարյան ձեռագրերում պահպանված տոմարագիտական բնագրերը տեսական աշխատանքներ են, կոնկրետ սահմանումներ, աղյուսակներ, մեկնություններ, որոնք ուղղված են մեկ նպատակի՝ ճշգրիտ հաշվել ժամանակը: Տոմարի մասին տեղեկությունները մինչև հայ գրերի ստեղծումը քիչ են: Մեզ հայտնի հայկական օրացույցը 12x30+5 տիպի է, այսինքն շարժական է: Տարին անփոփոխ 365 օր հաշվելու պատճառով չորս տարին մեկ անգամ տարեսկիզբը տեղափոխվում էր մեկ օրով:

Ենթադրություններ են եղել, որ մեր տոմարը փոխ է առնված եգիպտական արեգակնային օրացույցից¹: Իհարկե, Հայաստանը տնտեսական և քաղաքական իր կյանքով մեկուսացված չի եղել իր շրջապատից. նա անընդմեջ գտնվել է Արևելքի և Արևմուտքի մշակույթների խաչաձևման կենտրոնում: Մակայն ուշադրության արժանի է պատմական այն իրողությունը, որ եգիպտացիները 26 թ. Ն. Ք. անցան անշարժ տոմարի, իսկ հայկական շարժական տոմարը հարատևեց ավելի քան մեկ հազարամյակ:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով, եգիպտական օրացույցը նախատիպ է հանդիսացել նաև զրադաշտականի համար: Չնայած նրան, որ նմանությունն ակնհայտ է, իրավացի է գիտության պատմության ուսումնասիրողներից Վ. Ա. Լիվշիցը, երբ գրում է. «Կառուցվածքի մեծ նմանությունը եգիպտական տոմարի հետ՝ շատ ուսումնասիրողների բերել է այն եզրակացության, որ թափառող արեգակնային տարվա մասին գաղափարը փոխ է առնված եգիպտականից... Մակայն ազգագրական տվյալները ցույց են տալիս, որ 360 և 365 օրերից կազմված արեգակնային տարվա վրա հիմնված տոմարական համակարգերը հանդիպում են տարբեր ժողովուրդների մոտ գրեթե բոլոր աշխարհամասերում»²:

Հայկական տոմարը անհարմարություններ է ստեղծել քրիստոնեություն ընդունելուց հետո, քանզի եկեղեցական տոների հաշվարկի համար պետք էր ունենալ հաստատուն օրացույց: Այս իմաստով ամենանպատակահարմարը հուլյանն էր: Հռոմեական կայսրության արևմուտքում այն մնաց անփոփոխ, իսկ արևելյան նահանգներ-

¹ Լ. Մեմոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին, Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, համար առաջին, Երևան, 1941, էջ 19-23; Ա. Է. Էնի օթթթ, Օթի օթթթ, Ի ., 1967, ռ. 66.

² В. А. Лившиц, "Зороастрийский" календарь, - в кн. Э. Бикерман, Хронология древнего мира, М., 1975, с. 325.

րում, ուր կայսրության պաշտոնական լեզուն հունարենն էր, նոր տոմարը հարմարեցվեց տեղական սովորություններին: Չորրորդ դարի արշալույսին Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ճանաչվելուց հետո Արևելյան Հայաստանում եկեղեցական լեզուն ժողովրդին քիչ մատչելի ասորերենն էր, Արևմտյան Հայաստանում՝ հունարենը: Պետք է ենթադրել, որ եկեղեցական տոներն էլ կարգավորվում էին ասորական և հունական տոմարներով:

Քաղկեդոնականությունը երբ պաշտոնապես ընդունվում և պարտադիր է դառնում Բյուզանդական կայսրության մեջ, հայերի համար դավանության խնդիրը ստանում է ազգային-քաղաքական նշանակություն. «Հռոմեների ազդեցությունից զերծ մնալու և ազգային միությունը պահպանելու համար պետք էր դավանապես զատվել նրանցից»³:

Վեցերորդ դարի կեսին գումարվեց Դվինի ժողովը, որտեղ քննարկվեց նաև տոմարի հարցը: Հետագոտողների գնահատմամբ, «Դուինի Բ ժողովը մեր եկեղեցական պատմության մեջ ամենին կարևոր ժողովքներն մեկն է, որուն շուրջ բանասերներու կարծիքներն բազմազան են»⁴: Դվինի ժողովին է վերագրվում Քաղկեդոնի մերժման, հակաքաղկեդոնական գործերի թարգմանություններ կատարելու և «Որ խաչեցար»-ի հավելման միացման որոշումները: Ուսումնասիրողը կարծում է՝ «Ըստ մեկ ուրիշ աղբյւրի քանի որ Յուստինիանոս կայսրը բացայայտ կերպով ընդունեց Քաղկեդոնի ժողովի որոշումը, Տեր Ներսէս արար ժողով ի Դուին՝ հրամանաւ արքային Պարսից վասն բաժանման ի Յունաց»⁵:

Հայ և հարևան Եկեղեցիների դավանական հիմնական տարբերություններից մեկը «Սուրբ Աստված» աղոթքին «Որ խաչեցար» հավելումն էր, որի պատճառով մի անգամ չէ, որ Հայ Եկեղեցին ստիպված էր դավանական վեճեր մղել իր բազմադարյան պատմության ընթացքում⁶: Այս առումով հետաքրքիր է Վանական վարդապետի հաղորդումը. «Եւ որպէս ոչ ընկալան Հայք զչար աղանդն Քաղկեդոնի... այսու սահմանաւ զՍուրբ Աստուածն խաչեցան հաստատեաց»⁷: Ձեռագրերում կան տեղեկություններ, ըստ որոնց՝ մեր տոմարի «շրջվելը» և «Խաչեցար»-ի ընդունումը փոխկապակցված են. «Ի թագաւորութեան Խոսրովու, ի հայրապետութեան Ներսէսի Շինողի... սահմանեցին կանոն զԽաչեցարն եւ եղին տոմար ըստ Հայոց»⁸:

Հայտնի է, որ քրիստոնյա ժողովուրդները իրենց հիմնական տոնի՝ Չատկի և նրա հետ կապված եկեղեցական տոների համար կազմում էին զատկացուցակներ 19, երբեմն 95, 200 տարիների համար: Վերջինը հայկական մատենագրության մեջ հայտնի

³ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 397:

⁴ Անանեան Պ. Հ., Պատմական յիշատակութիւն մը Դուինի ժողովքի մասին, Բազմավեպ, 1957, համար Ե-Զ, էջ 111:

⁵ Անանեան Պ. Հ., Պատմական յիշատակութիւն մը Դուինի ժողովքի մասին, Բազմավեպ, 1958, համար Գ-Ե, էջ 65-69:

⁶ Меликсет-Бекон Л., Грузинский извод сказания о посте "Араджавор", Христианский восток, С/Пб, 1916, том 5, вып. 2, с. 106.

⁷ Խաչիկյան Լ., «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ», Մատենադարանի գիտական նյութերի ծողովածու, համար մեկ, Ե., 1941, էջ 164:

⁸ ՄՄ ձեռ. համար 1999, թ. 86ա:

է Անդրեասի անունով, որը հաշված էր 353-552 թթ. համար⁹: Ձեռագրերը հայտնում են, որ Անդրեասը միասնություն և պարզություն է մտցրել քրիստոնյա տարբեր ազգերի տոմարների միջև. «Նա էր, որ արար միաբանություն ամենայն տիեզերաց լրմանց, վերադրաց եւ տարեմտից եւ այլ զանազան խորհրդոց»¹⁰:

Անդրեասի զատկացուցակի ավարտից մի քանի տարի հետո, վեցերորդ դարի կեսից, գործածության մեջ է մտնում Էաս Աղեքսանդրացու խմբի կողմից կազմված 532-ամյա շրջանը: Այս վերջինի առավելությունն այն էր, որ 532 տարի անցնելուց հետո նորից կարելի էր օգտագործել, եթե, իհարկե, հաշվի չառնվեին հուլյան տոմարում տեղ գտած թերությունները, որոնք նկատվեցին և վերացվեցին 16-րդ դարում (Գրիգորյան տոմար):

Ըստ բանասիրության մեջ ընդունված կարծիքի, 552 թվի հուլիսի 11-ից սկիզբ է առել հայկական թվագրությունը՝ Հայոց Մեծ թվականը. «Արդ, ի դնել Մեծ թուականին, Հայոց Նաւասարդն, որ տարեգույն եղաւ հայոց և սկիզբն թուականին, ըստ Հռոմոց ամսոցն՝ ի Յուլիս ամսոյ ի ԺԱ (11) եղեալ է: Եւ Յայտնութիւն յԱրաց ամսոյ Լ (30) դիպեցաւ եւ ամն առաջնում նահանջի եւ չորրորդ ամն նահանջ, որ է զուգ թիւ»¹¹: Նշվում է նաև, որ դա տեղի է ունեցել ոչ թե 552 թ. հուլիսին կամ 553 թ. հունվարին, այլ «սկիզբն թուականիս մերոյ է ՇՕԳ (553) թիւն, որ ի Քրիստոս է, բայց ոչ ըստ դրութեան, այլ ըստ թուելութեան»¹²: Հայոց թվականի հիմնադրման մասին հետաքրքիր տեղեկություն ունի Հովհաննես Վանականը. «Յորժամ մերքս բաժանեցան եւ գտումարս շրջեցին՝ յԱրաց երեսունն էր Յայտնութիւնն... Եւ շրջելոյ պատճառ ասեն ոմանք, թէ ընդ Պարսից իշխանութեամբ էին, իշխանքն կամեցան, թէ ընդ նոսա յարլիցի, որ երկու անգամ տարեմուտ ոչ պիտի առնել: Բայց... Պարսից տաւնն եւ ամիսն ի միասին շարժի, եւ մեր տաւնքս անշարժ են: Եւ այլք ասեն, թէ վասն աշխատելոյ մանկանց ի յուսումն, զի դիւրաւ գտանելին դիւրաւ արհամարհելի է: Եւ ոմանք՝ թէ կամեցան ամենայնիւ բաժանել զմեզ ի Յունաց, զի մի՛ խառնեցուք ընդ նոսա տաւնիք կամ ամսաւք, կամ տարեմտիք»¹³:

Տոմարի շարժական լինելը, ինչպես նաև եկեղեցական վեճերում տեղ գտած բազմաթիվ տոների հաշվարկի պարզաբանման անհրաժեշտությունը առիթ են տվել տոմարագիտական աշխատություններ գրելու, թարգմանելու, մեկնելու: Դրանց զգալի մասը պահպանվել է ձեռագրերում. վանական Բարձրագույն տիպի դպրոցներում վարում էին տոմարագիտության դասեր, սովորեցնում էին հաշվումներ անել ինչպես հայկական, այնպես էլ հարևան ժողովուրդների տոմարներով: Անհրաժեշտ էր հետևել, որ սեփական տոմարական համակարգը զուգահեռ և անսխալ գնար հուլյան տոմարին, միաժամանակ մնալով ինքնուրույն, ազգային:

Այդ հարցերին նվիրված հայկական միջնադարյան ձեռագրերն ուսումնասիրողները նշել են, որ նրանց մեջ առանձնանում է հատկապես անհեղինակ մի աշխատություն՝ «Պատճեն տոմարի», որն ըստ նրանց «հայկական տոմարի կապիտալ

⁹ Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Ե., 1973, էջ 99:

¹⁰ ՄՄ ձեռ. համար 1114, թ. 98ա, ՄՄ ձեռ. համար 6089, թ. 206ա,բ

¹¹ ՄՄ ձեռ. համար 1114, թ. 51ա:

¹² Նույն տեղում, թ. 100ա:

¹³ Խաչիկյան Լ., «Յաղագս տարեմտին...», էջ 165է

գործ է», «տոմարական կանոնների հանրագիտարան», «տեղեկատու՝ տոմարով զբաղվող մասնագետի համար» և այլն¹⁴։ Անհեղինակ այդ աշխատությունը հայկական միջնադարյան տոմարագիտական հարուստ գրականության մեջ առանձնանում է և իրոք հատուկ տեղ ունի հայ աստղագիտության և տոմարի պատմության մեջ։ Այն դասագրքի դեր է կատարել վանական դպրոցներում և կարևոր տեղ ունի Հայաստանում բնական գիտությունների բազմադարյան պատմության մեջ։

«Մեկնութիւն տոմարի» խորագրված իրենց ուսումնասիրությունների մեջ մեր տոմարագետները մեկնել են «Պատճէն տոմարի» գործը և մի քանի հարյուրամյակ շարունակ այն փոխանցել հաջորդ սերունդներին։ Միջնադարյան քրիստոնեական երկրներում աստղագիտության գլխավոր խնդրի՝ եկեղեցական օրացույցի կարգավորման համար այստեղ շարադրված առանձին գլուխները՝ «պատճենները», բովանդակում են ինչպես հայկական, այնպես էլ հարևան տասից ավելի ժողովուրդների օրացույցներին վերաբերող տեսական և գործնական խորհուրդներ, սահմանումներ, աղյուսակներ, որոնք ներկայացված են Արեգակի, Լուսնի, մոլորակների, կենդանականների ընթացքի մանրամասն նկարագրության հենքի վրա։

«Պատճէն տոմարի» մի քանի տասնյակ ձեռագրերի ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ ժամանակի ճշգրիտ գիտությունների խոր գիտելիքներ ունեցող և տոմարական մյուս համակարգերին քաջածանոթ գիտնական մի անձնավորություն, հայկական ամիսների և տարվա կառուցվածքը թողնելով անփոփոխ, եկեղեցական ճշգրիտ հաշվումների համար ստեղծել է հույյան տոմարին զուգահեռ ընթացող ինքնուրույն համակարգ, որով առաջնորդվել է եկեղեցին։ Շարժական տոմարով այդ հաշվարկը կատարելու համար պետք էր գիտական մեծ հմտություն, որ վաղ միջնադարի Հայաստանում կարող էր ունենալ միայն Անանիա Շիրակացին։ Իրոք, նրա անունն արձանագրվել է տարբեր ժողովուրդների Զատիկի 19-ամյակների հիմնադիրների անունների միջնադարյան բնագրական շարքում. հին Իսրայելում Մովսեսն օրինադրեց Զատիկի լրումները... Արիստակես Աթենացին այն կազմեց հռոմեացիների համար... Անատոլիոսը՝ հույների և ասորիների համար... Անդրեասը միաբանություն մտցրեց բոլորի միջև, որից հետո Անանիա Շիրակացին պատրաստեց Լուսնի լրումների հաշվարկը Հայոց Մեծ թվականի համար¹⁵։

Եթե տոմարական հիմնական էլեմենտների սահմանումները մյուս ժողովուրդների «պատճենների» մեջ գրեթե նույնն են, ապա Հայոց տոմարի տեսությանը նվիրված մասում տրված են շարժական տոմարի առանձնահատկություններին հարմար օրենքներ, որոնք խախտելու դեպքում կշեղվեին տոների ճշգրիտ հաշվարկից։ Դրանցից հիմնականը վերաբերում է «Թուական այսպես արա» ձևակերպումին, որը «Պատճէն տոմարի հայոց» բաժնում տրված է երկու ձևով։ Թվում է, թե թվականը հաշվելու համար առանձին կանոն պետք չէր սահմանել, քանի որ դրա համար բավական էր ունենալ հաշվարկի սկզբնակետ։ Սակայն պարզվում է, որ այդ աշխատության շարադրողը սահմանումների համակարգում հիմնական տեղը տալիս է հենց այդ կանոնին։ Իսկ վերջինս տրված է երկու ձևով. դրանցից մեկը կապվում է

¹⁴ Պատճէն տոմարի (Է-ԺԵ դդ.), քննություն և բնագրեր, աշխատասիրությամբ Զ. Էյնաթյանի, աշխատակցությամբ և խմբագրությամբ Գ. Տեր-Վարդանյանի, Ե., 2002։

¹⁵ ՄՄ ձեռ. համար 2001, թ. 212բ-213ա։

Հայտնության, մյուսը՝ գարնանային օրահավասարի հետ: Այսպես, առաջինը պահանջում է թվականի հաշվարկը կատարել հետևյալ կերպ. «Կալ թիւ մի յԱրաց ամսոյ, թուեա մինչն ցՅայտնութիւն, չորեքպատկեա, և այն է: Թէ յառաջին ամին ես, Գ(3) երթ ի բաց, յերկրորդին՝ Բ(2), յերրորդին՝ Ա(1), իսկ չորրորդին լիով կալ՝ նահանջ է»¹⁶: Քանի որ Հայոց Մեծ թվականի սկիզբը դրվել էր 552 թ. հուլիսի 11-ին, ապա առաջին տարվա Աստվածհայտնությունը, այսինքն՝ հունվարի 6-ը, համընկել էր հայկական Արաց ամսի 30-ի հետ:

Թվականի մյուս սահմանումը կապված է գարնան օրահավասարի հետ. «Թուական այսպէս արա. կալ ԺԸ(18) թիւ Ահկի ամսոյն, թուեա մինչն ցգարնանամուս...», իսկ այնուհետև նույն շարունակությունը, ինչ որ առաջին սահմանման մեջ էր¹⁷: Դժվար չէ համոզվել, որ եթե Արաց 30-ը = հունվարի 6, ապա նույն տարում Ահկի 13 = մարտի 20: Սահմանումը խորհուրդ է տալիս հայկական ցանկացած տարեթիվը գտնելու համար տեսնել, թե գարնանային օրահավասարի օրը Ահկի 13-ից ուր է հասել, կամ որ նույնն է Ահկի մեջ վերցնել 18 օր, որին պետք է գումարել տարվա մյուս օրերը, որոնք Ահկից հետո անցել են մինչև օրահավասարը, բոլորը բազմապատկել չորսով, հաշվի առնել սահմանման խորհուրդը, և կստացվի թվականը: Ինչպես տեսնում ենք, հայոց տոմարի շարժական լինելը հաշվի է առնված, ընդ որում թվականը հաշվում էին հենց այդ շարժումին նայելով, տվյալ դեպքում այդ անում էին Հայտնության և գարնանային օրահավասարի օրվա շարժումներին հետևելով:

Չնայած շարժական հայոց և անշարժ հուլյան տոմարների համադրության դժվարություններին, հայոց շարժական տոմարը շարունակել է ընթացքը: Դրանից դժգոհել են ոչ միայն օտարները, այլև Հայոց թվականի հիմնադրումից կես հազարամյակ հետո տոմարական հաշիվները սխալներից մաքրող, խմբագրող տոմարագետը՝ Հովհաննես Սարկավագը. «Չատ և ուրիշ ամենեցունց՝ զխառնումն ամսոց և յեղանակաց ընդ միմեանս ունել առանձնակի, առնել զգումարութիւնս նահանջիցդ, ըստ Արեգական ընթացից, զոր ամենեքեան արկանեն ի թիւ ամսոցն ի չորրորդում ամի կատարման աւուրն նահանջի»¹⁸: Սա չէր նշանակում, թե նահանջի մասին մոռացել են: Ընդհակառակը, նահանջը հայոց տոմարական համակարգում կենտրոնական-առանցքային դեր ուներ. «Զի՛նչ է նահանջ» հարցի պատասխանը այս է՝ «Մայր ամենայն թուականութեան, որ բաղկանայ ի Դ(4) տարոջ աւր Ա(1), որ կոչի Դըմպիադ: Մայ է լոյսն, որ յառաջ, քան զԱրեգական»¹⁹: Ասենք, որ շարժական տոմարից անշարժին անցնելը մեծ դժվարությունների հետ չէր կապված, քանի որ աչքի առաջ էին հարկանների անշարժ օրացույցները: Դժվարը՝ հայոց շարժական տոմարը մյուսների հետ համապատասխանեցնելն էր, որն այնպես վարպետորեն արված է «Պատճեն տոմարի»-ում: Իրավացի է Մ. Օրմանյանը՝ «Մարկաւագին ըրածը ոչ նոր գիտ էր և ոչ էլ դժուարին գործ. բաւական էր յուլեան տոմարի հաստատած դրութիւնը ընդունիլ, յիւրաքանչիւր չորրորդ տարին օր մի յավելուլ»²⁰: Առաջին 532-ամյա շրջանի ա-

¹⁶ ՄՄ ձեռ. համար 5975, թ. 3բ:

¹⁷ ՄՄ ձեռ. համար 7098, թ. 137բ:

¹⁸ Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե., 1956, էջ 371:

¹⁹ ՄՄ ձեռ. համար 6869, թ. 113բ:

²⁰ Մ. Օրմանյան, «Ազգապատում», գիրք Ա, էջ 1308:

վարտին հայոց և հռոմեական թվականների միջև մեկ տարվա խզում էր առաջացել, որի մասին գրել և սխալը ուղղել է Հովհաննես Մարկավազը:

Ձեռագրային նյութերի հետազոտման արդյունքում եկել ենք այն եզրակացության, որ 11-րդ դարի խոշորագույն մտածող Հովհաննես Մարկավազը իր ստեղծած անշարժ «սարկավագադիր» տոմարը կիրառել է միայն «Յայսմաւորք» ժողովածուներում: Տոմարի տեսական և գործնական խնդիրները «Պատճէն տումարի» բարեփոխված տեքստում հենց Մարկավազի կողմից տրված են դարձյալ շարժական տոմարի օրենքներով: Այսպես, Փոքր թվականի երկու սահմանումներից մեկը կապված է Հայտնության, մյուսը՝ գարնանային օրահավասարի օրվա հետ. «Ի Մեծ թուականէն ՇԼԳ (533)²¹ ի բաց երթ՝ Փոքր է: Դարձեալ՝ կալ յերեքտասանէն Մարգաց ամսոյ, թուեա մինչև ցՅայտնութիւնն, չորեքպատկեա՝ նոր թուական է: Թէ յառաջին ամին ես՝ Գ(3) երթ, եթէ յերկրորդին՝ Բ(2)...»²²: Պարզ հաշվարկից կարելի է համոզվել, որ Մարկավազի ժամանակ Հայտնության օրը Արաց 30-ից հասել էր Մարգաց 13:

Ձեռագրերը հարուստ են «Մեկնութիւն տումարի» կոչվող աշխատանքներով, որոնցում միջնադարյան տոմարագետները պարզաբանում են Հայոց Մեծ թվականին վերաբերող տոմարական բաժինը: Ձեռագիր բազմաթիվ օրինակներում պահպանված այս մեկնությունները մեծ արժեք ունեն, քանզի նրանք նպատակաուղղված են եղել տոմարի տեսության խրթին հարցերը մեկնաբանելու, մատչելի դարձնելու՝ տարբեր դարերի վանական տիպի դպրոցների սաների համար, դրանով իսկ այն պահպանելով գործածությունից դուրս գալու վտանգից: Սույն հոդվածում ներկայացված են Հայոց Մեծ թվականի երկու սահմանումները և նրանց մեկնությունները տարբեր դարերի տոմարագետների կողմից: Բնագրերը ներկայացված են հետևյալ հերթականությամբ.

Ա1. «Պատճէն տումարի», - ՄՄ ձեռ. համար 5975

Ա2. «Պատճէն տումարի», - ՄՄ ձեռ. համար 7098

Բ. «Մեկնութիւն տումարի Անդրեասայ», - ՄՄ ձեռ. համար 1973: Այդ աշխատությունը, որը մինչ այժմ չի հրատարակվել, բաղկացած է 22-23 հարց ու պատասխաններից, որոնց մեծ մասը կապված է Հայոց Մեծ թվականի և հայկական շարժական տոմարի հետ: Փաստորեն քրիստոնյա ժողովուրդների տոմարները կարգավորողի՝ Անդրեաս տոմարագետի անունն է հավերժացել հայոց տոմարի հնագույն մեկնության վերնագրում: Այն պահպանվել է բազմաթիվ ձեռագրերում. օրինակ՝ ՄՄ ձեռ. համար 6869, թ. 100ա-104բ, 2017, թ. 411ա-414բ, 2152, թ. 193ա,բ: Մենք վերցրել ենք հնագույնը՝ ՄՄ ձեռ. համար 1973:

Գ. «Հարցումն Եւսեփի ժամանակագրի առ Անատոլի Եպիսկոպոսի», - ՄՄ ձեռ. 1973: Այս աշխատության մասին Հ. Անասյանը գրում է. «Ըստ վերնագրի՝ հարցերը տրված են Եվսեփոս ժամանակագրի կողմից, իսկ պատասխանները՝ ոմն Անատոլիոս Եպիսկոպոսի կողմից: Գուցե կարելի կլիներ այս Անատոլիոսին նույնը համարել Լավոդիկեի համանուն Եպիսկոպոսի հետ, որը Գ դարում էր ապրում և հայտնի չափազեռ ու տոմարագետ էր, սակայն նա ժամանակակից չէր Եվսեփոս ժամանա-

²¹ Մարկավազը մեկ տարվա սխալը Մեծ թվականից հանում է 532-ամյա շրջանի հետ:

²² **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 205:

կազմին, եթե ընդունենք, որ վերջինս Եվսեբիոս Կեսարացին է»²³։ Ամեն դեպքում մենք օգտվում ենք այդ բնագրից, քանի որ տոմարի հետ կապված հնագույն աղբյուրներից է։ Այն պահպանված է տարբեր ձեռագրերում, օրինակ՝ ՄՄ ձեռ. համար 6869, թ. 108ա-115բ, 2017, թ. 99ա-101բ, 2152, թ. 194բ-195բ։

Դ. «Յաղագս թուականին Հոռոմոց», - ՄՄ ձեռ. 1973։ Սա նույնպես պահպանվել է տարբեր ձեռագրերում. ՄՄ ձեռ. համար 6869, թ. 104բ-108ա; 2152, թ. 193բ-194ա, և օգտագործվել հետագա տոմարական աշխատություններում։

Ե. Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, աշխատասիրությամբ Ա. Աբրահամյանի, Ե., 1940։ Ձեռագրական նյութերի համեմատությունից պարզվում է, որ Շիրակացու տոմարական հարց ու պատասխանները «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ», «Հարցումն Եւսեբի ժամանակագրի առ Անատոլիոս» և «Յաղագս թուականին Հոռոմոց» աշխատություններից են կազմված, ինչպես որ ժամանակին նշել է Հ. Անսայանը²⁴։ Բացի այդ, Շիրակացու «Տոմարի» որոշ հարցեր գրված են Շիրակացուց հետո և վերաբերում են ավելի ուշ շրջանի²⁵։ Սակայն չի կարելի միանշանակ պնդել, թե Անանիա Շիրակացին մասն չունի այդ աշխատության մեջ։ Պարզապես վանական տիպի բարձրագույն դպրոցներում ուսուցանելու համար հարմար էր մեկտեղ հավաքել կոնկրետ առարկայի հետ կապված հարց ու պատասխանները։

Զ. Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի», - ՄՄ ձեռ. 1999։ Ինչպես գրում է Հ. Քյուրտյանը. «Հովհաննես Վարդապետ Կոզեռն նախ և առաջ պետք է սեպենք մեծահամբաւ տոմարագետ մը»²⁶, քանի որ նրան էին դիմում ծոպատկի, կամ 1036-37 թթ. Արեգակի խավարման մասին բացատրություններ ստանալու համար։ Մատենադարանի ձեռագրերից 2292, թ. 273բ-278բ, 7098, թ. 218ա-222բ, 1973, թ. 185բ-187բ մենք ընտրել ենք հնագույնը՝ 1999։

Է. Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը՝ հրատարակված Ա. Աբրահամյանի կողմից 1956 թ.։ Հնարավոր է, որ ձեռագրերում կան Սարկավագի հեղինակած այլ գործեր, որոնք ոչ պակաս հետաքրքրություն են ներկայացնում, սակայն դրանց ուսումնասիրությունը շատ հեռուն կտաներ, որը մեր նպատակներից դուրս է։ Այսպես, ՄՄ ձեռ. համար 3082 թ. 386բ «Յովհաննես քահանայի յաղագս Մեծ թուականին» աշխատությունում կարդում ենք. «Զոր ինչ ըստ հնոց թուականին կամիցիս առնել, զշրջանն ԾԼԳ (533) երթ, վասն զի Նաւասարդի ամսեան մտանելով գարնանային հասարակաւորութեանն, թիւ մի յաւելեալ եղև ի թուականն յաղագս առանձնակի նահանջիցն ժողովման։ Եւ վասն այնորիկ սխալ գտանի գոր ինչ ըստ այնմ առնես և ոչ ընդ այլ ազգս միաբանի։ Վասն որոյ յառաջելով քան զայլ թուականսն առնէ նահանջ... գոր հարկ է գաւելորդն, որ է թիւ մի, ի բաց առնուլ ի թուականեն, զի ուղղակի հանդիպեցին իրողութիւնքն»։

Ը. Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը, - Էջմիածին, 1952, Ա, Բ։ Աշխատությունը պահպանվել է տարբեր ձեռագ-

²³ Հ. Անսայան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Ե., 1959, էջ 845։

²⁴ Նույն տեղում, էջ 747։

²⁵ Աղամեան Հ. Ի., Հայկական թուականի մասին գիտելիքներ, Բազմավեպ, 1966, Է-Ը, էջ 188; «Պատճեն տոմարի», էջ 72։

²⁶ Յ. Քյուրտեան, Յովհաննես վարդապետ Կոզեռն, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1967, համար 1-3, էջ 11։

րերում, օրինակ՝ ՄՄ ձեռ. համար 3697, թ. 172ա, 2017, թ. 95ա-99ա; 2292, 225բ-229բ; 7098, թ. 227ա; 7104, թ.195բ-199ա: Այս ձեռագրերի և հրատարակված օրինակի համեմատությունից մեզ համար պարզ դարձավ, որ հրատարակված տարբերակը ամբողջական է և տարբերվում է մյուս օրինակներից աննշան գրչական շեղումներով:

Թ. Խաչիկյան Լ. «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ»:

Ժ. Հ. Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ, աշխատասիրությամբ Ջ. Էյնաթյանի, Ե., 1987:

ԲՆԱԳԻՐ

Ա1. Մեծ թուական այսպէս արա. կալ թիւ մի յԱրաց ամսոյ, թուեա մինչև ցՅայտնութիւնն, չորեքստուկեա՝ թուական է: Թէ ի նահանջին յառաջին ամին իցես, Գ(3) ի բաց երթ, թէ յերկրորդին՝ Բ(2), թէ յերրորդին՝ Ա(1), թէ ի չորրորդին՝ լրիւ կալ, զի նահանջ է:

Ա2. (137բ).- Թուական այսպէս արա. կալ ԺԸ (18) թիւ Ահկի ամսոյն, թուեա մինչև ցգարնանամուտ, չորեքստուկեա՝ թուական է: Թէ յառաջին ամին իցես, Գ(3) ի բաց երթ, թէ յերկրորդին՝ Բ(2), թէ յերրորդին՝ Ա(1), թէ ի չորրորդին՝ լիով կալ:

Բ. (153ա).- Զի՞նչ է թուականն:

Նիւթ թուոց, շարժումն յաւետ առաջախաղաց եւ հիմն զանազան մասանց արուեստից:

(154բ).- Զի՞նչ է, որ ասէ «կալ ԺԳ (13) և զնահանջն»:

Վասն զի յառաջին թուականին հասարակածն յԱհկի ԺԳ (13) դիպեցաւ, զայն ԺԳ(13) ի վերայ նահանջին արկանել հրամայէ և զմինդ առաջի աւուր ամսոյն ասէ տալ: Նոյն սարասիւ իմա և զայլդ ամենայն յեղանակսդ և զտաւնսդ, որ նահանջիւդ են գրեալ:

-Զի՞նչ է, որ ի Յայտնութեանն ոչ ասէ արկանել ի վերայ, այլ ասէ «կալ զնահանջն և տուր Մեհեկի ամսոյ»:

-Վասն զի յԱրանց Լ(30)նն դիպեցաւ յայնժամ Յայտնութիւնն, վասն այնորիկ ասէ՝ անմակադիր:

Գ. (149բ) Հարցումն.- Զի՞նչ ասի թուական:

Պատասխանի.- Զբանհանութիւն արարածոց ի կիր արկեալ, հիմն զանազան արուեստից եւ չափ կենաց իւրաքանչիւր:

Դ. (155ա) - Ամենայն թուականք ազգաց յառաջադրութիւնն իւրեանց ցուցանեն, որ քան զՀայոցն յառաջ անշարժութիւն յիսկզբան տումարի իւրաքանչիւրոցն իբրև զհիմն հաստատուն: Նախ զժամանակն, որ յետոյ մեկնեցին և անուանեցին «Հայոց», որ յառաջ էր, քան զմերս շարժական ժամանակս: Այս է՝ «կալ այսչափ իբրև «զՀայոցն», քանզի սայ թիւ շարժական հոչակեալ յազգս:

Ե. (66) Թուական է ժամանակական շարժումն և ամատող շարժումն, յառաջախաղաց տրամադրութիւն, յորմէ բաղկանայ տումար ի յոքունս սնունդս միակին, որ ցուցանէ սկիզբն, և առ միայնն հայեցուցանէ Աստուած, յորմէ ամենայնք սկիզբն առին լինելոյ: Եւ է սա շարժումն թուոց ԻԸ(28)-ից ի հիմն զանազան մասանց արուեստից:

Զ. (70ա,բ).- Ասէ «կալ թիւ մի յԱրաց ամսոյ և թուեա մինչև ցՅայտնութիւնն», վասն զի յորում ամի զթուականն եղին, Յայտնութիւնն յԱրաց ամսոյ Լ(30)նն էր, եւ առաջին

ամ էր յետ նահանջի:

Է. (262).- Յորժամ Պատճենն այն կարգեցաւ, ասի հասարակ լինել գարնայնոյն յԱհկի ամսոյ ԺԳ(13): Եւ ըստ փոփոխման (263) թուոյ աւուրցն ամսոյ անցանել աւուրսն ի միւս ամն յամիսն Նաւասարդի... Եւ ոչ ոք կարաց իմանալ՝ ոչ ի կարգողացն գառաջինն, թէ այս լինիցի յաւարտման ամին և ոչ յընդունողացն ի նոցանէ ոք, թէ եղև թիւ եկամուտ և կամ պատճառն, թէ վասն է՞ր եղև:

... (282) Վասն որոյ գլաւելեալն թիւն պակասեցուցաք ի կոչելոյն «թուական»: Եւ երթամք ի բաց ոչ ՇԼԲ (532), այլ ՇԼԳ (533):

Ը. (Ա-36) Հարցումն՝.- Զի՞նչ է թուականն:

Պատասխանի.- Նիւթ թուոց, շարժումն յաւետախաղաց և հիմն զանազան մասանց արուեստից: Արդ, յԱրաց ամսոյ երեսուն հանդիպեցաւ դնել գիր թուականութեան Հայոց ազգիս... Ի ծննդենէն Քրիստոսի մինչև ցՀայ թուականն ամբ հինգ հարիւր յիսուն և երկու, և ըստ ոմանց՝ հինգ հարիւր յիսուն և մի:

Հարցումն.- Զի՞նչ է, որ ասէ «կալ թիւ մի յԱրաց»:

Պատասխանի.- Զվերջին օր ամսոյն ասէ, զի յորժամ զթուականն եղին, Յայտնութիւնն յԱրաց երեսուն էր և առաջին ամ էր յետ նահանջի: Բսկ չորեքսուտկելոյ պատճառն այն է, զի ի չորս ամին օր մի յառաջ խաղաց Յայտնութիւնն:

(Բ-35) Հարցումն.- Զի՞նչ է, որ ասէ «կալ երեքտասան և զնահանջն»:

(Բ-36) Պատասխանի.- Վասն զի յառաջին ամի թուականին հասարակածն յԱհկի երեքտասան դիպեցաւ, զայն երեքտասանն ի վերայ նահանջի ասէ արկանել և առաջին ամսոյն տալ: Այսպէս իմա և զամենայն եղանակսդ և զոտոնսդ, որք նահանջի եւ գրեալ:

Թ. (164) .- Յորժամ մերքս բաժանեցան և զտումարս շրջեցին, յԱրաց երեսունն էր Յայտնութիւնն, վասն այն ասեն «կալ թիւ մի յԱրաց ամսոյ»: Եւ շրջելոյ պատճառ ասեն ոմանք, թէ ընդ Պարսից իշխանութեամբ էին, Իշխանքն կամեցան, թէ ընդ նոսա յար լիցի, որ երկու անգամ տարեմուտ ոչ պիտի առնել: Բայց Հայք աւելի, քան զԱսորիք և զՀրեայք չեն լեալ ընդ Պարսաւք, զի Պարսից տաւնն և ամիսն ի միասին շարժի, և մեր տաւնքս անշարժ են: Եւ այլք ասեն, թէ վասն աշխատելոյ մանկանց ի յուսումն, զի դիւրաւ գտանելին դիւրաւ արհամարհելի է: Եւ ոմանք՝ թէ կամեցան ամենայնիւ բաժանել զմեզ ի Յունաց, զի մի խառնեցուք ընդ նոսա տաւնիք կամ ամսաւք կամ տարեմտիք: Այլ մեք Աստուծոյ շնորհաւքն զտերունական և զգլխաւոր տաւնսն սեփական գրոց ունիմք:

Ժ. (129) Յաղագս թուականին խնդրելի է, թէ զինչ է թուական, թէ զինչ է գործ սորա, թէ զինչ պատճառի եղին զթուական, թէ յորում ժամանակի, քանի ամբ էին ի ծննդենէն Քրիստոսի: Ապա արասցուք զթուականն որպէս Պատճենն հրամայէ: Ըստ առաջնոցն սահմանօրէն «թուական է շարժումն յաւետ յառաջախաղաց և հիմն զանազան մասանց արհեստից»: Եւ յիրաւի, զի երկինքն և լուսաւորքն, ուստի ի սոցանէ պատճառի ժամանակն, միշտ յառաջ խաղալով ի կիտէ արևելից առ կէտն արևմտից, բացակատարեն զժամն և զժամանակն և զդարքն, որ պարունակեն զժամանակն: Վասն այսր պատճառի և թուականս յաւետ յառաջ խաղացմամբ չափէ զժամանակն և թուէ զքանիօնութիւն դարուց կենցաղոյս: Բսկ զանազան մասունք՝ զեօթներեակն, զնահանջն, զվերադիրն, զԺԹ(19)երեակն և զայլսն իմա ըստ սոսա, զի սոքօք այլքն ե-

դանին:

(131) Հարցումն. – Ընդ է՞ր է, զի յորժամ... կամիմք եօթներեակ և վերադիր առնել, եթէ թիւ մի ոչ պակասեցուցանենք, ոչ բերէ զարուեստն: Այսպէս և զՀայոց զնահանջսն Ա(1) ամաւ յառաջացուցանէ, յորժամ չորեքպատկեմք զթուականն:

Պատասխանի.- Ծանիր, որդի, զի այս ի պատճառէ հասարակածին եղն: Զի հասարակածն յորժամ ի Նաւասարդ եմուտ, զանխլաբար թիւ աւելի ի ներս եմոյծ, և ոչ գիտացեալ բազմաց շփոթեաց զամենայն կանոնեալսն առաջնոց հարցն... Բնել թուականին հասարակածն գարնանային յԱհկի ամսոյ ԺԳ(13)ն էր: Եւ փոխելով ըստ չորից չորից ամաց հասարակածն ըստ հայ ամսոցդ կատարեաց յԱհկի ամսոյն ի հետ գտարին և անցեալ եմուտ ի Նաւասարդի ամիս ի միւս տարին և արար թիւ մի յաւելուած: Քանզի ունիմք զնահանջ թուականին և չորեքպատկեմք, և լինի թուական, և յաւելուած միոյ թուոյն շարժէ զամենայն կանոնեալսն: Զի հասարակածն յԱհկի ԺԳ(13)էն հասեալ մինչև յԱւելեացի Ե(5)ն զամս ՆԾԲ(452), յորմէ (132) հետէ եղաւ թուականն, ուղղապէս և միաբան գայր այլոց ազգաց կանոնեալն կարգ: Իսկ յորմէ հետէ հասարակածն եմուտ ի Նաւասարդի ամիս, թիւր իմն և անմիաբան վարի ընդ այլսն, եթէ ոչ ուղղեսցի:

(133) Եւ թէ կամիս, որ... զարուեստն գեղեցիկ բերէ, դու որպէս զՍարկաւազ վարդապետն արա, զի նա զաւելի թիւս ի հետ շրջանին գնաց: Զի շրջանն, որ ՇԼԲ(532) ամ է, ՇԼԳ(533) գնա և հանէ զաւելի թիւն ի բաց, և մնացեալն սկիզբն լինի նոր շրջանի, և գայ ամենայն ինչ ուղիղ... (134) Դարձեալ ծանիր, զի զաւելի թիւս դժուար է հասարակ մտաց իմանալ, զի զանխլաբար եմուտ: Վասն այն զանխուլ և ծածուկ է հասարակ տումարագիտաց:

(224) «Թուական այսպէս արա. կալ թիւ մի յԱրաց ամսոյ...» Ծանիր, ով ուսումնասէր վասն յաւելեալ թուիս, թէ զի՞նչ է պատճառն, (225) որ երբ կու կալնումք յԱրաց ամսոյ թիւ մի մինչև ցՅայտնութիւն և չորեքպատկեմք զնոսա, որ գտնումք զթուականն... թիւ մի աւելի կուգայ... և թէ վասն է՞ր: Արդ ի զնել Մեծ թուականին Հայոց՝ Նաւասարդն, որ տարեգլուխ եղաւ Հայոց և սկիզբն թուականին, ըստ Հռոմոնց ամսոցն ի Յուլիս ամսոյ ի ԺԱ (11) եղեալ է... Եւ Յայտնութիւն յԱրաց ամսոյ ի Լ(30)ն դիպեցաւ, և ամն առաջին ամ նահանջի, և չորրորդ ամն նահանջ, որ է զոյգ թիւ: Եւ յորժամ յԱրաց Լ(30)էն մինչև յԱւելեացն ի Ե(5) եկն Յայտնութիւն, որ է ՃՁԶ(186) օր, և առնէ ՉԽԴ(744) ամ... Յայտնութիւն զայսքան ժամանակս յառաջ գայր, քան զՆաւասարդն, և ապա յետոյ գայր Նաւասարդն և յաւելոյր զՖարտ թիւ թուականին ի նահանջի յառաջի ամն... Իսկ յորժամ նահանջն յառաջ խաղացոյց զՆաւասարդն և կոխեալ ետ զՅայտնութիւն, յայնժամ թիւն զոյգ, որ էր ՉԽԸ(748) թիւ, չկարաց առնուլ զնահանջն...

(304) Ծանիր որդի, զի յախմար գրչէ ապականեալ է բազում ինչ ի մասանց տումարական արհեստիս, նաև ի մեկնութիւնս վասն զթիւսն յաւել և պակաս գրելոյ: Զի տումարի գրողն պարտ է, զի քաջ վերահասու լինի տումարական մակացութեան և ապա համարձակի ի գրելն, զի տումարս ոչ է իբրև գայլ գրեանս: Թէպէտ և սխալն յամենայն գիրս ոչ մեկնի, բայց թէ պատահէ յայլսն, կարողութիւն է վարդապետաց այլ իմն մտօք ուղղել զայն, բայց ի տումարական գիտութիւնս անկարելի է, զոր օրինակ՝ մէկն անկարելի է լինել Բ(2) կամ Բ(2)ն՝ Ա(1): Այսպէս, անկարելի է թիւ մի աւելի կամ

պակաս գրել, թե ոչ՝ սխալ է զարուեստն... Վասն որոյ մեծաւ աշխատութեամբ մեք զթիրեալսն ուղղեմք, բայց ոչ սակաւ երկիւղ է մեզ ի վերստին թիրեղոյ յախմար գրչաց...

(306) Եւ թէ ոք ասիցէ, ապա ընդ է՞ր յորժամ... զթուական ծննդեանն Քրիստոսի առնեմք, նա զհանապազորդն ՇԾԲ (552) ոչ բերեմք, այլ ՇԾԳ(553),- զայս յաւելեալ թին արար, յորժամ Նաւասարդն զՅայտնութիւն կոխեաց, որպէս բացայայտեցաք ի մեկնութիւն թուականին... ՇԾԲ(552)ն ՇԾԳ (553) արարին, զի թուականն Քրիստոսի ըստ մեր յաւելեալ թուոցս հաւասար գտցի:

Ինչպէս տեսնում ենք, դարեր շարունակ հայոց շարժական տոմարը պահպանվել, մեկնվել, փոխանցվել է սերնդից սերունդ:

Թվում է, թե 15-րդ դարի սկզբին, երբ բոլորը առաջնորդվում էին հուլյան օրացույցով, երբ գոյություն ունեւ Նովիաննէ Սարկավագի «սարկավագադիր» անշարժ տոմարը, տարօրինակ էր շարունակել հաշվումներն անել հայոց շարժական տոմարով, որի համար պետք էր հմտանալ մաթեմատիկական ոչ պարզ հաշվումների մեջ: Կարող է անհասկանալի թվալ նաև այն իրողությունը, որ մեկնություններից ամենաընդարձակն ու մանրամասնը գրվել է հենց 15-րդ դարում: Բանն այն է, որ 14-րդ դարից սկսած Հայոց Եկեղեցու ինքնուրույնության համար մեծ վտանգ էին ներկայացնում միաբարները: Նրանք արհամարհելով հայկական ծեսերը, սովորությունները, գրականությունը, լատիներենից թարգմանում էին կաթոլիկական ոգով կրոնական գրքեր՝ ցանկանալով հայերի մեջ տարածել Արևմուտքի սխոլաստիկական գաղափարները: Նրանց հայրենամերժ գործունեությունը առաջ էր բերել հուզումներ և գործող հակադեցություն՝ ի դեմս Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու, որոնք իրենց աշակերտներին ներշնչում էին լինել ոչ միայն ուսումնասեր, այլև անաղարտ պահել հայոց լեզուն, գրականությունը, հայրենի եկեղեցական ավանդույթները, նաև տոմարը:

Հայտնի է, որ 15-րդ դ. սկզբին այդ կարևոր գործը իր վրա էր վերցրել Մեծոփի դպրոցը: Հակաունիթորական այդ պայքարի համապատկերում միանգամայն հասկանալի է Թովմա Մեծոփեցու խնդրանքը՝ տոմարի մեկնության շուրջ դասեր կարդալու և հետո գրի առնելու մասին՝ ուղղված ժամանակի ճանաչված տոմարագետ Հակոբ Դրիմեցուն: Պարզ է դառնում, որ 15-րդ դարում էլ իր ուժը չէր կորցրել 7-րդ դարի կաթողիկոսի՝ Անաստաս Եղվարդեցու մտահոգությունը. «Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն հայկականս տոմարի, զի թերեւս անշարժ գնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել, զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ եղանակք ժամանակաց: Վասն որոյ եւ առ ինքն զԱնանիայ Անեցի կոչեցեալ, որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր: Իսկ նորա ջան ի վերայ եղեալ և ըստ բոլոր ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ Հայկականս տօմարի, զի բարեձեւագունից ոմանց և զմերս կշռադատեալ՝ մի կարօտասցուք զալ ի զուգաւորութիւն Հռոմայեցոց»²⁷:

²⁷ Յոհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 92:

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Հայերը ամենայն ժամանակ քարերի վերայ արձանագրած ունին հասարակական գործերը և մեծ դիպուածների յիշատակները: Նորանց պատմութիւնը, այսպէս ասած, քարերի և իրենց երկրի ժայռերի վերայ գրուած արձանագրութիւն է: Թագաւորների հին պալատները, ամրոցները, կամուրջները, կրօնական և հասարակական շինութիւնների պատերը ծածկուած են, եւ այդ գիտեմ, արձանագրութիւններով, որոնց պատճենները շատ մեծ նշանակութիւն կ'յունենան: Ես դորանցից մի քանի հատ ունիմ, նորանք ինձ հասել են Մեծ Հայքից և բաւական են ինձ մի բարձր գաղափար տալու համար այն տեսակ ժողովածուի օգտակարութեան մասին:

Սէն-Մարտէն, «Նամակ Ալեքսանդր Հումբոլդտին» (22, XI, 1831, Փարիզ)¹

Ա. Ֆրանսիացի ակադեմիկոսի այս ծրագրային գնահատութիւնը միջնորդաւորուած արձագանքն է 19-րդ դարի առաջին տասնամեակներին Ներսէս Աշտարակեցու հրահանգով մեզանում ծայր առած վիմագրահաւաքչական աշխոյժ աշխատանքի և հետաքրքրութեան²: Շատ չանցած լոյս տեսան Մ. Բժշկեանցի, Յ. Շահխաթունեանցի, Ս. Ջալալեանցի, ապա և Ն. Սարգիսեանցի, Մ. Բրոսէի ու Քաջբերունու կազմած հատորները³: Վիմագիր նիւթերի հմուտ վերծանութիւններով ու քննարկումներով հարուստ են Ղ. Ալիշանի և Վ. Լանգլուայի տեղագրական աշխատու-

¹ Նամակի հայերէն թարգմանութիւնը և հրապարակումը կատարել է **Աբգար Յովհաննիսեանը** («Արձագանք», 1893, թիւ 148): Տե՛ս նաև՝ «Ակադեմիկոս Մարի Բրոսէ», կազմեց և խմբագրեց՝ **Պ. Մուրադեան**, Երևան, 2002, էջ 11-18:

² **Պ. Մուրադեան**, Ներսէս Աշտարակեցիի ազգային վիմագրագիտութեան առաջնեկ.- «Ներսէս Աշտարակեցի՝ Պաշտպան հայրենեաց», [Երևան], 2004, էջ 35-36:

³ Ճանապարհորդութիւն ի Լեհաստան..., շարադրեալ... **Հ. Մինասայ Բժշկեանց**, Վենետիկ, 1830: Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացի Արարատայ, աշխատասիրութեամբ **Յովհաննու եպիսկ. Շահխաթունեանց Շահրիարցոյ**՝ միաբանի սրբոյ Էջմիածնի, հատ. Ա, Էջմիածին, 1842, հատ. Բ, 1842: Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ **Սարգիս վրդ. Ջալալեանց**, մասն Ա, Տփլիս, 1842, մասն Բ, Տփլիս, 1858: **Հ. Ներսէս Սարգիսեան**, Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

թարգմանությունն է նուիրում Կ. Բասմաճյանի գիրքը¹⁰:

Գ. Հայաստանի վիմագիր ժառանգության դիւաններ կազմելու գիտական անհրաժեշտության գիտակցումը շատերին մղեց այդ գործին (Մ. Էմին, Ե. Լալայեան, Մ. Սմբատեան, Հր. Աճառեան), սակայն նրանք չմշակեցին միասնական ծրագիր, ուստի և գոհացան առանձին հրապարակումներով կամ ձեռագիր ընդօրինակումներով: 1954 թ. իր գոյության առաջին տասնամեակը բոլորող Գիտությունների ակադեմիան ստեղծեց վիմագրական արշաւախումբ, ապա և յատուկ բաժին՝ Յ. Օրբելու խորհրդատուութեամբ ու վիմագրագետ Ս. Բարխուդարեանի խմբագրութեամբ «Դիւան հայ վիմագրութեան» մատենաշար հրատարակելու համար: Առ այսօր լոյս է տեսել միասնական սկզբունքով կազմուած ութ պրակ՝ շուրջ եօթն հազար միաւոր ընդգրկումով¹¹: Այս թուին գումարելու են Կ. Ղաֆադարեանի մենագրական հատորների բովանդակած հարիւրաւոր վիմագրերը¹², ինչպէս նաև Ա. Քալանթարի, Պ. Մուրադեանի, Ա. Այւազեանի, Ս. Սաղումեանի, Գ. Սարգսեանի, Ս. Կարապետեանի և ուրիշների կատարած հրապարակումները: Այսպիսով, կարելի է ասել, թէ ի մի է բերուած հայոց վիմագիր ժառանգութեան շուրջ կէտը: Հայաստանից դուրս գործող գիտնականներից վիմագրական կարևոր հրապարակումներ են կատարել Մայքլ Սթոունը և Գաբրիէլլա Ուլուհոճեանը¹³:

Դ. Վիմագրերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանաւորուած է հայոց բնակութեան էթնիկական շրջանակներով՝ բուն հայրենիքում և XI դարից յետոյ առաջ եկած հայկական բնակավայրերում՝ այլ երկրներում: Քանակական կուտակման առումով առանձնանում է Արևելեան Հայաստանը՝ Այրարատ, Շիրակ, Լոռէ, Միւնիք, Արցախ: Այս պարագան թելադրուած է ոչ այնքան քաղաքական կամ սոցիալական առանձնայատկութեամբ, որքան աւանդոյթով ու շինաքարի փորագրման մատչելիութեամբ: Հարավային Հայաստանում նիւթական ու հոգևոր անցուդարձերին, հրահանգներին, գործարքներին, պարտոյթներին վերաբերող գրառումները մուծուում էին ձեռագիր ժողովածուների ազատ էջեր, լուսանցներ, մինչդեռ Հիւսիսային Հայաստանում այդ ամենը գերադասում էին հրապարակել արձանագրութեան տեսքով: Ինչ վերաբերում է հրապարակուող միաւորի պահպանութեան պահովութեանը, թագաւորական իշխանութեան, իշխանական տների վերացման և

¹⁰ **K. J. Basmadjian**, Les inscriptions arméniennes d'Ani, de Bagnaïr et de Marmachen. - „Revue de l'Orient chretien,, , Paris, 1920-1921.

¹¹ Պրակները կազմել են՝ Ի-ին **Յ. Օրբելի**, [Ս. Բարխուդարեան], II-V-Ս. Բարխուդարեան, VI- Ս. Աւազեան, Հո. Ջանփոլադեան, VII-VIII – **Գ. Գրիգորեան**:

¹² **Կարո Ղաֆադարեան**, Յովհաննավանքը և նրա արձանագրութիւնները, Երևան, 1948: **Նոյնի**՝ Սահինի վանքը և նրա արձանագրութիւնները, Երևան, 1957. **Նոյնի**՝ Հաղբատ. Ճարտարապետական կառուցուածքները և վիմական արձանագրութիւնները, Երևան, 1963. **Նոյնի**՝ Երևան, միջնադարեան յուշարձանները և վիմական արձանագրութիւնները, Երևան, 1975: **Ashkharbek Kalantar**, The mediaeval inscriptions of Vanstan. Armenia, Paris, 1999. **П. М. Мурадян**, Армянская эпиграфика Грузии, Ереван, 1985, 1988: **Արզամ Այւազեան**, Նախիջևանի վիմագրական ժառանգութիւնը, հատոր Ա, Զուլա, Երևան, 2004: **Ս. Կարապետեան**, Բուն Աղուանքի հայերէն վիմագրերը, Երևան, 1997:

¹³ Տե՛ս այստեղ, ծան. N 17, 21:

կաթողիկոսարանի ու նրա հնադարանների աստանդականության պարագայում պաշտամունքային կառույցների պատերը տնականություն երաշխավորող միջոցներ էին: Համահայկական կարգավորող ինստիտուտների բացակայությունը բերում էր իրավական-տնտեսական նորմերի՝ տեղայնացման և տեղային գրառման:

Ե. Հայալեզու վիմագրերի ժամանակագրությունը ընդգրկում է ողջ միջնադարը՝ ենթաշրջանների անհաւասարաչափ խտացումներով: Հնագույնը Տեկորի տաճարի արձանագրությունն է /V դ. աւարտ/՝ տողերի յաջորդականության անսովոր շարունակմամբ և կասկած յարուցող մի քանի այլ պարագաներով¹⁴: Բաւական մեծ թիւ են ներկայացնում VII դարի շինարարական արձանագրությունները /Ալաման, Աթեն, Աշտարակ, Արուճ, Աւան, Բագարան, Բագաւան, Եղուարդ, Թալին, Մաստաւրա, Ջուարի ևն/: Գրերի խոշորութեամբ ու հանդիսավորութեամբ, միատող գոտերմամբ, խնամածու փորութեամբ նրանցից շատերը միաժամանակ ճարտարապետական կառոյցի յարդարանքի մաս են կազմում¹⁵: Այս վիմագրերում յիշատակուող անձանց տիտղոսներից ու տոհմանուններից կարելի է կռահել Բիւզանդական Հայաստանի վարչա-կառավարման աստիճանակարգը:

Թուագրումը ըստ իշխանութեան տարիների է, բայց և գործածություն են գտնում Փրկչական և Հայոց թուականները¹⁶: Ծածկագրութեան գործածությունը VII դ. վիմագրերում /Աւան, Եղուարդ/ գրագիտութեան և գրաձանաչման որոշակի մակարդակ է վկայում: Վիմագիր հրապարակումների քանակը առանձնապէս մեծանում է XI-XIII դարերում, որը պայմանավորուած է իշխանական նոր տների քաղաքական ու մշակութային ակտիւութեամբ /Զաքարեաններ, Արծրունիներ, Պռոշեաններ, Վաչուտեաններ ևն/: Վիմագրերով են օժտված նաև մեմուարային յուշարձանները՝ խաչքարեր, մատուռներ, աղբիւրներ: XIV-XVI դարերի հայոց պատմութեան հիմնական աղբիւրը, յիշատակարանների կողքին, վիմագրերն են, այդ թվում և տապանագրերը գաղթօջախներում¹⁷: Ուշ միջնադարի քաղաքային նշանաւոր կենտրոններում հայոց հանգստարանների տապանագրերը /Կ. Պոլիս, Ջուղա, Թիֆլիս, Երևան ևն/, արհեստները, էթնիկական տեղաշարժերը, բարբառներն ու ազգագրական ինքնութիւնները վկայող հսկայական նիւթ են մատակարարում:

Զ. Արձանագրութիւնները արտացոլում են հայոց միջնադարեան հասարակական կեանքի գրեթէ բոլոր դրսևորումները՝ հարկերն ու պարտոյթները, իրավական սահմանումներն ու կարգավորումները, շինարարական ու նորոգչական աշխա-

¹⁴ **Н. Марр**, К датировке ктитерской надписи Текорского храма. - „Христианский Восток“, т. III /1914/, стр. 56-71.

¹⁵ Նրանց մեծ մասի վերծանութեամբ ու քննութեամբ զբաղուել է **Յ. Օրբելին** (տե՛ս նրա՝ „Избранные труды“, Ереван, 1963, стр. 371-412). **Կ. Ղաֆադարեան**, Աւանի երկլեզուեան ծածկագիր արձանագրութիւնը, Երևան, 1945, **Պ. Մուրադեան**, Եղուարդի ծածկագիր արձանագրութիւնը - «Երևանի համալսարան», 1974, N 1, /18/:

¹⁶ **П. Мурадян**, Хронология систем летосчисления по армянским источникам - „Вестник общественных наук“, 1975, N 10, 1976 N 1:

¹⁷ **Gabriella Uluhogian**, Testimonianze epigrafiche della presenza degli armeni nell'Azerbaigan Iraniano. **Նոյնի՝** Silloge delle epigrafi armene di S. Stefano di Giulfra. - Ricerca sull'architettura Armena - 22, Milano, 1981.

տանքները, վարչական կառուցուածքն ու պաշտօնէութիւնը, տնտեսական գործարքները, սահմանները, քաղաքական ու հոգևոր իշխանութիւնների յաջորդականութիւնը, գրական-մշակութային տեղեակութիւնը¹⁸, դաւանական պատկանելիութիւնը, միաբանութիւնների կազմը, վանական հաստատութիւնների ու հաւատացեալների յարաբերութիւնները և բազում այլ իրողութիւններ:

Մատենագրական այլ աղբիւրների համեմատութեամբ վիմագիր բնագրերը բնաւ ենթակայ չեն յետագայ խմբագրութեան ու փոփոխութեան, վստահաբար վերաբերում են այն միջավայրին, ուր հրապարակուած են փորագրութեամբ: Իբրև կանոն արձանագրութիւնները ունեն հասցեագրում, գործնական փաստացի բովանդակութիւն, բանաձևային մշակուած շարադրութիւն, թագրութիւն, շատ յաճախ նաև ճարտարապետ-շինողի ու փորագրողի յիշատակութիւն: Այդ հիմամբ է, որ վիմագրագետ Սեդրակ Բարխուդարեանը կազմեց միջնադարեան ճարտարապետների և քարագործ վարպետների մեծադիր բառարան-ուսումնասիրութիւն¹⁹: Հայոց լեզուի պատմական հնչիւնաբանութեան, բարբառային ձևերի, բառագիտութեան և փոխառութիւնների տեղագրուած ու ժամանակագրուած վկայութիւնները առատօրէն ներկայացուած են վիմագրերում²⁰: Լեզուական այս իրողութիւնները օգնում են ճշտելու արտերկրում հաստատուած հայկական զանգուածների բնիկ հայրենական միջավայրը, ինչպէս նաև արտագաղթի ճանապարհները: Նոյնիսկ ուխտագնացութիւնների ժամանակ այս ու այնտեղ իջևանելիս հայերը հակամէտ էին արձանագիր յիշատակութիւններ թողնել²¹:

Է. Արևելեան քաղաքակրթութեան հնագոյն կենտրոնների հետ ունեցած աշխարհագրական մերձութիւնը, խաչմերուկային դիրքն ու տևական շփումները իրենց գրաւոր հետքերն են թողել Հայկական բարձրավանդակում, ասել է՝ պատմական Հայաստանում: Այստեղ պահպանուել են գաղափարագրութեան, մեհենագրութեան, սեպագրութեան շրջանի բազմաթիւ յուշարձաններ: Թէ ո՞ր լեզուով և ի՞նչ են վկայում առաջին երկուսը՝ առաջիկայ պրպտող մտքի ճշգրտելիքն է, իսկ մերօրեայ վերձանութեան փորձերը մոռացութեան չտալու առումով հարկաւ օգտակար են²²: Սեպագրութեան գաղտնիքները վաղուց պարզուած են, և ուրարտական արձանագրութիւնների պատկառելի հատորը մասնագետների սեղանին է²³: Վաղուց արդէն վերձանուել ու քննութեան առարկայ են դարձել Հայաստանի տարածքում յայտնա-

¹⁸ Տե՛ս, օրինակ, **Ս. Գևորգեան**, Հայ վիմագիր բանաստեղծութիւնը, Երևան, 1989:

¹⁹ **Ս. Բարխուդարեան**, Միջնադարեան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963:

²⁰ **Ս. Աւագեան**, Վիմական արձանագրութիւնների հնչիւնաբանութիւն /X-XIV դդ./, Երևան, 1973: **Նոյնի՝** Վիմական արձանագրութիւնների բառաքնութիւն, Երևան, 1978: **Նոյնի՝** Վիմագրական պրպտումներ, Երևան, 1986:

²¹ The Armenian Inscriptions from the Sinai. Edited by **Michael E. Stone**. With Appendixes by **Michel van Esbroeck** and **William Adler**. Massachusetts.

²² **Արտակ Սովսիսեան**, Հայկական մեհենագրութիւն, Երևան, 2003: **Նոյնի՝** Նախամաշտոցեան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003:

²³ **Н. В. Арутюнян**, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001:

բերուած արամեերէն, յունարէն ու լատիներէն արձանագրութիւնները²⁴: Մեփական գիր ու դպրութիւն ստեղծելուց յետոյ էլ քաղաքական ու դաւանական թելադրութիւններով մեզանում գրել ու կարդացուել են ասորերէն, արաբերէն, վրացերէն, պարսկերէն արձանագրութիւնները: Նրանք բոլորը Հայաստանի պատմութեան ու մշակոյթի կարևորագոյն աղբիւրներ են²⁵:

Ը. Արձանագրութիւնների հաւաքումն ու փաստագրումը հայագիտութեան անյետաձգելի անելիքներից է²⁶: Քամուց ու անձրևից հողմնայարուելուց բացի, նրանց կորուստը կարող է խթանուել նեղմտութեան, յիշատակը ջնջելու կամ հրահրուող թշնամանքի դրդումներով, ինչպէս վերջերս այդ կատարուեց Նախիջևանում ու Ադրբեջանի տարածքում եղած հայկական մի շարք բնակավայրերում: Այլևս առմիշտ կորած են Արևմտյան Հայաստանի յուշարձաններն ու նրանց վրայ եղած վիմագրերը: Մեծ ջանք է անհրաժեշտ ուղեգիրների վկայութիւններում, ժամանակի մամուլի տեղագրական հրապարակումներում ու այլևայլ արխիւներում երբեմնի վիմագրերի հետքեր փնտրելու և գտնելու համար: Բարեբախտութիւն էր, օրինակ, որ պահպանուել է Նազարէթ Մարտիրոսեանի կազմած «Նշխարք Տարօնոյ» անտիպ ժողովածուն՝ 131 արձանագրութիւնների ընդօրինակմամբ և հրատարակուել «Միոն» հանդէսի 1967-1968 թթ. համարներում: Պրպտումները, կարելի է չկասկածել, երևան կբերեն Արևմտեան Հայաստանի յուշարձաններից քաղուած այլ վիմագիր բնագրեր ևս²⁷: Դժբախտաբար, հայագիտական որոշ շրջանակներում նման աշխատանք տանելու հրատապութիւնը բաւարար ընկալում չի գտնում:

²⁴ **М. Ростовцев**, Апаранская греческая надпись царя Тиридата, С.-Петербург, 1911. **В. Н. Бонешевич**, Три анийские надписи XI века из эпохи византийского владычества, Петербург, 1921: **Ակադ. Յակոբ Մանանդեան**, Գառնիի հունարէն արձանագրութիւնը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946: **К. В. Тревер**, Очерки по истории культуры Древней Армении, М.-Л., 1953:

²⁵ **А. А. Хачатрян**, Корпус арабских надписей Армении VIII-XVI вв., вып. I, Ереван, 1987. **Պարոյր Մուրադեան**, Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները, Երևան, 1977:

²⁶ Հմմտ. **Р. М. Muradyan**, The epigraphic heritage of mediaeval Armenia, Moscow, 1986.

²⁷ Մշոյ Թոնդրակ գիւղի վիմագրերն ընդօրինակելիս նոյն **Ն. Մարտիրոսեանը** գրում է. «Յիշատակարան (իմա՝ արձանագրութիւն- Պ. Մ.) ունեցող խաչքարերը բազմաթիւ էին, բայց շէխերու ակոբաներու կճրտումներուն վրայ՝ հարկադրուեցայ կարճ կապել խուզարկութիւններս» («Միոն», 1968, մայիս-յունիս, էջ 241):

ՄԻՍՄՔ Հ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ

ԼՐԱՅՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես հայտնի է, Ս. Նիկողայոս Սքանչելագործը ծնվել է Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում գտնվող Լիկիա երկրամասի Պատարա (Pavtara) բնակավայրում: Այդ գյուղը գտնվում էր այժմյան Կալկան ծովածոցի մուտքի արևմտյան ափի հրվանդանում: Ս. Նիկողայոսի ծննդավայր Պատարայի հրվանդանի դիմաց կան երկու կղզիներ: Այժմ դրանք պատկանում են Հունաստանի Հանրապետությանը: Կղզիներից ավելի մեծը կոչվում է Չաթալ աղասը: Իսկ հիշյալ ծովածոցի մուտքի արևելյան ափի հրվանդանին գտնվում էր Կալամաքի (Kalamavui) գյուղը: Անցնող դարերի ընթացքում աղավաղվել են տեղանունները, որի պատճառով էլ աղճատվել են Ս. Նիկողայոս Սքանչելագործի ծննդավայրի ու գործունեության վայրերի անունները և տեղերը: Մկրտիչ Ավգերյանի «Լիակատար վարք եւ վկայաբանություն Սրբոց որք կան ի հին Տոնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց» (Վենետիկ, 1810 թ.) բազմա-հատոր աշխատությունում (հտ. Թ, էջ 308) գրված է. «... Էր ծննդեամբ ասիացի՝ ի Լիկիացոց նահանգէ, ի քաղաքէն Միւռիոյ, կամ ըստ ոմանց ի Պանթեռայ, կամ ի Պատարայ՝ որ օտ է ի Միւռա կամ ի Զմիւռին, ոչինչ հետի ի Զմիւռնիայ կամ Սմիւռնայ քաղաքէն Յոնիոյ, այսինքն յԻզմիրէ: Անուն հօր նորա Եպիփան, և մօրն Նունէ կամ Նովնիս,...»: Ավգերյանն այնուհետև ասում է. «... ընկալաւ մեծն Նիկողայոս զձեռնադրութիւն եպիսկոպոսութեան և զառաջնորդականն վերակացութեան Միւռոյ մեծի մայրաքաղաքին, որ և Զմիւռին ասի մերձ ի Զմիւռնիա»:

«Վարքի» վերոհիշյալ «Պանթեռայ» տեղանունը ոչ մի առնչություն չունի Ս. Նիկողայոսի ծննդավայր «Պատարայի» հետ և «Պանթեռա»-ն աղավաղյալ ձևն է «Պատարայի»: Վերջինիս համար ասվում է. «Մօտ է ի Միւռա կամ Զմիւռին», որը հավասար է 87 կմ-ի: Իսկ Միւռա և Զմիւռնիա բնակավայրերի անունները վերաբերվում են տարբեր վայրերի: Միւռա և Զմիւռնիա (այժմ Իզմիրի նավահանգիստ քաղաք) բնակավայրերի միջև ընկած տարածությունը 348 կմ է: Բացի դա՝ «Վարքում» նշված է «Յոնիոյ» նահանգի «Միւռնայ» կամ «Զմիւռնիայ» քաղաքի մասին, որը նույնացված է արդի Իզմիր քաղաքի հետ: Այդ շփոթության պատճառ է հանդիսացել տեղանվան սկզբի «զ» նախդիրի առկայությունը:

Առկա վարքագրություններում, տեսական գրականությունում և Հայսմավուքներում, ինչպես ասվեց, աղավաղվել է Ս. Նիկողայոս Սքանչելագործի կենսագրությունը: Այդ պատճառով էլ ստեղծվել են մի քանի Ս. Նիկողայոսներ:

Հ. Աճառյանի «Հայոց Անձնանունների Բառարան»-ում հետևյալն է գրված «Նիկողայոս» անվան համար. «... Նիկողայոս մեծ Հայրապետ Միւռոնայ Լիկեացոց, որին տոնում է Հայոց Եկեղեցին (ունի գանձեր, տաղեր, աղոթքներ, շարական)»¹:

Ս. Նիկողայոս Սքանչելագործի անվան հետ զուգահեռ հիշատակվում է նաև մի Մյուռոն եպիսկոպոսի անուն: Նա ապրել է Կրետե կղզում և նրա հրաշագործությո-

¹ Հ. Աճառյան, Հայոց Անձնանունների Բառարան, հտ. Դ. Երևան, 1948, էջ 75, «Նիկողայոս»:

յուններից մեկում հիշվում է նաև Տիրտոն (Tirton) գետի անունը²:

Ս. Նիկողայոս Սքանչելագործի բազմաթիվ անունների թվում հիշվում է նաև եվրոպացիների Սանտա Կլաուսը: Նա է Ձմեռ Պապին և մանուկների սիրելի սուրբը: Դրա համար է ասվում, որ Ամանոքյա գիշերներին տների ծխնելույզներից գաղտնի իջնելով, երեխաների բարձերի տակ նվերներ է դնում: Նիկողայոս-Նիկոլաոս անունի տրոհումից առաջացել է Կլաուս անունը:

Նիկողայոսի փոխարեն հույները ունեն Այոս Վասիլիսը: Դա Կեսարիացի Սուրբ Բարսեղ Մեծ Հայրապետն (329-379 թթ.) է:

Ս. Նիկողայոս Սքանչելագործի կենսագրության աղավաղմանը պատճառ է հանդիսացել անցյալի վարքագիծների պատմական դեպքերի և աշխարհագրական վայրերի իրենց չիմացությունը, Հ. Մ. Ավգերյանի «Վարքի» վերոհիշյալ «Պանթեոնայ»-ն մտացածին մի տեղանուն է և ոչ մի առնչություն չունի Ս. Նիկողայոս Սքանչելագործի ծննդավայր «Պատարայի» հետ: Այդ «Պանթեոնայ»-ն աղավաղյալ ձևն է Պատարայի, դարձյալ տեղանուն չէ, այլ անձնանուն է³: Ծովեգերյա Պատարա (Pavtara) գյուղը այժմ կոչվում է Օվագելմիշ (Ovagelmiş): Իսկ Միւռա (Mura, Məra, Միւռիա) բնակավայրը այժմ կոչվում է Դեմրե (Demre, Jnhal): Անցյալում այս տեղանունը աղավաղվելով դարձել էր Զմիրոն, Սմիրոնայ, Զմիրոնիա (İzmir):

Արդի Վրաստանում կան Պատարա (Պատարա) անունով տեղանուններ.

1. Կյումրիից հյուսիս և Դմանիսիից հարավ-արևելք (Պատարա-Ճմանիս)
2. Գորիից քիչ հարավ (Պատարա-Ամենի)

Վարքագրություններում հիշատակված «Լիկեացոց Միւռոն⁴ եպիսկոպոսի» անունը խառնվելով Լիկիայի (Lycia) Միւռա, Միռիա, Միւռիա բնակավայրի անվան հետ, ժամանակի ընթացքում աղավաղվելով ստացել է «Միւռոն եպիսկոպոս» անվան ձևը:

«Վարք»-ի հտ. Թ., էջ 316-ում գրված է. «... առաջնորդականն վերակացութեան Միւռիոյ մեծի մայրաքաղաքին, որ և Զմիրոն ասի մերձ ի Զմիրոնիա»⁵: Լիկիա երկրամասի Միւռիա բնակավայրը անցյալում ոչ մի ժամանակ չի եղել «մեծի մայրաքաղաք»⁶:

Ս. Նիկողայոս Սքանչելագործը մասնակցել է 325 թ. Նիկիայի Տիեզերական եկեղեցական ժողովին, ընդդեմ Արիոսականության: Ս. Նիկողայոսի մահվան թվականը դնում են «... ի վերջին ամս Մեծին Կոստանդիանոսի, զոր ոմանք դնեն յառաջին ամս որդւոցն Կոստանդիանոսի.....»⁷: Այս թվականը համապատասխանում է 337 թ. դեկտեմբերի 6-ին: Եվրոպացիները Ս. Նիկողայոսի հիշատակը տոնում են դեկտեմբերի 6-ին:

Այժմ Դեմրե գյուղում պահպանված Ս. Նիկողայոս Սքանչելագործի եկեղեցին առաջին անգամ կառուցվել է 905 թ. Բյուզանդիայի Մոնոմախոս Զոյա կայսրուհու

² «Շողակն» երկշաբաթաթերթ, 2001 թ., նոյեմբեր Բ. թիվ 22 (419, Երևան, էջ 1 և 3, «Հիշատակությունք Սրբոց», Մարո Սարգսյանի:

³ Հ. Աճառյան, Հայերեն Արմատական Բառարան, հտ. IV, Երևան, 1979, էջ 481:

⁴ Դրա հայրենիքը իբր եղել էր Կրետե կղզիում:

⁵ Ավգերյան Մկրտիչ, Լիակատար վարք և վկայաբանությունք Սրբոց որք կան ի Հին Տոնացոցի Եկեղեցոյ Հայաստանեայց, Վենետիկ, 1810, հտ. Թ, էջ 316:

⁶ Նշվ. աշխ., էջ 316:

⁷ Նշվ. աշխ., էջ 323:

կողմից: Ս. Նիկողայոսը համարվում էր Բյուզանդիայի Կոստանդին 1-ին կայսեր մոր՝ Ս. Հելինե (247-327 թթ.) կայսրուհուն ժամանակակից: Ս. Նիկողայոսը ինչպես հովանին էր մանուկների, այնպես էլ պահապան սուրբը ծովագնացների և ցամաքում վտանգվածների: Ծովում փոթորկի հանդիպած հույն ծովագնացները դիմում էին արագահաս Ս. Նիկողայոսի օգնությանը և ծովի ջրի մեջ էին իջեցնում սրբի պատկերը: Բացի հույներից, այլ քրիստոնյա ժողովուրդների ծովագնացներն էլ վտանգի ժամանակ դիմում էին Ս. Նիկողայոս Սքանչելագործի օժանդակությանը: Սրբի ապրած ու թաղված եկեղեցին գտնվում է ծովափից 2 կմ հեռավորության վրա, այժմյան Դեմրե գյուղում: Այնտեղ է գտնվում նրա նշանավոր գերեզմանը և Այոս Նիկոլայի անվանվող նշանավոր եկեղեցին: Ս. Նիկողայոսի մասունքները մինչև Համաշխարհային Ա Պատերազմի տարիները պահվում էին Դեմրե գյուղի գերեզմանոցում, ապա տարվել են Անթալիա քաղաքի հնագիտական թանգարան և այժմ գտնվում են այնտեղ: Պետք է ասել, որ Ս. Նիկողայոսի աճյունի մեծ մասը անցալում գողացվել է ծովահենների կողմից և մեղքերի թողության համար տարվել է Հռոմ: Անթալիայի թանգարանում պահվող սրբի մասունքները բաղկացած են մի քանի ոսկորներից, որոնց ծայրերը մաշված են ժամանակի, բնության և արտաքին ազդեցության պատճառով: Ուստի ոսկորները պատված են դեղնավուն, թափանցիկ և փայլուն ջնարակով, որպեսզի երկար ժամանակ դիմանան արտաքին ազդեցությանը: Մասունքները դրված են երկփեղկ փայտե խոշոր տուփի մեջ: Մեկ փեղկին ներսի կողմից գտնվում է սրբի գունավոր նկարը: Իսկ մյուս փեղկի մեջ փորված են համապատասխան մեծության ակոսներ՝ ոսկորները տեղավորելու համար:

Ս. Նիկողայոս Սքանչելագործի գերեզմանի ներքևի եզրագարդը կազմված է բազմաթիվ կեռ խաչերի (սվաստիկա) միահյուսմամբ:

Հայկական լեռնաշխարհից Արիները դեպի արևմուտք տեղափոխվելիս, բնակություն են հաստատել նաև Լիկիայում և բնակավայրեր են հիմնել իրենց էթնոնիմով՝ Արինա (Arina, այժմ՝ Kınık, անցյալում՝ Xanthos), Արիկանդա (Aricanda, այժմ՝ Aykırca), Արիասոս (Ariassos), (այժմ՝ Dağ, Hafybey, Bademağacı), Arnea, Arsada և այլ անուններով:

Ս. Նիկողայոս Սքանչելագործի ապրած և եպիսկոպոսական առաջնորդ եղած Միուա բնակավայրի դիրքը պատահական, նվիրական մի վայր չէր և համաձայն հին ըմբռնումների այնտեղ էին իրար հանդիպում տեղադրական 10 առանցքների ուղղությունները: Միուա բնակավայրը հիմնվել էր նախաքրիստոնեական շրջանում, ուր եղել էր նաև Ս. Նիկողայոս Սքանչելագործի կործանած Արտեմիս դիցուհու մեհյանը: Այդ մասին հետևյալ հիշատակումն է կատարել Մ. Ավգերյանը. «... և սրբե զգաւառ իւր յամենայն պղծութեանց հեթանոսական պաշտման՝ քակելով ի հիմանց զբազինն Արտեմեայ, որ ի Միւռիայ. մինչև յայտնապէս աղաղակել դիւաց, թէ յաղթեցաք ի նմանէ, և արտաքսեցաք ի բնակութիւնէս մերմէ»⁸:

⁸ Նշվ. աշխ., էջ 317:

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ԲԱՂԻՇԵՑԻ (1678-1741) ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ ՀԱՅԱՏԱՌԻ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

Հայ Եկեղեցին իր պատմության ընթացքում շատ մեծեր է ունեցել: Նրանցից մեկն է Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի Պատրիարքը:

Բարեբախտաբար Կ. Պոլսո, կամ ինչպես անվանում էին նաև՝ Բյուզանդիոնի հայ պատրիարքները հոգևոր հայրերի, ազգի մեծերի տիպար են եղել: Հիմնականում եղել են գրագետ, մտավորական, առլեցուն հայ ժողովրդի պատմությամբ, գիտակ մատենագրությանը, դարերի դասերի նկատմամբ ունեցած դիվանագիտությամբ, շինարար, իրենց անձը կյանքի վարագույրի մյուս կողմում թողած ու ազգի ճակատագիրը օրվա խնդիր դարձրած ու գրեթե սրբացած մեզ համար: Այս հոգևոր ու ազգային գործիչները մեծ հեղինակություն են վայելել իրենց ժամանակներում հայ ու օտար շրջանակներում, պայծառ հետք թողել մեր Եկեղեցու ու արևմտահայության կյանքում: Ու այդ ամենը՝ չափազանց բարդ, իրարամերժ վիճակներում, երբ դեմ հանդիման են եղել կայսրությունում տարբեր ուժերի ու այդ ուժերի շահերին, խարդավանքներին, ակնհայտ ու թաքուն, հեռահար նպատակների, մասնավորապես եվրոպական տերությունների, Հռոմի, Ամերիկյան «ԲՈՐԴ»-ի կողմից հայ ժողովրդին իրենց գերիշխանական նպատակների համար օգտագործելու ճանապարհին ոչնչի առջև կանգ չառնող, մեր ազգը պառակտող, քաղաքական անմարդկային երևույթներին:

Օսմանյան կայսրություն ուղևորված եվրոպական տարբեր ազգերի «ճանապարհորդներն» իրենց զեկուցագրերում, գրքերում¹, պատմություններում ներկայացնում էին երկիրը, նրանում ապրող ժողովուրդներին, նրանց նկարագիրը, վիճակը, կենցաղը, Եվրոպայի, իսկ ավելի ուշ՝ նաև Ամերիկայի շահերին ծառայեցնելու նպատակով, դրանց արժեքը, միջոցները, այդ ժողովուրդների հոգեբանական առանձնահատկությունները²: Ափսոս, որ այս ազգախույզները կիրթ ու խելացի մտավորականներ և գործիչներ են եղել, իսկ ներկայացրած նյութերը, հետևությունները ճիշտ են օգտագործվել: Թուրքիայի այսօրը՝ 350 տարիներ առաջ նրանց տեսածի, գրվածի և կատարածի ապացույցն է:

Մինչ այդ փակ Օսմանյան կայսրությունը եվրոպականացման արշավույսին էր սպասում: Եվրոպյան Օսմանյան կայսրությունը իր համար լիովին բացահայտելու, հանուն միմյանց միջև բաժանելու նպատակի ոչ մի արգելքի առջև կանգ չառնելու ծրագրերն էր սկսում գործադրել: Արտաքին բախումների մի կողմում Կաթոլիկ Եկեղեցին էր, եվրոպական երկրները, Օսմանյան կայսրությունում նրանց ներկայաց-

նող տարբեր ուխտերը, դիվանագիտական ներկայացուցչությունները, Պոլիսը ու պալատը գրաված մասունները (19-րդ դարի կեսերին միայն Ստամբուլում 50-ի էր հասնում այդ կազմակերպությունների թիվը)³, եվրոպական տերությունների ամենատարբեր մասնագիտության լրտեսները, որոնցով սկսել էր վիստալ պալատը, արտաքին գերատեսչությունները, փաշայական ընտանիքները: Դրանք պալատական բժիշկներից սկսած մինչև տարբեր տեսակի ու կարգի խորհրդականներն էին, ընտանեկան ծառայողներ, թարգմանիչներ: Իսկ որ այդ թարգմանիչներին պատրաստում էին և՛ Հռոմը, և՛ Փարիզը՝ վաղուց էր հայտնի: Նույն այս դպրոցի շարունակությունը պետք է համարել ամերիկյան համալսարանների աստվածաբանական ֆակուլտետները, ուր հիմնականում ուսանելու էին ուղարկում գավառի ուշիմ հայ երիտասարդներին, որոնք երկիր էին վերադառնում թող որ լուսավորական, մարդասիրական, բարեգործական նպատակների համար (դպրոց, հիվանդանոցներ, ծերանոցներ, մամուլ, փոքրիկ ֆաբրիկաներ և այլն), սակայն այս քողի ներքո՝ կաշառելու, և հոգեորսության շքերթ էր կազմակերպվում արևմտահայության շրջանում:

Ահա բողոքական ու կաթոլիկ հոգեորս քաղաքականությունը, որի շղարշն էր Աստվածաշնչի տարածման առաքելությունը՝ կայսրությունը գրավելու համար, ցավոք սրտի, որպես գործիք էր ընտրել հայ ազգաբնակչությանը ու հիմնականում նրա վրա կենտրոնացրել իր ուժերը: Այն ուներ իր հիմքում շատ կարևոր սոցիալ-քաղաքական արմատներ: Հայերի ձեռքում էին գտնվում 100-ից ավելի արհեստներ, տնտեսության կարևոր ճյուղերը, սեղանավորությունը, պալատի կարևոր պաշտոնները ի դեմս ամիրայական դասի: Նախ պետք էր կոտրել հայկական ազդեցությունը, որպեսզի բաժան-բաժան արվեր կայսրությունը: Եվ, ընդհակառակը, հայերը պայքարի ելնելով չփոշիանալու, ուժացվելու դեմ՝ ինչ-որ չափով ձգում էին կայսրության հոգեվարքի լարը:

Արևմտահայության այս պայքարը ղեկավարում էին Կ. Պոլսի հայ պատրիարքները:

Հակառակորդ կողմից այս ամենն արվում էր այնպիսի բարձր մակարդակով, միսիոներների ու քարոզիչների մարդասիրական գործունեությամբ ազուցված, որ հաջողության գրավական էր հանդիսանում: Այս ոճը բացարձակապես նույնությամբ կրկնվում է այսօր՝ գաղութային քաղաքականության նորանոր նյութական ու հոգեբանական հայտնագործություններով լրացված:

Ներքին բախումները պայմանավորված էին Հայ և Հույն Եկեղեցիների միջև Բարձր Դռան կողմից անընդհատ նյութվող դավադրություններով, և իհարկե Բ. Դուռն՝ իր անորոշ կեցվածքով դեպի իրարամերժ կողմերը: Ամենացավալի հարաբերությունները սակայն դեպ Կաթոլիկ Եկեղեցին դարձած հայերի հետ էր:

Այս ամենն առանձնակի սրությամբ էին մեկտեղվել հատկապես 290 տարիներ առաջ, 1715 թվականին, Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի (1678-1741 թթ.) Բազմաշնորհ Կ.Պոլսո Պատրիարքի գահակալության (1715-1739 թթ.) ժամանակ և իրենց արտահայտությունը գտել նաև հայատառ թուրքերեն գրականության մեջ: Նրանով

առլեցուն է հայատառ թուրքերեն պարբերական մամուլը:

Հովհաննես Կոլոտի ժամանակն իսկապես ամենաբարդերից է եղել: Այս ժամանակ է, որ օտար դեսպանների ու հռովմեական եպիսկոպոսների ուժն ու ազդեցությունը պալատում բավականին մեծ էր: Նրանց հետախուզական գործողություններն Օսմանյան կայսրությունում հիմնականում ավարտված էին և այստեղ գործադրվում էր հաջորդ ծրագրային քայլը:

Մահմեդական օրենքներով պատժվում էր մահմեդականների շրջանում քրիստոնյա քարոզիչների գործունեությունը, ուստի վերջիններս պետք է գործեին կայսրության հպատակ ժողովուրդների շրջանում: Ամենահարմար թիրախներն ընտրված էին և որքան էլ ցավալի էր, առաջինների մեջ էր, եթե ոչ առաջինը՝ արևմտահայությունը: Ներագդելու բոլոր միջոցները լավագույնս մտածված էին, նույնիսկ հայաշատ տարբեր վիլայեթների, տարբեր խավերի համար դրանք տարբեր են եղել: Գավառում ավելի ուշ է հանդես եկել հայերի շրջանում բացահայտ կաշառքի քաղաքականության գործադրումը: Այն ավելի կապվում է բողոքականների՝ նախ լոնդոնյան, ապա՝ «ԲՈՐԴ»-ի ամերիկյան կենտրոնի գործունեության հետ: Իսկ մինչ այդ, այն ավելի մարդասիրական, լուսավորական, քարոզչական ձևերով է արտահայտվել: Կաշառքը վերապահվել է Անատոլիայի թուրք դադիներին, կուսակալներին, վալիներին: Հռովմեականների «միջամտությամբ» նրանք հայերի վրա ներագդելու համար զավառներում նույնիսկ ինքնուրույն հոգևոր առաջնորդներ են նշանակել: Իրավունք, որը Բ. Դոան կողմից հրովարտակով վերապահված էր միայն Կ. Պոլսո Պատրիարքներին:

1725 թ. Սուլթան Մահմուդ Ա-ի՝ Կոլոտ Պատրիարքին շնորհված ֆերմանը «...առանց Պատրիարքի առաջնորդություն չտալու, Պատրիարքի գործերին չխառնվելու» մասին է: Օտարներին արգելված էր միջամտել, կառավարիչներին արգելվում էր ընտրել հայ հոգևոր առաջնորդների: Իհարկե վերջին հանգամանքները շարունակում էին գործադրվել:

Ահա այսպիսի բարդ ժամանակաշրջան էր Կոլոտ Պատրիարքի աթոռակալման շրջանը:

Վատիկանի քաղաքականության դեմ Հովհաննես Կոլոտի հետևությունները հանգում էին հետևյալին: Այն է՝ հայերի բաժանումը Մայր Եկեղեցուց դատապարտելի է, արժանի պախարակման և համարվում է ուխտադրություն և ազգուրացություն: Հովհաննես Կոլոտի կարծիքով, հետապնդումները, այնուամենայնիվ, չպետք է կատարվեին որպես պատասխան գործողություններ: Հակառակ դեպքում այն կհանգեցներ դավանափոխների թվի մեծացմանը: Անհրաժեշտ էին չափավոր գործողություններ ու համոզմունք: Այս վերջինի իրականացման համար չափազանց կարևոր էր նրանց հասկանալի լեզվով մատուցել անհրաժեշտ կրոնադավանաբանական-լուսավորական գրականություն: Մի բան, որ Հովհաննես Կոլոտի քաղաքականության հիմնական մասերից էր և իրականացվում էր հայերեն ու հայատառ թուրքերեն՝ ձեռագիր ու տպագիր գրականությամբ, միմյանց զուգահեռ:

Զմոռանալ, որ կաթոլիկ հայերի շրջանակում հայերեն չէին խոսում և կամ

թուրքերենն ու ֆրանսերենն էին գերիշխող: Հովհաննես Կոլոտը կարողացել էր իր շուրջը հավաքել լուսավորչական, նաև կաթոլիկ դարձած նշանավոր ու ազդեցիկ հայ ամիրաների, սեղանավորների, պալատական պաշտոնյաների: Ազդեցիկ ու երևելի հայ դեմքերը ակնհայտ, ավելի հաճախ նաև թաքուն՝ մեծապես օգտակար են եղել Պատրիարքին, նրա ձեռնարկած շինարարական աշխատանքներին, հովանավորել են հրատարակություններ, հաճախել հայոց եկեղեցիներ:

Գալով Կոլոտի գործին՝ այն շարունակել են նրա 23 աշակերտները՝ մեծագույն ծառայություններ մատուցելով մեր մատենագրությանը⁴:

Երևանի Սատենադարանում պահվում են հայատառ թուրքերեն և այն պարունակող միայն Կ.Պոլսում գրի առնված մոտ 100 ձեռագրեր: Շատ ավելին գտնվում է դրսում: Դրանք Ավետարաններ են, հայ և օտար հեղինակների կրոնադավանաբանական, վարքագրական, պատմագրական երկեր, ծիսական գործեր, սաղմոսներ, քարոզներ (Հովհաննես Ծործորեցու քարոզները, բառգրքեր, վարքագրական գործեր, Քյոմուրճյանի, Սարգիս Սարաֆ Հովհաննիսյանի գործերն ու թարգմանությունները, Կարգ օսմանցոց թագավորաց, Պատճենք Պատրիարքարանի թղթոց և, իհարկե, տաղարաններ, հրաշալի տաղարաններ)⁵:

Հայատառ թուրքերեն գրականության առաջին հարյուրամյակը նվիրված է եղել Հայ Առաքելական Եկեղեցու կողմից կաթոլիկների ու բողոքականների գործունեության դեմ մղած պայքարին: Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության և Կ. Պոլսի պատրիարքական դիվանները հարստագույն աղբյուր են այս ժամանակաշրջանի համար: Եվ դրանք հիմնականում հայատառ թուրքերեն են: Պիտի նշել, որ այս շրջանի հայատառ թուրքերեն գրականությունը արդյունք է նաև հակառակորդ կողմի գործունեության: Այն տպագրվել է ոչ միայն Պոլսում: Մխիթարյանների կողմից տարբեր բառարանների, քերականությունների կողքին հրատարակված դավանաբանական հայատառ թուրքերեն գրքերն ունեցել են նաև լուսավորական բնույթ: Դրանք ծանոթացրել են քրիստոնեական կրոնի տարբեր ուղղություններին, տարբեր ուխտերին, նրանց հիմնադիրների գործերն են, Կաթոլիկ Եկեղեցու սրբերին նվիրված և կրոնաբարոյախոսական այլ գործեր: Պիտի ճանաչես դիմացինիդ, որպեսզի պայքարես, հասկանաս նրան: Իզուր չէ, որ նույն գործին նվիրվեցին Հովհաննես Կոլոտի հիմնած թարգմանական դպրոցի անդամները, նրա աշակերտները՝ հիմնականում հայերենի թարգմանելով կաթոլիկ գրականության առավել նշանակալից հեղինակների գործերը:

Կոլոտն ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ հայ հոգևորականները իրենց պատրաստվածությամբ զիջում էին օտար քարոզիչներին:

Հայատառ թուրքերենով այդ շրջանի ամենից շատ տպագրված հեղինակներից էին Պաղտասար Դպիրը, Գևորգ Մխլայիմը, Հակոբ Նալյանը (չմոռանանք մեր ձեռագրերում Նալյան Պատրիարքի մի քանի տասնյակի հասնող հայատառ թուրքերեն գեղեցիկ բանաստեղծություն-տաղերը «Նիհատի» ծածկանվամբ), Կամսարյան Մանուել Սրմաքեշը (Կարճիկ) և ուրիշներ:

Հայատառ թուրքերեն տպագրական շրջանը, որ սկսվել է 1727 թվականից և ու-

նեցել 250 տարվա պատմություն, մեծ է եղել և իր ընդգրկած աշխարհագրությամբ: Միայն Կ. Պոլսո ավելի քան 90 տպարաններում⁶ հայատառ թուրքերեն գրքեր ու պարբերականներ են լույս տեսել:

Պիտի շատ հեռատես լինել, որպեսզի ազգը ուժացումից փրկելու համար միաժամանակ երկու լեզվով պայքարի գրականություն ստեղծել:

Այսօր թուրքական հրատարակչական ու մտավորական շրջանակների կողմից մեծ հետաքրքրություն կա մասնավորապես հայատառ թուրքերեն մատենագրության նկատմամբ, որի արդյունքն էր նաև պոլսահայ հայտնի մատենագետ Գևորգ Բամպուրճյանի քառահատորյակի թուրքերեն տպագրությունը⁷: Դա նշանակում է, որ գիտակցվում է հայկական մատենագիտական նյութերի անփոխարինելիությունն ու հազվագյուտ արժեքը Օսմանյան կայսրության պատմության իրական ու գիտական ներկայացման համար:

Իհարկե հայատառ թուրքերեն առաջին գիրքը 1727 թ. Մխիթար Սեբաստացու կողմից է տպագրվել Վենետիկում: Մեր կարծիքով, աբբահայրը, որ երազում էր ազգը փրկել լուսավորության միջոցով, ուսյալ, կրթյալ հոգևորականների միջոցով, ի դեմս Հովհաննես Կոլոտի տեսել է առաքելական մեծ մարդու, որի գործունեության մի հիմնական կողմն էլ լուսավորական, հրատարակչական, թարգմանչական, դպրոցաստեղծ գործն էր: Չմոռանալ, որ հալածանքներից փրկված ու Ս. Ղազարում հաստատված աբբահայրը իր ազատությամբ պարտական է եղել նաև հենց իր «հակառակորդ» Հովհաննես Կոլոտին: Սա լրացուցիչ մի փայլ է ավելացնում Կոլոտի անձին:

Հետաքրքիր հանգամանք է, որ Պատրիարքարանին մոտ կանգնած ազդեցիկ հայերը շահագրգռված են եղել, որ խաղաղություն լինի Մխիթարյանների ու իրենց միջև: Դրա օրինակ կարելի է համարել Հակոբ Նալյանի՝ Մխիթար աբբայի դեմ գրված «Կշիռ ժամանակի» գրքույկը ասպարեզից հանելը:

Ընդհանրապես, հավասարակշիռ, հանդուրժող գործունեությունը Կոլոտի բացառիկ արժանիքներից է: Մենք նկատի ունենք նրա հարաբերությունները հիմնականում Պոլսի ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցիչների հետ և նրանց փոխադարձ այցելություններն ու կաթոլիկ հայերի՝ մեր Եկեղեցի գալու համար գործադրած բոլոր ջանքերը: Իսկ երբ հանդուրժողականության հնարավոր բոլոր սահմանները խախտվում էին, ապա և՛ եկեղեցիներում կարդացվել են նզովքներ, ընդհուպ դիմել սուլթանի միջամտությանը ազգի մեջ խառնակչություն մտցնող դավաճանների նկատմամբ հետապնդում իրագործելու, պատժելու, անգամ՝ մահապատիժ գործադրելու:

Հանդուրժողականության չափը Կոլոտը հիմնականում կարողացել է պահպանել, մինչ Ավետիք Եվդոկացի Պատրիարքի առևանգման փաստը ապացույց էր եվրոպական տերությունների կողմից իրենց նպատակներին հասնելու անգամ ոճրագործ ուղուց չանսալուն⁸: Խոսքը վերաբերում է հետագայում վիպային երանգ ստացած Բաստիլի «երկաթե դիմակով մարդուն»:

Նույնիսկ Հովհաննես Կոլոտի հակառակորդները նրան գնահատել են որպես

լավ զգացումների տեր, ողջամիտ, ինքն իր աշակերտներին որպես գիտնական, ուսյալ անձեր անձամբ ուսուցանող, ճշմարիտ հավատքի մեջ հետևորդներ պատրաստող մեծ անձ: Նրա ժամանակ զարկ տրվեց ձեռագիր և ապա հիմք դրվեց հայատառ թուրքերեն տպագիր գրականությանը, որը հետագայում ինքնուրույն ու ինքնաբավ մշակութային ահռելի զարգացում ունեցավ՝ միշտ իր մի կարևոր մասը վերապահելով հանուն Հայ Եկեղեցու պայքարին: Մյուս մասերը ծառայեցին ոչ միայն այն ստեղծող հայ ժողովրդին, այլև մշակութային աներևակայելի հզոր երևույթ դառնալով մեծապես նպաստեցին Օսմանյան կայսրության բոլոր թուրքախոս ժողովուրդների, և առաջին հերթին՝ թուրքերի լուսավորական շարժմանը, եվրոպականացման, զարգացման գործին, կարևոր ավանդ ունենալով «գարթոնքի» շրջանի մշակույթների զարգացմանը ողջ Օսմանյան կայսրությունում:

Իհարկե, միշտ չէ, որ պատրիարք հայրերը միաձույլ են եղել իրենց հոտին: Երբեմն պատրիարքները հրաժարվել են, երբեմն այդ հրաժարականը չի ընդունվել, երբեմն էլ հրաժարեցրել են, երբեմն վերընտրվել մի քանի անգամ, որ լրացուցիչ ծախսեր էր համայնքի ու հասույթի աղբյուր՝ պալատի համար: Այս ամենում ամենակարևոր հանգամանքը, մեր կարծիքով, պատրիարքների ինքնուրույն մնալու, չթուլանալու ու դրա արդյունքում պարտադրված քաղաքականություն չվարելու, փորձանքից զերծ մնալու իմաստությունն է: Մի բան, որը խոր հարգանքի ներշնչման աղբյուր է հայ համայնքի համար և արժանապատվության պահպանում՝ կառավարող շրջանակների հետ շփվելիս:

Հովհաննես Կոլոտի շրջանը հայ ժողովրդի դեմ նախապատրաստված ու մշակված դավադրությունների իմաստով շատ աղերսներ ունի մեր այսօրյա վիճակի հետ, որը զգոն դիտարկման դեպքում կարելի է դիմակայության անհրաժեշտ քաղաքականության գործադրման համար դաս համարել:

Ժողովուրդների պատմությունները կազմված են դեպքերի ու նաև դեմքերի պատմությունից: Նրանցից շատերը, որքան էլ որ պատմական կարևորագույն հանգամանքներում են գործել, իրենց կյանքն ու գործը նվիրաբերել ազգին, այնուամենայնիվ՝ ժողովուրդը սրբացրել է նրանց, ովքեր նաև իրենց ժամանակի, ազգի խիղճն են եղել: Այդպիսին են եղել մեր շատ սրբացած հերոսներ, պետական ու հոգևոր գործիչներ:

Հազվագյուտներին է տրվում իրենց անունն անմահացնելու շնորհը:

Այդպիսին էր Հովհաննես Կոլոտ Կ. Պոլսո Երանաշնորհ Պատրիարքը, որի հիշատակի խնկարկումներն են նաև Կ. Պոլսում և Երևանի Մատենադարանում կազմակերպված այս գիտաժողովները:

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԱՄ ՀԱՄԲԱՐՅԱՆ

«ՀԱՎԱՏՔԻ ԿԱՆԹԵՂՆԵՐ»

(ՀԱՅ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
ԳԵՈՐԳԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԿՏԱՎՆԵՐՈՒՄ)

Վաստակաշատ նկարիչ Գեորգի Թովմասյանի «Հավատքի կանթեղներ» ցուցահանդեսը նկարչական ասպարեզում հանդիսանում է Գուգարաց թեմի արվեստագետների կողմից լավագույն նվերը եկեղեցասեր մեր ժողովրդին քրիստոնեության 1700-ամյակի առթիվ:

Նկարչի վառ գունավորումներով, թվով շուրջ 170 վանքեր ու եկեղեցիներ, խորհրդանշում են հայոց՝ փոթորկվող կյանքի հարատև կանթեղվող ու բոցավառվող հավատքը, որն էլ հանդիսանում է կնիքը հայ մարդու 1700 տարվա քրիստոնեական դիմագծի:

ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋՅԱՆ
Գուգարաց թեմի առաջնորդ

Գեորգի Թովմասյանը գեղարվեստական ավանդույթներով կրթված նկարիչ է: Շնորհիվ բազում անհատական ցուցահանդեսներին ներկայացրած իր կտավների (Հայաստան, Ռուսաստան, Վրաստան, Լեհաստան, Ղազախստան, Իսրայել, Լիբանան, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, ԱՄՆ) ճանաչում ձեռք բերելով՝ դարձել է ԽՍՀՄ նկարիչների միության անդամ (1976): Նրա «Սուրբ Սարգիս զորավար» կտավի երկու տարբերակները, հոգևոր առաջնորդների օծությամբ, տեղ են գտել Գյումրիի Յոթ վերք և Կիպրոսի (Նիկոսիա) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներում:

Մեծ նվիրումով ու երախտագիտության զգացումով գեղանկարիչ Գ. Թովմասյանն իր ստեղծագործական մի ժամանակաշրջանում ձեռնամուխ եղավ երփնագրելու հայ եկեղեցիներն ու մատուռները, որով փորձեց իր հարգանքի տուրքը մատուցել նախնիներին, երախտագիտության խոսք հղել, նորացնել դարերի խորքից եկող պատմաճարտարապետական հինավուրց, բայց իրենցից մեծ արժեք ներկայացնող հայոց սրբակերտ կառույցները: Լինելով պատմամշակութային տարբեր կենտրոններում, նույնիսկ հայկական վարչական տարածքներից դուրս, Գ. Թովմասյանը մեկ առ մեկ կտավին վրձնեց վանական կոթողները:

Գ. Թովմասյանի ինքնատիպ ձեռագրով ու նոր երանգավորմամբ հայոց վանքերը դիտողին են ներկայանում նորովի՝ «Հավատքի կանթեղներ» խորագիրը կրող ցուցա-

հանդեսում:

Գույնն է նրա խնդիրը, նրանում է ստեղծագործության ողջ բովանդակությունը, թեև չի բացառում գիծը ու նրա կարևորությունը: Ներկայակալի ակտիվ գունաշարով, թանձր վրձնահարվածներով նկարիչը ստեղծում է մի արվեստ, որը սկիզբ է առնում ազգային հինավուրց ակունքներից՝ շունչ առնելով հեռավոր մանրանկարչական արվեստից, գալով, հասնելով Սարյանին ու Մինասին, ովքեր նկարչի համար ուսանելի դպրոց են և դասական մեծություններ:

Իր ձեռագրերով լինելով չափազանց ազատ, համարձակ վրձնահարվածներով, նկարիչը չի կառչում իրականության խստաշունչ օրենքներից, գերի մնալով դրանց շրջանակներում, այլ հիմնվելով իրական եղելության գործոնին, կտավին հանձնում իրենը՝ իր մտացածին գույնով ու տոնայնությամբ: Այսպես, Բջինի Ս. Աստվածածին եկեղեցին (կտ. յուղ. 2000 թ.) աչքի է ընկնում ակտիվացված ու բնական հիմքերից շեղված գունաշարով: Իր գեղանկարչությունում չբացառելով գծի կարևորությունը, նկարիչը ճշգրիտ կառուցողականությամբ պատկերել է եկեղեցու կոնստրուկտիվ, ընդհանրացված տեսքը, որում լիովին զգալի են օպտիկայի հեռանկարային օրենքները: Հեռավոր դիտակետից, կրճատելով հեռանկարում վանքային կառույցի եռանավ հատակագիծը, անկյան տակ առնելով կտավում նրա դիրքավորումը, ցույց են տրված որմնային երկու հարթ մակերեսները, վերևում պսակված գմբեթով: Նկարում երկրորդ պլան է մղված չափերով ավելի փոքր մատուռը: Լույսի ճառագայթները թափանցել են աջ կողմից և լուսաճաճանչ գույներով պարուրել ողջ կտավը: Նրանում տեղ են գտել առավել տաք երանգները, որոնցից, օրինակ, դեղինը իր աստիճանային երանգավորմամբ եկել է փոխարինելու կապույտ երկնքին, որից նշույլ մնացել է լոկ կտավի վերին նեղլիկ զանգվածում: Դրանով նկարիչը շեշտում է մեր երկրի մերձարևադարձային կլիման, արևի ջերմությունն ու լույսի ուժգնությունը, որից ելնելով, հողին հաղորդել է նոր տեսք, որպես հայրենի, թեպետ լեռնային, բայց և կենսատու, արևակեզ, խանձված գույնով, արտահայտված կարմիր տոնայնությամբ: Այստեղ հիշում ենք Մ. Սարյանի՝ ազգային մեր մեծ վարպետի գործերն ու խոսքերը. «Բացի ընդհանուրի հետ ներդաշնակվելուց, ամեն մի գույն պետք է ունենա որոշակիություն, պետք է ներգործի ուղղակիորեն՝ ընդգծուն իր սահմաններով ու հյութեղությամբ: Գույները կոմպլեքսի մեջ պետք է կազմեն համահնչեղություն, բայց և չկորցնեն իրենց ինքնին արժեքը: Գույնը չպետք է խամրի իր միջավայրում, այլ պետք է ուժ ստանա նրանից»¹:

Գունամտածողության մեջ նույն կարծիքին՝ Գ. Թովմասյանը, բացի համանուն գույներից, շատ հաճախ օգտագործում է հակադիր գույներ, ավելի հաճախ դրանք համատեղելով նույն ստեղծագործությունում: Օրնակ՝ Բջինի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթում հայտնված կապույտ գույնը իմպրովիզացիոն է տանիքների կարմիրների, պատերի ու երկնքի դեղինների միջև: Այն շաղկապվում է երկնականմարի կապույտի ու առջևի պլանի ծաղկած ծառերի մանուշակագույնների հետ: Վանքի ձախ կիսագնդավածը ստվերարկված է, մթամած, ի ցույց տալու շենքի ծավալայնությունը, թեպետ այն արված է մեծ ընդհանրացման ու դեկորատիվացման ձևատաճողությամբ:

Գեորգի Թովմասյան գեղանկարիչը պահպանում է իր հավատարմությունը ար-

¹ Մ. Սարյան, Արվեստի մասին, 1986 թ.:

վեստի կառուցվածքային-առարկայական էության, դասական մշակույթի ավանդների հանդեպ:

Նա ժամանակակից է, սերում է ազգային արմատներից, իր ժողովրդի հոգևոր կյանքից և արտահայտում մեր կյանքի անկրկնելի ակնթարթները²:

Ասվածը տեսնում ենք նաև մեկ այլ գործում, որն իր բնույթով շատ մոտ է նախորդ կտավին, «Սաղմոսավանք: Կարմիր առավոտ» (կտ. յուզ. 1996 թ.), հանդիպում ենք որոշ գունային հակադրությունների: Այստեղ ավելի են ակտիվանում գույների հակադրությունները, բարձրանում է նկարի ներքին հուզականությունը: Եթե ծայրաստիճան ընդհանրացնենք ու ավելի պարզեցված մեկնաբանենք, կարող ենք ասել, որ նրանում իշխում են երկու գույն՝ կարմիրը և կապույտը, որոնք միմյանց հանդեպ և՛ հակադիր են, և՛ ներդաշնակ: Հակադիր են, քանի որ անմիջապես հանկարծաստեղծ հայտնվել են բազմատոն կարմիրների հոծ շարքերում, և ներդաշնակվում են, քանի որ կոմպոզիցիան շահում է ի հաշիվ հանկարծաստեղծ կապույտների, վերջիններով ավելի ակտիվանում, դուրս գալիս միատոնությունից:

Արվեստաբան Թ. Հովհաննիսյանը գրում է. «Հետո լուրջություն է իջնում: Եվ լուրջության մեջ հնչում են եկեղեցիների զանգերը: Նրանք բաց կապույտ, մուգ կապույտ, մոլ կապույտ, լուրջ կապույտ, կապույտ ու կապույտ գույն ունեն: «Սիրում եմ կապույտ: Մաքրության, երազի արարչագործ երկնքի, հավատի խորհրդանիշ է ինձ համար», - ասում է նկարիչը: Նրա՝ Հայաստանի վանքերն ու եկեղեցիները շնչավորված 170 կտավներում չկա գեթ մեկը, որում որպես հուսո կանթեղ չբոցավառվի յուրահատուկ երանգի կապույտը: Այն, որ ներդաշնակվելով նույնպես յուրովի կարմիրի, նարնջագույնի ու դեղինի հետ, որպես գորեղ հնչեղ երկնաքեր պատարագ, խոյանում է երկինք՝ հայի հարատևության աղոթքը շուրթերին:

Գույնը, ինչպես հնչյունը, ունի իր ինտոնացիան: Գ. Թովմասյանի ամեն մի գուներանգ օծված է, ասես, հոգուդ հետ մտերմաբար խոսող-բալասանող ջերմությամբ»³:

Նկարում վանական կառույցները ներդաշնակվում են շրջակա միջավայրին՝ ասես միաձուլվելով բնությանը: Տոնայնությամբ լինելով շատ մոտ շրջապատին, վանքերն առանձնանում ու ընդգծվում են մուգ եզրագծերով, տեղ-տեղ՝ ընդհանրացված ստվերարկումներով: Առջևի պլանի մզաքված գույներով ու անկանոն վրձնահարվածներով որոշակիորեն արտահայտված է տարածական պատրանք, որը գնալով դեպի հեռուները՝ միախառնվում է երկնքի ֆոնին, որն էլ ստանալով կարմրադարչնագույն ընդհանրացված համալրում, օրգանապես կապվում է կտավի բոլոր պերսոնաժների հետ:

Հետևելով նույն խորագրի տակ ընդգրկվող ստեղծագործություններին, հանդիպում ենք նաև այնպիսի գործերի, որոնք գունամտածողությամբ տարբերվում են վերոհիշյալներից և կրում են ավելի սառը կոլորիտ: Դրանցից, օրինակ՝ «Խորակերտ» կտավում (կտ. յուզ. 1990թ.), մեծադիր պլանով տեղ են գտել սառը՝ կապտամանուշակագույնի, երկնագույնի ու կոբալտի բազում դրսևորումները: Գույների առաջին հայացքից նույնանմանությունը ուղղակի թվացյալ է, հասկապես ոչ մասնա-

² Տե՛ս Մ. Սաֆարյան, ՀՀ. Ժող. նկարիչ, պրոֆեսոր «Հավատքի կանթեղներ», Գ. Թովմասյան, 2000թ.:

³ Թամար Հովհաննիսյան, արվեստագիտության թեկնածու «Նկարչի՝ մարդկանց ընծայած աշխարհը», «Մաշտոց» ամսագիր:

գետների համար: Նրանում մի գույնի այնքան նորանոր երանգներ կան, որ հազիվ կարելի է զգալ դրանց տարբերությունները: Ինչպես, օրինակ, Խորակերտ եկեղեցական համալիրը: Ըստ տեղաբնակների պատմածի, Խորակերտ անվանումը գալիս է առասպելական Հայկ նահապետի թոռ՝ Խորի անունից, որն իր գերդաստանով եկել, բնակություն է հաստատել այդ վայրերում:

Կտավը հետաքրքրությամբ է դիտվում հատկապես եկեղեցու վերնամասի կանոնավոր, սլացիկ պատկերահանման և վար իջնող, աստիճանաբար ցրվածության հասնող, կիսաքանդ պատերի աղճատվածությամբ:

Գծանկարին կլանող գույնը շատ դեպքերում անհետացնում է ուրվանկարի ճշգրտությունը, ի հայտ բերելով ավելի թրթռուն առարկայական զանգվածներ, որոնք և՛ կան, և՛ չկան, այսինքն՝ եկել են լրացնելու կոմպոզիցիան, հնչում են գույնով, ետևում թողնելով կառուցվածքային նշանակությունը, որովհետև գույնի մեջ է փնտրում նկարիչը իր ստեղծագործության նշանակությունը, քանզի դա է նրա առջև դրված խնդիրը, և ոչ թե տվյալ կառույցի ճշմարտացի արտապատկերումը: Եվ ընդհանրապես դա է հանդիսանում գեղանկարչության իմաստավորումը, դերն ու նշանակությունը:

«Մոլորակը Գեորգի Թովմասյանի համար բերնեբերան լեցուն է արվեստագետի ուշադրությանն արժանի բարիքներով, ու դրանցից վերցնում է առատաբուռ, խոշոր դրվագներով, կարծես անհագորեն ծարավի է մինչև վերջին կաթիլն ըմբռնելու նրա զգայական նյութականության ամեն պատառիկ, որպեսզի տեսանելի դարձնի բոլոր զգայարաններով, ընկալելի յուրաքանչյուր մանրամասն և սեփական վայելքի սաստկությունից բաժին հանի ուրիշներին, բոլոր մարդկանց անխտիր:

Գ. Թովմասյանի անկապտելի տարերքը գույների տիեզերքն է ամենից առաջ, որ սնունդ է առնում ի բնուստ ունեցած կոլորիտային գորեղ զգացողությունից: Ձևերն ու զանգվածները թրծվում են բացառապես գունաշխարհի քուրայում, սակավադեպ դիմելով լուսաստվերի զովացուցիչ օգնությանը, մինչև իսկ զոհաբերելով նրան»⁴:

«Սևան: Իրիկնամուտ է» (կտ. յուզ. 1999 թ.): Կապտալագուրային հագեցված այս աշխատանքով Գ. Թովմասյանը կարծես մի պահ մոռացել է ներկապնակի տաք կոլորիտները: Երազայնություն արթնացնող կապույտ գույնը, որը տեղ է գտել լճափնյա այս բնանկարում իր բազմանվագ երանգներով, ի հայտ է բերում ռոմանտիզմի տարերային նուրբ դրսևորումներ:

Այս առումով կցանկանայինք վկայակոչել ասվածին համահունչ հետևյալ դիտարկումը: Արվեստագետ Լ. Մամվելյանը նրա մասին գրում է. «Ռոմանտիզմի վաղ դրսևորումները, որոնք արտահայտվեցին Շատոբրիանի երկերում և XIX դարի որոշ գեղանկարիչների ստեղծագործություններում, նշանավորվեցին բարձր հուզականության որոնումներով, միջնադարին դիմելով, որը շեղում էր իրական կյանքից և հեղափոխական իդեալներից, տանում դեպի միջնադարյան մշակույթի իդեալականացում»⁵:

Կոմպոզիցիան կառուցված է ռեալ հիմքերի վրա: Եկեղեցին վերագտել է ճիշտ այն ձևը, ինչպես իրականում այն գոյություն ունի, իր ճշգրիտ կառուցողական գծապատկերով: Կոմպոզիցիայում լիարժեքության են հասել տարածաչափական օրի-

⁴ Տե՛ս Գ. Թովմասյան, Հավատքի կանթեղներ, 2000 թ.:

⁵ История зарубежного искусства., М. Т. Кузьминной, Н. Л. Мальцежой.

նաչափությունները, որով պարզ նշմարելի են բոլոր առարկայական երևույթների համամասնական ճշգրիտ տեղակայված դասավորվածությունները: Սրանք այն փաստացի երևույթներն են, որոնց նմանօրինակ տարբերակները չէինք գտնում նկարչի նախորդ աշխատանքներում: Իրիկնամուտի ցուքերը գեղափայլ երփնագրումով են արտացոլվել կապուտակ Սևանում: Մեղմ գեփյոտից առաջացած փոքրածավալ արծաթափայլ ալիքները մարգարտազարդ վզնոցի պես զարդարում են լիճը ջինջ, ուր կարծես իրիկնամուտի հետ միասին հնչում է հայկական քնարական մեղեդին:

Մեկ այլ ուժով ու հնչեղությամբ է պատկերված Թբիլիսիի Ս. Կարապետ հայկական եկեղեցին (կտ. յուդ. 1999 թ.): Դիտակետը նախընտրելով բավականին ցածր տարածությունից, կառույցը տեղադրելով կտավի կենտրոնական հատվածում, նկարիչն արտահայտել է հայ ճարտարապետության մոնումենտալ սքանչագործությունը, իշխող դիրքը, բարձրամիտ ու ոգեկոչող ներուժը:

Եկեղեցու խորհրդավոր և վեհապանծ ուրվանկարը պարզորոշ դիտվում է ամպամած երկնքում: Նրա խանդավառությունն ուժեղանում է ցածր հորիզոնով, որի շնորհիվ եկեղեցու պատկերը վեր է ելնում հողագանգված տարածությունից և հստակորեն դիտվում մոխրասպիտակ երկնքի ֆոնում: Նկարչի վրձինը շատ ազատ ու անկաշկանդ է սահում կտավում: Ամեն մի վրձնահարված մի նոր գույն է թողնում իր ետևից, ստեղծելով տրամադրություն, հուզականություն և կոլորիտ: Այս ստեղծագործությունում էլ մեծադիր պլանով տեղ են գտել սառը տոնայնությունները՝ հիմնականում կապտամոխրագույնների երանգներում: Իսկ նկարի առջևի պլանի խառնաշփոթ, հապճեպ վրձնահարվածները նպաստում են կոմպոզիցիայում գլխավոր հերոսի առանձնանալուն, առավել շեշտադրված երևալուն, որն իր ուրվագծային պատկերայնությամբ տարբերվում է շրջակայքի տարերայնորեն ձևաստեղծումից:

Տրամադրությունը միանգամայն փոխվում է Սանահինի վանական համալիրը ներկայացնող (կտ. յուդ. 1999 թ.) կոմպոզիցիոն աշխատանքում: Հակառակ նախորդ երեք կտավների՝ «Սևան. Իրիկնամուտ է», «Թբիլիսիի Ս. Կարապետ եկեղեցին», «Խորակերտ», այս ստեղծագործություններում տեղ են գտել թովմասյանական ներկայանակի ամենաակտիվ, աչքի զարնող գույները: Կոլորիտը վառվռուն է, կրակոտ ու հուզազգրգիռ: Այստեղ՝ միևնույն տեղում հանդիպել են հակադարձ, կոնտրաստային գույները, որոնք միջնորդավորված թովմասյանական վրձնով գտել են իրենց համարժեք տեղերը: Կանաչ, թավշյա թփուտներում ու ծառահովտում ապաստանել է XI դարի մեծագույն հոգևոր ու գիտակրթական հսկաներից մեկը՝ Սանահինի վանական համալիրը, պսակված դեղնա-ոսկեգույն ակտիվ լուսավորմամբ: Օրվա պահը իրիկնային է: Արևին հակադարձ կանգնած նկարչի դիրքից համայնապատկերում տեղ են գտել մայրամուտի վերջին շողերը, որոնք հրեղեն բոցավառված գույներով վերջին շողերն են արձակել Լոռվա բնաշխարհին: Ուլտրամարին կապույտ երկնքին գույնով հակադրվում է ներքևի միջավայրը, սկսած վանքահամալիրից մինչև առջևի պլանի բաց հողատարածությունը, որն արևի ճառագայթներից ստացել է հնչել կարմրություն, տեղ-տեղ դեղին ու նարնջագույնի խառնուրդներով: Շարունակվող տաք ու սառը տոնայնություն ունեցող կանաչներում, արտահայտված խորության զգացողությամբ, սաղարթախիտ ծառաստանում, կարծես նրանցում թաքնված, շեշտադրված առանձնանում են համալիր կառույցները: Բացի այն, որ

վերջիններս կրում են կոմպոզիցիոն առանցքային սկզբնակետ, այն առավել շեշտադրվում է և շատ անգամ տարբերակվում միջավայրից, առանձնահատուկ գույնի որոշմամբ: Դեղնա-ոսկեգույն որմները վերններում պսակվում են կարմիր տանիքներով, որոնք շաղկապվում են ներքևի կարմիր հողատարածության հետ, իսկ երկնքի ջինջ կապույտում հանկարծաստեղծ նարնջագույն ամպի ծվենները շաղկապվում են վանքերի որմերի գույներին՝ օրգանապես կապ ստեղծելով այդքան հակադիր գույների միջև:

Մեծ է նկարչի նվիրումը Հայոց աշխարհին, նրա բնությանն ու աստվածային հրաշագործ դարավոր քարակոփ հուշարձաններին:

Հավատ և կանթեղ.

Գրականագետ Մ. Սանթրոսյանը գրում է. «Հայի լեռնաշխարհի բնօրրանի՝ երկինք հառնող իմաստի առհավատչյան ազգային տաճարներն են՝ որպես աղոթատեղի, որպես հոգու սքանչացման կնքահայր, որպես...: Ազգ պահող հավատքի եկեղեցին ինքնին քարեղեն հրաշք է, ուստի և՛ գեղեցիկ, արվեստագետի սիրո չխամրող էություն է նաև : Վանք և մատուռ, խաչքար, եկեղեցի ու տաճար պատկերելը և՛ աստվածահաճո է, և՛ հայրենանվեր: Չկա քիչ թե շատ ինքզինքը հարգող հայ նկարիչ, որ տաճար կերտած չլինի իր կտավին: Կան նաև քչերը, որոնց չխամրող սերն ու հարսնացուն է վանքը: Թովմասյան գեղանկարչի հարյուրների հասնող վանքերից մի փունջ նկար է հավաքվել այստեղ («Հավատքի կանթեղներ» ցուցահանդեսում): Սակայն այս քիչը օգնում է որակի կարծիք կազմելու ներկա ու բացակա վանքերի մասին: Մի խումբը տաք գույներով է պատկերված՝ ամառային ապարոշի ու լույսի պսակով, մյուսը՝ պաղ ձմռան զսպված գունաշապիկով: Մեկում որդան կարմիրն է իշխում, մյուսում՝ բիլ կապույտը: Երկուսն էլ իրենն են, նրանցն է և ինքը, ու բոլորն էլ՝ հայոց հողինը: Երկինք վեր հառնող սուրբ երկգագաթ Արարատ լեռան հետևողությամբ, հիմնականում երկգմբեթ, հավատքի կոթողները շարունակում են լույս արարել ու սփռել ոչ միայն աշխարհով մեկ, այլև առ Աստված: Պատկերվածները ազգային կառուցողական շինարվեստի հանճարի տարբեր կերպերից են, որոնց ոգեղեն լույսի ճառագումներից էլ՝ Թովմասյանի այս կտավները: Եվ օգնում են մարդուն գտնելու տաճար տանող ճանապարհը, որն անցել է Վարդգես Սուրենյանցի, նախնի մյուս մեծերի վանքերի ներաշխարհի ոտնահարված սրբությունների պատկերներով: Տաճար տանող ճանապարհ, որը հոգու մաքրման ու փրկության, մարդ մնալու ուղին է: Թովմասյանի կտավներում դրանք Աստծո տունը լինելով հանդերձ, հայրենի հողին ապավինած ու այդտեղից դեպի վեր՝ կատարյալին միշտ ձգտող ազգային ոգու ճախրանքն են»⁶:

Գ. Թովմասյանի ստեղծագործություններում մեծ ընդհանրացումները հանգում են մի սկզբունքի, որն ընդունված է անվանակոչել տպավորապաշտություն, կամ իմպրեսիոնիզմ (ֆր. Impressionisme, impression- **տպավորություն** բառից. գեղարվեստական ուղղություն XIX դ. 70-90-ական թթ. արվեստում)⁷:

Իրականության եղելությունները վերարտադրելով իր կտավներում՝ Գ. Թովմասյանը այն միասնական ու ամբողջական մեծ ընդհանրացմամբ, որպես անդառ-

⁶ Տե՛ս Գ. Թովմասյան, Հավատքի կանթեղներ, 2000 թ.:

⁷ Մ. Երզնկյան, Ա. Բաղդասարյան, Կերպարվեստի բառագիրք, 2002 թ.:

նալի մի ակնթարթ, երփնագրում է՝ հավերժացնելով տվյալ պահի վայրկենական գեղեցկությունը: Բնապատկերների, կերպարների և այլ հանգամանքներում չմանրակերտելով, նկարչի վրձինը շատ անգամ ազատ է ու անմիջական, ինչը հատուկ էր XIX դարի իմպրեսիոնիստներին՝ Մոնեին, Սեզանին, Պիսսատոյին, որոնց բնականաբար արտահայտում են բնության աշխույժ ու անմիջական պատկերները, առանձնացված մեծ ճշմարտացիությամբ: Այդ սկզբունքները առավել հետևողականությամբ մշակվել են Գ. Թովմասյանի ստեղծագործություններում: Կտավներում վառ կերպով արտահայտված է նկարչի մեծ հիացմունքը հայոց հավերժական բնաշխարհի և նրանում ծնունդ առած, հավատքի կանթեղ դարձած սրբակերտ տաճարների հանդեպ:

Հաճախ է նկարիչը անդրադառնում միևնույն տեսարանը ներկայացնող թեմային: Նկարել է նույն եկեղեցին տարվա մի քանի ամիսներին ու օրվա տարբեր ժամերին: Օրինակ՝ շատ անգամ նրա կողմից նկարված Սևանի, Օձունի, Հաղպատի և Կարմրավոր եկեղեցիների համայնապատկերներում նկարիչը ցույց է տվել նույն տեղանքի եղանակային փոփոխուն իրավիճակները օրվա տարբեր ժամերին: Թեև եկեղեցիների կառուցողական ձևերը մնում են կայուն, սակայն փոխվում են գույները, նկարի ընդհանուր կոլորիտը, համապատասխանելով տվյալ պահի եղանակին: Հաճախ է Գ. Թովմասյանը վրձնել Աշտարակի Կարմրավոր եկեղեցին, մեկնաբանելով մերթ վառվորուն՝ տաք գունաշարով, մերթ՝ պասիվ: Նկարել է մայրամուտի տեսարանում, վաղ առավոտյան և այլ իրավիճակներում: Նմանատիպ մոտեցումներ շատ անգամ հանդիպում էին XIX դարի երկրորդ կեսին, իմպրեսիոնիստ նկարիչների գործերում:

«Բնության անորսալի, փոփոխվող իրավիճակների պատկերմամբ հրապուրվելը Կլոդ Մոնեին հանգեցնում է նկարների այն շարքի ստեղծմանը, որն արարվել է բնության միևնույն թեմայով օրվա տարբեր ժամերին: Այդպես ծնունդ են առնում «Խոտի դեզը» (1866 թ.), «Բուսանի տաճարը» (1893- 1895 թթ.) շարքերը, որոնք նկարիչն ստեղծում է՝ տարվելով մթնոլորտի, օրվա տարբեր ժամերին միևնույն թեմայով բնանկարի լուսավորության վիճակը որսալով⁸:

Աշխարհի՝ իր ընկալումը, նրա ամբողջ իրականությամբ, Գ. Թովմասյանը նորարարի իր ինքնատիպ վրձնով զարգացրեց տպավորապաշտության խոր շառավիղները՝ դրանց միախառնելով յուրահատուկ իր գունազգացողությունը, Հայոց երկրին հատուկ տեղանքային ու կլիմայական պայմանների պատկերման ինքնահատուկ ձևամտածողությամբ: Մի երկիր, որն ունի իրենը՝ իր ազգային նկարագիրը, հայությանը հատուկ կոլորիտը:

⁸ История зарубежного искусства., М. Т. Кузьминой, Н. Л. Мальцежой.



ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ Տ. ԵԶՆԻԿ ԵՎ Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ՍՐԲԱԶԱՆՆԵՐԻՆ

Հունիսի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիսավորապես տոնախմբվեց Հոգեգալստյան տոնը: Պատարագիչն էր Տ. Եփրեմ աբեղա Սարգիսյանը:

Տոնը հատկանշվեց նաև մեկ այլ ուրախալի իրադարձությամբ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնությամբ արքության պատիվ շնորհվեց Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանին և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանին՝ ի գնահատություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանում իրենց անմնացորդ ծառայության և տարիների վաստակի:

Թող Տերը Իր հանապազ օրհնությամբ օգնական և աջակից լինի Գերաշնորհ Եզնիկ և Նավասարդ արքեպիսկոպոսներին, պարզևի քաջառողջ կյանքի երկար տարիներ և հոգու անսպառ կորով՝ հարանորոգ հաջողություններով պսակագարդելով իրենց ծառայությունը՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԱՂԵՏՅԱԼ ՕԴԱՆԱՎԻ ԶՈՀԵՐԻ

Մայիսի 3-ին Երևան-Սոչի աղետյալ օդանավի չարագույժ վթարից քառասուն օրեր են անցել... Եվ այդ ընթացքում խունկ ու մոմ վառելուց, նրանց հոգիների համար բյուր անգամ աղոթելուց հետո, եկել է ժամը, երբ անմեղորեն զոհվածների հոգիները համբառնան պիտի և իրենց վերջնական հանգրվանը գտնեն Աստծու երկնային արքայության մեջ: Հունիսի 14-ին, ինչպես և քառասուն օր առաջ, կրկին ծաղկեփնջեր ու դառն արցունքներ կառնի իր մեջ Սև ծով կոչված շիրմատեղին ու կտանի-կհասցնի 113-ին էլ... Գոնե այսպես մխիթարվեն հարազատներն ու բարեկամները:

Հայ-Վրաց գործարար ստոցիացիայի նախաձեռնությամբ և աջակցությամբ, հունիսի 13-ին, առավոտյան, Երևանից Սոչի շարժվեցին զոհվածների մի խումբ հարազատներ, որոնց ուղեկցում էին Հայ-Վրաց գործարար ստոցիացիայի հայկական կողմի համանախագահ Վլադիմիր Բադալյանը, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հովհաննես Աբովյանը, ՀՀ կառավարության անդամներ, լրագրողներ: Ժամանելով Թբիլիսի, նրանք Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Միլվանյանի, հյուպատոս Արթուր Մարգարյանի, դեսպանատան խորհրդականների հետ մասնակցեցին Վիրահայոց թեմի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում կատարվող հոգեհանգստյան արարողությանը: Այստեղ էին նաև Հայ-Վրաց գործարար ստոցիացիայի վրացական կողմի համանախագահ Բետո Զուղելին, Վրաստանի խորհրդարանի վրացի և հայ պատգամավորներ, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, վիրահայ մտավորականներ:

Հոգեհանգստյան արարողություն կատարեց Աջարիայի հայության հոգևոր հովիվ Ս. Կիրակոս արքեպիսկոպոսը: Հանուն թեմի առաջնորդ Ս.Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և հոգևոր դասի, Հայր Սուրբը ցավակցեց և օրհնության իր խոսքը բերեց զոհվածների հարազատներին: Նա պատգամեց հետևել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու այն պատգամին, համաձայն որի մահացածը լույս ենթեցյալ է, իսկ հոգին թևածում է երկնային արքայության մեջ. «Կգա մի օր,- ասաց Հայր Սուրբը,- երբ մենք էլ՝ հայտնվելով այնտեղ, անպայմանորեն կհանդիպենք նրանց: Իսկ մինչ այդ, ապրենք աղոթելով ու նրանց բարի գործերը հիշելով»:

Մխիթարանքի խոսք ասաց նաև պարոն Միլվանյանը: Հայոց համընդհանուր կսկիծ անվանելով մայիսյան աղետը, նա աջակցության համար շնորհակալ եղավ եղբայրական վրաց ժողովրդին, ի մասնավորի երկրի նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն և վրացական կառավարությանը, որոնք հոգում են զոհվածների հարազատների անարգել ու խաղաղ երթևեկությունը և այսօր էլ իրենց ներկայացուցիչներով մասնակից են հոգեհանգստյան արարողությանը:

Հունիսի 13-ին, Երեկոյան, զոհվածների հարազատները կժամանեն Սոչի՝ ողջույնի ու հրաժեշտի խոսքն ասելու 113-ին էլ... Ճակատագրի քմահաճությամբ նրանցից շատերի գերեզմանը կապուտաչ ծովի անհունությունն է...

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. Ամէն»:

ՎԻՐԱՀԱՅՈՅ ԹԵՄԻ ՄԱՍԼՈ ՂԵՎԱՆ

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ

14 Յունիս ԿԻԼԻԿԻԱ առազաստանաւը բարեյաջող ծովագնացութենէ ետք հասաւ Գերմանիոյ Պրէմերիաֆըն նաւահանգիստ-քաղաքը: Նոյն օրը, ժամը 12-ին, տեղի ունեցաւ նաւի պաշտօնական դիմաւորման արարողութիւնը: Արարողութեան ներկայ գտնուեցան ՀՀ Գերմանիոյ դեսպանուհին՝ տիկ. Կարինէ Ղազինեան, Գերմանիոյ հայոց առաջնորդին ներկայացուցիչ Ս. Սերովբէ վրդ. Իսախանեան, Պրէմերիաֆընի փոխքաղաքապետ Կէօսս, նաւահանգիստի ղեկավարը, շրջանի հայոց հոգեւոր հովիւ Ս. Խաչատուրաբոյ. Կնէագեան, ինչպէս նաեւ շուրջ երեք տասնեակ հայորդիներ, մօտակայ Պրէմէն քաղաքէն:

Դիմաւորմանը բարձրացուեցան Հայաստանի եւ Գերմանիոյ դրօշները, հնչեցին երկու երկիրներու հիմները: Պաշտօնական խօսք արտասանեցին տիկ. Ղազինեան, փոխքաղաքապետը, յայտնի գրող եւ հրապարակախօս եւ նաւի անձնակազմի անդամ Զորի Բալայեան: Այնուհետ Սերովբէ Հայր Սուրբը օրհնելով նաւն ու անձնակազմը, մաղթեց նաւագնացութեան յառաջիկայ փուլերու ընթացքին բարեյաջող եւ անփորձանք նաւարկութիւն:

Յետ դիմաւորման ՀՀ Դեսպանութեան կողմէ տրուեցաւ պաշտօնական ճաշ:

Յաջորդ օրը ԿԻԼԻԿԻԱ նաւուն անձնակազմին հաճելի անակնկալ հրամցուցին Համպուրկահայ Մշակութային Միութեան շուրջ երեք տասնեակ անդամները: Անոնք ընդառաջելով Սերովբէ Հայր Սուրբի խնդրանքին, հայկական տարագներով, արտասանութեամբ, երգ ու պարով ճանապարհեցին ԿԻԼԻԿԻԱ նաւը դէպի նաւարկութեան յաջորդ փուլ:

18 Յունիս, Կիրակի, Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի տօնին, Նոյվիտի Հայ Համայնքը իր հիմնադրման 25-ամեակի առթիւ նախաձեռնեց ուխտագնացութիւն մը դէպի Քէվէլա Գերմանիոյ ամենամեծ եւ յայտնի ուխտավայրը: Նայվիտի, Պիլէֆէլտի եւ Քէօլնի Հայ Համայնքներէն մօտ 80 ուխտաւորներ մասնակցեցան ուխտագնացութեան, որ սկսաւ Ս. Պատարագով: Ս. Պատարագը մատուցանեց Ս. Հայագատ քինյ. Մարտիկեան եւ Ս. Սեղանին սպասարկեցին Կարպիս սրկ. Քարաքավաֆ, Պետրոս սրկ. Կարինեան եւ Սայաթ սրկ. Պօյաճեան, ինչպէս նաեւ մասնակից համայնքերէն դպիրներ: Ս. Պատարագէն յետոյ ուխտաւորները աղօթքով յիշեցին Քրիստոսի խաչի ճամբան: Ուխտագնացութիւնը վերջ գտաւ երեկոյեան հսկումի արարողութեամբ ու դէպի «Մխիթարիչ տրտմողաց» ողորմութեան սրբապատկերը պարունակող մատրան կատարուած հանդիսաւոր թափօրով:

29-30 Յունիս Սերովբէ վրդ. Իսախանեան յանուն Գերմանիոյ Հայոց Առաջնորդութեան իր մասնակցութիւնը բերաւ Գերմանիոյ Հէօքսթեր գիւղաքաղաքի Ղպտի վանքին մէջ տեղի ունեցած Գերման Աւետարանական Եկեղեցւոյ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Գերմանիոյ Առաջնորդութիւններու միջեւ տեղի ունեցող Խորհրդակցական ժողովներուն: Այս տարուան քննարկումներու ընթացքին, ի թիւս այլ հարցերու քննարկմանց, պատրաստուեցաւ Միջարանուանական «Սուրբ Պսակի» կամ Ամուսնական արարողութեան մասին երկկողմանի յայտարարութեան վերջնական բնագիրը, որ այս տարի պաշտօնական արարողութեան մը ընթացքին պիտի ստորագրուի Գերման Աւետարանական Եկեղեցւոյ Խորհուրդի նախագահ Եպիսկոպոս Հիւպերի եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու առաջնորդներու կողմէ:

ԴԻԻՄՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



ԵՇԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԻՌԱՆԴԻԱՅՈՒՄ

Սույն թվականի մայիսի 25-31-ը Հյուսիսային Իռլանդիայի Դերրի քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) Կենտրոնական Կոմիտեի տարեկան նիստը, որին մասնակցում էին Կենտրոնական Կոմիտեի 40 անդամներ՝ նախագահությամբ Ժան Առնոլդ դե Կլերմոնի (ԵԵԿ նախագահ)՝ Ֆրանսիայի Բարեկարգչական Եկեղեցուց, և փոխնախագահությամբ Տիրանայի և Համայն Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու Անաստասիոս Արքեպիսկոպոսի:

Հայ Առաքելական Եկեղեցուց այս ժողովին մասնակցում էր Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ԵԵԿ-ի օրակարգում առկա այն հարցերը, որոնք առնչվում են Էկումենիկ շարժման վերակազմավորմանը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և Եվրոպայում Գաղթականների հարցերով զբաղվող հանձնախմբի, Եվրոպայում Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհրդի և Եվրոպայի Բողոքական Եկեղեցիների համայնքի հետ ԵԵԿ-ի հարաբերություններին, ինչպես նաև երրորդ համաեվրոպական Էկումենիկ համագումարին, որ տեղի է ունենալու 2007 թ. սեպտեմբերի 4-9-ը Ռումինիայի Սիբիու քաղաքում:

Մասնակիցները նաև այցելեցին Քորիմիլայի Էկումենիկ համայնք և հանդիպում ունեցան Իռլանդիայի Եկեղեցիների ներկայացուցիչների հետ:

«Պատահական չէ, որ ԵԵԿ իր հանդիպումը գումարում է Իռլանդիայում. Եվրոպայի այս հատվածում խաղաղությունն ու հաշտությունը պարզապես վերացական հասկացություններ չեն, այլ հասկացություններ են, որ պետք է տասնամյակներ անց իրապես ապրվեն համայնքներում: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է այցելել Քորիմիլայի համայնք և ծանոթանալ Իռլանդիայի Եկեղեցիների ներկայացուցիչների հետ և լսել նրանց պատմությունները», - իր խոսքում նշեց ԵԵԿ գլխավոր քարտուղար Քոլին Վիլյամսը:

*ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐ - ԵԿԵՂԵՑԻ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԿԱԾ
ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՀՌՈՄՈՒՄ
 (30 մայիսի - 2 հունիսի 2006 թ.)

Սույն թվականի մայիսի 30-ից հունիսի 2-ը Հռոմում տեղի ունեցավ աշխարհականների հարցերով զբաղվող Քահանայապետական Խորհրդի հերթական ժողովը:

Համաժողովին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացրեց Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Առեն արքեպիսկոպոսը:

Այս խորհուրդը հանդիսանում է Հռոմեակաթուղիկ Եկեղեցու՝ Վատիկանի կառույցներից մեկը, որը օժանդակում է Հռոմի Պապին աշխարհական անհատների և կազմակերպությունների հետ հարաբերությունները կարգավորելու գործում, այն անհատների և միավորումների հետ, ովքեր մասնակից են Եկեղեցու կյանքին և առաքելությանը:

Այս բաժանմունքը հաճախ հրավիրում է եկեղեցական նոր շարժումների համաժողովներ, որտեղ քննվում են հասարակական կյանքին վերաբերող արդիական հարցերն ու մարտահրավերները, որոնց նպատակն է լսել և քննարկել աշխարհական ներկայացուցիչների տեսակետներն ու մտածումները ներկայումս աշխարհում առկա խնդիրների վերաբերյալ:

Այս հարցերով զբաղվող Քահանայապետական Խորհրդի համաժողովը կայացել է Եվրոպայից և աշխարհի զանազան վայրերից եկած շուրջ 120 ժողովականների մասնակցությամբ, որոնց շարքում էին բարձրաստիճան պատգամավորներ, կրոնավորներ, աշխարհականներ, համալսարանական դասախոսներ, ինչպես նաև Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Այժմ Խորհրդի ղեկավարն է Ստանիսլավ արքեպիսկոպոս Ռիլկոն, որը և ողջույնի խոսքով բացեց համաժողովի նիստը:

Քննարկման հիմնական թեմաները երկուսն էին՝ Եկեղեցու առաքելությունը համայնքներից ներս այսօր, և երկրորդ՝ աշխարհական համայնքի դերը Եկեղեցու առաքելության իրականացման ճանապարհին:

Հանդիպման ընթացքին քննարկվել են նաև զանազան այլ հարցեր, ինչպիսիք են Եկեղեցու հիմնական առաքելությունը և անելիքները, համայնքային-ծխական կառույցի ներկա վիճակը, ոչ եկեղեցական համայնքի ըմբռնումը, ինչպես նաև քրիստոնեական ինքնագիտակցության զարգացման հարցը և Եկեղեցու դիրքորոշումը աշխարհի ժամանակակից տեսությունների նկատմամբ:

Հոգեշնորհ Հայր Սուրբը, որպես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչ, իր գործուն մասնակցությունը բերեց ժողովի քննարկումներին և ներկաներին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի ողջույններն ու բարեմաղթանքները:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

Մայիսի 27-ից հունիսի 3-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հյուրընկալեց Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու պատվիրակությանը, որի կազմում էին Ուղղափառ ուսանողներին կրթաթոշակ տրամադրող ծրագրի քարտուղար դոկտ. Միքայել Հյուբները՝ Էնլարգենից, Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների կողմից ուսանողներին կրթաթոշակ տրամադրող ծրագրի քարտուղար դոկտ. Յոհան Շնայդերը՝ Շտուտգարդից, Ուղղափառ Եկեղեցիների հետ կապերի պատասխանատու դոկտ. Դագմար Հելլերը՝ Հանովերից:

Նույն օրը հյուրերին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը: Հանդիպումից հետո հյուրերն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններ:

Ընկերային և բարեգործական ծրագրերի հետ ծանոթանալու նպատակով մայիսի 27-ին նրանք եղան ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղանում, իսկ երեկոյան այցելեցին Ցեղասպանության թանգարան և Եղեռնի զոհերի հուշահամալիր, որտեղ աղոթքով ատ Աստված՝ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

Մայիսի 28-ին գերմանական պատվիրակությունը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ մասնակցեց Սուրբ և Անմահ Պատարագի:


Հայ Ժողովրդի հոգևոր-պատմամշակութային ժառանգությանը ծանոթանալու համար նրանք այցելեցին նաև Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե վանքեր, եղան Օշականում՝ այցելելով Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին: Օշականում հյուրերին ընդունեց Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Թորգոմ վրդ. Տոնիկյանը:

Մայիսի 30-31-ը հյուրերն այցելեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ հյուրընկալությամբ Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարզև արքեպս. Մարտիրոսյանի:

Գերմանական պատվիրակությունը մանրամասնորեն ծանոթացավ Հայ Եկեղեցու ուսումնական ծրագրերին, այցելեց Գևորգյան Հոգևոր Ճեմարան, Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ: Հյուրերը այցելեցին նաև Խոր Վիրապ, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, Ս. Երրորդություն եկեղեցի, Կոտայքի թեմ, Հայորդյաց Տներ, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, որտեղ հյուրերին ընդունեց Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ հյուրերին ընկերակցում էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՐԿ. ՄԱՐԳՍՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՕԿՐՈՒԳՈՒՄ ՌԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԻՆ

Հունիսի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Հարավային դաշնային օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Դմիտրի Կոզակի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանի:

Ողջունելով Դ. Կոզակի անդրանիկ այցը հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց հայ և ռուս ժողովուրդների՝ դարերի պատմություն ունեցող եղբայրական հարաբերությունների զարգացման համար՝ հաստատելով, որ հարկ է այն առավել ամրապնդել: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաև Հարավային դաշնային օկրուգի իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող խնամքի և ուշադրության համար:

Իր հերթին, ՌԴ Հարավային դաշնային օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Դմիտրի Կոզակը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար և բարձր գնահատեց մասնավորապես Ռուսաստանի հարավային շրջանում բնակվող հայ համայնքի կառուցողական գործունեությունը, որը կարևոր դեր է խաղում Ռուսաստանի տնտեսական և մշակութային կյանքում:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարվեց նաև վերջերս Ռուսաստանում տեղ գտած սպանություններին, որոնց զոհ էին դարձել մեր հայրենակիցները: Նշվեց, որ նման երևույթները չեն բխում հայ եւ ռուս ժողովուրդների և երկու պետությունների շահերից և բարեկամական ջերմ հարաբերություններից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 4-ին, կիրակի. – Հոգեգալուստ (Պենտեկոստե, յիսներորդ օր ի Ջատկեն):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եփրեմ արքեպիսկոպոստը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունիսի 11-ին, կիրակի. – Ա. կիր. զկնի Հոգեգալուստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մովսիս վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունիսի 18-ին, կիրակի. – Բ կիր. զկնի Հոգեգալուստեան: Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգորիս արքեպիսկոպոստ Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունիսի 25-ին, կիրակի. – Գ. կիր. զկնի Հոգեգալուստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շահե արքեպիսկոպոստը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Июнь 2006 г.)**

1. **ДЬЯКОН ВАРДАН БАГУМЯН** – Визит Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян в Константинополь, 20-27 июня 2006 г. (с. 3-39).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

2. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Преосвященству епископу Араму Атесяну по случаю присуждения ему титула архиепископа, 15 июня 2006 г., № 349 (с. 40-41).
3. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Айку Арсланяну по случаю его награждения орденом «Святой Григорий Просветитель», 30 июня 2006 г., № 370 (с. 42-43).
4. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Седраку Токату по случаю его награждения орденом «Святой Григорий Просветитель», 30 июня 2006 г., № 371 (с. 44-45).
5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Петросу Шириноглу по случаю его награждения орденом «Святой Григорий Просветитель», 30 июня 2006 г., № 372 (с. 46-47).
6. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Гургену Саргисяну по случаю его награждения орденом «Святой Саак – Святой Месроп», 1 июня 2006 г., № 348 (с. 48-49).
7. Патриаршие награды (пожалование в течение июня 2006 г. энциклик, орденов «Святой Саак – Святой Месроп», и благословений ряду духовных и светских лиц, оказавших неоценимые услуги Армянской церкви) – (с. 50).

Впечатления от Патриаршего визита Его Святейшества

8. **АРХИЕПИСКОП ОВНАН ТЕРТЕРЯН** - Патриарший визит Его Святейшества в Константинополь (с. 51-55).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

9. **АРМЕН МАЛХАСЯН** – Новые данные о первоначальном переводе Библии (текстологическое исследование) – (с. 56-67).
10. **ВРЕЖ ВАРДАНЯН** – Просветительская миссия Месропа Маштоца в 420-430-ых годах (историковедческое исследование) – (с. 68-75).

11. **ЗАРУИ АКОПЯН** – Символический образ Звартноца (искусствоведческое исследование) – (с. 76-85).
12. **Э. М. БАГДАСАРЯН** – Основатель киликийской династии Рубинянов принц Рубен I и его дело (историографическое исследование) – (с. 86-100).

Каноноведческое исследование

13. **АЗАТ БОЗОЯН** – Книга, посвященная первым трем столетиям развития армянской канонической мысли (о книге «Армянские Каноны Иоанна Одзнеци» Арама Мартиросяна) – (с. 101-117).

Исследование теории календаря

14. **ДЖУЛИЕТА ЭЙНАТЯН** – Определение «даты» в комментариях о теории календаря (исследование теории календаря) – (с. 118-128).
15. **ПАРУЙР МУРАДЯН** – Эпиграфическое наследие Армении (историографическое исследование) – (с. 129-134).
16. **МИСАК Г. ДЖЕВАИРЧЯН** – Дополнительные сведения о биографии св. Николая Чудотворца (историографическое исследование) – (с. 135-137).
17. **АСМИК СТЕПАНЯН** – Патриарх Оганес Колот Багишеци и армяно-турецкая литература (историографическое исследование) – (с. 138-143).

Искусствоведческое исследование

18. **АРАМ ГАМБАРЯН** – «Лампады веры» (искусствоведческое исследование) – (с. 144-150).

В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

19. Присуждение титула архиепископа епископам Езнику Петросяну и Навасарду Кчояну, 4 июня 2006 г. (с. 151).
20. Церемония панихиды в память о жертвах авиакатастрофы в церкви Св. Геврока в Тбилиси, 14 июня 2006 г. (с. 152-153).
21. Новости из армянской епархии Германии (с. 154).

МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

22. **ГАЯНЭ АЛЕКСАНИЯН** – Заседание Центрального Комитета Конференции Европейских Церквей в Северной Ирландии, 25-31 мая 2006 г. (с. 155).
23. **ДЬЯКОН ОВАНЕС САРКСЯН** – Заседание Церковного Совета, посвященное взаимоотношениям светских лиц с Церковью, Рим, 30 мая - 2 июня 2006 г. (с. 156).

-
24. **ДЪЯКОН ОВАНЕС САРКСЯН** – Визит делегации Евангелической Церкви Германии в Первопрестольный Святой Эчмиадзин, 27 мая - 3 июня 2006 г. (с. 157).

АУДИЕНЦИЯ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

25. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Полномочного представителя Президента РФ в Южном федеральном Округе РФ, 16 июня 2006 г. (с. 158).
26. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Святом Первопрестольном Эчмиадзине в течение июня 2006 г. (с.159).

“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(June 2006)

1. **DEACON VARDAN BAGHUMIAN** – Visit of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Constantinople, June 20-27, 2006 (p. 3-39).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

2. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Grace Bishop Aram Ateshian, on the occasion of his elevation to the rank of Archbishop, June 15, 2006, no. 349 (p. 40-41).
3. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Hayk Arslanian on the occasion of his decoration with the Order of “Saint Gregory the Illuminator”, June 30, 2006, no. 370 (p. 42-43).
4. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Setrak Tokat on the occasion of his decoration with the Order of “Saint Gregory the Illuminator”, June 30, 2006, no. 371 (p. 44-45).
5. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Bedros Shirinoghlu on the occasion of his decoration with the Order of “Saint Gregory the Illuminator”, June 30, 2006, no. 372 (p. 46-47).
6. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Gurgun Sargsian on the occasion of his decoration with the Order of “Saint Sahak – Saint Mesrop”, June 1, 2006, no. 348 (p. 48-49).
7. Pontifical Awards (Encyclicals, Orders of “Saint Sahak – Saint Mesrop” and Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during June 2006 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church) – (p. 50).

Impressions of His Holiness Pontifical Visit

8. **ARCHBISHOP HOVNAN DERDERIAN** – The Pontifical Visit of His Holiness to Constantinople (p. 51-55).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

9. **ARMEN MALKHASIAN** – New Data about the First Translation of the Bible (textological research) – (p. 56-67).
10. **VREZH VARDANIAN** – The Educational Mission of Mesrop Mashtots in the 420-430-es (historical research) – (p. 68-75).
11. **ZARUHI HAKOBIAN** – The Symbolic Imagery of Zvartnots (art research) – (p. 76-85).
12. **E. M. BAGHDASARIAN** – Founder of the Rubenian Dynasty Prince Ruben I and his Work (historical research) – (p. 86-100).

Canonical Research

13. **AZAT BOZOYAN** – A Book devoted to the first three centuries of Armenian canonical thought development (about “Hovhan Odznetsi’s Book of Armenian Canons” by Aram Martirosian) – (p. 101-107).

Research on Calendar Theory

14. **JULIETA EYNATIAN** – The Definition of “Date” in the Commentaries of Calendar Theory (research on calendar theory) – (p. 118-128).
15. **PARUYR MURADIAN** – Armenian Epigraphic Heritage (historical research) – (p. 129-134).
16. **MISAK H. DJEVAHIRIAN** – Complementary Data about the Biography of Saint Nicolas the Miracle Worker (historical research) – (p. 135-137).
17. **HASMIK STEPANIAN** – Patriarch Hovhannes Kolot Baghishetsi (1678-1741) and Armenian-Turkish Literature (historical research) – (p. 138-143).

Art Research

18. **ARAM HAMBARIAN** – “Torches of Faith” (art research) – (p. 144-150).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

19. Bishop Yeznik Petrosian and Bishop Navasard Ktchoyan elevated to the rank of Archbishop, June 4, 2006 (p. 151).

-
20. Requiem Service in Memory of the Aircraft Victims in the Saint Gevork Church of Tbilisi, June 14, 2006 (p. 152-153).
 21. News from the Armenian Diocese of Germany (p. 154).

INTER-ECCLESIASTIC CONNECTIONS

22. **GAYANE ALEXANIAN** – Meeting of the Central Committee of the Conference of European Churches in Northern Ireland, May 25-31, 2006 (p. 155).
23. **DEACON HOVHANNES SARGSIAN** – Meeting of the Church Council, devoted to connections between laymen and the Church, Rome, May 30 - June 2, 2005 (p.156).
24. **DEACON HOVHANNES SARGSIAN** – Visit of the German Evangelical Church Delegation to the Mother See of Holy Echmiadzin, May 27 - June 3, 2006 (p.157).

AUDIENCE IN THE MOTHER SEE

25. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Plenipotentiary Representative of the President of the Russian Federation in the Southern District of the Russian Federation, June 16, 2006 (p. 158).
26. Brief Church News. Information about Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Echmiadzin during June 2006 (p. 159).

“ETCHMIADZINE”
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE
D’ETCHMIADZINE
(Juin 2006)

1. **DIACRE VARDAN BAGHOUMIAN** – Visite de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à Constantinople, 20-27 juin 2006 (p. 3-39).

ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION

2. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à Son Eminence l’évêque Aram Atéchian, à l’occasion de son accès à la dignité d’archevêque 15 juin 2006, no. 349 (p. 40-41).
3. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à M. Sédrak Tokat à l’occasion de sa distinction de l’Ordre «Saint Grégoire l’Illuminateur», 30 juin 2006, no. 370 (p. 42-43).
4. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à M. Hayk Arslanian à l’occasion de sa distinction de l’Ordre «Saint Grégoire l’Illuminateur», 30 juin 2006, no. 371 (p. 44-45).
5. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à M. Pétros Chirinoghlu à l’occasion de sa distinction de l’Ordre «Saint Grégoire l’Illuminateur», 30 juin 2006, no. 372 (p. 46-47).
6. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à M. Gourguen Sargsian, à l’occasion de sa distinction de l’Ordre «Saint Sahak – Saint Mesrop», 1er juin 2006, no. 348 (p. 48-49).
7. Distinctions pontificales (Encycliques pontificales, Ordres «Saint Sahak – Saint Mesrop» et messages de bénédiction accordés par Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d’éminents services à l’Eglise arménienne au mois de juin 2006) – (p. 50).

Impressions de la visite pontificale de Sa Sainteté

8. **ARCHEVEQUE HOVNAN TERTERIAN** – La visite pontificale de Sa Sainteté à Constantinople (p. 51-55).

ETUDES HISTORIQUES ET PHILOGIQUES

9. **ARMEN MALKHASSIAN** – Nouvelles données sur la première traduction de la Bible (étude textologique) – (p. 56-67).
10. **VREJ VARDANIAN** – La mission d’éducation de Mesrop Machtots dans les années 420-430 (recherche historique) – (p. 68-75).
11. **ZAROUHI HACOBIAN** – L’image symbolique de Zvartnots (critique d’art) – (p. 76-85).
12. **E. M. BAGHDASSARIAN** – Le prince Rouben Ier de Cilicie, fondateur de la dynastie des Roubénides, et son œuvre (recherche historique) – (p. 86-100).

Etude canonique

13. **AZAT BOZOYAN** – Livre consacré aux trois premiers siècles du développement de la pensée canonique arménienne (Sur le livre «Le Livre des Canons de Hovhan Odznétsi» d’Aram Martirosian) – (p. 101-107).

Etude du calendrier

14. **JULIETTA EYNATIAN** – La définition de la «date» dans les commentaires du calendrier (étude du calendrier) – (p. 118-128).
15. **PAROUYR MOURADIAN** – L’héritage épigraphique arménien (recherche historique) – (p. 129-134).
16. **MISSAK H. DJEVAHIRIAN** – Information complémentaire sur la biographie de Nicolas le Thaumaturge (recherche historique) – (p. 135-137).
17. **HASMIK STEPANIAN** – Le Patriarche Hovhannes Kolot Baghichétsi (1678-1741) et la littérature arméno-turque (recherche historique) – (p. 138-143).

Critique d’art

18. **ARAM HAMBARIAN** – «Les flambeaux de la foi» (critique d’art) – (p.144-150).

AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

19. Les évêques Eznik Pétrossian et Navassard Ktchoyan accèdent à la dignité d’archevêque (p. 151).
20. Office des morts en souvenir des victimes de la catastrophe aérienne; 14 juin 2006, église Saint-Guévork de Tbilissi (p. 152-153).
21. Nouvelles du Diocèse arménien d’Allemagne (p. 154).

RELATIONS INTERECCLESIASTIQUES

22. **GAYANE ALEXANIAN** – Séance du Comité central de la CEE en Irlande du Nord, 25-31 mai 2006 (p. 155).
23. **DIACRE HOVHANNES SARGSIAN** – Réunion du Conseil ecclésiastique, consacrée aux relations des laïques avec l’Eglise, Rome, 30 mai – 2 juin 2006 (p. 156).
24. **DIACRE HOVHANNES SARGSIAN** – Visite de la délégation de l’Eglise Evangélique d’Allemagne au Saint-Siège d’Etchmiadzine, 27 mai – 3 juin 2006 (p. 157).

AUDIENCE AU SAINT-SIEGE

25. Audience accordée par Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, au représentant plénipotentiaire du Président de la Russie dans le district fédéral sud de la FR, 16 juin 2006 (p. 158).
26. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale de Saint-Etchmiadzine au mois de juin 2006 (p. 159).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Կ. Պոլիս 3

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը

Տ. Արամ եպիսկոպոս Աթեշյանին արքայության պատիվ շնորհելու մասին...40

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը

Հայկ Արսլանյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 42

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Սեդրակ Թոքատին

«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին 44

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Պետրոս

Շիրինօղլուին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով

պարգևատրելու մասին 46

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գուրգեն

Սարգիսյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին

..... 48

Հայրապետական գնահատություն 50

Տպավորություններ Վեհափառ Հայրապետի

Հովվապետական այցելությունից

Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ - Հայոց Հայրապետի

Հովվապետական այցը Կ. Պոլիս 51

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ - Նոր տվյալներ Աստվածաշնչի սկզբնական թարգմանության

..... 56

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Մեսրոպ Մաշտոցի 420-430-ական թվականների լուսավորչական

առաքելության շուրջ 68

ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ - Զվարթնոցի խորհրդաբանական կերպարը 76

Է. Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - Կիլիկիայում Ռուբինյան հարստության

հիմնադիր Ռուբեն Ա իշխանը և իր գործը 86

Կանոնագիտական

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - Գիրք՝ նվիրված հայ կանոնագիտական մտքի

զարգացման առաջին երեք դարերին 101

Տոմարագիտական

ՋՈՒՆԻԵՏԱ ԷՅՆԱԹՅԱՆ - «Թուական»-ի սահմանումը տոմարական մեկնություններում 118

ՊԱՐՈՅՐ ՍՈՒՐՄԱՆԵԱՆ - Հայաստանի վիմագրական ժառանգությունը 129

ՄԻՍԱՔ Հ. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ - Լրացուցիչ տեղեկություններ Ս. Նիկողայոս Սքանչելագործի կենսագրության մասին 135

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ - Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի /1678-1741/ Պատրիարքը և հայատառ թուրքերեն գրականությունը 138

Արվեստագիտական

ԱՐԱՄ ՀԱՄԲԱՐՅԱՆ - «Հավատքի կանթեղներ» 144

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Արքության պատիվ Տ. Եզնիկ և Տ. Նավասարդ Սրբազաններին 151

Հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ

աղետյալ օղանավի զոհերի 152

Լուրեր Գերմանիոյ հայոց թեմէն 154

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեի նիստը

Հյուսիսային Իռլանդիայում 155

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ - Աշխարհականներ-Եկեղեցի հարաբերություններին

նվիրված Քահանայապետական Խորհրդի ժողով Հոռմում 156

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ՍԱՐԳՍՅԱՆ - Գերմանիայի Ավետարանական

Եկեղեցու պատվիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 157

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Հարավային դաշնային

օկրուգում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցչին 158

Եկեղեցական բեմ. լուրեր 159

“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата 160

“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin 163

“Etchmiadzine” organe officiel du Saint-singe d’Etchmiadzine 166